

ՄԿՐՏԻՉ  
ՆԱԴԱՇ



ՄԻՋՆԱԴՐՈՒՅԱՆ ՀԱՅ ՏԱԳԵՐԳՈՒՆԵՐ

7



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
Институт литературы им. М. Абега

# ՄԿՐՏԻՉ ՆԱԴԱՅ

Исследование, критический текст  
и комментарии ЭД. ХОНДКАРЯНА

Издательство АН Армянской ССР  
ЕРЕВАН 1965

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ

# Մ Կ Ր Տ Ի Չ Ն Ա Դ Ա Յ

Աշխատասիրությանը  
Է. Խ. ԽՈՆԴԿԱՐՅԱՆԻ

1054

Հայկական ՍՍՌԻ ԳԱ Հրատարակչություն  
ԵՐԵՎԱՆ 1965



Մենագրութիւնը նվիրված է XV դարի հայ նշանավոր բանաստեղծ, մանրանկարիչ և հասարակական գործիչ Մկրտիչ Նաղաշի կյանքի և ստեղծագործութեան համակողմանի ուսումնասիրութեանը:

Սույն աշխատութեան առաջին բաժնում քննութեան են առնված XV դարի հասարակական-քաղաքական այն պայմանները, որոնք հող հանդիսացան Նաղաշի հումանիստական-դեմոկրատական քնարերգութեան համար, բանասիրական ու գրականագիտական վերլուծութեան է ենթարկված Նաղաշի ստեղծագործութիւնը: Հաջորդ բաժնում զետեղված են Նաղաշի տաղերի գիտական-համեմատական բնագրերը՝ կազմված Հայկական ՍՍՌ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերի հիման վրա:

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

XV դարի բանաստեղծ, նկարիչ ու հասարակական գործիչ Մկրտիչ Նաղաշը հայ գրականութեան ու մշակույթի ականավոր և ուշագրավ դեմքերից մեկն է: Նրա մասին առաջին անգամ կենսագրական տեղեկութիւններ է հաղորդում Գ. Չամչյանը: Իր «Պատմութիւն հայոց» մեծածավալ աշխատութեան երրորդ հատորում նա բավական ընդարձակ տեղ է հատկացրել Նաղաշի հասարակական գործունեութեան որոշ դրվագներին՝ շխոսելով, սակայն, նրա գեղարվեստական ստեղծագործութիւնների մասին:

Իբրև բանաստեղծի՝ Նաղաշի մասին առաջին տեղեկութիւնները հաղորդում է բանասեր Հ. Էկինյանը: 1885 թ. «Մասիս» ամսագրում հրատարակելով Նաղաշի «Արարիչն արարածոց...» և «Երազ է ու սուտ...» ոտանավորները՝ տողատակի ընդարձակ ծանոթութեան մեջ գրում է. «Նաղաշ Մկրտիչ Տիգրանակերտի առաջնորդաց թագն ու պսակն է. իւր ժամանակ գրուած գրչագրաց յիշատակարաններ գովեստիք կը խօսին այս բաղմարդին անձին վրայ, որոյ արձակ ու ռաւանաւոր բանաստեղծութիւններ ստուար հատար մը կրնան կազմել...»<sup>1</sup>:

Բանասեր Հ. Էկինյանն իր այս հայտարարութիւնը հիմնավորող որևէ փաստ, ձեռագրական կամ մատենագրական որևէ աղբյուր չի հիշատակում, ուստի մնում է առեղծված, թե ի՞նչ հիմքով է բանասերը ենթադրում, թե Նաղաշից մեզ հասած ստեղծագործութիւնները «ստուար հատար մը կրնան կազմել»:

Հ. Էկինյանին հակառակ կարծիք է հայտնել բանասեր Ղևոնդ Հովնանյանը: Ավելի քան 10 տարի հետո, 1896 թ. «Հանդէս ամսօրեայ»-ում տպագրած իր «Տաղաշափք և տաղք» ընդարձակ ուսումնասիրութեան մեջ, որ նվիրված է միջնադարյան մի քանի հայ բանաստեղծների բնութագրմանը, Նաղաշի մասին գրում է. «... ինչպէս

<sup>1</sup> «Մասիս», Կ. Պոլիս, 1885, էջ 375:

իւր վերագրէն կը տեսնուի, բանաստեղծութենէ զատ՝ նաև նկարչութեան կը զբաղէր, Արքեպիսկոպոս էր Ամթայ (Տիգրանակերտի) և նոյն բարձր պաշտաման մէջ կը գտնուէր Ժե դարուն, — ունի զանազան արձակ և ոտանաւոր գրուածներ: Ծանօթ են այս վերջիններէն՝ 6—7 տաղէ, ըստ մասին գրաբար՝ սակաւ կամ շատ ոամկախառն...»<sup>1</sup>:

XIX դարի 90-ական թվականներից սկսած բանասիրությունը՝ ուշագրություն առնելով աշխարհի տարբեր մատենագրարաններում պահպանված հայերեն ձեռագիր մատյանները՝ պատիճանաբար երևան է հանում միջնադարյան բանաստեղծների, այդ թվում և Մկրտիչ Նաղաշի ոտանավորներից ու հիշատակարաններից մի քանիսը, որոնք ժամանակ առ ժամանակ սկսում են տպագրվել հայ պարբերական մամուլում, ձեռագրացուցակներում և առանձին աշխատություններում:

Հետագայում բանասեր Կ. Կոստանյանը՝ ձեռագիր տաղարաններից հայտնաբերելով Նաղաշի մի քանի ուրիշ ոտանավորները և ժողովելով նաև տպագրվածները՝ 1898 թ. հրատարակում է «Մկրտիչ Նաղաշ և իւր տաղերը» գրքուկը:

Եթե բանասերներից ոմանք, այնուամենայնիվ, զբաղվել են Նաղաշի ոտանավորների ու արձակ գործերի հայտնաբերման ու տպագրության գործով, ապա շափազանց անշունջ բան է արված նրա ստեղծագործությունների համակողմանի ուսումնասիրության ուղղությամբ:

Հայ պարբերական մամուլում պատահական առիթներով տպագրված հատուկներ, ընդհանուր բնույթ կրող հոդվածների և ուսումնասիրությունների կողքին միակ ծավալուն ու ամբողջական ուսումնասիրությունը բանասեր Կ. Կոստանյանի «Մկրտիչ Նաղաշ և իւր տաղերը» աշխատությունն է, որը, սակայն, հեռու է բանաստեղծի հասարակական գործունեության ու ստեղծագործության ըստ ամենայնի բնութագրությունը լինելուց:

Հայ բանասերներից շատերը, նկատի ունենալով Նաղաշի բարձրաստիճան հոգևորական լինելու հանգամանքը, նրա ողջ ստեղծագործությունը համարել են կրոնա-բարոյախոսական, եկեղեցական՝ անտեսելով ու ետ մղելով Նաղաշի ստեղծագործության մեջ որակ կազմող այն մոտիվները, որոնցով բանաստեղծը ծաղրում ու քննադատության է ենթարկում իր ժամանակի հասարակական կյանքի

<sup>1</sup> «Հանդէս ամսօրեայ», 1896, էջ 54: Տե՛ս նաև Հ. Ղ. Յ, Հետադոտությունը, 3-րդ գիրք, 1911, էջ 23:

բազմաթիվ արատավոր ու այլանդակ երևույթներ: Այսպես, Մ. Պոտուրյանը «Բազմավէպ»-ի 1905—1906 թվականների բավական ընդարձակ ու բանասիրական արժեքավոր հոդվածում գրում է. «Եկեղեցական բարձր դասակարգի կը պատկանի («Ամդայ արքեպիսկոպոս») Յովհաննէս Թլկուրանցույն և Գրիգորիս Աղթամարցույն պէս, բայց սա շունի անոնց գրիչը. այս երկու կաթողիկոսները իրենց աստիճանաց անյարմար պատկերներ արտադրած են, մինչդեռ Նաղաշը իր տաղերուն մէջ եւս՝ կը մնայ իր սքեմին տակ...»<sup>1</sup>: (Ընդգծումներն ամենուրեք մերն են—է. Խ.):

Գրեթե նույն կարծիքն է հայտնել նաև Ա. Զոպանյանը Ֆրանսերեն լեզվով հրատարակած իր «Les trouveres Armenien» ժողովածուի մեջ<sup>2</sup>:

Ա. Զամինյանն էլ իր «Հայ գրականության պատմություն» աշխատության մեջ նույնպիսի ելակետ ունենալով՝ կասկածի տակ է առել «Վասն բլբուլին և վարդին...», «Տաղ հարսանեաց...» ոտանավորների Նաղաշին պատկանելու խնդիրը: Նա տարբերություն տեսնելով Նաղաշի մյուս ոտանավորների ու Կ. Կոստանյանի հրատարակած խիստ թերի «Տաղ հարսանեաց...» ոտանավորի բովանդակության ու լեզվի մեջ՝ գտնում է, որ այդ ոտանավորը Մկրտիչ Նաղաշինը չէ: Ա. Զամինյանը հակված է կարծելու, թե այդ ոտանավորը պատկանում է Նաղաշ Հովնաթանի գրչին: Ա. Զամինյանը Նաղաշից վերցնում և ուրիշի է վերագրում նրա ստեղծագործությունը հետևյալ անհամոզիչ փաստարկումով. «Հաւանօրէն այս բանաստեղծութիւնը Նախաշինը չէ, քանի որ կը զանազանուի միւսներէն թէ լեզուով և թէ բովանդակութեամբ: Նախաշ, որ ակամայ ամուսնացաւ և կնոջ մահուանէն վերջն ալ երիտասարդ հասակին վանք մտաւ, դժուար թէ այս ոտանաւորը գրէր...»<sup>3</sup>:

Միակողմանի պիտի համարել նաև մեծանուն հայագետ, բազմավաստակ գիտնական, ակադեմիկոս Մ. Արեղյանի հետևյալ կարծիքը Նաղաշի ողջ ստեղծագործության մասին. «Մկրտիչ Նաղաշը թեպետ ունի մի երկու երգեր վարդի ու բլբուլի մասին, ինչպես և ուրիշները ու ծաղիկներով այլաբանական երգեր, բայց գարունն ու սերը, զվարթ բնութիւն երգելը չէ նրան հատուկ, նա շատ լուրջ կրօնավոր է և շատ տագնաւած է իր առաջնորդական վսեմ կոչմամբ, ուստի և իր բանաստեղծութեան մեջ ևս նա մի նպատակ ունի. միսի-

<sup>1</sup> «Բազմավէպ», 1905, էջ 546:

<sup>2</sup> A. Tchobanian, Les trouvères Armenien, Paris, 1906, էջ 153:

<sup>3</sup> Ա. Զամինեան, Հայ գրականութեան պատմութիւն, 1914, էջ 220—221:

բարեւ, սովորեցնել, կրթել և այլն. նա սովորեցնում է կրօնական  
մգով քրիստոնէական բարոյականութիւնը...»<sup>1</sup>:

Բանասերներից ոմանք՝ էլ Նաղաշի ստեղծագործության նկատ-  
մամբ ցուցաբերել են անտարբերութիւն և մոռացութեան են տվել  
նրան: Այդպես է վարվել Գ. Զարբճանալյանը:

Գծվար է ասել, թե Զարբճանալյանը ծանոթ չի եղել Նաղաշի  
նստանավորներին ու հասարակական գործունեությանը, որովհետև  
Նաղաշի լավագույն նստանավորներից մի քանիսը հրատարակվել են  
դեռևս 1513 թ. տաղարանում, 1803 և 1807 թթ. մաշտոցներում.  
չէնք խոսում ձեռագրական նյութերի մասին, որոնք չէին կարող  
ծանոթ չլինել հայ դպրոցի պատմություն գրող հեղինակին: Մեր  
այս ենթադրությունը հաստատվում է հենց իր՝ Զարբճանալյանի  
հետևյալ խոսքերով. «Բայց մեր ուսուցիչն ու ուսուցիչն ուսուցիչ  
պատանիք և գուսանաց ամենէն ծաղկած ատենն ժՅ և ժԶ դարուց  
միջոց կերևի... Ասոնց քերթուածքն (Առ. Միւնեցի, Առ. Բաղդշեցի)  
նվելի հոգևոր և խրատական են. Մկրտիչ Նաղաշ՝ Ամդայ աբեղայիս-  
կնպոսն... ավելի հանճարեղ և զգայուն է...»<sup>2</sup>: Տարօրինակ է, որ  
«ավելի հանճարեղ և զգայուն» բանաստեղծի մասին այս բնդհանուր  
հայտարարությունից բացի Զարբճանալյանը բացարձակապես ոչինչ  
չի ասում:

Արժեքավոր է Նաղաշի ստեղծագործությանը սովետահայ գրա-  
կանագետներից պրոֆ. Մ. Մկրչանի տված գնահատականը «13—  
18-րդ դարերի հայ աշխարհիկ գրականություն» և VIII դասարանի  
«Հայ գրականության պատմություն» աշխատանքներում:

Մկրտիչ Նաղաշի ստեղծագործությունը սերտորեն կապված է  
ԺՅ դարի հասարակական-քաղաքական կյանքի հետ: Կարելի է ասել,  
որ Նաղաշի ստեղծագործության հիմնական մասը ժողովրդական  
լայն խավերի սոցիալ-տնտեսական կյանքի գեղարվեստական վե-  
րարտադրությունն է: Ուստի Նաղաշ բանաստեղծին ու հասարակա-  
կան գործչին, նրա ողջ ստեղծագործությունը ճիշտ հասկանալու ու  
գնահատելու համար անհրաժեշտ է ուրվագծել XV դարի հասարա-  
կական-քաղաքական կյանքը, որը և մեծ շափով սնունդ է տվել Նա-  
ղաշի սոցիալական մոտիվներով հարուստ ստեղծագործությանը:

## ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

<sup>1</sup> Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, II հ., 1946, էջ 394:

<sup>2</sup> Գ. Զարբճանալյան, Պատմության հայերէն դպրոթեան ի պետս ուսման աղ-  
գային վարժարանաց, հ. Բ., Վիեննա, 1878, էջ 266:

## Փ Ա Մ Ա Ն Ա Կ Ը

Մկրտիչ Նաղաշը ասպարեզ իջավ XV դարի առաջին տասնամյակում, պատմական մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ լենկթեմուրյան հորդաները բազմաթիվ արշավանքներից ու ասպատակություններից հետո գրավել էին ողջ Անդրկովկասն ու Փոքր Ասիան:

Մոնղոլական բռնապետության դաժան հարվածներից ու ավերումներից դեռևս ուշքի չեկած հայ ժողովուրդը ենթարկվեց նորանոր բռնությունների, կոտորածների, գերեվարությունների ու հարստահարությունների:

Մարքսի կլասիկ բնորոշմամբ լենկ-թեմուրի պետության «բաղախանութունն էր հազարներով խոշտանգել, մորթառել, բնաջրնջել կանանց, խեղճաներին, տղամարդկանց, պատանիներին և այդ ձևով սարսափ տարածել ամենուրեք»<sup>1</sup>:

Իր քաղաքական նպատակներին հասնելու համար լենկ-թեմուրը կանգ չէր առնում ոչ մի դաժանության ու վայրագության առաջ:

Արտադրահարաբերություններով, կենցաղով ու մշակույթով անհամեմատ առաջադեմ ու զարգացած ժողովուրդները լենկթեմուրյան բարբարոսների կողմից ստրկացվում, բռնի ուժով տեղահանվում ու գերեվաճառության էին քշվում, իսկ առևտրական և արդյունագործական դեռևս որոշ դեր խաղացող քաղաքներն ու շեն գյուղերն ավերվում էին, երկիրը ամայանում էր: Լենկթեմուրյան մոլեգնած բանակների կրնկի տակ ոչնչանում, մոխրակույտի էր վերածվում այն ամենը, ինչ աշխատավոր ժողովուրդը դարերի ընթացքում անլուր զրկանքների գնով ստեղծել էր ու զարգացրել:

XV դարի հիշատակարաններում պահպանվել են ցնցող նկարագրություններ լենկ-թեմուրի դաժանությունների մասին: Ոմն Ոս-

<sup>1</sup> Архив Маркса и Энгельса, т. VI, стр. 185.

տանցի գրիչ գրում է. «... Ի սոյն ամի թամուր-Ֆէկն էառ զՍևաստ քաղաք և քանդեաց և աւերեաց, և սրախողող արար զամենեսեան, և զբազումս գերեաց՝ ի կանանց և ի տղայոց, և ԳՌ (3000) մարդ գերկիր բացեալ և կենդանոյն թաղեալ՝ զայնոսիկ, որ նետ արծակեցին ի նա: Եվ զայս արարեալ բազմութեամբ զօրօք զնացեալ ի Շամբն՝ ի վերայ Հալլայ և Դամասկոսի. և մատնեաց աստուած ի ձեռս նորա, էառ և անշափ կոտորումն արար ի Հալլայ քաղաք, որ Գ. (3) գլխէ մնիրա շինեաց ի տաճկանց: Եւ էանց ի վերայ Դամասկոսի և էառ՝ Լ. (30) օր թալան արար՝ զոսկի, զարծաթ և զմարգարիտ, և ԲԺՌ (12000) ուղտ իւրն հասայ եբարձ:

Եվ յետ այնր հրաման եհան և հրով այրեցին զքաղաքն առհասարակ և մղեղեցին...»<sup>1</sup>:

Այսպիսի կոտորածներից ու մասսայական գերեվարութիւններից խույս տալու համար ժողովուրդը թողնում էր իր ունեցվածքը և մոտակա բերդերում ու ժայռածերպերում ապաստան որոնում: Սակայն լենկթեմուրյան բարբարոսներին մատչելի էին նաև այդ ժայռածերպերը, որտեղ ապաստան գտածների հետ վարվում էին ինչպես վայրի գաղանների հետ: «... Եւ զի բազմութիւն յոյժ արանց և կանանց ապաստանեալ էին ի ձորս լեռանցն Երիշատու գեղջ, ի հասանել Լանկթամուրայ ի Վասպուրական՝ հնգետասան հազարք ի զօրաց նորայ եկեալ պաշարեցին շուրջանակի զլեռոն. և որսացան զամենայն ապաւինեալսն ի խորշս և ի ձորս իբրև զվայրի էրէս. զոմանս ի նոցանէ սպանին և զոմանս գերեցին և սակաւք եղեն որք ազատեցան...»<sup>2</sup>:

Անտիկ բերդերում ապաստանածների դրութիւնն էլ ոչնչով ապահով չէր. շուտով այդ բերդերն ու ամրոցներն էլ գրավվում են Լենկ-Թեմուրի զինվորների կողմից, որոնք բերդերում ապաստանածների մեծ մասին տեղնուտեղը կոտորում, իսկ մնացածներին քշում են դեպի գերեվաճառութիւն: Մի այդպիսի բերդի գրավման մասին սրտաճմլիկ տեղեկութիւն է հաղորդում ժամանակակից Թովմա Մեծոփեցին. «... Աստ էր տեսանել զահ և զբրկիւղ աւուրն դատաստանի, զլալումն և զողբումն ամենայն բերդին զի հրաման եղև ի շար բռնատրէն զկանայս և զմանկունս առնուլ ի գերութիւն, և զհաւատացեալս և զանհաւատս ի բերդէն վայր ընկենուլ... սկսան առհասարակ զամենեսեան ի վայր ընկենուլ. և այնքան բարձրա-

ցաւ մեռեալն, մինչ զի վերջին անկեալքն ոչ մեռանէին, զոր տեսաք աչօք ևւ լուաք ականձօք մերովք...»<sup>1</sup>:

Առհասարակ լենկթեմուրյան ծանր տիրապետութեան մասին պատկերավոր է արտահայտվում 1405 թվականի մի «Յայամաւուրք»-ի հիշատակագիր Սիմեոն Ռշտունցին. «... Յայամ ամի մեռաւ թամուր Ղան, որ Ի ՄԻ (21) ամ իբրև զբաժակ բարկութեան առեալ էր զնա աստուած ի ձեռն և ում կամէր արբուցանէր, զի յարեւելից մինչև ի մուտս արևու զամենեսին հասարակ գերեաց, զհաւատացեալսն և զանհաւատսն զամենեսեան սրախողիսող աւար...»<sup>2</sup>:

Գրիգոր Խլաթեցու վկայութեամբ Լենկ-Թեմուրի սուրբ անխնա կոտորում էր այն բոլոր ժողովուրդներին, որոնք հանդիպում էին նրա ճանապարհին.

Այս ոչ միայն քրիստոնէին,  
Այլ ի տաճիկ ազգաց բնաւին,  
Զի հասարակ էր նեղութիւն  
Պարսից ազգին, հայ և թուրքին...»<sup>3</sup>:

Հասարակական-քաղաքական այսպիսի պայմաններում թվում է, թե ժողովուրդը պետք է կորցնէր իր ոգու արիւթիւնը, հուսալքվէր ու հլու հնազանդորեն գլուխ ծռեր արտաքին նվաճողների սրի առաջ: Սակայն պատմական խոշոր արժեք ներկայացնող հիշատակարաններն ու մատենագրական պատառիկները, ինչպես նաև ժամանակակիցների ուղղակի ու անուղղակի տեղեկութիւնները ցույց են տալիս, որ հայ ժողովուրդը ինչպես Լենկ-Թեմուրի, այնպես էլ նրա հաջորդները դեմ անհավասար մարտեր է մղում՝ պաշտպանելով իր անկախութիւնն ու ազատութիւնը: Նման փաստերից է Կողբեցի Մարտիրոս տանուտերի գլխավորած դիմադրութիւնը: Թովմա Մեծոփեցին վկայում է, որ Մարտիրոս տանուտերը, անցնելով Սուրմալուի և շրջակայքի բնակիչների մի խմբի գլուխ, բարձրանում է Կողբի հարավում գտնվող Բարդող (Թակալթու) լեռը, քաջաբար կռվում և այնտեղ ապաստանած գլուղական բնակչութեանը պաշտպանում Լենկ-Թեմուրի հրոսակներին<sup>4</sup>:

Այս շրջանում բանաստեղծների ու ժողովրդական երգիչների գովասանքի առարկա են դառնում թշնամու դեմ քաջաբար մարտնչող հերոսները: Հովհ. Թլկուրանցուն վերագրվող Քաջ Լիպարի-

<sup>1</sup> «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա., (1401—1450 թթ.): Կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1955, էջ 3:

<sup>2</sup> Մ. Չամչեան, Պատմութիւն հայոց, Գ., էջ 427:

<sup>1</sup> Թովմա Մեծոփեցի, Պատմութիւն Լանկ-Թամուրայ..., էջ 30:

<sup>2</sup> Գ. Սրվանձաեան, Թորոս աղբար, Բ., էջ 391:

<sup>3</sup> «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա., էջ 277:

<sup>4</sup> Թովմա Մեծոփեցի, Պատմութիւն Լանկ-Թամուրայ, էջ 18:

տի հանրահայտ գովքի կողքին ուշագրավ է նաև ժողովրդական հե-  
րոս Թաղևոսին նվիրված Թովմա գրչի ներբողը, որտեղ առանձնակի  
չերմ խոսքերով է նկարագրվում Թաղևոսի առաքինությունը, ան-  
վախությունն ու քաջությունը, մարդկային հոռի բարքերի նկատ-  
մամբ նրա անհանդուրժողականությունը.

Պարոն Թաղոս հեզ և խոնարհ,  
Առաքինի և յոյժ արդար...  
Դէմ բարութեան ես դու ճարտար,  
Եւ շարութեան ես խիստ տկար:  
Յաշխարհիս ոչ զբաղեցար,  
Ոչ կաշառօք յիմարեցար...  
Պողովատիկ զէն զգեցար.  
Դէմ թշնամոյն ի մարտ մտար,  
Ոչ ի նմանէ դու յաղթեցար,  
Այլ կոխեցեր զնա շարաշար...<sup>1</sup>

Հետաքրքրական է նկատել, որ այս շրջանի հիշատակարաննե-  
րում ու գեղարվեստական գրականության մեջ գովերգվող ու մեծար-  
վող հերոսները մեծ մասամբ ժողովրդի ծոցից ելած և իրենց կյանքը  
ժողովրդի ազատագրության համար զոհաբերող հասարակ մարդիկ  
են, որոնք օժտված են մարդկային բարձր առաքինություններով:

Այս ժամանակի համար բնորոշ է նաև Թովմա Մեծոփեցու  
«Պատմության» մեջ պահպանված այրի կնոջ և նրա միակ երեխայի  
հետևյալ ողբերգական պատմությունը: Լենկթեմուրյան հրոսակնե-  
րից հալածական փախչում է մշեցի մի կին՝ իր 7—8 տարեկան որ-  
դուն զրկած: Բարձրաբերձ լեռան գագաթին կնոջ ուժերն սպառվում  
են, նա այլևս չի կարողանում տանել իր երեխային, իսկ հալածող  
մոլեգնած զինվորները քիչ է մնում հասնեն նրանց... Սոսկալի հու-  
սահատության մեջ կինն իր ձեռքով սպանում է զավակին և ինքն  
էլ ցած նետվում լեռան գագաթից ու ջախջախվում անդունդի քարե-  
րի վրա:

Այս ցնցող պատմությունը որքանով էլ անհատական մշակման  
ենթարկված լինի, այնուամենայնիվ, ցույց է տալիս այն անսահ-  
ման ատելությունը, որ տածում էր ժողովուրդը դեպի լենկթեմուր-  
յան բռնապետությունը:

Լենկ-Թեմուրի մահից հետո նրա հսկայածավալ տերությունը,  
որ կազմված էր տարացեղ ու բազմալեզու ժողովուրդներից, արա-  
գորեն քայքայվում է ու կործանվում:

<sup>1</sup> Փիղալեմեան, Նոտարք հայոց, 1888, էջ 3:

Հայաստանի արևելյան ու արևմտյան շրջաններում նորից  
գլուխ են բարձրացնում Կարա-Կոյունլու և Ակ-Կոյունլու թուրքմեն  
ցեղերը, որոնք դեռևս Լենկ-Թեմուրի արշավանքներից առաջ գրա-  
վել և իրենց իշխանությանն էին ենթարկել Հայաստանի մի քանի  
շրջաններ: Պատերազմական թատերաբեմ է իջնում Կարա-Կոյուն-  
լու քոչվորական ցեղերի առաջնորդ Կարա-Յուսուֆը, որը կարճ ժա-  
մանակում իր գերիշխանության տակ է առնում Հայաստանի ու  
Վրաստանի մի շարք շրջաններ: Հայաստանի արևմտյան շրջանները  
գրավում է Ակ-Կոյունլու թուրքմեն ցեղի առաջնորդ Օթման ամիրան:  
Լենկթեմուրյան պետության կողմից հրի ու սրի մատնված Հայաս-  
տանը փաստորեն բաժանվում է միմյանց նկատմամբ անհաշտ ու  
կատաղի թշնամի Կարա-Կոյունլու և Ակ-Կոյունլու թուրքմենական  
ցեղերի միջև: Լենկթեմուրյան բռնապետությունից ազատագրվելու  
հույսով՝ թեմուրյանների դեմ մղվող պատերազմների առաջին շրջա-  
նում ժողովրդի մի մասը զգալի օգնություն ու օժանդակություն է  
ցույց տալիս Կարա-Կոյունլու և Ակ-Կոյունլու ցեղերին:

Տաթևի վանքում ընդօրինակված Ավետարանի գրիչ Մաթևոս  
վարդապետը ուրախությամբ է ընդունում Հայաստանի արևելյան  
մասում Կարա-Յուսուֆի իշխանության գլուխ անցնելը, կարծելով  
թե Կարա-Յուսուֆը ժողովրդին բերելու է խաղաղություն ու ազա-  
տություն: «... Եւ ետ գրել՝ ի թուականութեանն Հայոց ութհարիւրե-  
րորդի յիսներորդի և վեցեակ թուի (1407), ի դառն և ի նեղ ժա-  
մանակիս, որում ազգն նետողաց անջինջ կորաւ և փոխանորդ նո-  
րին իշխեց աթոռոյս Ատրպատականի թորգոմածին Ղարա-Ուսուֆ  
անուամբ, որ և մարտեաւ երկու անգամ և յաղթահարեաց զոմն ի  
թոռանց շար գազանին Թամուրին, շարաբարու, ահեղատեսիլ և շա-  
րասիրտ անուամբ Աբ[ու-Բ] յաքր. եւ այն ևս ի վերին խնամոցն ամե-  
նակարողին աստուծոյ, որ ազատեաց աշխարհս ի յայն ահիրաւ  
խնդրողացն, որ և զամենայն ազգ և զամենայն լեզու ի ներքայն նոցա  
հնազանդ և գերի կային...»:

Սակայն Մաթևոս վարդապետի այս հույսերը չեն իրականա-  
նում: Իշխանության գլուխ անցնելու հենց հաջորդ տարիներին ար-  
դեն հայերեն ձեռագրերի հիշատակարաններում ու մատենագրու-  
թյան մեջ Կարա-Յուսուֆի մասին խոսվում է խիստ բացասական  
մակդիրներով. «... Զայս չափ շարիս առ զխաւորս աշխարհիս հա-  
սոյց Ուսուֆն, իսկ առ փոքրունսն զի՞նչ ասացից: Զի վայրենացեալ  
զինուոբք նորա ուր և հասանէին, ոչ զնտանիսն գիտեն և ոչ զօ-

<sup>1</sup> «Ժժ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա., էջ 76:

տարսն, քալանեն և կոփեն զձեռնասն իւրեանց, քէ ի ճանապարհի, քէ ի տան, քէ առանձին, քէ ի ֆաղափի, և այսպէս ոչ գոյր քիւ աղաղակի մեռոյ...»<sup>1</sup>:

Այսպէս է բնորոշում Կարա-Յուսուֆի իշխանութեան տարիներին ժողովրդի վիճակը ժամանակակիցներից Մատթեոս Մոնոզոնը:

Դրութիւնը բոլորովին մխիթարական չէր նաև Հայաստանի արևմտյան մասում: Այստեղ ապրող ժողովրդի անլուր տառապանքներն ու հարստահարված վիճակը խտացրած գույներով է պատկերել Մկրտիչ Նաղաշը. 1418 թ. Բաղեշի Պոռ գյուղում գրած մի «Յայսմաուրբ»-ի հիշատակարանում նա գրում է. «Ի մեծ տարակուսանս կայի վասն դառնութեան ժամանակիս և անբման աշխարհիս. այլ զագգիս մեռոյ զտառապանս ո՛վ կարէ ընդ գրով արկանել. քանզի ի բազմանալ մեղաց մերոց փակեցաւ դուռն ողորմութեան աստուծոյ, և պատուհանք բարկութեան բացան և ի մեռում ժամանակիս...»<sup>2</sup>:

Բանն այն է, որ երկար ժամանակ Հայաստանի հողի վրա չեն դադարում պատերազմները մի կողմից Հայաստանի թուրքմեն տիրակալների ու թեմուրյան մասնատված պետությունների, մյուս կողմից էլ՝ Հայաստանի արևելյան ու արևմտյան մասերում իշխող Կարա-Կոյունլու և Ակ-Կոյունլու ցեղերի միջև, որոնք առավել մեծ շահերի են հասնում հատկապես 1450-ական թվականներին:

Օգտվելով թեմուրյան քայքայված ու մասնատված պետության մեջ լայն ծավալ ընդունած երկպառակություններից ու ներքին դավադրություններից՝ Կարա-Կոյունլու ցեղի առաջնորդ Զահանշահը իրեն հայտարարում է ինքնագլուխ ու միահեծան տիրակալ և առանց լուրջ դիմադրության գրավում ու իր իշխանությանն է միացնում դեռևս թեմուրյանների գերիշխանության տակ գտնվող Համադանը, Ռեյը, Ղազվիինը, Գիլանը, Խորասանը և այլն: Իր այդ հաջողություններից շլացած՝ նա վճռում է վերջնականապես նվաճել ու իր պետությանը միացնել ակ-կոյունլուների գերիշխանության տակ գտնվող Արևմտյան Հայաստանը, Միջագետքը և առհասարակ փոքրասիական մի շարք շրջաններ:

1459—60 թվականներին կատաղի կոիվներ են սկսվում Կարա-Կոյունլու Զահանշահի և Ակ-Կոյունլու Զահանգիրի միջև:

Սակայն այդ պատերազմները կարա-կոյունլուների պետությանը ժամանակավոր հաջողություններից ավելի ոչինչ չեն տալիս: Ճիշտ է, սկզբնական շրջանում Զահանշահը գրավում է մի շարք

<sup>1</sup> «Ժծ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա., էջ 194—195:  
<sup>2</sup> Նույն տեղում, էջ 215:

քաղաքներ և գյուղեր, նույնիսկ ավերում ու թալանում է Երզնկան, Ամիրը, Մերտինը և այլն, բայց հետագայում ուժեղ դիմադրության հանդիպելով՝ ստիպված է լինում թողնել իր նվաճած քաղաքները և ետ դառնալ: Ինչպես արշավանքների, այնպես էլ հատկապես նահանջի ժամանակ անհաջողությունից ու ապարդյուն կոիվներից փազազած Զահանշահի դիմվորներն ավերում ու թալանում են իրենց ճանապարհին ընկած Բաղեշը, Մուշը, Խլաթը և այլ հայաբնակ գավառներ ու գյուղեր: Մուրեզում հրոսակների ոտքի տակ ոչնչանում են ժողովրդի ապրուստի միակ աղբյուր հանդիսացող այգիներն ու ցանքատարածությունները, երկրով մեկ տարածվում է սովն ու համաճարակը: Թովմա Մեծոփեցին և այլ հիշատակագիրներ սարսափելի պատկերներով են նկարագրում ստեղծված իրադրությունը: «... Եւ յետ գնալոյ նորա յաշխարհէս մերմէ եկն սով սաստիկ յաշխարհս մեր և տարածեցաւ յամենայն տեղիս, զի կերան զշունս եւ զկատուս, խորովէին զուստերս և դստերս. այր՝ զկիսն, եւ կին՝ զայրն սպանանէին զմիմեանս եւ ուտէին եւ ոչ յագնեային. եւ յետոյ ինքեանք մեռանէին: Զի ոչ կարեմ պատմել զդառնութիւնս մեր զոր տեսաք աշօք և լուաք ականճօք, զի ջնջեցաւ մարդկութիւնս, մանաւանդ Հայկազեան գաւառիս...»<sup>1</sup>:

1059

Այս պայմաններում հայ աշխատավոր ժողովրդի լայն զանգվածները սովից ու թշնամու սրից ազատվելու համար ինքնակամ դիմում են տարագրության. սկսվում է մասսայական արտագաղթ դեպի զանազան հեռավոր երկրներ:

Ակ-կոյունլուների պետությունը վերջնականապես տապալելու և նրա իշխանության տակ գտնվող երկրները գրավելու նպատակով 1467 թվականին Զահանշահը հսկայական զորքերով կրկին արշավում է դեպի Հայաստանի արևմտյան սահմանները: Սակայն այս արշավանքը կարա-կոյունլուների պետության համար ունենում է ճակատագրական նշանակություն: Զահանգիրին հաջորդած ակ-կոյունլուների առաջնորդ Ուզուն-Հասանը, որ բավականին վերակառուցել էր իր պետությունն ու թարմացրել բանակը, այդ կոիվների ժամանակ ընտրելով հարմար միջոց՝ կայծակնային հարձակումներ է գործում կարա-կոյունլուների բանակների վրա: Կատաղի մարտերում Զահանշահը սպանվում է, իսկ նրա երկու որդիներն ու բարձրաստիճան զինվորականներից շատերը գերի են ընկնում, որոնց հետ Ուզուն-Հասանը դաժան դատաստան է տեսնում:

<sup>1</sup> Թովմա Մեծոփեցի, Պատմութիւն Լանկ-Քամուրայ, էջ 32:

Հայաստանի արևելյան մասում կարա-կոյունլուների պետու-թյունը խարխլվում ու արագորեն կործանվում է: Կարա-կոյունլու-ներին հնազանդություն ու հավատարմություն հայտնած բազմա-թիվ մանր էմիրություններ ու առանձին ֆեոդալներ իսկույն լքում են նրանց և իրենց անկախ հայտարարում:

1467-ական թվականներից Հայաստանը ընկնում է Ակ-Կոյուն-լու պետության գերիշխանության տակ, որը առում է մինչև XVI դա-րի սկիզբը, մինչև օսմանյան արշավանքները:

XV դարի գրականության, հատկապես Մկրտիչ Նաղաշի ստեղ-ծագործությանը սնունդ տվող պատմական իրականության ուրվա-գիծը պակասավոր կլինի, եթե համառոտակի կանգ չառնենք ժո-ղովրդի հարստահարության ու կեղեքման այլ փաստերի վրա, որոնք իրենց արձագանքն են գտել ժամանակի ու հետագա շատ գրողների ստեղծագործություններում:

Ժամանակակիցների վկայությամբ տասնամյակներ շարունակ իրար հաջորդող մահմեդական իշխանությունների տիրապետության ողջ ընթացքում սոսկալի շափերի էին հասել ժողովրդից գանձվող հարկերն ու տուրքերը. «... Ի խանութեան Ջահանշահին՝ որդոյ Ու-սուֆին, որ մտաւ ի Խորասան, և է. (7) տարի գաշխարհս սահուն և երեւուն պահեաց՝ ի հարկապահանջութիւն, ի տառապանս և ի շարչարանս, այնպէս և հայր գորդիս ուրանային...»<sup>1</sup>, գրում է ժա-մանակակից Ստեփանոս հիշատակագիրը:

Դրան լրացնում է Թովմա Մեծոփեցին իր հետևյալ շատ բնորոշ վկայությամբ. «... Եւ այն իշխանն որ կործանեաց զաշխարհս մեր՝ այժմ տէր եւ իշխան է կարգեալ ի վերայ աշխարհիս մեր վասն մե-ղաց մերոց պատուհասի եւ ի բարկութենէն Աստուծոյ. եւ այժմ ձգեալ է զամենայն հաւատացեալս ի ներքոյ հարկապահանջու-թեան՝ մինչ զի ամենայն մարդազլուխ 40 թանկայ առնուն թո՛ղ զբահրայ և զշաբէք ի ծերոց և ի տղայոց, յորքոց և յայրեաց, ի կու-րաց, յաղատաց և ի տնանկաց: Եւ ամենեքեան կենդանի մեռեալք և սովեալ կան...»<sup>2</sup>:

Այս շրջանում առավել սոսկալին այն է, որ մահմեդական աշ-խարհիկ ու հոգևոր առաջնորդները գաղտնի հրահանգ էին տալիս երկրի կառավարիչներին, որպեսզի նրանք առիթներ ստեղծեն և հարկահանությունը դարձնեն քրիստոնյաներին հավատափոխ անե-

<sup>1</sup> «Ժն դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Բ., էջ 214:

<sup>2</sup> Թովմա Մեծոփեցի, Պատմութիւն Լանկ-Քամուրայ, էջ 111:

լու՝ հոգեպես ու բարոյապես ստրկացնելու միջոց: «... Բայց խրատ մի տամ քեզ, — գրում է մահմեդական հոգևոր առաջնորդն իր ստո-րադրյալներին, — եթէ զառաջնորդն մեր հայհոյցեցին նորա. կունտ և քաշալ անուն տային, հարկ և խարաճ դիր ի վերայ ամենայն քրիս-տոնէից զի ուրանան զՅիսուս Քրիստոս և դարձցին դոքա յօրէնս մեր...»<sup>1</sup>:

Քրիստոնյաներին հավատափոխ անելու և առհասարակ նրանց ազգային սովորություններն ու ծեսերը վերացնելու փորձեր են ար-վում նաև հետագա ժամանակներում: Այդ տեսակետից չափազանց բնորոշ է դեպքերի ժամանակակից Սարգիս գրչի չափածո հիշատա-կարանը: Նկարագրելով Ուզուն Հասանի բռնությունների ու հար-կահանության մեթոդները՝ Ստեփանոս գրիչը գրում է.

Կապուտ նշան եղ քրիստոնեաց,

Չի բաժանին յանօրինաց.

Ձմեռեալն ի ցած տանել սասց,

Չուանով չափել զվիզս մանկանց...<sup>2</sup>

Այլ և զհարումն զանգակի՝

Ձգուշակ փողոյն Գաբրիէլի՝

Նտ խափանել յամէն տեղի,

Գեղ՝ և յանապատ՝ և ի քաղաքի...<sup>2</sup>

Ժամանակակիցների վկայությամբ «օրինական» հարկերի կող-քին քրիստոնյաները պետք է վճարեին նաև «անօրինական» հար-կեր, որոնցից ոչ մի կերպ ազատվել հնարավոր չէր: Այսպես՝ բարձ-րաստիճան իշխաններին նվերներ տալու անվան տակ, այս շրջա-նում հարկեր են գանձվում նոր տարվա խնջույքների, բարձրաստի-ճան իշխանի՝ տվյալ բնակավայրով անցնելու կամ իջևանելու «բարեհաճության» համար, իշխանական հանդեսների կամ ղեբախտ պատահարների առիթներով: Ինչպես նաև հարկեր են գանձվում բարձրաստիճան իշխանավորների ու զինվորականների աշխատա-վարձն ավելացնելու և այլ բազմաթիվ առիթներով:

Հարկային այդ դաժան քաղաքականության պայմաններում աշ-խատավոր ժողովրդի վիճակը միանգամայն անտանելի էր դառնում: Իր արյան քրտինքով մշակած հողից նրան գրեթե ոչինչ չէր հաս-նում: Նույն Ստեփանոս գրչի վկայությամբ.

<sup>1</sup> Թովմա Մեծոփեցի, Պատմութիւն Լանկ-Քամուրայ, էջ 124:

<sup>2</sup> «Ժն դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Բ., էջ 394:

... Հարկապահանջն յամէն տեղի  
Քաշէ ծեծէ զազգրս Արամի.  
Խնդրէ արծաթ՝ և ընտիր ոսկի,  
Յայնմ որ շունի փող պրզնձի...<sup>1</sup>

Հայ աշխատավորը հարկ էր վճարում ոչ միայն պետական իշխանություններին. նա ուներ նաև իր անմիջական տերերը՝ հայ ֆեոդալն ու տանուտերը և նրանց պաշտոնյաները, որոնք պակաս անողորմությամբ շէին կեղեքում նրան: Թովմա Մեծոփեցին իր պատմության մեջ մի քանի անգամ հիշատակում է գրկող ու անամոթ տանուտերերին ու իշխաններին, որոնց շար գործերի, կեղեքումների և մյուս այլանդակությունների մասին խոսել ու գրել անգամ անհնար է համարում: «... Եւ այս ամենայն,— գրում է պատմիչը,— եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց եւ շար գործոց, մանաւանդ ի ծուլութենէ նրիցանց և ի խաբեբայութենէ կրօնաւորաց և ի շար գործոց անհաւատ և ի սուտանուն հաւատացելոց, ի գրկող և յանքաւ տաւաւեաց, ի պիղծ և ի զագրալի առաջնորդաց, զոր ոչ կարեմք բնդ գրով արկանել զաղանդութիւնս մեր և նոցա, զի ծածկագիտի՞ն յայտնի է ամենայն...»<sup>2</sup>:

Ինչպես նախորդ դարերում, այնպես էլ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում վանքերն ու առանձին բարձրաստիճան հոգևորականները ձեռք են բերում հսկայական կալվածներ, որոնց վրա դաժան շահագործման էր ենթարկվում հայ շինականը: Հիշատակություններ կան, որ որոշ բարձրաստիճան հոգևորականներ զբաղվում են կաշառակերութեամբ, վաշխառութեամբ և խաբեբայության միջոցով անգրագետ ու աստվածավախ աշխատավորին կեղեքելու արգահատելի գործերով: Այսպես, Աղվանից կաթողիկոս Մատթեոսն իր ձեռքով գրած հիշատակարանում պատմում է, որ 1434 թ. ինքը ունէր Հովհաննեսի առկուսով պարտք է տալիս 20 (6000) դեկան գրամ ու 1 (20) թաղար ցորեն: Սակայն պարտքատերը պարտքը չվճարած մահանում է: Կաթողիկոսը պահանջում է իր պարտքի դիմաց բռնագրավել պարտապանի գույքը: Սակայն նրա ուղարկած հարկահանները պարզում են, որ պարտապանի ընտանիքը գտնվում է դառն աղքատության մեջ և մի հիվանդոտ ձիուց, մի հնամաշ թամբից ու մի ավետարանից բացի ոչինչ չունի: Այդ դեպքում «մեծահոգի» կաթողիկոսը ներում է պարտքը՝ հիվանդոտ ձին ու հնամաշ

<sup>1</sup> «Ժն դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Բ., էջ 394:

<sup>2</sup> Թովմա Մեծոփեցի, Պատմութիւն Լանկ-Քամուրայ, էջ 95:

թամբը վերագարծնում է մերկ ու սոված երեխաներին, իսկ ավետարանը վերցնում պարտքի դիմաց, որը և հետագայում վաճառում է Եղիշա երեցին 1200 դեկանով<sup>1</sup>:

Առհասարակ հոգևորականության մի սովոր մասի արատավոր բարքերի վերաբերյալ տեղեկություններ են պահպանվել ժամանակի մի շարք գեղարվեստական գործերում ու հիշատակարաններում, ըստ որոնց հոգևոր բարձրաստիճան պաշտոնները դարձել էին լայնատարած կալվածքներ ձեռք բերելու և հարստություն կուտակելու միջոց: Այդ է պատճառը, որ Սսի կաթողիկոսական աթոռի շուրջն ստեղծվել էր դավադրության մի լայն ցանց: Թովմա Մեծոփեցին վկայում է, որ մեկ-երկու տասնամյակի ընթացքում Սսում վեց կաթողիկոս են օծում և վեցին էլ ամբաստանում և թունավորելով սպանում<sup>2</sup>:

Հոգևորականության՝ որպես առավել դաժան ֆեոդալի, բնութագրերը տվել է էնգելսը «Գերմանական գյուղացիական պատերազմները» մեծարժեք աշխատության մեջ: Խոսելով գերմանական կայսրության մեջ մտնող հոգևոր ֆեոդալների մասին՝ էնգելսը գրում է. «Եկեղեցական այս բարձրաստիճան պաշտոնյաները կամ սոսկ կայսրության հետ կապված իշխաններ էին, կամ թե այլ իշխանների վեհապետության ներքո գտնվող ֆեոդալներ, որոնք իշխում էին լայնատարած երկրամասերի վրա՝ ենթարկելով իրենց իշխանությանը բազմաթիվ ճորտեր ու հարկատու գյուղացիներ: Իրենց հպատակներին նրանք ոչ միայն ազնվականների և իշխանների նման անխնա շահագործում էին, այլ այս տեսակետից նրանք առավել ևս անամոքաբար էին վարվում: Իրպիտ բռնության հետ միասին նրանք գործադրում էին կրոնական բոլոր հնարներ... որպեսզի իրենց հպատակներից կորզեն նրանց վերջին ստակը կամ ավելացնեն եկեղեցական կալվածքներ...»<sup>3</sup>:

Որքան էլ պայմանները Հայաստանում ու Գերմանիայում տարբեր էին և հոգևոր իշխանության գործունեությունը յուրահատուկ, այնուամենայնիվ, էնգելսի՝ հոգևոր ֆեոդալականության այս դիպուկ բնութագրերը շատ կողմերով վերաբերում է նաև հայ հոգևորականության բազմաթիվ ներկայացուցիչներին: Ժամանակակից հիշատակարաններում պահպանվել են հավատի ուժը օգտագործելու միջոցով գանձվող բազմաթիվ հարկերի անուններն ու շափերը: Այդ հարկերից են՝ կալի և հնձանների պտուղ և երեխայրիք, տյառնա-

<sup>1</sup> «Ժն դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա., էջ 439:

<sup>2</sup> Թովմա Մեծոփեցու Հիշատակարանը, էջ 55:

<sup>3</sup> Ե. էնգելս, Գերմանական գյուղացիական պատերազմները, Երևան, 1938, էջ 35:

կան մատաղ, կողոպուտք, սրբանվեր կամ սրբադրամ, խոստովանադրամ, հաղորդադրամ և զանազան այլ տուրքեր<sup>1</sup>։

Այսպիսով մի կողմից տեական պատերազմները, մյուս կողմից հարկային ծանր քաղաքականությունը և աշխարհիկ ու հոգևոր ֆեոդալների շահագործողական բիրտ մեթոդները աշխատավորությանը դրել են ծանր վիճակի մեջ։ Ժողովրդական լայն զանգվածների ընչազրկության ու ծայրահեղ աղքատության մասին հետևյալն է պատմում Թովմա Մեծոփեցին. «... Այլ վայ-և եղուկ է ինձ հազար անգամ ի մի բերան—լալահառաչ բացականչում է՝ Թովման,— զի զօր անգթութեան մեղացն ի դատաստանի աուրն այսօր ի քաղաքիս մեր տեսաք. զի ամենայն գերին ի 1000 թանկայ վաճառէին, և այնքան յաղքատութիւն անկեալ կամք ամենայն ազգս, քաղաք և գիւղք, վանք և ագարակ զի մին քաղաք և մին գիւղ գերի մի գնել ոչ կարէ վասն դառն աղքատութեան տառապանց...»<sup>2</sup>։

Սակայն որքան էլ որ հոգևորականները ժողովրդին շահագործելու ու կեղեքելու մեջ ետ չէին մնում աշխարհիկ ֆեոդալներից, այնուամենայնիվ, սխալ կլինեք կարծել, թե միջնադարում հայ ժողովուրդը երես էր դարձրել հոգևոր իշխանությունից և այլևս ոչ մի սպասելիք չունեք նրանից։ Քննադատելով ու անարգանքի սյունին գամելով առանձին հոգևորականների՝ իրենց արգահատելի բարքերի համար՝ ժողովրդական զանգվածները միաժամանակ հույս ունեին, որ եկեղեցին կարող է բարենորոգվել ու ծառայել ժողովրդին։ Այդ է պատճառը, որ «անթի ու անհամար բազմութիւն ժողովրդեան» ըմբոստանալով Սսի լատինամու ու ազգադավ կաթողիկոսության դեմ՝ նպաստում է կաթողիկոսական աթոռը Սսից էջմիածին տեղափոխելու գործին։

Կարա-Կոյունլու և Ակ-Կոյունլու թուրքմենական պետությունների տիրապետությունն իր խիստ բացասական դերը խաղաց հայ ժողովրդի հոգևոր ու մտավոր մշակույթի կյանքում։ Միմյանց նկատմամբ անհաշտ ու արյունարբու թշնամի այդ երկու ցեղերի միջև բաժանված Հայաստանի արևմտյան և արևելյան մասերն առժամանակ զրկված էին մշակութային ու քաղաքական գործուն շփումից ու փոխհարաբերությունից։ Այդ հանգամանքը ուժեղ հարված հասցրեց դարաշրջանի հայ ժողովրդի միասնական մշակույթի զարգացմանը։

Տեղի ունեցող պատերազմների ժամանակ Հայաստանի արև-

մրտյան ու արևելյան մասերում իշխողները ամենայն դաժանությամբ այրում ու ոչնչացնում էին նվաճված քաղաքներն ու գյուղերը, քանդում ու ավերում էին ճարտարապետական կոթողները, ոչնչացնում արվեստի ու մշակույթի գանձերը։

Թեև շարունակական պատերազմների ու արշավանքների հետևանքով ավերվեցին հայ մտքի կենտրոններ Տաթևի համալսարանը, Մեծոփի, Սուրբ Անանիայի և այլ վանքերին կից դպրոցները, բայց և այնպես այդ պայմաններում էլ հայ ժողովրդի մշակութային կյանքը կանգ չառավ։ Ժամանակակիցների վկայությամբ ավերված ու հրի մատնված նշանավոր ու քիչ հայտնի դպրոցների շատ վարդապետներ ու քարոզիչներ, ազատվելով բռնակալի սրից, փախչում ու երկրի զանազան մասերում հիմնում են նոր դպրոցներ և, իրենց շուրջը համախմբելով ուսումնասեր երիտասարդներ՝ աստվածաբանական գիտության հետ միասին դասավանդում են փիլիսոփայական-տրամաբանական, աստղաբաշխական, մասթեմատիկական ու հասարակագիտական առարկաներ։ Այդպիսի դպրոցներ են հիմնվում նաև Հայաստանից հեռու հայաբնակ գաղութներում, որոնցից նշանավոր է Կաֆայի (Թեոդոսիա) վանքի դպրոցը։ XV դարի հայերեն ձեռագիր հիշատակարաններում բազմաթիվ տեղեկություններ են պահպանվել այն մասին, որ հայ աշխատավոր ժողովրդի ծոցից ելած գրիչները՝ շատ անգամ թշնամու սրից հալածվելով, թողնում էին տուն, տեղ, ունեցվածք և, սակայն, իրենց հետ տանում, ազատում էին տասնյակ ձեռագիր մատյաններ, որոնց մի մասն էլ գրվել է հենց տարագրության, պանդխտության ճանապարհին։

XV դարի առավել աչքի ընկնող գիտնականներից են Գրիգոր Տաթևացին իր բազմաթիվ գիտական-փիլիսոփայական աշխատություններով ու մեկնություններով, Հակոբ Արմեցին՝ իր աստղաբաշխական հետաքրքիր դասախոսություններով ու տոմարական արվեստին նվիրված աշխատություններով, Գրիգոր Խլաթեցին (Մերենց), որի «Յիշատակարան աղետից» հանրահայտ չափածո ընդարձակ հիշատակարանը պատմական արժեքավոր տեղեկություններ է հաղորդում 1386—1422 թվականների կենդ-Թեմուրի ու նրա հաջորդների սոսկալի ավերածությունների ու հարստահարությունների մասին, Թովմա Մեծոփեցին, որի «Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց» գործը XV դարի պատմությանը նվիրված միակ ծավալուն աշխատությունն է, որտեղ և արժեքավոր տեղեկություններ են հաղորդվում XV դարի հասարակական-քաղաքական բազմաթիվ երևույթների ու հասարակության տարբեր շերտերի

<sup>1</sup> «Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Բ., էջ CXXXIV։

<sup>2</sup> Թովմա Մեծոփեցի, Պատմութիւն Լանկ-Թամուրայ, էջ 121—122։

կյանքի ու կենցաղի մասին, Ամիրդովլաթ Ամասիացին, որի «Օգուտ բժշկութեան» և «Անգիտաց անպէտ կամ բառարան բժշկական նիւթոց» աշխատութիւնները հսկայական աշխուժութիւն մտցրին ժամանակի բժշկական ու դեղագործական գիտութեան մեջ:

Այս շրջանի առավել նշանավոր գրողներից ու բանաստեղծներից են Գրիգոր Տաթևացու աշակերտ Առաքել Սյունեցին, որ հայտնի է իր ընդարձակ «Աղամ-գիրք» պոեմով ու բազմաթիվ այլ հատկապես կրոնական բովանդակութիւն ունեցող, ոտանավորներով, Առաքել Բաղիշեցին Կ. Պոլսի գրավմանը նվիրված իր ընդարձակ պոեմով ու գանձերով, սիրո նշանավոր երգիչ Հովհաննես Թլկուրանցին և վերջապես Մկրտիչ Նաղաշը, որն-իր հասարակական գործունեութեամբ ու սոցիալական ուժեղ շունչ ունեցող բարձրարժեք բանաստեղծութիւններով առանձնահատուկ տեղ է գրավում ամբողջ միջնադարյան գրականութեան մեջ:

Անշուշտ սրանցով չի սահմանափակվում XV դարի հայ գրողների ու գիտնականների և նրանց աշխատութիւնների ցանկը: Հայտնի են բազմաթիվ այլ հեղինակներ՝ Աբրահամ Անկյուրացին, Կիրակոս Երզնկացին կամ Արեւելցին, Հովհան Կրոնավորը, Սարգիս վարդապետ Կաֆացին և ուրիշներ, որոնցից շատերը դեռևս բանասիրութեանը անհայտ են և սպասում են իրենց ուսումնասիրողներին:

Հիշված հեղինակների ու նրանց աշխատութիւնների մեջ մի բան որոշակի է. այդ այն է, որ XV դարի մշակույթի բոլոր ճյուղերն էլ՝ չնայած իրենց կրոնական շղարշին, ընդհուպ մոտենում են ժողովրդին, վերարտադրում ժամանակի սոցիալ-քաղաքական կյանքը:

XV դարի գեղարվեստական գրականութեան համար, մի կողմից, թեմա է դառնում արտաքին նվաճողների ու ներքին ֆեոդալականութեան ճիրաններում հարստահարվող ժողովրդի հասարակական վիշտը, հասարակութեան ներսում ստեղծված սոցիալական ու իրավական անհավասարութիւնը, մյուս կողմից՝ միանգամայն աշխարհիկ այդ թեմաների կողքին բավական որոշակիորեն հնչում են երկնային, հանդերձյալ կյանքի գովերգմանը նվիրված կրոնական մոտիվները:

Միջնադարյան հասարակական կյանքում առկա հակասութիւններն անհատի մեջ առաջ էին բերում երկընտրանք, ներքին սուր պայքար և նա ելք էր որոնում հանդերձյալ կյանքում: Իրականութեան և անհատի մեջ եղած այդ հակասութիւններն իրենց արտացոլումն են գտել միջնադարյան հայ գրականութեան ու արվեստի գրեթե բոլոր ճյուղերում:

## ԿՅԱՆՔԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Մկրտիչ Նաղաշի մասին կենսագրական տեղեկութիւններ պահպանվել են XV դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններում, որոնց մեջ ուշագրավ է Նաղաշին ժամանակակից Աստվածատուր վարդապետի «Յիշատակարան գրոցս պատմագրաբար, զոր շինեալ է քաջ քարտուղարն, առաքելական եպիսկոպոսն և աստուածաբան վարդապետն տէր Աստուածատուր՝ քուերորդի րարունապետին Յակոբայ Ովսանանց»<sup>1</sup> վարք-հիշատակարանը, որտեղ հեղինակը ընդհանուր տեղեկութիւններ է հաղորդում Նաղաշի կյանքի ու գործունեութեան մի քանի դրվագների մասին՝ հասցնելով նրա կենսագրութիւնը մինչև 1449 թ., Միջագետքի (Մերտինի) ժանտախտի առաջին մեծ համաճարակը: Դրանից հետո Նաղաշի հետագա կյանքի ու գործունեութեան մասին որոշակի տեղեկութիւններ մեզ չեն հասել: Այդ հիշատակարանից, ինչպես նաև Նաղաշի ստեղծագործութիւններից իմանում ենք, որ ծնվել է Բաղեշի գավառի Պոռ գյուղում: Նա Առաքել քահանայի և Հոյուս Խաթունի վերջին զավակն էր: Մկրտիչից բացի, նրանք ունեցել են ևս երկու որդի, որոնցից ավագը՝ Հովհաննեսը, հասել է քահանայութեան աստիճանի, իսկ կրտսերը՝ Աբգարը, երկար ժամանակ զբաղվել է վաճառականութեամբ: Սրա մասին Աստվածատուր վարդապետը գրում է. «... որ եղև երեւելի, մեծ և փառաւոր և պատուեալ յամենեցունց, որ և զտուն հար իւրոյ առաւել քան զառաջինն բարեկարգեաց՝ երկրորդ հայր Աբրահամ լեալ՝ կերակրելով զբազումս»<sup>2</sup>:

1449 թ. իր ընդարձակ հիշատակարանում Նաղաշը սրանց մա-

<sup>1</sup> Այս հիշատակարանն առաջին անգամ հրատարակվել է «Արարատ»-ի 1898 թ. հունվարի հավելվածում, ապա 1955 թ. Երևանի Մատենադարանի № 2379, 9004 ձեռագրերի համեմատութեամբ հրատարակել է պատմական գիտ. դոկտոր Լ. Խաչիկյանը «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» արժեքավոր աշխատութեան մեջ (մասն Ա., էջ 622—631):

<sup>2</sup> Ձեռագիր № 2379, էջ 245—ա:

սին հիշում է որպես վաղուց վախճանվածների՝ «զհանգուցեալքն ի Քրիստոս...»:

Մկրտիչ Նաղաշի ծննդյան ու մահվան ստույգ թվականը հայտնի չէ. ո՛չ ինքը, ո՛չ էլ ժամանակակիցներն այդ մասին որոշակի ուղիղ չեն ասում: 1418 թ. Պոռ գյուղի մոտ ս. Գևորգ վանքում գրված մի «Յայսմաուրքի» հիշատակարանում ասված է. «Եւ ես... մեղսամած և տարտամ ոգի Մկրտիչ գրիչս. որ կոչիմ սարկաւագ. բայց բացասութեամբ և ոչ ստորասութեամբ, զի գործով և խորհրդով եւս վատթարագոյն գտանիմ քան զամենայն ոք ի ռամկաց և զարտուղի մարմնական գնացիքս, քանզի շնչմունք զանազան տապախառն փորձութեանց շուրջ զմեօք մածեալ կայ, և ախտք անհնարինք և հեշտութիւն ձգիչ, կարիք ի ձեռին և անմտութիւն մերձ, ծուրութիւն խաւարեցուցիչ և անարիութիւն պատեալ զինե...»: Որ այդ Մկրտիչ սարկավագը Նաղաշն է, ապացուցվում է Նաղաշի մի ոտանավորով («Տաղ հարսանեաց և ուրախութեան մարդկան»), որի տների սկզբնատառերի հաջորդականությունը կազմում է «Նաղաշ սարկաւագի ե սայեձ (»): Մեզ հասած մի շարք հիշատակարաններից պարզվում է, որ Նաղաշը ոչ միայն երիտասարդ հասակում, այլև եպիսկոպոսության հասած ժամանակվանից հետո էլ հաճախ է զբաղվել մատչաններ արտագրելով ու պատկերազարդելով և այդ մատչանների հիշատակարաններում իրեն անվանում է Մկրտիչ սարկավագ, Նաղաշ սարկավագ, Մկրտիչ նկարագիր, Նաղաշ վարդապետ և այլն: Մատչաններ արտագրելու և նկարազարդելու մեջ նա այնքան հմուտ է եղել, որ ժամանակակիցները նրա մասին խոսել են մեծ գովեստներով, իսկ հետագայում Թովմա Մեծոփեցին հատուկ հանձնարարություն է արել նրան ոմն Ներսես կրոնավորի համար մի պատարագամատուց պատրաստել ու պատկերազարդել: 1432 թ. Մեծոփի վանքում գրված մի հիշատակարանում հանդիպում ենք այդպիսի մի վկայության. «Եւ եռափափագ և տենչալի հայցմամբ խնդրեցի յաստուածաբան վարդապետէն և ի քաջ րաբունապետէն Թովմայէ: Վասն որոյ ըստ բնածին բարուցն եւ հայրական գթոյն խոնարհեցաւ յաղաչանս տառապելոյս եւ ինքն շնորհեաց զքարտէսն եւ ետ գրել իւր ձեռնաստուն աշակերտացն՝ Մկրտիչ վարդապետին և Յովհաննէսին, և Զաքարիային և Ելից զտենչումն փափագանաց իմոց...»<sup>2</sup>:

<sup>1</sup> Փիրզալմեան, Նոտարք հայոց, էջ 55—56:

<sup>2</sup> Գալմեան, Յուցակ հայերէն ձեռագրաց, էջ 19ր:

Այնուհետև հիշատակագիրն ավելացնում է. «Այլ և յիշել աղաչեմ զերջանիկ եւ զերանաշնորհ զարհեպիսկոպոսն զտէր Մկրտիչ Ամթայ, որ երփն-երփն գունով և զանազան երանգով զարդարեաց զսուրբ գիրքս առ ի յիշատակ բարեաց հոգւոյ իւրոյ: Եւ ի պատճառս արինակի տանս արեւելեան»<sup>1</sup>:

Ուրեմն՝ եթե 1418 թ. Նաղաշը սարկավագ էր և հմուտ ձեռագրեր արտագրելու, պատկերազարդելու մեջ և այնքան զարգացած, որ կարողանում էր բնութագրել իր ժամանակը, նշանակում է, նա արդեն բավական հասուն երիտասարդ էր, 24—25 տարեկանից ոչ փոքր: Հետևաբար, նա ծնված պետք է լինի 1393—1394-ին:

Հիշատակարանների վկայությամբ Նաղաշը մանուկ հասակից անսահման սեր և հետաքրքրություն է ցուցաբերում դեպի արվեստն ու գիտությունը: Իր արտակարգ ընդունակությունների ու սուր հիշողության հետևանքով նա անմիջապես ըմբռնում ու հիշում է ամեն կարդացած կամ լսած բան և մանկությունից սովորում է նկարել, գրել ու կարդալ:

Ամենայն հավանականությամբ Մկրտիչը գրաճանաչությունն ու տարրական գիտելիքները ստացել է հորից, որ ժամանակի կրթված քահանաներից էր: Հոր «տնային դպրոցն» ավարտելուց հետո Մկրտիչը կրթությունը շարունակում է հայրենի գյուղի մոտ գտնվող ս. Անանիայի ու ս. Գևորգի վանքերում: Կարճ ժամանակում Մկրտիչը ցուցաբերում է մեծ ընդունակություն ու առաջադիմություն և գրավում իր ուսուցիչների, ինչպես և շրջապատի ուշադրությունը. «Եւ սիրող լեալ արուեստից և ուսման և հանապաղ նմին հետեւէր: Եւ էր տուեալ նմա շնորհք ի վերուստ, մինչ զի զամենայն դիրաւ ուսանէր և զամենայն դժուարին արուեստ միանգամ տեսանելով նա գերագոյն քան զօրինակն ներգործէր... Մինչ հնգետասան գոլով ամաց եղև կատարեալ ուսմամբ և արուեստիւ, իմաստութեամբ և վարդապետութեամբ, քաջ քարտուղար, անհամեմատ նկարող և ամենայն արհեստից ճարտարապետ, մինչ զի զամենայն արուեստ, զոր ինչ և կամէր կարողութեամբն աստուծոյ անսղալ առնէր...»<sup>2</sup>:

Այսպես է բնութագրում Նաղաշին Աստվածատուր գրիչը: Հենց «անհամեմատ նկարիչ» լինելու համար էլ նա ժամանակակիցներից ստացել է Նաղաշ (նկարագիր, նկարիչ, ծաղկող) մականունը:

Թեև շատ քիչ բան է հասել Նաղաշի մանրանկարներից, բայց ժամանակակիցների վկայություններից երևում է, որ նա կանգնած

<sup>1</sup> Գալմեան, Յուցակ հայերէն ձեռագրաց, էջ 19ր:

<sup>2</sup> Զեռագիր № 2379, էջ 245ր—246ա:

է եղել ազգային նկարչութեան սկզբունքների վրա («ի պատճառս արիւնակի տանս արեւելեան...») և ստեղծել է իր ուրույն ոճը, որը ուժեղ ազդեցություն է թողել հետագա նկարիչների ու ծաղկողների վրա:

Ժամանակակիցների ու իր իսկ հիշատակարաններից ու ակնարկներից երևում է, որ Նաղաշը չի բավարարվել ս. Անանիայի վանքի տված գիտությունը և հետագայում, հավանաբար, որոշ ժամանակ եղել է Մեծոփի վանքում և աշակերտել Քովմա Մեծոփեցուն, որին նա անվանում է «բաջ ախոյան», «անյաղթ փիլիսոփա», «մեծ րաբունապետ» և «արևելյան հռետոր»:

Ինչպես տեսանք վերը բերած հիշատակարանից, որ գրված է Մեծոփա վանքում 1432 թվին, Մկրտիչը ուղղակի համարվում է Քովմայի աշակերտը և նրա հանձնարարությամբ նկարազարդում է հիշված ձեռագիր Աստվածաշունչը: Բացի դրանից, Նաղաշի և Քովմայի հարաբերության մասին ուշագրավ տեղեկություն է հաղորդում հենց ինքը՝ Նաղաշը հունա-հռոմեական եկեղեցիների հրավիրած միարարական ժողովի առթիվ գրած իր պատասխան նամակի վերնագրում և այդ նամակի վերջի հիշատակարանում: Այդ նամակում Նաղաշը հիշատակում է, որ պատասխան թուղթը գրել է «հրամանաւ կաթողիկոսին Հայոց և մեծ րաբունապետին Քովմայի». կամ «... հրամանաւ տեառն իմոյ Կոստանդին պատրիարքի և քաջ ախոյանին և անյաղթ փիլիսոփային Քումա րաբունապետին, արևելյան հռետորի...»:

Թե ինչքան ժամանակ է Նաղաշը սովորել ս. Անանիայի վանքում և որքան՝ Քովմայի մոտ, ինչ գիտություններ է ուսումնասիրել, հայտնի չէ, միայն ժամանակակիցների տեղեկություններից և իր իսկ թողած գրական ժառանգությունից երևում է, որ Նաղաշը շահագրգիռ հմուտ է եղել աստվածաբանության մեջ, քաջածանոթ պատմությանը, գրականությանը և փիլիսոփայությանը՝ մասնավորապես Արիստոտելին, որին համարում է «իմաստութեան աղբիւր»: Իսկ իր ստեղծագործության մեջ օտար բառերի ու ոճերի հմտորեն օգտագործումից պարզվում է, որ Նաղաշը տիրապետել է մի քանի լեզուների:

Նաղաշը ամուսնանում է 1418—1419 թվականներին: Մակայն անդրանիկ որդու ծնունդից շատ չանցած՝ վախճանվում է Նաղաշի կինը: Կնոջ մահը շահագրգիռ ծանր է անդրադառնում բանաստեղծի վրա. նա թողնում է հայրենի Պոռ գյուղը և մշտապես տեղափոխվում Ամիգ: Այս մտաւարկապես 1420—1422 թվականներին էր, երբ պատերազմների ու օտար նվաճողների հարստահարության ու

կոտորածների, ինչպես նաև տեղական ֆեոդալների անլուր կամայականությունների հետևանքով ժողովուրդը մատնվել էր ծայրահեղ թշվառության:

Ամիգյան շրջանը ուշագրավ է Նաղաշի կյանքի ու գործունեության համար այն տեսակետից, որ այստեղ Նաղաշը կարճ ժամանակում իր ազնիվ ու անկաշառ գործունեությամբ գրավում է ժողովրդական լայն զանգվածների և ժամանակի տիրակալների ուշադրությունը: 1420—1425 թվականներին նա ձեռնադրվում է վարդապետ: Ժամանակակիցները նրան համարում են երկրորդ լուսավորիչ: «Ըստ այսմ սարասի ի վախճան ժամանակի և ի կէտ սուզական, որ ամենայն ծաղիկ թառամեալ էր և ամենայն տերև ցամաքեալ, յայտնեաց մեզ աստուած ծաղիկ անթառամ որոյ անուշահոտութիւնն ելից զտիեզերս ամենայն՝ զտէրն տիեզերալուր՝ զտէր Մկրտիչն, մականունն Նաղաշ կոչեցեալ, որ և եղև երկրորդ լուսավորիչ ամենայն Միջագետաց և պարծանք պարծանաց ամենայն քրիստոնէից»<sup>1</sup>, — գրում է Աստվածատուր վարդապետը:

Նաղաշին հավասարապես սիրում, հարգում էին ինչպես հայերը, այնպես էլ Ամիգի և շրջակա գյուղերի տարբեր ազգությունների պատկանող շատ բնակիչներ, «Զի ամենայն ոք, որ տեսանէր զսա՛ կամէր զՏոգին ևս տալ յաւժարութեամբ և զուարթութեամբ և առատ սրտիւ. եւ ոչ եթէ միայն յազգս քրիստոնէից, այլ և թուրք, և թաթ, և թաթար, և քուրթ, և արապ, և ջհուտ և ամենայն ազինք; ընդ տեսանելն զպատիւ և զպարգևս պատրաստէին ձիս և ջորիս և խլայս մեծագինս՝ անասելի և անպատմելի»<sup>2</sup>:

Ժամանակակիցների վկայությամբ «նառանից մինչև Պոնտոսի ժովը» իշխող բռնակալ Օթման բեկը շահագրգիռ հարգանքով է վերաբերվում Նաղաշին և, պարզեցնելով թագավորական զգեստներ, նրան կարգում է ամբողջ քրիստոնյաների առաջնորդ<sup>3</sup>:

Մակայն Օթման ամիրայի, ինչպես նաև նրա հաջորդներ Համզայի ու Զահանգիրի՝ Նաղաշի ու նրա միջոցով էլ Միջագետքի քրիստոնյաների, նամանավանդ հայերի, նկատմամբ ցուցաբերած արտաքուստ ջերմ ու սիրալիք վերաբերմունքն ուներ իր հիմնավոր պատճառները. կարա-կոյունյուների կողմից շարունակաբար ասպատակությունների ենթարկվող Միջագետքը, հատկապես Ամիգն ու նրա շրջակայքը պաշտպանելու համար արտաքին թշնամիների դեմ

<sup>1</sup> Ձեռագիր № 2379, էջ 244բ—245ա:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 247ա—բ:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 248բ—249ա:

պատերազմական գործողություններով զբաղված Օթման ամիրային ու նրա հաջորդներին անհրաժեշտ էր, որ երկրի ներսում ժողովուրդը հնազանդ ու համերաշխ լիներ քաղաքական իշխանություններին:

Այս շրջանում է, որ Նաղաշի համբավը այնքան է տարածվում, որ հասնում է Եգիպտոսի սուլթանին, Պարսից արքունիքին ու Հոմի պապին, իսկ Կոստանդին Ե. Վահկացին 1430 թ. Նաղաշին ձեռնադրում է եպիսկոպոս 24 թեմերի վրա<sup>1</sup>:

Նաղաշի առաջնորդության տարիները բնորոշ են անընդհատ պատերազմներով, գերեվարություններով ու համաճարակներով: Ժամանակակիցների վկայությամբ Նաղաշն իր պաշտոնը, իր նկատմամբ ունեցած պետական իշխանավորների համակրանքը, ինչպես նաև նրանցից ու ժողովրդից ստացած նվերները գործ է դնում հենց իր թեմի մեջ մտնող ժողովրդի ծանր վիճակը ինչ-որ չափով թեթեվացնելու, ինչպես նաև գերիներին ետ գնելու և վերահաս տարագրությունից ազատելու համար: 1449 թ. իր մի ընդարձակ հիշատակարանում Նաղաշը գրում է. «... Որ և ի սոյն ամի ասպատակեաց Իլանդ որդի Սքանդարին, զերկիրն Քաջբերունի, և ի առ զամուրն Արճիշու և աերեաց, և զաւագերէցն Արճիշու, այր շնորհալի, գրագիր և փիլիսոփա՝ ի վառման թոնիրն խորովեցին, և զպզտիկ ըռայիսն ամենայն ընդանեաւք գերի բերին յԱմիթ. և մեր տեսեալ զդռնութիւնն զայն՝ զի հարսունքն և դատերքն մատնեալ էին ի ձեռս անօրինաց, աւժանդակութեամբն Աստուծոյ զիս ի ման ետու և ԺԳԹ (14.000) քանկա տվաք Իլանդին, և ազատեցան Աստուծով ըռայիսն և հարսունքն և աղջկունքն անարատ մնալով յանաւրեանցն...»<sup>2</sup>:

Գերիների ազատության համար Նաղաշը հաճախ է դիմում երկրի տիրակալին, իսկ երբ կաշառքները, միջնորդությունները, խընդիրքներն ու աղաչանքները չեն օգնում, նա գործի է դնում բռնությունը, զենքի ուժը: Այդ նպատակի համար Նաղաշը իր մոտ գաղտնի պահում էր կտրիճների մի խումբ, որոնք անհրաժեշտության դեպքում զենքի ուժով կատարում էին Նաղաշի բոլոր կարգադրությունները: Նաղաշն այդ կտրիճներին օգտագործում էր հատկապես գերիներին ազատելու, նրանց վերահաս տարագրությունից փրկելու համար. «... բազում գերիս ազատեաց յանօրինաց, զորս գնելով, և զորս խնդրեաց ի պարոնաց, և զորս յափշտակելով ի քանապարհին: Առաքէր ի ծառայից իւրոց արս գօրեղ և սրտապինդ, և խլէին զգերիս յանաւրինաց և բերէին ի նորաշէն վանս իւր ապաստանի՝ ի

<sup>1</sup> «Ժն դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա., էջ 458:

<sup>2</sup> «Բազմավէպ», 1899, էջ 289:

բարձր Աստուածածինն, պահելով ժամանակա ինչ, մինչև գային տեարք ծառայիցն և տայր նոցա հանդերձս և նաֆաղայս, և ուղեորէր ի տեղիս իւրեանց...»<sup>1</sup>:

Ինչպես տեսնում ենք, հոգևորական Նաղաշը, քրիստոնեական վարդապետությունը քարոզելու հետ միաժամանակ, էրբեմն էլ հակառակ է կանգնում այդ վարդապետության «մի կալ շարին հակառակ բռնութեամբ» սկզբունքին: Այս տեսակետից պատահական չէ, որ նա իր միակ որդուն՝ Մեսրոպին, դաստիարակում է հենց այդ ոգով: Ժամանակակիցները պատմում են, որ 1449 թ. Նաղաշի քահանա ձեռնադրված 30-ամյա Մեսրոպ որդին մասնակցում է Ամիդի պաշտպանությանը և 1451 թ. զոհվում անհավասար մարտում:

«... Ի թիւս Զ (1451 թ.) որ նաւասարդի էր արն կիրակի եկեալ թրխան աւղլին պատերազմաւ ընդ մերտնցոցն և կոտորվաւ ի Տնիսայ Ազապի գլուխն: Եւ զկնի վեց աւուրն, յարն ուրբաթու քաղաքացիք ապստամբեցան ի Ճհանգիր ամիրզայէն և ապսպրեցին զքաղաքն ի Թարխան աւղլին, և ըստ արժանացան նոցա զոմանս տուգանեց և զոմանս թալանեաց... և բազում շարիս արար, զոր թէ գրէի մի ըստ միոջէ, նա գիրք մի լինէր... Եւ սկսան քաղաքացիքն և Ղարա-ղոյունը իսարիլ զբերդն ի նաւասարդէ ի Զ (6) էն ի վեր, յորում էր թվականն Զ (1451). և զկնի Զատիկ ԻԸ (28) աւուր... եկեալ Ճհանկիրն յԱմթայ ի Մերտին և ոչ հնազանդեցան նմա Մերտնցիքն: Եւ դարձաւ յԱմիթ և զկնի այնորիկ եղև պատերազմ մեծ ի դուռն Ամթայ և կոտորումն մեծից երկու դիմացն և սպանաւ անդ Մեսրոպ էրէց, Նախաշ տէր Մկրտչի որդին...»<sup>2</sup>:

Այս շրջանում Նաղաշի երկրորդ խնդիրն է լինում իր թեմի և թեմից դուրս ժողովրդի իրավական ու կենցաղային սահմանափակությունների վերացումը: Հայտնի է, որ Ամիդն ու նրա շրջակայքը աչքի էին ընկնում այն ժամանակ իրենց խայտաբղետ ազգաբնակչությամբ, որտեղ քրիստոնյաներն ու մահմեդականները համարյա հավասար թիվ էին կազմում: Ժամանակակիցների վկայությամբ Ամիդում և նրա շրջակայքում կողք-կողքի ապրում էին հայեր, թուրքեր, պարսիկներ, հրեաներ, հույներ, ասորիներ, թաթարներ, արաբներ և այլն: Սակայն քրիստոնյաներին արգելված էր կենցաղային որոշ ծեսեր ու տոնակատարություններ: Այսպես՝ մահմեդականների գերիշխանության տարիներին քրիստոնյաներին արգել-

<sup>1</sup> Զեռագիր № 2379, էջ 252բ:

<sup>2</sup> «Մանր ժամանակագրություններ», հատոր 2-րդ, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1956, էջ 210:

ված էր ննչեցյալներին տանել ձեռքերի վրա և թաղել դագաղով: Նաղաշը կարողանում է ժամանակի տիրակալին համոզել և վերացնել այդ սահմանափակումը:

Անընդհատ պատերազմների ու ասպատակությունների հետևանքով ավերվում էին գյուղերը, բնակավայրերը. ժողովուրդը մնում էր անօթևան: Նաղաշը ամեն ձևով աշխատում էր թեթևացնել ժողովրդի այդ վիճակը, ինչպես նաև վերանորոգել ու կառուցել կրոնական հաստատությունները: Սակայն մահմեդական տիրակալները բնականաբար արգելում էին այդպիսի շինքերի, մանավանդ եկեղեցիների վերանորոգումներն ու կառուցումները: Նաղաշն այս դեպքումն էլ օգտագործելով Օթման բեկի ու նրա հաջորդների հարգալից վերաբերմունքը իր նկատմամբ, կարողանում է իր առաջնորդական տարիներին վերանորոգել քանդված եկեղեցիները և նույնիսկ նորերը կառուցել:

Բազմաթիվ քանդված շինություններ վերակառուցելուց ու նորոգելուց բացի, Նաղաշը 1431—32 թ. Արզնի բերդի բարձրաբերձ լեռան գագաթին հիմնադրում է մի եկեղեցի և նրա բարձր դիրք ունենալու պատճառով կոչում ս. Բարձրահայաց Աստուածածին: Եկեղեցին զարգարում է հայկական գողարիկ բարձրաքանդակներով ու որմնանկարներով, որոնց ուրվագծերը պատրաստում է ինքը<sup>1</sup>:

Այդ եկեղեցու կառուցման ու կահավորման մասին ժողովրդի մեջ մնացել են ավանդություններ, որոնցից մեկն ասում է.

«... Եկեղեցին, կսես թէ հիմնուած է Սուրբ Թագէտս առաքեալէն յանուն ս. Աստուածածնի. բայց երբ ԺԴ (պետք է լինի ԺԵ.— է. Խ.) դարու մէջ Տիգրանակերտի Մկրտիչ Նաղաշ եպիսկոպոսը, տեսնելով նփրկերտի աւերումը, հոն գտնուած բազմաթիւ սրբոց նշխարները, գրաստներու վրայ բառնալով տարաւ ամփոփեց Մշոյ ս. Կարապետի վանքը և ուրիշ տեղեր, եօթը բեռ ալ հոս բերաւ, և նորէն կառոյց գմբեթաւոր եկեղեցի ՉԽԳ (1394) (sic!) կամ ըստ ոմանց ՊԳ (1354)<sup>2</sup> թուին, ինչպէս արձանագրուած է դրան ճակատը»<sup>3</sup>:

<sup>1</sup> Ձեռագիր № 2379, էջ 254բ—255ա:

<sup>2</sup> Այս ավանդության մեջ թվական տվյալները չեն համապատասխանում իրականությանը. դժվար չէ նկատել, որ այդ թվերին Նաղաշը ղեկ ծնված էլ չէր: Այդ սխալը ամենայն հավանականությամբ գալիս է Սրվանձտյանի «Թորոս Աղբար»-ի Բ հատորում բերված հետևյալ վկայությունից.

«... Ս. Տաճարն գմբեթաւոր է, բարձր, քառակուսի, ամուր քարովիր: Գրան ճակատը գրուած. «Աւանդակովեամբ Աստուծոյ և հրամանաւ Աթման Եաֆն կանգնեցաւ խորան Ս. վերադիտողութեամբ նգշ Մկրտիչ եպիս. թվ. Պ. Գ.» (էջ 174):

<sup>3</sup> Էփրիկեան, Բնաշխարհիկ բառարան, հատոր Ա., 1903, էջ 406:

Ս. Բարձրահայաց Աստուածածին եկեղեցու կառուցումից ուղիղ 5 տարի հետո, 1439 թ. Նաղաշը Օթման բեկի հաջորդ Համզայից մեծ դժվարություններով իրավունք վէ ստանում վերակառուցելու Ամիդի ս. Թեոդորոս եկեղեցին: Մասնակի վերանորոգումներից բացի, Նաղաշը քանդել է տալիս ավերված ու անշուք կաթուղիկեն ու զանգակատունը և (դարձյալ իր նախագծով ու ղեկավարությամբ) կառուցել է տալիս մի հոյակապ ու մոնումենտալ կաթուղիկե՝ զարդարելով այն բարձրաքանդակներով ու որմնանկարներով: Ժամանակակից ու ականատես Աստուածատուր վարդապետը չափազանց մեծ հիացմունքով վէ խոսում ճարտարապետական այդ կոթողի մասին. «... զի գլուխ գմբեթին բարձր էր քան զմինարախցն և Ը ու Ժ (18) անկիւնիւ ճոխացեալ, և Ը ու Ժ (18) լուսամուտս ի գմբեթին, և բարձրութիւն լուսամուտին՝ ի չափ մարդոյ, և ով ոք կարէ ընդ գրով արկանել զզանազան յաւրինուածս գմբեթին վայելչութեան...»<sup>1</sup>:

Սակայն քրիստոնյաներին տրված արտոնությունները, մանավանդ Ամիդի հոյակապ կաթուղիկեի կառուցումը զազաղեցնում են մահմեդական կրոնավորներին. նրանց պահանջով 1443 թ. Համզան քանդել է տալիս եկեղեցու հոյակապ ու երկնասլաց կաթուղիկեն ու զանգակատունը:

Միջագետքի տերը՝ Համզան, այս դեպքում չի կարողանում որևէ օգնություն ցույց տալ, որովհետև Նաղաշին և նրա միջոցով քրիստոնյաներին արած որոշ ընդառաջումների պատճառով մահմեդական կրոնավորների շրջանում նրա մասին խոսում էին, թե Համզան քրիստոնյա է դարձել, իսկ նա լրջորեն վախենում էր այդ խոսակցություններից:

Իր անմիջական մասնակցությամբ, անխոնջ աշխատանքով ու հսկայական զրկանքների զնով կառուցված կաթուղիկեի ավերումը անսահման ծանր վէ անդրադառնում Նաղաշի վրա, և նա սրտի անհուն կսկիծով թողնում վէ իր աթոռանիստ Ամիդը և ձեռքն առնում

Բայց հենց այս հիշատակարանից երևում է, որ հիշված Պ. և Գ. տառերի արանքում փշրվել ու հողմնահարվել է Ձ տառը. ամենայն հավանականությամբ պետք է լինի ՊԳ (1434), որը միանգամայն համապատասխանում է Օթման ամիրայի գահակալության և եկեղեցու հիմնադրման թվականին: Այդ թվականը համապատասխանում է Աստուածատուր վարդապետի վերորելյալ վկայությանը: Այս երկու տեղեկություններից, որ լրացնում են միմյանց, հաստատապես երևում է, որ եկեղեցին հիմնադրվել է 1433-ին և կառուցումն ավարտվել է 1434-ին:

<sup>1</sup> Ձեռագիր № 2379, էջ 255բ:

պանդխտութեան գավազանը: Նաղաշն անցնում է Պոնտոսի ծովը, հասնում է Կ. Պոլիս, Արիմ և հանգրվանում Թեոդոսիայի (Կաֆա) իր վաղածանոթ Սարգիս վարդապետի մոտ<sup>1</sup>:

Մկրտիչ Նաղաշի կյանքի տարեգրութեան մեջ մի ուշագրավ դրվագ էլ կապված է 1433—1439 թթ. հունա-հոմեական եկեղեցիների հրավիրած արևելյան ու արևմտյան եկեղեցիների միարարական ժողովի և դրա նկատմամբ հայ եկեղեցու բռնած դիրքի հետ:

Մինչդեռ ժողովրդին կոտորելով, հրի ու սրի մատնելով, Հայաստանում իրար են հաջորդում մահամեղական իշխանութիւնները, Հռոմի Եվգենիոս IV պապը հատուկ կոնդակով հրավիրում է արևելյան ու արևմտյան եկեղեցիների միարարական ժողով, որին հրավիրվում է նաև հայ եկեղեցին:

Ժողովի բուն նպատակն ու նրա նկատմամբ Նաղաշի ժխտական վերաբերմունքը պարզ պատկերացնելու համար անհրաժեշտ է համառոտակի կանգ առնել ժողովի հրավիրման բուն շարժառիթների վրա:

Հայտնի է, որ XV դարի 30-ական թվականներին օսմանյան պետութիւնը շտեմնված արագութեամբ հզորանում և լայնացնում էր իր տիրապետութեան սահմանները: Գեոևս 1421 թ. Մեհմեդ Ա-ի հաջորդ Մուրադ Բ-ի ժամանակ բյուզանդական կայսրութեան ասիական ու եվրոպական մասերի շատ քաղաքներ արդեն անցել էին օսմանյան պետութեան գերիշխանութեան տակ և խիստ վտանգի տակ էին առել Կոստանդնուպոլիսը, որը բոլոր կողմերից շրջապատվում էր թշնամի ուժերով: Բյուզանդիոնի համար ստեղծված ծանր դրութիւնը մեղմացնելու նպատակով Հովհաննես Ը Պալեոլոգ կայսրը կայսրութեան համար խիստ աննպաստ պայմաններով թեև 1425 թ. հաշտութեան պայմանագիր էր կնքել Մուրադ Բ-ի հետ, բայց շարունակ ահ ու երկյուղի մեջ էր:

Վերահաս վտանգի առաջն առնելու համար բյուզանդական կայսրը դրսեց օգնութեան որևէ հույս չուներ, ուստի միջոցներ էր խորհում օգտագործել պետականութիւն շունեցող քրիստոնյա ժողովուրդների ուժերը, որոնք մահմեդական բռնապետութեան պայմաններում որոշ համակրանք ունեին դեպի Բյուզանդիոնը: Իր այդ ծրագիրն իրականացնելու համար նրան անհրաժեշտ էր Վատիկանի

աջակցութիւնն ու օժանդակութիւնը: Այդ նպատակով նա դիմում է Եվգենիոս IV պապին և առաջարկում հրավիրել արևելյան ու արևմտյան եկեղեցիների միարարական ժողով: Եվգենիոս IV պապը գոհունակութեամբ է ընդունում այդ առաջարկութիւնը՝ ինքն էլ իր կողմից նպատակ ունենալով այդ ժողովը ծառայեցնել պապական իշխանութեան շահերին: Բանն այն է, որ XIV դարի առաջին տասնամյակներից սկսած՝ պապական իշխանութեան ներսում ծայր առած երկպառակութիւնները գնալով սրվում և ջլատում էին նրա միահեծանութիւնը: Պապական իշխանութեան դեմ աճող դժգոհութիւններն ու երկպառակութիւնները վերացնելու և ընդդիմադիր ուժերի հետ մի ընդհանուր լեզու գտնելու համար XIV դարի սկզբից մինչև XV դարի 20—30 թվականները բազմաթիվ միարարական ժողովներ են հրավիրվում, սակայն դրութիւնը ոչնչով չի փոխվում: 1431 թ. փետրվարի 1-ին Մարտիրոս Ե պապը Բասիլիայում հրավիրում է նոր ժողով, սակայն նույն թվականի փետրվարի 20-ին նրա մահվան պատճառով ժողովը ընդհատվում է, և պապ է ընտրվում Եվգենիոս IV-ը: Չնայած սրա ավելի մեղմ ու խորամանկ քաղաքականութեանը, դժգոհութիւնը պապական իշխանութեան դեմ շարունակվում է, նրան ընդդիմանում են հատկապես Բասիլիայի ժողովի այն մասնակիցները, որոնք հետագայում կոչվեցին բասիլիականներ: Սրանց զսպելու և հնազանդեցնելու Եվգենիոսի բոլոր ջանքերը ապարդյուն են անցնում: Դրութիւնը շարունակում է մնալ սուր ու լարված:

Ահա այսպիսի մթնոլորտում Եվգենիոս IV պապը մեծ գոհունակութեամբ է ընդունում Հովհաննես կայսեր առաջարկութիւնը և, ունենալով նրա օգնութիւնն ու օժանդակութիւնը, մտածում է նոր հրավիրվելիք ժողովը օգտագործել Բասիլիականներին ջախջախելու և պապական միահեծան իշխանութիւնը ամրապնդելու համար:

Հետաքրքրական է, որ նոր ժողովի հրավիրմամբ շահագրգռված էին նաև բասիլիականները, որոնք ակնկալութիւն ունեին ժողովում ի հաշիվ փոքր ժողովուրդների մեծամասնութիւն ստանալ, գահընկեց անել Եվգենիոսին ու նշանակել նոր պապ, որը հաշիվ կառնէր Բասիլիականների բոլոր առաջարկութիւններն ու ցանկութիւնները:

Եվգենիոս IV պապը 1433 թ. Կաֆայի (Թեոդոսիա)<sup>1</sup> հունական

<sup>1</sup> Ժամանակակիցները տեղեկութիւններ են հաղորդում, որ այս Սարգիսն էլ թողնում Մեծփնցու աշակերտներից է: Հավանաբար Նաղաշի ու Սարգիսի ծանոթութիւնը հենց սկսվել է Մեծփն վանքում միասին սովորելու տարիներին:

<sup>1</sup> Կաֆան (Թեոդոսիա) այն ժամանակ հայկական ամենախոշոր գաղութն էր, որ գտնվում էր լատինների գերիշխանութեան տակ:

նվիրակի ձեռքով հատուկ հրավեր է ուղարկում Կաֆայի Եսայի արքեպիսկոպոսին: Սրան նույնպիսի հրավիրագիր են ուղարկում նաև բասիլիականները՝ ձգտելով գրավել նրա համակրանքը և ներգրավել իրենց կողմը: Եսայի արքեպիսկոպոսը ինքնուրույն ձևով չի կարողանում իր վերաբերմունքը ցույց տալ այդ հրավիրագրին և Աբղղմսեհ սարկավագի ձեռքով Եվգենիոսի հրավերը ուղարկում է Կոստանդին Վահկացի հայոց կաթողիկոսին:

Սակայն ի՞նչ վիճակ էր ապրում այդ ժամանակ հայոց կաթողիկոսությունը. ի՞նչ հեղինակություն ունեւր Կոստանդին Վահկացին համայն հայություն մեջ, որ կարողանար ինքնուրույն կերպով վճռել այդ պատասխանատու գործը: Պետք է ասել, որ դրությունը բոլորովին էլ խաղաղ չէր հայոց կաթողիկոսարանում: Գեռեա XI դարից սկսած, մասնավորապես Գրիգոր Անավարզեցու օրոք ու նրա առանձնակի ջանքերով զգալի շափերի հասած լատինամոլությունը ժողովրդի, ինչպես և հոգևորականության մի սովոր մասի մեջ դժգոհություն ու անվստահություն էր առաջացրել դեպի Սսի կաթողիկոսությունը: Իսկ XIV—XV դարերում հայ ժողովրդի հանդեպ թշնամական վերաբերմունք էր ցուցաբերում նաև պապականությունը, որ ամեն գնով աշխատում էր իրեն ենթարկել հայկական եկեղեցին: Այդ վտանգի առաջն առնելու համար սկիզբ է առնում հակառակիթոռական շարժումը, որը գլխավորում էին Գլաձորի, Տաթևի վանք-համալսարանները: Հայ ժողովրդի ինքնուրույնությունը պահպանելու համար կազմակերպված այդ շարժումներն ունեցան համախոհների լայն շրջան, և շարժումն էլ մասսայական բնույթ կրեց: Լատինադավանության համախոհներ մնացել էին հատկապես Կիլիկիայում, որոնք ամեն կերպ աշխատում էին հնազանդություն հայտնել պապին: Լատինադավանության կողմնակից էր նաև Սսի կաթողիկոս Կոստանդին Վահկացին, որը գլխավորելով Պողոս Գառնեցու սպանությունը՝ 1430 թ. գրավում է կաթողիկոսական աթոռը:

Իր օտարամոլության, ինչպես նաև բարձրաստիճան հոգևորականության այլանդակ բարբերի նկատմամբ անտարբեր վերաբերմունք ունենալու պատճառով Վահկացին կորցրել էր հեղինակությունը ժողովրդի և բազմաթիվ հոգևորականների աչքում:

Բնական է, այսպիսի պայմաններում Վահկացին մեծ գոհունակություն չէր պիտի ընդուներ Եվգենիոս IV պապի հրավերը, որ երաշխավորում էր իր աթոռի և կալվածքների անձեռնմխելիությունը:

նր: Սակայն Վահկացուն պարզ էր, որ Եվգենիոս IV պապի հրավերի իր ինքնագլուխ պատասխանը կարող է ավելի գրգռել, շիկացնել առանց այն էլ լարված միջնորոտը, ուստի մտածում է իր նպատակին հասնել ուրիշ միջոցով:

Քանի որ Մկրտիչ Նաղաշը հայտնի էր իր բազմակողմանի կրթությունով ու դիվանագիտական ընդունակությամբ, Վահկացին նույն Աբղղմսեհ սարկավագի միջոցով Եվգենիոս IV պապի հրավերը ուղարկում է Մկրտիչ Նաղաշին՝ իր տեղապահին և առաջարկում գրել այդ նամակի պատասխանը: Սակայն Աբղղմսեհը անմիջապես չի գնում Ամիր: Նա Սսից վերադառնում է Կաֆա, ապա գնում է իր ուսուցիչ Թովմա Մեծոփեցու մոտ, որը Սսի կաթողիկոսության դեմ աճած ընդդիմադիր մի ուժեղ խմբի պարագլուխն էր, պատմում է Նաղաշի մոտ մեկնելու հանգամանքները: Թովման իմանալով այդ բոլորը՝ ինքն էլ իր կողմից իր աշակերտ Հովհաննես Կաֆացու միջոցով դիմում է Նաղաշին և առաջարկում գրել պապի հրավիրագրի պատասխանը: Այսպիսով՝ միաժամանակ և՛ կաթողիկոսը, և՛ Թովման բոլորովին տարբեր դիրքերից և տարբեր նպատակներով դիմում են Նաղաշին և առաջարկում գրել այդ թղթի պատասխանը: Նաղաշը իր պատասխան թղթում այս առաջարկների մասին հիշում է երկու անգամ (թղթի վերնագրում և թղթի վերջի հիշատակարանում):

Նաղաշը Կոստանդին Վահկացու հանձնարարականը և Եվգենիոս պապի հրավիրագրի պատճենը ստանում է 1435 թվականին:

Մանրամասն ուսումնասիրելով Եվգենիոս պապի նամակը, խորամուխ լինելով այդ ժողովի հրավիրման հանգամանքների մեջ, Նաղաշը միանգամայն մերժողական պատասխան է տալիս դրան: Իր պատասխան նամակում Նաղաշը հանգամանորեն վերլուծում է մինչև այդ եղած բոլոր ժողովներն ու նրանց որոշումները և գալիս այն եզրակացություն, որ Հայաստանի եկեղեցին կարող է միարարություն ուխտ կնքել և խաղաղ ապրել հունա-հռոմեական եկեղեցիների հետ իբրև հավասարի, առանց արևելյան եկեղեցիների ինքնուրույնության բռնադատման, իսկ եթե լատինական եկեղեցին նախորդների օրինակով ձգտում է այդ միությունը օգտագործել և իր գերիշխանությունն ու կամքը թելադրել հայոց եկեղեցուն և նրա միջոցով էլ հայ ժողովրդին դնել կախյալ վիճակի մեջ, այն դեպքում անհնար է այդպիսի միությունը. «ոչ ընդունի Հայաստանեացս եկեղեցի և ոչ կարաւտանայ այդպիսի Սիւնհոզոսի...» — գրում է Նաղաշը, — Զի անխորտակելի է մնացել ի վերայ հիմանն հաստատութեան և եթէ մի անձն մնա ազգէ Արամեան, անհնարին է հետևել

Քաղկեդոնի...»<sup>1</sup>: Նաղաշն իր այդ պատասխանն ուղարկում է 1436 թ. մայիսի 16-ին: Պատասխանը մեկ տարի ուշացնելու պատճառը համարում է քաղաքական խիստ անկայուն պայմաններն ու տեական պատերազմների հետևանքով ճանապարհների փակվածությունը: Բնական է, Կոստանդին Վահկացին գոհունակությունը չի ընդունում Նաղաշի բացասական պատասխանը և անտեսելով նրա փաստարկումները՝ դիմում է Կաֆայի Սարգիս վարդապետին և անաջարկում մեկնել Ֆլորենցիա, մասնակցել միաբարակալան ժողովին, հավատարմություն հայտնել ժողովի բանաձևին և ստորագրել այն: Իր կողմից կաթողիկոսը Սարգիս վարդապետին տալիս է լայն լիազորություններ: Կաֆայում կազմվում է հատուկ հանձնաժողով, որի մեջ մտնում են Սարգիս վարդապետը, Թովմա վարդապետը (ոչ Մեծփեցին), Մարկոս վարդապետը, Հովակիմ եպիսկոպոսը: Հետաքրքրական է, որ հանձնաժողովը գլխավորում է բյուզանդական հյուպատոսը, որը հսկայական ազդեցություն ուներ հանձնաժողովի վրա և պապի մոտ էլ հայերի համար թարգմանի պաշտոն էր կատարում:

Հանձնաժողովը հասնում է Ֆլորենցիա, երբ նիստերը ավարտվել էին և կայսրը միանգամայն դժգոհ ժողովի արդյունքներից, պատրաստվում էր հեռանալ Ֆլորենցիայից: Հապճեպորեն կատարվում է ընդունելություն, հայոց հանձնաժողովն իր համաձայնությունն է տալիս ժողովի բանաձևին և, պապից մի քանի նվերներ ստանալով՝ վերադառնում է:

Հայրենիքում նրանք լավ ընդունելություն չեն գտնում, մանավանդ որ նրանց վերադարձի ժամանակ 1439—40 թթ. Կոստանդին Վահկացին վախճանվել էր, և Սսի կաթողիկոսության դեմ եղած հակառակորդներն ուժեղանալով՝ հարց էին առաջադրել կաթողիկոսությունը վերահաստատել իր նախկին տեղում՝ էջմիածնում: Այդ տրամադրությունները գլխավորում էր Թովմա Մեծփեցին, որի ջանքերով էլ 147 տարի աստանդական աթոռը 1441 թ. վերադարձվում է էջմիածին:

Ժամանակակից հիշատակարանների կցկտուր տեղեկություններից իմանում ենք, որ Նաղաշը խիստ դժգոհ էր իր բարեկամ Սարգիս վարդապետից Ֆլորենցիա գնալու և միաբարակալան ժողովի բանաձևին համաձայնություն տալու համար: Թե ինչ գործունեություն է ունեցել Նաղաշը Կաֆայում, մանրամասնությունները մեզ հայտնի չեն. հասած հիշատակարաններից իմանում ենք, որ Նա-

ղաշն այնտեղ թողել է իր ձեռքով պատրաստած որոշ հիշատակներ՝ հավանաբար եկեղեցական զարդեր ու ձեռագրեր. «... ի թողուլ ի Կաֆա զհիշատակ իւր՝ յօրինեաց ձեռամբ իւրով զարդ ինչ եկեղեցական խաչաձև՝ նկարակերտեալ ըստ իւրումն արուեստի...»<sup>1</sup>:

Նաղաշը Թեոդոսիայում մնում է մոտ 4 տարի: Այդ ժամանակ բավական փոփոխություններ են տեղի ունենում: Միջազեաքի տերն է դառնում Համզայի որդին՝ Ջահանգիր Միրզան, որն իր հպատակություն մեջ մտնող բազմաթիվ քրիստոնյաների օրավոր հզորացող ու երկրի համար վտանգավոր դարձող դժգոհություններն ու բողոքները վերացնելու նպատակով որոշում է ետ կանչել Նաղաշին և նրա հեղինակությունն օգտագործել ժողովրդին խաղաղացնելու համար: Հատուկ հրովարտակով նա խնդրում է Նաղաշին վերադառնալ իր աթոռանիստը՝ Ամիդ և թույլատրում է կառուցել կաթողիկեն՝ միայն չափավոր բարձրությամբ:

Նաղաշը դժգոհությամբ, բայց համաձայնվում է վերադառնալ: Նաղաշին ուղեկցելու նպատակով Ամիդի ս. Թեոդորոս եկեղեցու ավագերեց Ղազար քահանայի գլխավորությամբ մի պատվիրակություն է մեկնում Կաֆա:

Նաղաշի թափառումները, սակայն, ապարդյուն չանցան. նա մոտիկից ծանոթացավ օտարության մեջ ապրող հայերի, հատկապես պանդուխտների կյանքին ու կենցաղին, որոնք հայրենի երկրից հեռու օրվա ապրուստը ձեռք բերելու համար անլուր տառապանքների ու զոհանքների էին ենթարկվում: Մեր գրականության մեջ առաջին անգամ Մկրտիչ Նաղաշն իրեն հատուկ հուզականությամբ ու մեծ ընդհանրացումներով երգեց դառը կյանք վարող աշխատավորության այդ ստվար մասի վիշտը:

Նաղաշի հետագա կյանքի մասին մանրամասն տեղեկություններ այլևս չունենք: Նրա մի տաղից իմանում ենք, որ 1469 թ. Միջազեաքի երկրորդ մեծ համաճարակի ժամանակ դեռևս կենդանի էր և այդ համաճարակի սոսկալի ազդեցություն տակ էլ գրել է իր հայտնի «Արարիչն արարածոց...» ոտանավորը, որի վերջին տան մեջ ասվում է.

Ի հայոց մեծ թուականին յինն հարիւրին  
Եւ համառօտ, այլ աւելի տասնևութին,  
Աչօք տեսայ զողբ և զհառաչ դառնագին,  
ԶՄերտին քնաղաքն արար զամէնն լալագին:

<sup>1</sup> Տե՛ս սույն աշխատության «Բնագրեր» բաժինը:

<sup>1</sup> Մ. Չամչեան, Պատմութիւն հայոց, Գ., էջ 484:

Գրանից հետո Նաղաշի մասին ուրիշ տեղեկություն չկա. հավանաբար ինքն էլ 1470-ական թվականներին, երբ արդեն 75 տարեկանն անց էր, զոհ է գնացել ժանտախտին: Այս ենթադրությունը հավանական է, որովհետև Նաղաշը, ինչպես ինքն է խոստովանում 1449 թ. համաճարակի առթիվ գրած՝ հիշատակարանում, առանց երկյուղի լինում է ամենուրեք, մտնում բոլոր հիվանդ ունեցողների տները՝ նրանց օգնելու, հուսադրելու և մխիթարելու համար:

Թե որտեղ է թաղված Մկրտիչ Նաղաշի աճյունը, դարձյալ հայտնի չէ, բայց ժողովրդի մեջ պահպանվել են ավանգություններ նրա գերեզմանի տեղի մասին. «Ըստ ոմանց Նաղաշի մարմինն ամփոփուած է ս. Յովհաննէս եկեղեցւոյն մէջ, որուն հետքն չէ մնացած այսօր. միայն ժողովուրդն աւանդաբար տեղ մը կցուցնէ ս. Յովհաննէս թաղին մէջ՝ հաւաստելով թէ անդ կանգնած կայ եղեր երբեմն ս. Յովհաննէս եկեղեցին հայոց...»<sup>1</sup>:

Նաղաշի մահով, սակայն, նրա փառքը չվերջացավ. Նաղաշի տաղերը ձեռագրից-ձեռագիր, բերնից-բերան էին անցնում և ձայնագրվում: «... Տիրաւնակերտի եկեղեցեաց մէջ ցարդ կերպուին Նաղաշի ողբերէն մի քանին, ու ժողովուրդն չէ մոռցած տակաւին քանի քանի երգեր, զորս կերգէ դեռ քիչ շատ աղաւաղեալ...»<sup>2</sup>— գրում է ակնաստեսը:

<sup>1</sup> «Մասիս», 1885, 4. Պոլիս, էջ 375:

<sup>2</sup> Նույն տեղում:

## ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՐ

Հայ բանասիրության մեջ երկու հակադիր կարծիքներ են հայտնվել Մկրտիչ Նաղաշի ստեղծագործության շուրջ: Բանասերների մի մասը, նկատի ունենալով Նաղաշի բարձրաստիճան հոգևորական լինելու հանգամանքը, նրա ողջ ստեղծագործությունը համարել է կրոնա-բարոյախոսական, եկեղեցական (Պոստուրյան, Զամինյան, Զոպանյան, Աբեղյան և ուրիշներ): Բանասերների մի մասն էլ, Նաղաշին ու նրա ստեղծագործությունը կտրելով իր նախորդներից, նրան ներկայացրել է որպես մի եզակի երևույթ XV—XVI դարերի իրականության մեջ (Կ. Կոստանյան, Էկինյան և ուրիշներ):

Այս երկու կարծիքներն էլ հավասարապես անընդունելի են. առաջին դեպքում անտեսվում է Նաղաշի պոեզիայի աշխարհիկ բովանդակությունը, իսկ երկրորդ դեպքում բանաստեղծը կտրվում է իր նախորդներից և ներկայացվում որպես մի շատ ճառարանված երևույթ:

X—XV դարերի հայ գրականության մեջ եկեղեցական միօրինակ երգերի փոխարեն երևան են գալիս աշխարհիկ ձգտումներ արտահայտող աշխույժ ոտանավորներ, երգիծական գործեր, առակներ, պոեմներ և այլ գրական նոր ձևեր: Տաղերգուները մերթ երգում են բնությունը, մարդու ներաշխարհը, մերթ էլ տեսնելով հասարակական կյանքում գոյություն ունեցող հակասությունները, իրենց ստեղծագործության մեջ քննադատում ու մերժում են իշխող անարդարություններն ու այլանդակ երևույթները:

Հակադակ եկեղեցական-կրոնական գրականության միաձև ու միատարր ներբողների, միջնադարյան հայ լիրիկայի համար հիմնական թեմա է դառնում մարդը, նրա հոգեկան աշխարհը, փոխադարձ սերն ու ձգտումները:

Գեոևս Գրիգոր Նարեկացին իր ժամանակ հանգել էր այն մտքին, թե «Արդ շիջ յերկրի պատուականագոյն և առաւել, քան զսէր առն և կնոջ...»<sup>1</sup>:

Նարեկացու այս միտքը ժառանգում են ոչ միայն աշխարհիկ բանաստեղծներն ու գրողները, այլև հոգևորականները: Բավական է ասել, որ Գրիգոր Նարեկացին, Մկրտիչ Նաղաշը, Գրիգորիս Աղթամարցին և ուրիշներ բարձրաստիճան հոգևորական լինելով հանդերձ՝ մեծ շահով երգում են աշխարհիկ սերը, կնոջ գեղեցկությունը, բնության հրաշալիքները:

Այս շրջանի համար բնորոշ է նաև այն, որ անկեղծ ու փոխադարձ սիրո առաջ մոռացվում ու երկրորդական նշանակություն է ստանում սիրող կողմերի տարբեր կրոնների պատկանելու հանգամանքը: Այս տեսակետից հանրահայտ «Այս ինչ կրակ էր այրեց...»՝ հայ երեցի տղայի ու մոլլայի աղջկա սիրավեպի կողքին շահագանց հետաքրքրական է նաև 1416 թվականի մի «Հայսմավուրքի» մեջ պահպանված հետևյալ սիրավեպը.

Լենկ-թեմուրյան արշավանքների ժամանակ, երբ նրա բանակները մտնում են Վան, շատերի հետ սրի վ թաշվում մի հայ երիտասարդ: Նրա այրիացած ու անժառանգ կինը մնում է անօգնական ու «անայցեղու»: Նրա առաքինի ու համեստ վարքը նկատում է մի երիտասարդ քուրդ: Քուրդը հայուհուն առաջարկում է որպես աղախին աշխատել իր տանը. սկզբում հայուհին հրաժարվում է, բայց ուրիշ ելք չունենալով՝ համաձայնվում է: Երիտասարդ քուրդը սիրահարվում է և իր սերն է հայտնում հայուհուն, վերջինս էլ, ըստ երևույթին, անտարբեր չէ դեպի քուրդը: Քրդի երիտասարդ կինը վախճանվում է, հայուհին ամուսնանում է նրա հետ: Քրդի հարազատներն ու բարեկամները նախատում են նրան, որ ամուսնացել է քրիստոնյայի հետ, և պահանջում են կնոջը մահմեդականացնել: Քուրդը ուշադրություն չի դարձնում մոլեռանդ մահմեդականների պահանջներին և պատասխանում է.

«... Ես ի նա հաւան եմ, նա զիւր հաւատն պաշտէ և ես զիմ...»: Մոլեռանդ մահմեդականները դրանից ավելի են գազազում և հարմար ժամ որսալով՝ քարկոծելով սպանում են հայուհուն: Այս պատմության ճշմարտացի լինելու վրա կասկած չթողնելու համար գրիչը մանրամասնությամբ նշում է դեպքի տարին, ամիսն ու օրը. «Գործեցաւ այս ի թուականիս հայոց ՊԿԵ (1416) ի փետրուարի ԺԵ (15)...»<sup>2</sup>:

<sup>1</sup> Գրիգոր Նարեկացի, Մատենադրութիւնք, Վեներիկ, 1840, էջ 275:

<sup>2</sup> Գալեմբարեան, Նոտարք հայոց, 1888, էջ 47—48:

Վերջապես այս շրջանում են ստեղծագործել այնպիսի տաղերգուներ, ինչպիսիք են Կոստանդին Երզնկացին ու Հովհաննես Քլկուրանցին, որոնք իրենց ժամանակի համար բացառիկ անմիջականությամբ ու անկեղծությամբ երգել են բնության գեղեցկություններն ու փոխադարձ սերը և իրենց բարձրարվեստ երգերով հարստացրել ոչ միայն հայ, այլև համաշխարհային գրականությունը:

Սիրային պոեզիային առընթեր X—XV դարերում զարգանում է նաև քաղաքական պոեզիան: Գրողների ու գիտնականների զգալի մասը հասարակական կյանքի բազմաթիվ երևույթների բանալին որոնում է հենց այդ հասարակության ներսում. հետաքրքրական է, որ Գրիգոր Նարեկացին գտնում է, որ «... որպէս աստուտ իսկ կիրք բնութեանց, զհասարակաց բարուց ցուցանէ...», այսինքն՝ հասարակության ներսում ստեղծված բոլոր բնական կրքերը հասարակության անդամների մեջ ստեղծված բարքերի արդյունք են:

Նարեկացու այս միտքը առավել որոշակիությամբ ու սրությամբ արտահայտվում է Ֆրիկի ստեղծագործության մեջ: Ֆրիկը օբյեկտիվորեն կասկածի տակ է դնում քրիստոնեական վարդապետության այն միտքը, թե կյանքը և կյանքում գոյություն ունեցող բոլոր երևույթներն ստեղծել է աստված: Բանաստեղծը իրականության մեջ նկատում է սուր հակասություններ ու անարդարություններ և տարակուսանքով է նայում այն բանին, որ «արդար» աստված թույլ է տվել, որպեսզի կյանքում գոյություն ունենան երկու տարբեր ծայրաբեկներ՝ հարուստ ու աղքատ, հզոր ու թույլ, բարի և չար, համարձակ ու վախկոտ և այլն:

Ֆրիկը խիստ զարմանում է, որ՝

Մեկն ի պապանց պարոնորդի,

Մեկն ի հարանց մուրող լինի.

Մեկին հազար ձի ու ջորի,

Մեկին ոչ ուլ մի, ոչ մաքի...

Մեկին հազար դեկան ոսկի,

Մեկին ոչ փող մի պղնձի.

Մեկին հազար հատ մարգարտի,

Մեկին ոչ ուլնիկ մի ապիկի...

Այնուհետև Ֆրիկը զարգացնելով իր միտքը, մեկ առ մեկ ցույց է տալիս կյանքում գոյություն ունեցող բազմաթիվ անարդարությունները, հակասություններն ու ալլանդակությունները:

Վերջապես ստեղծվել էին Շնորհալու աշխարհիկ բնույթի «Ողբ Եղեսիոյ» պոեմն ու բազմաթիվ հանելուկները, Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու առականներն ու այլ գործեր, որոնք իրենց անջնջելի ազդեցութուն են թողել թե՛ ժամանակի և թե՛ հետագա ողջ հայ գրականութեան վրա:

Գրականութեան ասպարեզ իջնելով՝ Մկրտիչ Նաղաշը հմտորեն օգտագործում է նախորդների ստեղծած առաջավոր ավանդները, թափանցում ժամանակի հասարակական-քաղաքական կյանքի տարբեր բնագավառները և իր ստեղծագործութեան հիմնական մասով պատկերում ժողովրդական լայն զանգվածների սոցիալ-տնտեսական ծանր վիճակը, արտահայտում նրանց ապրումներն ու ձգտումները:

\*  
\* \*

Մկրտիչ Նաղաշի ստեղծագործութունը բազմազան բնույթ ունի: Նա գրել է բնութեան ու սիրո, խոհական-խրատական, սոցիալական ու փիլիսոփայական մոտիվներով:

Բնութեան ու սիրո մոտիվներով Նաղաշի գրած գործերից մեզ հասել են «Տաղ ի դէմս մարգարէիցն և Քրիստոսի և Լուսաւորչին», «Տաղ հարսանեաց և ուրախութեան մարդկան» և «Տաղ վասն վարդին և բլբուլին» ոտանավորները, որոնք հավանաբար գրված են բանաստեղծի կյանքի առաջին շրջանում:

Բնութեան և սիրո մոտիվներով գրած ոտանավորներում ամենայն որոշակիութեամբ երևան է գալիս բանաստեղծի լավատեսութունը, ջերմ վերաբերմունքը դեպի բնութեան գեղեցկութունները և փոխադարձ ազնիվ սերը:

«Տաղ ի դէմս մարգարէիցն և Քրիստոսի և Լուսաւորչին» ոտանավորի վերնագրից այն տպավորութունն է ստացվում, թե այն պետք է մի կրոնական ներբող լինի: Մինչդեռ ամբողջ ոտանավորն իր էութեամբ գարնանային բնութեան մի պարզ նկարագիր է, որտեղ բանաստեղծը երիտասարդական խանդավառութեամբ երգում է գարնան գեղեցկութունը, բնութեան զարթոնքն ու երկներանգ ծաղիկների բույրն ու թովչանքը:

Զինչ որ գեղեցիկ ծաղկունք կային,  
ամէնք գնացին.

Ծաղիկ մին այլ հանց գնաց,  
որ ամէն ծաղկունք զնա լացին,  
Ծաղիկն անուշ խոտ ունէր,  
որ ամէն աշխարհս լսեցին,  
Ու ամէն աշխարհաց ծաղկունք  
յայն ծաղկի սէրըն դիմեցին...

Այս նկարագրութեան մեջ ո՛չ մարգարեներ կան, ո՛չ էլ երկնային ոգիներ: Ամբողջ հատվածը իրենից ներկայացնում է երկնաբան գեղեցկների գովք, որոնց մեջ առանձնապես նախապատվութունը տրվում է ծաղիկներից մեկին՝ որպես ծաղիկների թագուհու, որի շուրջն էլ հավաքվելով մյուս ծաղիկները՝ «շաղ առին ու շողշողային»:

Ծաղիկն յանց տեղ գնաց,  
որ ամէն ծաղկունք խընդացին,  
Հազար գոյնզգոյն ծաղկունք  
յայն ծաղկի սէրըն ժողովին:  
Ծաղկունքն յայն ծաղկի սիրուն  
շաղ առին ու շողշողային...

Դեպի բնութունն ու աշխարհիկ կյանքն ունեցած իր սերն ու հիացմունքը Նաղաշը, միջնադարյան հայ գրողների ու բանաստեղծների նման, արտահայտում է կրոնական թեմաների միջոցով: Սակայն, ինչպես այստեղ, այնպես էլ այս շրջանի նրա մյուս ոտանավորներում, կարևորն այն է, որ Նաղաշը եկեղեցական-դավանաբանական գրականութեան մեջ տարածված հին թեմաները մեկնաբանում է բոլորովին նոր ձևով՝ կապելով դրանք աշխարհիկ մարդու անպրումների, հույզերի ու ձգտումների հետ: Տվյալ դեպքում Նաղաշն իր այս ոտանավորում հետապնդում է ժողովրդին դաստիարակելու, նրա հասարակական վիշտը մեղմելու ու մխիթարելու նպատակ, ուստի՝ մոռանալով իր ստեղծած այլաբանութունը, ծաղիկների մեջ տեսնելով մարդկային բարի ու չար, առաքինի ու ոչ առաքինի, անցավոր ու մնայուն հատկութուններ և ելնելով իր կրոնական աշխարհայացքից՝ խրատում, սովորեցնում է կյանքում բարի գործ կատարել, լավ համբավ թողնել, հասարակութեանը օգտակար լինել և այլն:

Նաղաշ, թէ դու խելք ունես,  
միտ արա դու գարնան ծաղկին...  
Հանցեղ ծաղիկ մի լինիր,

որ տանէ զԲեզ հողմն ու քամին,  
Ծաղիկ լեր բարի գործով,  
որ պտուղ տաս դու հոգով...

Իր հետագա գործերում Նաղաշը բնության երևույթների նկարագրությունը փոխարինում է հասարակական երևույթներին, մարդկային փոխհարաբերությունների նկարագրությամբ և վարպետորեն ներդաշնակություն ստեղծում դրանց միջև: Իր «Տաղ հարսանեաց և ուրախութեան մարդկան» բանաստեղծության թեման արդեն Նաղաշը վերցնում է կյանքից, մարդկանց առօրյա փոխհարաբերություններից: Այստեղ բանաստեղծը աշխարհիկ պատկերներով ու ժողովրդի խոսակցական լեզվով նկարագրում է մի հարսանեական տոնախմբություն: Ամբողջ բանաստեղծությունը աշխարհիկ կյանքի մի դրվագի նկարագրություն է, որտեղ առաջին գծի վրա մարդն է իր կենցաղով, սովորություններով, իր հույզերով:

Բնության դարձման հետ միասին բանաստեղծը նկարագրում է նաև մարդկային առօրյա հարաբերություններն ու կյանքը: Գործում բնության գիրկն է քաշում հարյուրավոր երիտասարդների, որոնք ցրտաշունչ ձմռանը երազել էին իրենց սրտի անձկալիների մասին: Այդպիսի մի երիտասարդ զույգ իր գերագույն երջանկությունն է ապրում, նրանք ամուսնանում են: Ահա այս նյութի վրա էլ բանաստեղծը նկարագրում է հարազատների ու ազգականների ուրախությունն ու հրճվանքը.

Ահա հոտըն գայր գարնան,  
Փեսին տեսնէր խիտ խնդման,  
Յորտեղ սիրելիք որ կան,  
Ամէնքն ի հարսնիք թող գան...

Այս ընդհանուր ուրախության մեջ առանձնապես ուրախ են սիրող սրտերը, նրանց համար այդ պահին սիրելի ու բարի են բոլորը... Բանաստեղծը գրում է.

Ղամպար է վառէր փեսայն,  
Փեսաղբօր մոմն վառման,  
Ամէնուն բարև կուտան,  
Թող երկուքն ծերանան...

Այնուհետև մեր առաջ կենդանանում է հարսանեական տոնախմբության ամբողջ պատկերն իր մանրամասնություններով՝

երգը, երաժշտությունն ու զվարճալիքները համեմվում են ժողովրդրդական հումորով:

Այս ոտանավորի մեջ առանձնապես երևան է գալիս բնության ու մարդու փոխհարաբերությունը: Մարդկային կյանքի շատ երևույթներ բանաստեղծը բացատրում է բնության միջոցով. ինչպես զարնանային հորդառատ անձրևները կենդանություն ու զվարթություն են տալիս բնությանը, կյանքի կոչում կենարար բուսականությունը, այնպես էլ բանաստեղծը ցանկանում է, որ այդ ամուսնությունը նորապսակներին բերի երջանիկ կյանք ու խնդություն.

Ամպն ի յերկինք թուխ դարձան.

Ջանձրև քաղցրահամ ցօղան,

Որ երկիրս ծնանի,

Ծաղկունք զարդարեալ ցնծան:

Գովեմք զհարսն ու զփեսայն,

Սոքայ Յակոբայ նման.

Շայ լայ ի միջաց խնդան,

Մնօղ լինին շատ մանկան...

Բնության ու սիրո մոտիվներով Նաղաշի գրած գործերի մեջ առանձնահատուկ տեղ է գրավում «Տաղ վասն վարդին և բլբուլին» դրամատիկական ոտանավորը: Այս գործում բանաստեղծը ավելի ամուր թելերով կապվելով ժողովրդին ու ժողովրդական բանահյուսությունն ավանդներին՝ երգում է աշխարհիկ սերը, մարդու նվիրական ու մաքուր զգացմունքները:

Միջնադարյան հայ գրականության մեջ վարդի ու բլբուլի միջոցով մարդկային զգացմունքների վերարտադրությունը բավական տարածված ձև է եղել: Սակայն վարդի ու բլբուլի սերը երգող բազմաթիվ գործերի շարքում Մկրտիչ Նաղաշի այս ոտանավորը առանձնակի տեղ է գրավում: Եթե այս թեման երգող բանաստեղծներից մի քանիսը վարդի և բլբուլի սերը այս կամ այն չափով կապում են կրոնական թեմատիկայի, երկնային ոգիների փառաբանելու հետ, ապա Նաղաշն այս դեպքում արդեն վարդի և բլբուլի սերը երգում է առանց դրան կրոնական գունավորում տալու:

Իր հիշատակարաններից մեկում Նաղաշը այսպես է նկարագրում ժամանակի հասարակական կյանքը. «... Բանդի շնչմունք զանազան տապախառն փորձութեանց շուրջ զմեօք մածեալ կայ և ախտք անհնարինք և հեշտութիւն ձգիչ. կարիք ի ձեռին և անմտութիւն մերձ, ծուլութիւն խաւարեցուցիչ և անարիութիւն պատեալ

դինև... Այլ զազգիս մերոյ զտառապանս ո՞վ կարէ ընդ գրով արկանել...»:

Հասարակական կյանքի այդ ծանր պայմաններում անկեղծ ու փոխադարձ սերը Նաղաշի գրչի տակ դառնում է անհատի հասարակական վիշտը սփոփելու լավագույն միջոց, կյանքի երջանկութեան աղբյուր:

Բանաստեղծը վարպետորեն ցույց է տվել սիրահարներին ապրումների մանրամասն նկարագիրը: Բլբուլը հանդիպում է վարդին, սիրահարվում է և խնդրում փոխադարձ սեր: Սկզբում բլբուլը երկրնտրանքի մեջ է. կասկածում է վարդի սիրո վրա և հեռվից իր անսահման սերն է հայտնում՝ խոստովանելով, որ առանց վարդի իր կյանքը ոչինչ է.

Բլբուլն ի վարդն ասաց. հիստ անողորմ ես,  
Որ զիմ արինս քեզ հալալ կու դնես.  
Թէ հանց որ բէկուման դու Գաբրիէլն ես,  
Նայ մեկ հետ առ զհոգիս, քանի տի տանջես...

Բայց երբ բլբուլն իմանում է, որ վարդն էլ նույնպիսի ջերմ սեր է տածում դեպի ինքը, մոտենում է նրան ու այս անգամ նրանից բաժանվելը իր համար մահ է համարում.

Բլբուլն ի վարդն ասաց. Ես խիստ ուրախ եմ,  
Դու մանշուր յալամիս ես քեզ խնայեմ.  
Յորժամ հեռանաս, նա զօրն ի մահ եմ,  
Որ թէ զիս մոռնաս, անկից կու վախեմ...

Նույնպիսի զգացմունք է տածում նաև վարդը բլբուլի նկատմամբ.

Վարդն ի բլբուլն ասաց. է լութֆ ու քարամ,  
Որ առանց քո տեսուդ իմ կեանքն է հարամ.  
Ջաղուոր ձայնդ լսեմ և ուրախանամ,  
Դառնայ ելած հոգիս և կենդանանամ:

Այնուհետև նրանց մեջ տեղի է ունենում ջերմ ու սիրալիք զրույց:

Ոտանավորը զարգանում է վարդի ու բլբուլի միջև տեղի ունեցող երկախոսությունով, ըստ որում նրանցից յուրաքանչյուրն իր սիրո անկեղծությամբ ու խորությամբ աշխատում է գերազանցել մյուսին:

Վարդին ու բլբուլին մարդկային գծեր վերագրելով՝ բանաստեղծը միմյանց հանդեպ տածած նրանց սերը ցույց տալու համար գործադրում է հարուստ մակդիրներ ու համեմատություններ: Սիրած էակին նա համեմատում է մերթ թանկագին քարերի, առասպելական հարստությամբ հուշակված քաղաքների ու երկրների, մերթ էլ երկնային լուսատուների ու ոգիների հետ:

Բլբուլն ի վարդն ասաց. է բոլոր լուսին,  
Չկա քեզ օրինակ ջուհար մեծագին.  
Քո մէկ հայիլդ արժէ զքաղաքն Մաշին,  
Չէ Չինումաշին մէկ հայելուդ գին:

Բլբուլից ետ շի մնում վարդը. նա նույնպիսի պատկերներով է գովում իր սիրածին.

Վարդն ի բլբուլն ասաց. Հասրաթով սրտին,  
Ինձ ալամս բոլոր շէ քո տեսուդ գին.  
Յայնժամ հասանէ վարդն իւր մուրադին,  
Երբ տեսանէ զբլբուլն ի մէջ տերեհին...

Նաղաշը խոսքի վարպետ է. նա օգտագործելով ժողովրդական լեզվի ճկունությունը՝ ստեղծում է մեկը մյուսից ուժեղ ու բնորոշ պատկերավոր համեմատություններ.

Բլբուլն ի վարդն ասաց. Թէ՛ Աննման ես,  
Չկարէ մարդ հողեղէն լեզուով գովել զքեզ.  
Քան զտապարզի շախար քաղցր ու շիրին ես,  
Որպէս մուշկ ու ամբար անուշահոտ ես:

Կամ՝

Վարդն ի բլբուլն ասաց. Դու չես հողածին.  
Դու բահր ես ու նիգար, լատիֆ ու նարին.  
է շահ սալվի աւան նագուֆ ու շիրին,  
Երակ կանաչ կենաս, քան զնշարեհին:

Բանաստեղծի գործածած պատկերները, մակդիրներն ու համեմատությունները հիմնականում վերցված են կյանքից, բնությունից. ինչպես տեսանք նրա համար համեմատելի առարկաներ են արևը, լուսինը, գեղեցկաշեն քաղաքները, թանկարժեք քարերը, անմահական ու անուշահոտ օձանելիքները և այլն:

Մկրտիչ Նաղաշի «Վասն վարդին և բլբուլին» ոտանավորը նույնպես ունի իր բարոյախոսական վերջաբանը: Այս դեպքում փոխադարձ ու անկեղծ սերը Նաղաշի մոտ դիտվում է, մի կողմից՝

իբրև սփոփանք մահվան հանգեպ, իբրև կյանքի անցողիկության  
ու մահվան դառն զգացումը խեղդելու, մյուս կողմից էլ՝ մարդ-  
կանց միմյանց նկատմամբ սեր ու ներողամտություն ներշնչելու,  
հասարակությանը պիտանի դարձնելու և առհասարակ չար ու աշ-  
լանդակ կրքերը վերացնելու միջոց.

Քանզի սէր աշխարհիս արուրք մի քաղցր է,  
Յետոյ բաժակ մահու և դժոխոց է.  
Զի մահ կայ և մեռանիլ, յետինն լաց է,  
Եւ սարսափ դժոխոցն զիս խիստ կու մաշէ:

Նաղաշի այս ոտանավորը բավական լայն տարածում է գտել  
և բազմաթիվ ձեռագրերում «խմբագրվել» է գրիչների կողմից:

\*  
\* \*

Իր գործունեության ողջ ընթացքում Նաղաշը շատ ավելի հա-  
սարակական տրամադրություններով ապրող բանաստեղծ է, քան  
անձնական, ուստի նրա ստեղծագործության մեջ աստիճանաբար  
գերիշխող են դառնում հասարակական-սոցիալական մտտիվները,  
մանավանդ 1420-ական թվականներից հետո, երբ նա մտնում է  
գործունեության լայն ոլորտ: Նաղաշը շփման մեջ էր հասարակու-  
թյան բոլոր խավերի հետ. նա շատ լավ ծանոթ էր ժողովրդի կյան-  
քին ու կենցաղին, շատ լավ տեսնում էր կյանքում տիրող հակասու-  
թյունները, որոնք և բանաստեղծին խորհրդածությունների առիթ են  
տալիս: Կրոնական սահմանափակ աշխարհայացքով Նաղաշը վեր-  
ջիվերջո հանգում է այն եզրակացության, որ կյանքում գոյություն  
ունեցող բոլոր շարիքների ու անարդարությունների պատճառը  
մարդու, անհատի բնավորության մեջ բուն դրած ազահուսթյունն ու  
ոխակալությունն են.

Ի սկզբանէ մինչ ի վախճան  
ամէն շարիք, որ գործեցան,  
Ազահուսթին եղև պատճառ,  
որ ի բարեացն զրկեցան.

եզրակացնում է բանաստեղծը «Վասն ազահուսթեան» ոտանավո-  
րում: Ավելին, բանաստեղծի հասկացողությամբ բոլոր պատե-  
րազմների, ավերածությունների ու ժողովուրդների բնաջնջման  
պատճառը դարձյալ նույն ազահուսթյունն է.

Զինչ թագաւորք և մեծ իշխան,  
որ հեծելով յիրար կովան,  
Զինչ որ արիւն յերկիր հեղան,  
ամէնն վասն ազահուսթեան.  
Զինչ որ քաղաք տապալեցան  
և ժողովուրդք որ գերեցան,  
Զինչ որ աներք առ և թախտան,  
ամէնն վասն ազահուսթեան...

Սակայն ազահուսթյան կործանարար հետևանքների մասին խո-  
սելիս, բանաստեղծը որոշակիորեն նկատի ունի հասարակության  
տարբեր շերտերի՝ աշխատավորության ու իշխողների միջև գո-  
յություն ունեցող հակասությունը: Բանաստեղծը շատ լավ նկատում  
է, որ ազահուսթյան կործանարար ախտով բռնված են հատկապես  
հասարակության վերնախավի մարդիկ, որոնք թեև լողում են հարըս-  
տության ու փարթամության մեջ, լիովի օգտվում կյանքի բոլոր  
բարիքներից, բայց և այնպես ձգտում են ուրիշներին կեղծքելու  
գնով բազմապատկել իրենց ունեցվածքն ու հարստությունը. այս-  
պես.

Ազահն գայլ է, պատառող  
և ծարաւի արեան մարդկան,  
Խլէ, զրկէ, յափշտակէ,  
ոչ յագենայ արեամբ մարդկան:  
Թէպէտ հարուստ է և փարթամ  
և տէր ընչից և մեծութեան,  
Բնութեամբն ազահ է և անյագ,  
ջանայ զրկել զամենեսեան...

Մերկացնելով ու քննադատելով ազահուսթյան ախտով բռնված  
աշխարհիկ ներկայացուցիչներին, Նաղաշը չի խնայում նաև հոգևո-  
րականներին, կաթողիկոսներին ու հոգևոր մյուս բարձրաստիճան  
ներկայացուցիչներին: Ըստ Նաղաշի՝ հոգևորականության բոլոր  
խավերի մեջ ազահուսթյունը, կաշառակերությունը, խաբեությունը,  
կեղծիքն ու հավատորացությունը դարձել են գերակշռող: Անձնա-  
կան շահն ու հարստություն կուտակելու տենչը նրանց մեջ մեռցրել է  
մարդկային բոլոր առաքինությունները:

Կաթողիկոսքն շատացան  
անօրինացն բռնութեան,  
Եպիսկոպոս օրհնեն անբան,  
ամէնն վասն ազահուսթեան:

Վարդապետքն, որ նոր ելան,  
 Բանին եղեն վաճառական  
 Եւ քարոզեն զհաճոյս մարդկան,  
 ամէնն վասն ազահութեան:  
 Եպիսկոպոսք զկանոնն անցան,  
 որ պոռնկաց տան հրաման,  
 Կաշառ առնուն կարմիր դեկան,  
 ամէնն վասն ազահութեան:  
 Հաբեղանին զվանքն ուրացան,  
 բնաւ զսաղմոսն մոռացան,  
 Դոնէ ի դուռ ի շուրջ կուզան,  
 ամէնն վասն ազահութեան:  
 Երիցանին յիրար կովան,  
 բիր վերուցին և գաւազան,  
 Փետեն մորուք, կոտրեն բերան,  
 ամէնն վասն ազահութեան:

Նաղաշի խորաթափանց հայացքից շին վրիպել ժամանակի հոգևոր իշխանութեան ներսում առաջացած քայքայումը և բարձրատիճան ու ստորին հոգևորականութեան մեջ իշխող այլանդակ բարքերը:

Որ Նաղաշը չափազանցութեաններէ մեջ չի ընկել և հոգևորականութեան բոլոր աստիճաններին տված նրա բնութագրումներն իրական հիմք ունեն, պարզորոշ երևում են պատմական այն փաստերից, որ բերված է այս աշխատութեան առաջին մասում: Բայց ավելորդ չէ այստեղ բերել նաև թովմա Մեծոփեցու վկայութեանը ժամանակի բարձրաստիճան հոգևորականութեան մասին: Խոսելով կաթողիկոսական աթոռը Սսից էջմիածին տեղափոխելու հանգամանքների ու պատճառների մասին՝ թովման գտնում է, որ Սսի կաթողիկոսութեանը և ամբողջ հոգևորականութեան զգալի մասն իր հեղինակութեանը կորցրել էր ժողովրդի աչքում, որովհետև «Անառակութեամբ և արբեցութեամբ և պիղծ վարուք շրջէին, և ինքեանք կապող և արձակող նստէին Հայոց... զի սիմոնական արարին զամենայն ազգս Հայոց և նախատինք ամենայն ազգաց զի արձաքով տային զնորհս Հոգւոյն Սրբոյն և գայս օրէնք գիտէին... զանողղայս և զանկարգս ձեռնադրէին, տեարք գոլով ընչից, և զաղբատս խոտէին: Որ և ի միոյ եպիսկոպոսէ հազար երեսուն (Ռ) ֆիօլի առին, և ապա ետուն զայն կարգ, և նոքա, որ ոչ կարէին տալ, զկարգ եպիսկոպոսութեանն գրաւ առնուին...: ... զի սնիծիւք

նգովից և բանադրութեամբ կապանաց գաշխարհս մեր լցրին. կաթալիկոսն զեպիսկոպոսսն, եպիսկոպոսն զբանանայս, բանանայն զժողովուրդ... նոքա վասն արձաքասիրութեանն նոր դժախտ շինեցին ամենայն հայկազեան սեռի...»,<sup>1</sup> — գայրացած ամփոփում է իր խոսքը թովմա Մեծոփեցին:

Հոգևորականութեան մերկացումն ու սուր քննադատութեանը Նաղաշի մոտ այնքան իրական է ու դիպուկ, որ հասարակ մարդիկ այդ ընդհանուր նկարագրութեան մեջ տեսնում էին ժամանակի այս կամ այն բարձրաստիճան հոգևորականին: Այդ տեսակետից խիստ բնորոշ է Երևանի Մատենադարանի № 2127 ձեռագրում Նաղաշի «Վասն ազահութեան» տաղից հետո Հովասափ գրչի հավելումը: Գրիչը, ոգևորվելով Նաղաշի սուր դիտողութեաններից, տեղնուտեղը ավելացնում է. «... Կաթն ու արին խառնեն յիրար յորժամ առնուն և քննին. Եւ մէկ մէկի ազգ դուս գան, մէկ պորտին Ժ (10) դուռչիկն առնոյ, տայ հրաման. և Բ (2) պորտն քսանական, թէ Գ (3) լինի ԳԺ (30) ական. այսպէս կորուս եպիսկոպոսն Եւզոկիան տէր Մարգարէ անուն կոչի. նստեալ կա ի սուրբ Աննան Թոխարցոց աթոռակալ ունի տնտես որպէս թուրքի քեհպին...»<sup>2</sup>:

Ինչպես տեսնում ենք, Նաղաշի քննադատութեանը հասնում է իր նպատակին և ժողովրդի մեջ արձագանք գտնում:

Ազահութեան ու ընչաքաղցութեան կործանարար հետևանքների պատկերումը ավելի ցայտուն ու ներգործուն դարձնելու, ինչպես նաև դրանք իբրև դաստիարակութեան միջոց օգտագործելու նպատակով Նաղաշը մեծ հմտութեամբ օգտագործում է կրոնա-եկեղեցական թեմաներն ու ավանդութեանները: Վարպետորեն օգտագործելով Ադամի, Կայենի, Հուդայի և կրոնական գրականութեան մյուս հերոսների հետ կապված ազահութեան ու նախանձի փաստերը՝ Նաղաշը ցույց է տալիս, որ այդ մարդկանց զազրելի կրքերի պատճառով հսկայական շարիքներ ու դժբախտութեաններ են առաջացել, և իրենք՝ այդ շարիքների հեղինակները, կործանվել են իրենց իսկ նյութած դավերի հետևանքով:

Այդ նկարագրութեաններէ մեջ կարևորն ու բնորոշը ոչ թե այն է, որ Նաղաշը նկարագրելով բիբլիական հերոսներին՝ ինքն էլ անվերապահորեն հավատում է այդ բոլորի իսկութեանը (գա շատ բնական է ու ժամանակի ոգուն ու գաղափարախոսութեանը միանգամայն համահնչուն), այլ այն, որ Նաղաշը Աստվածաշնչից վերց-

<sup>1</sup> Թովմա Մեծոփեցու Յիշատակարանը, Թիֆլիս, 1892, էջ 56—57:

<sup>2</sup> Ձեռագիր № 2127, էջ 139ա:

րած այդ փաստերը օգտագործում է վերնախավի բարոյական այլաբերվածությունը մերկացնելու նպատակով:

Տվյալ դեպքում ազատության այդ հետեանքները մատնանշելով՝ բանաստեղծը հետապնդում է բոլորովին աշխարհիկ նպատակ՝ հորդորել, խրատել ժողովրդին հեռու մնալու ազատությունից, ընկերոջ նկատմամբ ուշադիր լինել, հասարակությանը օգտակար ու պիտանի լինել, հեռու մնալ այնպիսի արատներից, որոնք, բանաստեղծի կարծիքով, դառնում են հասարակության քայքայման, ժողովուրդների ստրկացման ու բնաջնջման և անհասարակ բոլոր շարիքների պատճառը:

Հին, կրոնական թեմաներն ու ավանդությունները վարպետորեն աշխարհիկ նպատակներով օգտագործելու իր մեթոդով Նաղաշը միաժամանակ հարստացնում է հայ գրականության թեմատիկան և իր ստեղծագործություններով նպաստում գրականության աշխարհականացմանն ու այդ գրականությունը ժողովրդական զանգվածներին ընդհուպ մոտեցնելու գործին:

Նաղաշի հասկացողությամբ ազատության ու ընշաքաղցության ախտից պակաս վտանգավոր ու սոսկալի շեն նաև ոխակալությունն ու խոռվարարությունը: Բանաստեղծի դատողությամբ ամենաառաքինի ու մեծագործ, նույնիսկ Արիստոտելի գիտությունն ու հիմաստությունն ունեցող մարդն անգամ աննշան է ու անարժեք և ենթակա կործանման, եթե նրա հոգում բուն են դրել նախանձը, խոռվարարությունն ու ոխակալությունը:

Թէ կուսութեամբ քո պարծենաս,

որպէս հրեշտակ զքեզ գիտես,

Թէ սիրտդ պիղծ է նախանձով,

քան զսատանայ ես, թէ գիտես...

Թ՝ հիմաստութեան աղբիւր ես դու,

Արիստոտէլ զքեզ գիտես,

Թէ շար կամիս քո ընկերիդ,

անմի՛տ, դու քեզ հոր կու փորես:

գրում է բանաստեղծը իր «Խրատ խոռվ չկենալու...» բանաստեղծության մեջ:

Մինչդեռ ամենամեծ մեղքեր ունեցող մարդն անգամ, բանաստեղծի դատողությամբ, կարող է ազատվել դրանցից և արժանանալ արքայության, եթե նա հրաժարվի բոլոր վատ ու շար հակումներից, ընկերոջ նկատմամբ ներողամիտ ու հաշտ լինի, իրենից վանի խոռվությունն ու նախանձը:

Միջնադարում, երբ ֆեոդալական մասնատվածության պայմաններում պետականությունից զրկված հայ ժողովուրդը ճգնաժամ էր ապրում, և մոռացություն էին տրվում ժողովրդին միավորող ավանդները, Նաղաշի ու մյուս բանաստեղծների այսպիսի խրատները դադարում էին սոսկ վերացական քարոզներ լինելուց: Դրանք ստանում էին գործնական նշանակություն և արտաքին նվաճողների ու օտար տիրակալների դեմ մղվող պայքարում նպաստում էին ժողովրդի համախմբմանը: Ուստի այս հիմաստով էլ չափազանց բնորոշ է, որ իր նպատակին հասնելու և հասարակական տարբեր շերտերի մեջ համերաշխություն, ներողամտություն և չափավորություն ստեղծելու համար Նաղաշն աշխատում է անձնական օրինակ ցույց տալ: Բացի այն, որ նա ոտանավորներում իրեն համարում է բոլոր մարդկանց պես մեղքերի մեջ թաղված և զբաղվում է ինքնաձաղկամամբ, նա միաժամանակ դիմում է նաև գործնական միջոցների: Այսպես՝ Նաղաշի կենսագրությունից հայտնի է, որ իր հպատակներից ու ժամանակի պետական բազմաթիվ իշխանավորներից նա հսկայական նվերներ էր ստանում, որոնք ամբողջությամբ բաժանում էր «կարոտելոց», «աղքատաց», «տնանկաց» և այլն: Ժամանակակիցները վկայում են, որ Նաղաշը հարկեր էր գանձում հարուստներից ու իշխաններից և դրանք բաժանում աղքատներին ու կարոտյալներին. «... զի եկեղեցիք Միջագետաց ի ներքոյ դիմոսական հարկի կային, և եպիսկոպոսք՝ մաքսապետք, զի զամենայն, զոր ինչ առնուին ի քրիստոնեից՝ ի մաքս տային և ոչ կարէին մէկ հաց տալ աստուծոյ կամ աղքատի, և սա (Մ. Նաղաշը—է. Խ.) զարութեամբն Քրիստոսի եբարձ զմաքսն յեկեղեցաց և ինքն ևս առնոյր ի պարուսաց Ժ (10) և Ի (20) հազարով և բաշխէր եկեղեցաց, աղքատաց և կարատելոց...»<sup>1</sup>:

Իբրև հումանիստ ու ժողովրդասեր բանաստեղծ Նաղաշը շատ լավ տեսնում էր, որ հասարակության ներսում դեռևս շատ արատներ, անարդարություններ ու այլանդակություններ կան, որոնք ծնվում են հարուստների ու ընշազուրկների միջև գոյություն ունեցող անհավասարությունից, մի բան, որ պատճառ է դառնում ժողովրդի միասնության ջլատմանն ու քայքայմանը, ուստի թե՛ իր հասարակական գործունեությամբ և թե՛ իր ստեղծագործությամբ Նաղաշն ամեն կերպ աշխատում էր համերաշխություն ստեղծել իր հոտի մեջ: Բայց բանաստեղծը բախվում էր իրականությանը, և տես-

<sup>1</sup> Ձեռագիր № 2379, էջ՝ 252բ:

նելով իր առաջարկած միջոցների անզորությունը, որոնք բխում էին քրիստոնեական բարոյականության սկզբունքներից, ընկնում էր երկընտրանքի մեջ և ի վերջո կառչում հանդերձյալ կյանքի գաղափարին:

Պետք է ասել, սակայն, որ Նաղաշը, այնուամենայնիվ, չի հանգում երկրային, իրական կյանքի բացարձակ ժխտմանը: Այս հարցում էլ նա որոշակիորեն տարբերվում ու սահմանադատվում է իր նախորդ մի շարք մտածողներից ու բանաստեղծներից:

Նաղաշը հումանիստական-մարդասիրական աշխարհայացքը աշխատում է հաշտեցնել կրոնական աշխարհայացքի հետ՝ որոշակիորեն պաշտպանելով մարդկայինը, մարդու իրական երջանկության գաղափարը ընդգեմ ասկետիզմի: Ահա թե ինչու իր հոռետեսական-կրոնական բանաստեղծություններում անգամ նա չի ժխտում աշխարհիկ կյանքը:

Այս տեսակետից բնորոշ է «Վասն ազահութեան» ոտանավորը, որտեղ բանաստեղծը մի կողմից երազ ու սուտ է համարում երկրային կյանքը, անցողիկ ու խաբուսիկ վայելքներն ու հաճույքները և այլն, մյուս կողմից՝ այդ նույն կյանքը համարում է գանձերով, ճոխությամբ, փարթամությամբ ու բարիքներով լի մի սեղան: Բանաստեղծի պատկերացմամբ.

Աշխարհս տուն է լի գանձով,  
փարթամութեամբ ու ճոխութեամբ,  
Այլև սեղան է բարելի,  
որ ամենայն ոք ցանկանան:

Ահա այս փարթամ ու բարիքներով լի սեղանից, այս ցանկալի կյանքում...

Որք իմաստուն են հաւատով,  
զշափաւորն առնուն գնան,  
Վայելեն ի հանգստեան  
և հասանեն ի յօթեան:  
Եւ որք անմիտ են, շարափառ,  
ազահութեամբն կուրանան,  
Գիրկ ածեն անցաւորիս  
և ի յալեաց մէջն ծփան:

Ինչպես տեսնում ենք, աշխարհը, երկրային կյանքն ինքնին վերցրած արհամարհելի չէ բանաստեղծի համար: Ճիշտ է, այն անցողիկ է, ժամանակավոր, բայց այդ ժամանակավոր կյանքում ևս մարդ կարող է երջանիկ և ուրախ լինել, եթե լինի շափավոր, արդարամիտ, ընկերոջ նկատմամբ ներողամիտ, եթե ուրիշներին

շղթի, շահագործի և իրենից առհասարակ վանի նախանձը, դիտակալությունը և մանավանդ ազահությունն ու ընշաքաղցությունը:

Այսպիսով՝ թեև բանաստեղծը երբեմն-երբեմն կյանքի բարդ իրադրությունների մեջ դարաշրջանի գաղափարախոսության ոգուն համապատասխան իրականը, երկրայինը երազ ու սուտ է համարում և փարվում հանդերձյալ կյանքին, բայց նա մինչև վերջ չի մնում նույն դիրքերում, նրա մեջ խոսում է նաև կյանքի վայելքներին ձգտող, կյանքում հեռանկարներ ու սպասելիքներ ունեցող մարդը, որն անբաժանելիորեն կապված է իրական, աշխարհիկ կյանքին: Որ Նաղաշը բացարձակորեն չի ժխտում աշխարհայինը, վկայում են կյանքի ու մահու պրոբլեմին նվիրված նրա խոհափիլիսոփայական ոտանավորներն ու առանձին հիշատակարանները, որտեղ, օբյեկտիվորեն հակադրվելով քրիստոնեական վարդապետությանը, կոնկրետ դեպքում խիստ քննադատության է ենթարկում մահը, որպես շարիքների մեծագույն, և Ֆրիկի նման զարմանք ու տարակուսանք հայտնում, թե ինչպե՞ս է, որ «անճանաչելի ու անքննադատելի» բարի աստվածը այնպիսի շարիքներ է ստեղծել, որ «Շատ իմաստուն, խելացի, ու կու մնան մաք»: Նաղաշը մահվան և աստծու ստեղծած որոշ անարդարությունների մասին մանրամասն խոսում է 1449 թ. Մերտինի համաճարակի առթիվ գրած ընդարձակ հիշատակարանում: Նկարագրելով ժողովրդի սարսափելի վիշտը, ժանտախտի կատարած ավերածությունները՝ նա զարմանում է, որ աստված իր բարկությունը, առանց խտրության, թափում է ինչպես մեղավորների, այնպես էլ անմեղների գլխին: Ավելին, Նաղաշը գայրանում է այն անարդարության համար, որ աստված մեղավորների պատճառով պատժում է անմեղներին:

Նաղաշը անհուն դառնությամբ ու կսկիծով նկարագրելով մահվան առաջացրած սարսափները՝ փաստորեն բողբոջում է նաև մահը առաջացնողի՝ աստծու, դեմ:

Այդ բանը դեղարվեստական վարպետությամբ նա արտահայտել է «Արարիչն արարածոց...» մեծ հուզականությամբ ու շնչով գրած տաղի մեջ, որի համար թեմա է ծառայել 1469 թ. Մերտինում երկրորդ անգամ բռնկված ժանտախտի համաճարակը: Իր այդ ոտանավորում, Նաղաշը բոլորի հետ համահավասար ու անկեղծորեն ողբում է մանուկների, երիտասարդների ու նորապսակների մահը: Բանաստեղծի հասկացողությամբ այդ համատարած մահը մի այնպիսի ծանր ու սարսափելի երևույթ է, որի առաջ նույնիսկ անշունչ առարկաները, սարերն ու ձորերը, ծառերն ու ճյուղերն են գողում:

Լացէ՛ք այսօր և ողբացէ՛ք ամենեքեան,  
Դառն արտասուօք հառաչեցէ՛ք դուք միաբան,  
Զի հանց կսկիծ այլ չէ տեսէր մարդ բանական,  
Որ սար ու ձոր և ծառ ու ճիւղ ամէն կուլան...

Նաղաշը ատում է մահը, որովհետև մարդու համար միակ ու հիմնական ձգտումն է ապրել ու ստեղծագործել, իսկ մահը խափանում է նրա այդ ձգտումը: Նաղաշի այս ոտանավորում երիտասարդ հիվանդն ինքն է բողոքում մահվան դեմ. նա լալահառաչ խնդրում է փրկել-ազատել իրեն մահվան ճիրաններից, որովհետև ինքը շատ մտադրություններ ու անելիքներ ունի կյանքում.

Յայնժամ ելաց, լալով ասաց. «Ինձ խղճացէ՛ք,  
Ողորմելի եմ, զինահար, զիս թափեցէ՛ք.  
Եւ ի ձեռաց սուրբ հրեշտակին ազատեցէ՛ք,  
Զի դեռ մանուկ եմ, զինահար, զիս գնեցէ՛ք:  
Ինձ չէ ատեն, ոչ ժամանակ մեռանելոյ,  
Ոչ նեղ զնտան ու գերեզման մտանելոյ,  
Կամք շունիմ ես իմ տանէն ելանելոյ,  
Զի շատ հասրաթ ունիմ ու շատ բան հոգալոյ»:

Սակայն անգութ ու դաժան մահը չի խնայում ոչ նոր մանկան, ոչ հարսին ու փեսային.

Եղուկ ու վայ հազար բերան, զինչ գործեցաւ,  
Զի նորասէր հարսն ու փեսայն բաժանեցաւ,  
Քանի մանուկ մուրագալի ի հող դարձաւ,  
Եւ թէ քանի մայր որդէմեռ մորմոքեցաւ...

Պատանու մահվան սրտաճմլիկ տեսարանին ներկա է Նաղաշը, նա հանգուցյալի հարազատների հետ համահավասար ողբում է երիտասարդի մահը.

Ես Նաղաշ եպիսկոպոս՝ ծառայ կուսին,  
Աչօք տեսի զդառն կսկիծ ողորմագին,  
Լալով լացի և ողբացի արտասուագին,  
Դառն արտասուօք զողբս ասացի նոր մեռելին:

Նաղաշի ողբը մեռնողի վրա ասված լով ողբ, ժամանակավոր մահերգ չէ: Բանաստեղծն իր այդ ոտանավորի մեջ դրել է սոցիալական և ժամանակի իրականությունը բացահայտող մոմենտներ: Հետաքրքրական է նկատել, որ մահվան պրոբլեմին նվիրված Նաղաշի ողբերի հերոսները, որոնց նկատմամբ ջերմ վերաբերմունք է

ցուցաբերում բանաստեղծը, ոչ թե բարձրաստիճան իշխաններ ու թագավորներ են, այլ հասարակ ժողովրդի ներկայացուցիչներ, որոնք տնտեսական ամենախղճուկ պայմաններում հազիվ են պահպանում իրենց գոյությունը: Նաղաշի «Արարիչն արարածոց...» ոտանավորի մեջ մեր առաջ պատկերանում է աշխատավորի աղբատիկ խրճիթը, որտեղ մեռնում է նրա սիրասուն զավակը, իսկ ծնողները կարիքի ու աղքատության մեջ հնարավորություն չունեն փրկելու նրան.

Մանուկն ելաց և հառաչեց, ճարակ չեղաւ,  
Դառն արտասուօք դարձեալ ի հայրն նայեցաւ.  
Հայր, զինահար, հասի՛ր, մատաթ, հոգիս քակտաւ,  
Հազար հասրաթ կայր իմ սրտիս՝ մէկ մի չեղաւ:

Դեպի որդին անհուն սիրով ու զգացմունքներով լցված հայրը, սակայն, անկարող է փրկելու իր որդուն: Նա անհուն վշտի մեջ պատրաստ է իր հոգին հոժար սրտով նրան տալու, բայց ճար չունի նրան օգնելու.

Հայրն դարձաւ յորդին ասաց հառաչելով,  
Թէ՛ ձաւ շունիմ, ոսկի՛ ւ աւժաք քեզ գնելով,  
Զհոգիս կուտամ հոգոյդ փոխան յոժար սրտով,  
Զինահար, զիս մի խոցէր հրեղէն սրով...

Մահվան ճիրաններից չկարողանալով փրկել երիտասարդին՝ բանաստեղծը անհուն վշտի մեջ խորհրդածություններ է անում կյանքի ու մահվան հարցերի շուրջ և գալիս այն եզրակացության թե՛

Եվ քան զմահն լեղի իսկի չկայ վատ,  
Որ կու բաժանէ զփեսան ու զնոր հարսն ի դատ,  
Երբ բաժանողն աստուած է, ո՛ւմ անեմ գանգատ,  
Շատ իմաստուն, խելացի, որ կու մնան մաթ...

Իր այս դատողություններով Նաղաշը սերտորեն մոտենում է Ֆրիկին, որը նույնպես մի կողմից ասածուն «արդար ու անաչառ» է համարում, մյուս կողմից ցույց է տալիս կյանքում նրա ստեղծած շարիքներն ու անարդարությունները:

Հետաքրքրական է նկատել, որ մահվան դեմ գրած իր ոտանավորներում Նաղաշը չի մխիթարում ու հուսադրում մահամերձին այն բանով, որ նա շուտով շարիքներով ու դառնություններով լի աշխարհից տեղափոխվելու է մշտնջենական ու բարիքներով լի հան-

դերձյալ կյանքը: Ներկա դեպքում նրա մոտ հանդերձյալ կյանքը վեր է ածվում նեղ զնդանի, գերեզմանի, որից սարսափում է մահամերձ երիտասարդը և խնդրում, աղաչում է շրջապատողներին, որպեսզի փրկեն իրեն: Այս հարցում Նաղաշի աշխարհայացքի մեջ նկատվում է որոշակի առաջընթաց: Իրականության ու մարդու հոգեբանության ճշմարտացի ընկալմամբ Նաղաշը աստիճանաբար մոտենում է հանդերձյալ կյանքի բացասման և երկրային կյանքին առաջնություն տալու գաղափարին:

Այսպիսով, մահվան պրոբլեմին նվիրված Նաղաշի բանաստեղծություններն իրենց խոր հումանիզմով ու ժողովրդականությանը ձեռք են բերում համամարդկային արժեք: Պատահական չէ, որ Նաղաշի այդ բանաստեղծություններն ունեցել են բազմաթիվ ընդօրինակություններ, դրանցից շատերը դարձել մասսայական սգո երգեր: Ուստի միանգամայն սխալ պիտի համարել տարածում ստացած այն կարծիքը, ըստ որի լալյաց երգերը համարվում են կրոնական եկեղեցական ստեղծագործություններ:

Պետք է ասել, որ լալյաց երգերի մեծ մասը, որ սերտորեն կապված է ժողովրդական բանահյուսության հետ և իր սկզբնալուծությունն է ստանում դեռևս հեթանոսական շրջանից, հաճախ արտացոլում է հասարակական կյանքի ու կենցաղի մի շարք բնորոշ կողմեր: Տվյալ դեպքում Նաղաշի այդ բանաստեղծությունները սերտորեն կապվում են հենց ժողովրդական սգերգերի հետ: Սակայն այդ թեմայով իր գրած գործերում Նաղաշը վեր բարձրանալով ժողովրդական սգերգերի մակարդակից՝ կատարում է գեղարվեստական լայն ընդհանրացումներ: Դրանով էլ Նաղաշի այդ գործերն ստանում են ճանաչողական մեծ արժեք և դառնում ժողովրդի դաստիարակության միջոց:

\*

\* \*

Նաղաշի ստեղծագործության մեջ յուրահատուկ տեղ են գրավում օտար նվաճողների հարստահարությունների ու ներքին ֆեոդալականության կեղեքման հետևանքով քայքայված ու անասելի աղքատության հասած ժողովրդի մի ստվար մասի՝ պանդուխտների կյանքն ու վիճակը արտացոլող երգերը:

Իր կյանքի ու գործունեության ողջ ընթացքում մոտիկից շփվելով ժողովրդական լայն զանգվածների հետ, ծանոթանալով աշխատավորության սոցիալական ու տնտեսական վիճակին, Նաղաշը

անսահման կարեկցանքով է լցվում կյանքի բնականոն հունից դուրս շարտված պանդուխտների նկատմամբ, պատկերում նրանց շարքաշու հարստահարված կյանքը, արտահայտում նրանց հասարակական վիշտը:

Պանդխտությունը որպես հասարակական մեծագույն շարիք հայ ժողովրդի կյանքից անբաժան է եղել, սակայն գեղարվեստական գրականության հիմնական թեմաներից մեկն է դառնում XV դարում՝ շնորհիվ Մկրտիչ Նաղաշի. հենց այդ էլ Նաղաշի պատմական այն մեծագույն ծառայություններից է, որ նա մատուցել է հայ գրականությանը: Ճիշտ է, պանդխտության թեմայով գրած Նաղաշի ստանալուները երկու երեքից չեն անցնում, սակայն թվով քիչ այդ գործերում Նաղաշը կարողացել է բացահայտել պանդխտության և պանդուխտի ապրումների հետ կապված հոգեբանական բոլոր մանրամասները, ամենալայն ընդհանրացումներով վերարտադրել պանդուխտի շարքաշու կյանքն ու ողբերգական վախճանը օտարության մեջ՝ հեռու հայրենիքից ու հարազատներից:

Մկրտիչ Նաղաշի նկարագրած պանդուխտները հասարակության բարձրաստիճան խավի ներկայացուցիչները չեն, որոնք նվաճողի սրից ազատվելու համար ապաստան են որոնում օտար աշխարհներում, ոչ էլ առևտրական գործարքներով հեռավոր երկրներում ուշացած վաճառականները, այլ առաջին հերթին աշխատավոր ընչազուրկ գյուղացին, որը, օտար նվաճողների ու ներքին հարստահարիչների ճնշման ու շահագործման ծանր լծի տակ կորցնելով տնտեսական հենարանն իր երկրում, ստիպված թողնում է տուն ու տեղ, հարազատներին ծանր պարտքերի տակ և փորձում է օրվա ապրուստ ձեռք բերել պանդխտության մեջ, և ապա ժողովրդի այն մասը, որը անընդհատ պատերազմների հետևանքով տեղահանվել էր իր հայրենիքից, քվել զանազան երկրներ ու թողնվել բախտի քմահաճույքին:

Նաղաշի նկարագրած պանդուխտի վիճակը կրկնակի ծանր է, որովհետև նրան միաժամանակ տանջում է, մի կողմից՝ հայրենիքի ու մերձավորների կարոտը, մյուս կողմից՝ օրվա ապրուստ ձեռք բերելու և այդ ապրուստից հարազատներին բաժին հանելու ամենօրյա հոգսը: Պանդուխտի այդ շարքաշու կյանքը նկատի ունենալով է, որ բանաստեղծը գրում է. «Ձղարիպուծին յորժամ յիշեմ, քան զուս դողամ...», որովհետև

... դարիպին կեանքն է լալի, ողբերգական,  
Դառն ու լեղի, լի տրտմութեամբ ի նեղ զնտան,

Յորժամ լինի օտար երկիր թափառական,  
Ղարիպն օտար ոչ ճանաչեն, ոչ գիտենան...

Օտարութեան մեջ պանդուխտի համար նույնիսկ համեմատաբար տանելի պայմաններում էլ նա ուրախ չէ, նրա կերած հացը, խմած ջուրը դառն է ու լեղի, արտասուքով լի, որովհետև նրան անընդհատ տանջում է հարազատների ու հայրենիքի կարոտը: Բանաստեղծի բառերով ասած.

Ղարիպին հացն է լեղի, որ ճաշակէ,  
Դառն ու լեղի, խառն արտասուք ջուրն որ ըմպէ,  
Թէ զօրն տան նուշ ու շաքար, որ ճաշակէ,  
Երբ հառաչէ, նա ի սիրտէն արիւն կաթէ...

Այդպիսի զգացումներ է ունենում պանդուխտը, որովհետև

Ղարիպին սիրտն է ի սուգ, անմխիթար,  
Երբ հառաչէ, նա սիրտն ի փորն առնու գալար.  
Յորժամ յիշէ գիր սիրելիքն հաւասար,  
Նա յաչերուն արիւն կաթէ երեսն ի վայր...

Բանաստեղծը ամենայն մանրամասնութեամբ նկարագրում է պանդուխտի դառը կյանքի զանազան դրվագները, ամենուրեք շեշտում նրա ազնվությունը, աշխատասիրությունն ու առաքինությունը: Իր գոյությունը պահպանելու համար պանդուխտը շրջում է ամեն տեղ, խնդրում գործ ու մի կտոր հաց տալ իրեն, սակայն ամենուրեք նա հանդիպում է անտարբեր ու կոպիտ վերաբերմունքի, իսկ լավագույն դեպքում էլ նա այնքան քիչ է վաստակում, որ հազիվ իր կիսաքաղց կյանքն է քարշ տալիս: Բանաստեղծը խոր հուզականութեամբ ցույց է տալիս, թե ինչպես հաճախ ազնիվ ու առաքինի պանդուխտն աշխատանք ու վարձատրություն չգտնելով՝ սոված, ծարավ, ճարահատյալ, դռնեզուռ է ընկնում, մեռնելու աստիճան ճնշվելով՝ ողորմություն խնդրում.

Ղարիպին վայն էր եկեր, երբ քաղցեանայր,  
Երես ի քաշ ի փողոցներն կու մուրայր,  
Շատոք փակեն զդուռն ի դիմաց, նստէր ու լայր,  
Թէ կաթ մի ջուր ուզէր գերին, մէկ մի չիտայր...

Ղարիպին աղքատութիւնն է խիստ դիժար.  
Յամէն դիմաց էր նեղացած ու ճար չկայր.  
Ղարիպն օտար էր ու պանդուխտ երկիր օտար,  
Թէև նա փոխ ուզէր գերին, մէկ մի չիտայր...

Նաղաշը խտացած գույներով է նկարագրում ղարիբի հոգեկան տառապանքը, նրա կրած վիրավորանքներն ու անարգանքները, օտարների դաժան վերաբերմունքը: Ղարիբը բացարձակ անօգնական է, բախտի քմահաճույքին թողնված մանավանդ այն ժամանակ, երբ նա հիվանդանում է: Այդ ծանր վիճակում, ցուրտ ու խոնավ եղանակներին օտար փողոցի պատերի տակ պառկած՝ ղարիբը հուսահատութեան մեջ հիշում է իր հարազատներին ու սիրելիներին և դառը լալիս ու հառաչում.

Ղարիպն խեղճ էր, երբ յանկարծ հիւանդանայր,  
Յօտար փողոց մոխրաթաւալ անկեալ կենայր,  
Թէպէտ ունեւ շատ սիրելիք՝ մէկ մի չկայր,  
Եւ կայր անկեալ վերայ երեսին, դառն ու կու լայր.

Շուտով ղարիբի դրութիւնն ավելի է ծանրանում. վրա է հասնում ղարիբի հոգեվարքը: Մահվան ճիրաններում նա սարսափահար օգնություն է կանչում, բայց նրան լսող չկա, նրա վրա ուշադրություն դարձնող չկա: Այսպիսի դաժան պայմաններում աչքերն իր վերադարձի ճանապարհին հառած և հարազատների կարոտը սրբտում ղարիբը հոգին ավանդում է: Նաղաշը կսկիծով է արձանագրում, որ ղարիբ մեռելի հետ օտար հասարակության մեջ վարվում են տմարդի, ոչ միայն նրա վրա ողբացող, լացող չկա, այլև նրա թաղումը կատարվում է հապճեպ ու առանց պատշաճ արարողության.

Տե՛ս, թէ ինչ դառն է մահ ու կեանքն ղարիպին.  
Մէկ մի չկայր՝ զձեռքն խաչէր ի վերայ սրտին,  
Ծիծաղելով առեալ տարան յեզեր հողին,  
Մէկ մի չեկաւ անդ ի թաղումըն ղարիպին:

Անսահման կարեկցանք ու սեր տածելով դեպի ղարիբները՝ նաղաշը միաժամանակ ատելությունամբ ու զայրույթով է լցված դեպի հասարակության վերնախավը: Բանաստեղծի հասկացողությամբ ղարիբի նկատմամբ անսիրտ ու դաժան վերաբերմունք ունեն առաջին հերթին բարձրաստիճան իշխաններն ու ունեորները, իր իսկ բնորոշմամբ՝ ազահներն ու ռիսակալները, որոնք լի ու լի օգտվում են կյանքի բոլոր բարիքներից.

Շատոց սեղան լինէր դրած հազար բարով,  
Եւ գայր ղարիպն ու մտանէր ամաշելով.  
Նայ հազար գէշ առեն նմայ նախատելով,  
Ապա թէ տան կտոր մի հաց տրտնջալով...

Մեկ առ մեկ թվելով ղարիբների դառն ու լեղի կյանքի դրվագները, անկեղծորեն կարեկցելով և ընդգծելով նրանց մարդկային բարեմասնությունները՝ բանաստեղծը փորձում է մխիթարանքի խոսքեր ասել.

Ղարի՛ պ, սրտնեղ մի կենար,  
այս դիժար օրերս կանցանի,  
Ամէն ղարիպ ի տուն դարձաւ,  
մի մնար, թէ քեզ չի լինի,  
Զաստուած ողորմած կասեն,  
կողորմի ամէն ղարիպի,  
Քեզ այլ օգնական լինի,  
որ հասնիս սրտիդ մուրատի:

Նաղաշը, որ ուժեղ ու տպավորիչ երկախոսություններ կերտելու վարպետ է, շորս տողի մեջ բացահայտում է ղարիբի ծանր ու անմխիթար կյանքի բոլոր կողմերը.

Հոգի՛, ամ դու լաւ կասես,  
սիրտս է սև քան զգործելի,  
Ի ղարիպութեան դարդէն  
երեսիս գունըն կու քաղի.  
Յորժամ ես ի միտ ածեմ  
զիմ եղբարքն ու զիմ սիրելիքն,  
Հոգիս բերանիս կառնու,  
քակտելոյ ճարակ մի շունի:

Կարծես ղարիբի դժնդակ կյանքի ամենալրիվ պատկերը տրված է և դրանից հետո բանաստեղծին բան չի մնում ասելու, բայց նա գտնում է մխիթարանքի խոսքեր, չէ՞ որ հավատացյալ քրիստոնյան համոզված է, որ՝

Ամէնքս ենք ղարիպ, եղբա՛րք,  
հայրենի մարդ իսկի շունի,  
Հաւասար գնալու ենք մենք,  
զի այն կեանքն է մեզ հայրենի:

Այս բոլորով հանդերձ բանաստեղծը չի մոռանում խրատել, հորդորել ու խնդրել, որպեսզի ղարիբի նկատմամբ հոգատար լինեն, չվիրավորեն նրա ինքնասիրությունը, ներողամիտ լինեն նրա կատարած զանցանքների նկատմամբ, որովհետև բանաստեղծի պատկերացմամբ արդեն ղարիբությունը ինքնըստինքյան այնպիսի

դժբախտություն ու այնպիսի սոսկալի պատիժ է, որ ամեն անգամ այն հիշելիս «ուռի նման դողում է ու սարսափում»:

Միանգամայն ճիշտ նկատելով ու ռեալիստորեն վերարտադրելով ղարիբների ծանր դրությունը՝ բանաստեղծը ժամանակի գաղափարախոսության ոգուն հարազատ մնալով՝ այդ դրությունից դուրս գալու միակ միջոցը համարում է ապաշխարանքը, աղոթքը, ինքնաձաղկումը, որպեսզի հանդերձյալ կյանքում «հոգին շայրի ի հուր գեհենի»:

Չնայած հարցի այդպիսի լուծմանը, այնուամենայնիվ, ղարիբներին նվիրված Նաղաշի երգերն իրենց ժամանակին և հետագա դարերում լայն տարածում են գտել և մեծ ժողովրդականություն վայելել: Հետաքրքրական է, որ այդ ոտանավորները կարդալիս շատ շատերը տեսել են իրենց կյանքի իրական պատկերը: Այդ է պատճառը, որ արտագրությունների ժամանակ գրիչները յուրովի են մոտեցել դրանց՝ խմբագրելով ու համապատասխանեցնելով իրենց հոգեվիճակին ու ապրումներին: Այդ իմաստով հետաքրքրական է, որ № 1990, 9075 ձեռագրերի գրիչներն արտագրելու ժամանակ Նաղաշի

Զաստուած ողորմած կասեն, կողորմի ամէն ղարիպի.  
Քեզ այլ օգնական լինի, որ հասնիս սրտիդ մուրատի.

տողերը խմբագրում և դարձնում են.

Զաստուած ողորմած կասեն, կողորմի ամէն ղարիպի,  
Մեզ այլ օգնական լինի, որ հասնենք սրտի մուրատի:

Կամ մի այլ ընդօրինակության մեջ գրիչը, արտագրելով Նաղաշի «Վասն ղարիպի» տաղը՝ նրան ավելացնում է ևս 6 տող, որտեղ իր փորձից ելնելով՝ հաստատում է Նաղաշի այն միտքը, թե ղարիբությունը ամենասոսկալի բանն է մարդու համար. № 7714 ձեռագրի գրիչը Նաղաշի «Վասն ղարիպի» ոտանավորն արտագրելիս ավելացնում է.

Գնա ղարիպին ասէ,  
թող ելնու քաղթէն ու երթայ,  
Ես շատ ղարիպ եմ տեսեր,  
ղարիպին իսկի շահ չկայ:  
Ով ղարիպին վատ ասէ,  
թող ինքն այլ ղարիպ լինենայ,  
Երթայ ի ղարիպութիւն,  
զօրն ի բուն զինքն երերայ:

Ղարիպն ի յօտար երկիր,  
ախ թէ ինչ դժար կու լինի,  
Քիչ գօրն շէքէր ուտէ.  
քան զլեղի դառն կու թվի:

Այսպիսով՝ Նաղաշի սոցիալական մոտիվներով գրված ստեղծագործությունները, մանավանդ Ղարիբների շարքաշ կյանքն ու ապրումները ռեալիստորեն վերարտադրող տաղերը հասնում են իրենց նպատակին, լայն ճանաչում ու արձագանք գտնում աշխատավորության շրջաններում, դառնալով ժողովրդին հուսադրող, մխիթարող լավագույն երգեր:

Նաղաշի ստեղծագործության նկատմամբ այդ ջերմ վերաբերմունքը ինքնին խոսում է Նաղաշի ժողովրդայնության մասին:

Նաղաշն իր դարի զավակն էր և հետևաբար ժամանակի իշխող գաղափարախոսությունը չէր կարող իր կնիքը դրած չլինել նրա աշխարհայացքի վրա:

Այս տեսակետից պատահական չէ, որ իր միանգամայն աշխարհիկ տաղերի կողքին Նաղաշը գրել է նաև կրոնական բովանդակություն ունեցող ոտանավորներ, որոնք, սակայն, նրա ստեղծագործության մեջ որակ չեն կազմում:

Նաղաշի այդ տիպի գործերից են «Անցանէ մեծութիւն և փառք աշխարհիս...», «Անձն իմ, արի աղօթէ դէմ արարողին» ոտանավորները, որոնց մեջ առանձնակի որոշակիություններ կան և հուսահատված բանաստեղծն իր կրոնական խորհրդածություններով: Այս գործերում Նաղաշն իրեն և իր միջոցով աշխարհիկ մարդուն համարում է անսահման մեղքերի մեջ թաղված և համեմատում մեղքերի ծովում ալեկոծվող նավի հետ, որը ընդհանուր առաջ կանխապես է կործանման: Ուստի այդ մեղքերից ազատվելու և արքայությունը արժանանալու համար բանաստեղծն առաջարկում է հրաժարվել աշխարհիկ կյանքի բոլոր հաճույքներից և անընդհատ աղոթել ու ապաշխարհել, կամ իր իսկ բառերով ասած՝

Անձն իմ, արի աղօթէ դէմ արարողին,  
Արտասուօք պաղատէ ի մէջ գիշերին,  
Բարբառեալ բողոքէ սուրբ Աստուածածնին՝  
Բարեխօս առնելով իւր սուրբ Միածնին...  
Ձղջացիր զինչ մեղար և առ թողութիւն,  
Ձինչ այս կեանքս ես, լինի քեզ ողորմութիւն...

Կրոնական բովանդակություն ունեցող ոտանավորներում Նաղաշն աշխատել է ամեն կերպ հարազատ մնալ եկեղեցական-կրո-

նական բանաստեղծության և՛ ձևին, և՛ ոգուն. իր այդ ոտանավորները նա գրել է եկեղեցական պոեզիայի մեջ լայն տարածում ստացած երկտող ակրոստիքոսով: Սակայն աշխարհիկ բովանդակություն ունեցող ոտանավորներում Նաղաշը հետագայում իսպառ հրաժարվում է բանաստեղծության այդ ձևից, որը կաշկանդում էր նրան արտահայտելու նոր, աշխարհիկ տրամադրություններ:

Բայց ինչպես տեսանք, Նաղաշի ստեղծագործության մեջ էականն այն է, որ նա մեծ շահով վերարտադրել է իր ժամանակի հասարակական-քաղաքական կյանքի մի շարք էական կողմերը, որոնցով էլ նրա ստեղծագործությունն ստանում է ճանաչողական մեծ նշանակություն:

Իր ստեղծագործության հիմնական մասի մեջ Նաղաշը կատարել է գեղարվեստական լայն ընդհանրացումներ, արձագանքել է համամարդկային գաղափարներին, դրվատել է լավը, գեղեցիկը, կատարյալը, ազնիվն ու բարին և այդ արել է ժողովրդին հասկանալի լեզվով ու բանաստեղծական բազմազան հնարաններով: Ահա թե ինչու Նաղաշը եղել է միջնադարի ամենաժողովրդական ու ամենասիրված հայ բանաստեղծներից մեկը: Նաղաշի ոտանավորների այդ ջերմ ընդունելության պատճառներից մեկն էլ այն էր, որ նրանց գերազանց մասը, ինչպես իրենց աշխարհիկ մոտիվներով, այնպես էլ լեզվով միանգամայն մատչելի ու հասկանալի էին բոլորին: Դրանք սիրով ընդունում, կարդում և հասկանում էին ժողովրդական լայն զանգվածները:

**ՆԱԳԱՇԻ ԼԵԶՎԻ ՈՒ ՈՃԻ ՄԻ ՔԱՆԻ  
ԱՌԱՆՉՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

X—XV դարերի հայ գրականության մեջ աշխուժացող աշխարհիկ թեմաներն ու գաղափարները՝ որպես գեղարվեստական գրականության նոր բովանդակություն, հրամայաբար պահանջում էին նաև այդ գաղափարներն արտահայտելու նոր միջոցներ ու նոր ձևեր: Հայտնի է, որ X—XV դարերում աշխարհականացումն ու ժողովրդականացումը որոշակի գործոն է դառնում նաև հայոց լեզվի մեջ: Այս շրջանի գրողների ու գիտնականների մի զգալի մասն արդեն իր ստեղծագործությունների մեջ առատորեն սկսում է գործածել ժողովրդի առօրյա լեզվի բառերն ու ժողովրդական ոճերը: Այդ ստեղծագործությունների մեջ էլ կազմավորվում, հղկվում ու լայն գործածություն է ստանում միջին հայերենը: Բայց լեզվի այդ աշխարհականացումը տեղի էր ունենում ոչ թե գոյություն ունեցող գրաբարի բացառման ու լիակատար ոչնչացման և նոր լեզու ստեղծելու միջոցով, այլ գոյություն ունեցող լեզվի հին, ընդհանրությունն անհասկանալի լեզվական երևույթների աստիճանական մահացման և ժողովրդական լայն գործածություն ունեցող ձևերի զարգացման ու մասսայականացման միջոցով:

Ինչպես որ կրոնա-եկեղեցական գաղափարները հաշտ ու խաղաղ իրենց դիրքերը չէին զիջում նոր զարգացող աշխարհիկ գաղափարներին, այնպես էլ լեզվի բնագավառում գրաբարը հաշտ ու խաղաղ տեղի չէր տալիս: Գրաբարը շարունակում էր մնալ պաշտոնական գրագրությունների ու եկեղեցական գրականության լեզու: Ավելին. հաճախ միջնադարյան շատ գրողների գործերում կողք-կողքի հանդես էին գալիս և՛ գրաբարը, և՛ աշխարհաբարի ձգտող միջին հայերենը: Այս իմաստով շափազանց բնորոշ է Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունը. «Մատեան ողբերգութեան» լիրիկական պոեմի կողքին, որ դասական գրաբար լեզվի օրինակ է, Նարեկացին իր տաղերում օգտագործում է նաև աշխարհիկ ոճը, պատկերներն ու համեմատությունները:

Աչքըն ծով ի ծով ծիծաղախիտ,  
Մաւալանայր յառաւօտուն,  
Երկու փայլակնաձև արեգական նման,  
Շողն ի ժմին իջեալ յառաւօտէ լոյս...

Կամ

Շուշանն շողէր հովտին.  
Շողշողէր դէմ արեգականն.  
Այն հիւսիսային հովէն  
Հով հարեալ գոհար շուշանին.  
Յայն հարաւային լեռնէն  
Քաղցր օդով ցողէր շուշանին.  
Շուշանն շաղով լցեալ.  
Շող շաղով և շար մարգարտով...

Լեզվի աշխարհականացման այս տենդենցը հետագայում ավելի որոշակիորեն է երևան գալիս ժողովրդական թեմաների մշակման մեջ՝ առականերում ու հանելուկներում: XII դարի խոշոր բանաստեղծ Ներսես Շնորհալու «Յիսուս որդի», «Բանք շափաւ» և դասական գրաբարով գրված այլ գործերի կողքին, բավական հետաքրքրական են «Ողբ Եղեւսիոյ» պոեմը և մանավանդ նրա մի շարք հանելուկները, որոնք ժողովրդական լեզվի լավագույն արտահայտություններ են:

Միջին հայերենը նոր ուժով ու ծավալով է հանդես գալիս Գոշի ու Այգեկցու խորիմաստ առականերում, XIII դարի խոշոր բանաստեղծ Ֆրիկի սոցիալական մոտիվներով գրված բանաստեղծություններում, Կոստանդին Երզնկացու լիրիկայում:

Մկրտիչ Նաղաշի ստեղծագործությունների լեզուն աշխարհականացման առումով առաջ է անցնում իր նախորդների լեզվից: Վարպետորեն օգտագործելով ու մշակելով ստեղծված լեզվական առաջավոր ավանդները՝ Նաղաշն իր ստեղծագործության մեջ առավել առատությամբ ու համարձակությամբ օգտագործում է ժողովրդական խոսակցական լեզվի բառերն ու ոճերը: Սակայն իր նախորդների նման Նաղաշի լեզուն էլ միատարր չէ. նրա ստեղծագործությունների մեջ հաճախ կողք-կողքի գործում են գրաբարը և ժողովրդական հայերենը (միջին հայերենը), ըստ որում գրաբարը նա օգտագործում է պաշտոնական գրագրությունների ու եկեղեցական նամակագրության մեջ: Ընդհանրապես Նաղաշի ստեղծագործություններն աչքի են ընկնում իրենց շոշափած թեմաների բազմազանությամբ ու լեզվի այլազանությամբ: Առանց վարանելու կարելի է

ասել, որ Նաղաշը յուրաքանչյուր տաղի մեջ օգտագործել է յուրահատուկ լեզու և դժվար է բացարձակ նույնություն տեսնել նրա խոհական և պանդխտության տաղերի, մահվան դեմ գրած ոտանավորների և բնության ու սիրո մոտիվներով գրված գործերի մեջ:

Բնության ու սիրո մոտիվներով գրած բանաստեղծություններում Նաղաշը օգտագործում է գերազանցապես ժողովրդական բաներ ու ոճեր, նույնիսկ բարբառային արտահայտություններ, որոնք բանաստեղծությունը դարձնում են շարժուն ու նպատակասլաց: Այդ գործերում բուն հայերեն բաների ու արտահայտությունների կողքին Նաղաշը գործածում է օտարազգի բաներ, որոնք այդ դարերում արդեն մերվել էին ժողովրդի խոսակցական լեզվին:

Նաղաշի հասարակական գործունեությունից երևում է, որ նա ունեցել է մի նպատակ՝ ամեն կերպ, ամեն գնով հասկանալի դառնալ ժողովրդին, մեղմել նրա հասարակական վիշտը, սփոփել ու մխիթարել նրան:

Նաղաշի գործունեության ոլորտը Միջագետքն էր իր շահագրգռանք այլազան ու տարալեզու ազգաբնակչությամբ: Անընդատ շփման մեջ լինելով մահմեդական բնակչության հետ՝ այդ շրջանների հայերի լեզվի մեջ մուտք էին գործել բազմաթիվ արաբերեն, թուրքերեն բաներ: Եթե խաղաղ կենցաղային հարաբերություններից բացի նկատի ունենանք նաև արտաքին նվաճողների գործած ուժեղ ազդեցությունը նվաճված շրջանների հայերի լեզվի վրա, պարզ կլինի, որ Նաղաշի գործածած օտար բաները հայի համար միանգամայն հասկանալի ու գործածական էին: Իսկ Նաղաշը ստեղծագործում էր հենց այդ լեզվով խոսող հասարակության համար: Ուստի բոլորովին պատահական չէ, որ իր երիտասարդական տարիներին գրած «Տաղ հարսանեաց և ուրախութեան մարդկան», «Վասն վարդին և բլբուլին» ոտանավորների մեջ առատորեն գործածված են ինչպես բարբառային, այնպես էլ օտարազգի բաներ:

Հատկապես գեղեցիկ ու տպավորիչ պատկերներ ու մեկը մյուսից ավելի ուժեղ համեմատություններ ստեղծելու համար բանաստեղծը դիմում է ժողովրդի լեզվի գանձարանին: Բլբուլի միջոցով իր սիրածին գովելու, նրա գեղեցկությունն ու հմայքն ընդգծելու նպատակով բանաստեղծն ստեղծում է կես հայերեն, կես օտարալեզու համեմատություններ, որոնց մեջ օտարազգի բաները ձուլվում են պատկերի գեղեցկության ու գունագեղության մեջ՝ ստեղծելով մի կուռ ամբողջականություն. ահա.

Բլբուլն ի վարդն ասաց, թէ՛ Աննման ես.

Զկարէ մարդ հողեղէն լեզուով գովել զքեզ...

Այս բոլորովին հայերեն, գրեթե աշխարհաբար լեզվով արտահայտված պատկերը ուժեղանում ու գունազարդվում է.

Քան զուպարզի շաբար քաղցր ու շիրիմ ես,

Որպէս մուշկ ու ամբար անուշահոտ ես...

տողերով, որոնց մեջ մակդիրները գերազանցորեն օտար բաներ են: Իր ստեղծագործության մեջ Նաղաշը օտարազգի և հայերեն համանիշ բաների միաժամանակյա գործածությամբ ստեղծում է նաև այս կամ այն երևույթի կամ հատկանիշի սաստկականը, այսպես՝ քաղցր ու շիրիմ, զահր ու լեղի և այլն:

Ժողովրդական լեզվով են գրված նաև պանդխտությանը և պանդուխտների կյանքին նվիրված Նաղաշի ոտանավորները, որոնք, սակայն, իրենց լեզվով տարբերվում են նախորդներից: Իր այդ գործերում իսպառ չհրաժարվելով ու շխորշելով օտար բաներից ու ոճերից, բանաստեղծն արդեն աստիճանաբար սահմանափակում է դրանց գործածության ոլորտը: Այս ստեղծագործություններում Նաղաշի համար բաների ու ոճերի անսպառ աղբյուր է ծառայում հայ բարբառների ու գրաբարի հարուստ գանձարանը, որտեղից առած բաներով ու մակդիրներով ստեղծում է դարիբի սոցիալական կյանքն ու հոգեմիճակը պատկերող խոսուն պատկերներ ու համեմատություններ:

Ուժեղ ու մնացուն տպավորություն գործող պատկերներ ստեղծելու նպատակով Նաղաշը խոսքի մեջ վարպետորեն օգտագործում է նյութական բովանդակությունից զուրկ, ձևական խոսքի մասեր, որոնց նա վերագրում է բոլորովին այլ հատկություններ ու նշանակություն: Այսպես, նույն դարիպի կյանքի դառն վիճակը պատկերելու համար Նաղաշը գրում է.

Ղարիպին ցերեկն եղուկ, գիշերն է վայ

Աչերուն քունն է հատէր ու ճար շկայ...

կամ՝

Ղարիպին վայն էր եկեր, երբ քաղցեճայր,

Երես ի քաշ ի փողոցներն կու մուրայր.

կամ՝

Զղարիպին հալըն գիտեմ, որ վայ կու տամ...

և այլ օրինակներում վայ ձայնարկությունը հոգեմիճակ արտահայտելու իր բուն իմաստներից վերացել, ընդհանրացել և Նաղաշի ստեղծագործության քուրայում ստացել է նյութական բովանդակություն և մի դեպքում ենթակա է, մի դեպքում նախադասության երկրորդական անդամ: Բայց բոլոր դեպքերում էլ նա նպատակասլաց է

ու պատկերավոր և արտահայտում է ծանր վիճակի, սարսափի ու անհուն վշտի իմաստ:

Նաղաշի մոտ նկատվում է նաև նույն պատկերի կրկնության դեպքեր, սակայն այդ պատկերները տարբեր տեղերում տարբեր տպավորություն են գործում: Այսպես, արշուն բառով նաղաշը գործածում է այնպիսի համեմատություն, որ իրար բոլորովին մոտ ընկած տողերում անգամ տարբեր վիճակ են արտահայտում: Այսպես՝ դարիբի սրտակեղեք վիշտը և հարազատների, հայրենիքի նկատմամբ անսահման կարոտը ցույց տալու համար նաղաշը գրում է՝

Յորժամ յիշէ զիր սիրելիքըն հաւասար,  
Նա յաշերուն արին կաթէ երեսն ի վայր...

Թէ զօրն տան նուշ ու շաբար, որ ճաշակէ,  
Երբ հառաչէ, նա ի սրտէն արին կաթէ...

Ինչպես տեսնում ենք արշուն բառը մի դեպքում գործ է ածված արտասուք բառի փոխարեն, իսկ մյուս դեպքում դարիբի հառաչանքը բանաստեղծի պատկերացմամբ հոսում է ինչպես սրտից բխող արշուն: Օգտագործված պատկերները կատարյալ են և ամենայն խորությամբ արտահայտում են առաջին դեպքում դարիբի անսահման վիշտը, երկրորդ դեպքում՝ անսահման կարոտը:

Առհասարակ դրույթյան սաստկություն ստեղծելու համար նաղաշը կիրառում է գործողությունը գործողություն ցույց տվող բառով բացահայտելու միջոցը. լաց լինելու ավելի սաստկը նաղաշն արտահայտում է լալով լացի, լաց լալով և այլ ձևերով, որտեղ լալ բայ-ստորոգյալի համար պարագա լրացում է դառնում նույն լալ բայի մի այլ ձևը: Իսկ համանիշ բառերի կրկնությամբ պատկեր կերտելը նաղաշի ստեղծագործության մեջ տարածված երևույթ է. օրինակ՝ դառն ու լեղի, քաղցր ու շիրիմ, ավերի ու քակտի, եղուկ ու վայ, ոչ հաճաչեն, ոչ գիտենան (այս դեպքում գիտենան բառը ճանաչել իմաստով է գործածվում), գեղեցիկ և նոխ, հարուստ ու փառքամ և այլն:

Ընդունված երևույթ է հայոց լեզվի մեջ որևէ գոյականի քնքշականը կազմել համապատասխան ածանցների կցումով. օրինակ՝ գետ-գետակ, տուն-տնակ, մանուկ-մանկիկ և այլն: Նաղաշը երբեմն փոքրացուցիչ մասնիկներով ստեղծում է այնպիսի բառեր, որոնք կոնկրետ գործածություն մեջ դառնում են նպատակասլաց ու գեղեցիկ, օրինակ՝

Յորժամ ի մէճլիս նստի,  
անկասկած սրտիկն արունի  
Ջաշերն ի բոլորն ածէ,  
կարևոր և զոք նա շունի...

Այստեղ սիրտ բառի սրտիկ ձևը արտահայտում է դարիբի սրտի քնքշությունը: Կամ մի այլ դեպքում ժամանակի կարճությունն ու վաղանցիկությունը ցույց տալու համար նաղաշը գրում է.

Աշխարհս գէմ վաֆայ շունի,  
ոչ արեր է մարդոյ բարի,  
Օրիկ մի խնդալ կուտայ,  
բայց յետոյ է դառն ու լեղի...

Իր ստեղծագործության մեջ լայն չափով օգտագործելով ժողովրդի խոսակցական լեզվի տարրերը՝ նաղաշը չի հեռանում նաև խոսք կառուցելու միջին հայերենի օրինաչափություններից: Նախադասության կառուցման մեջ նաղաշը պահպանելով գրաբարյանը՝ հաճախ օգտագործում է նաև ժողովրդական լեզվում գործածական ձևերը: Այսպես՝ բայի եղանակներն ու ժամանակները կազմելիս նաղաշը միշտ նկատի ունի պարզը, հասկանալին, մեծ մասամբ ժողովրդականը: Գրաբարյան ձևերի փոխարեն նաղաշը բայի եղանակները կազմում է կու, կ, տի (պիտի) եղանակիչներով, որոնք ժողովրդական լեզվում տարածված ձևեր էին (սիրտս կու վառի, սուտ կու խօսի, շատ մանուկ դուսայ կանի, տի փտիս և այլն): Ավելին, օտարազգի բառով բայաձևեր կազմելիս նաղաշը վերցնում է միայն օտար բառի բայահիմքը կամ արմատը, բայց բայական վերջավորություններն ու եղանակիչները դնում է հայերեն. օրինակ՝

Շատ մանուկ դուսայ կանէ,  
ի շահին տեղն կու զենի

Այստեղ կու զենի բայաձևի զեն օտար բայահիմքին ավելացել են կու պայմանական եղանակիչը և ի բայական վերջավորությունը: Այդպես էլ կազմում է նաղաշը նախադասության ստորոգյալը. վերցնելով ոչ հայերեն ստորոգելիական վերադիր՝ նաղաշը նրան ավելացնում է հայերեն լեզվի հանգույցները եմ, ես, է և ստեղծում միանգամայն հայերեն կառուցվածքի նախադասություն: Օրինակ՝ քաղցր ու շիրիմ (ես), դու բահր (ես) ու նաղար (ես), ես քեզ ֆրդե (եմ), զարի ու զար (է) և այլն:

Նաղաշի տաղերում գոյականի հոգնակիի կազմությունն էլ հե-  
ռացել է գրաբարից: Գրաբարի ք, ս, ց հոգնակիակերտների փոխա-  
րեն նա օգտագործում է հայերենի նի, ներ, տի, աք և այլ հոգնա-  
կիակերտներ:

Նաղաշը շատ լավ է տիրապետում նաև հայերենի շարահյու-  
սական օրինաչափություններին: Հիմնականում ճիշտ պահպանելով  
հայերենի նախադասության անդամների համաձայնությունն ու  
շարահասությունը, նա երբեմն գիտակցաբար ու մեծ հմտությամբ  
օգտագործում է նաև ժողովրդական լեզվում գոյություն ունեցող  
շրջուն շարահասությունը: Մեծ մասամբ գործածելով որոշյալը որո-  
շիչից հետո (զինչ մեծ իշխան, նեղ զնտան, զինչ որ գեղեցիկ ծաղ-  
կունք, անուշ հոտ և այլն), նաղաշը հաճախ գործածում է ետադաս  
որոշիչ. ինչպես՝ մտօք հարտար, բան մի քանի և այլն:

Նման դեպքերում որոշիչները դնելով ետադաս՝ նաղաշը դրանք  
դնում է ուժեղ շեշտի տակ և ավելի ցայտուն դարձնում այդ բառերի  
նշանակությունը՝ խոսքը դարձնելով ավելի տպավորիչ:

Այս տեսակետից բնորոշ է «Վասն ազահութեան» բանաստեղ-  
ծությունը, որտեղ հիմնական իմաստը արտահայտող վասն ազա-  
հութեան բառակապակցությունը (պատճառի պարագան) նաղաշը  
հայերենի շարահյուսության բուն օրենքի հակառակ դնում է դարձ-  
յալ ետադաս և շեշտելով խոսքի մեջ այդ մասը՝ ավելի երաժշտա-  
կան է դարձնում խոսքը և նպատակասլաց՝ բովանդակությունը: Հա-  
ճախ մի քանի բայերի համար գործածելով վասն ազահութեան մեկ  
պարագան՝ նաղաշը սակայն ոչ միայն չի մթազնում խոսքը, այլ  
առավել դիպուկ, պատկերավոր ու տպավորիչ է դարձնում այն:  
Այսպես՝

Որք հարկանին և գողանան,  
սուտ երդնուն և ուրանան,  
Բազումք ի հաւատոցն ելան,  
ամէնն վասն ազահութեան:

Կամ՝

Տեսայ զոմանս ի նեղ զնտան,  
այլև բազումս ի կախաղան,  
Զոմանս, որ գլխովին կորեան,  
ամէնն վասն ազահութեան... և այլն:

Ինչպես դժվար չէ նկատել, հենց բերված օրինակների մեջ հար-  
կանին, գողանան, երդնուն, ուրանան, ելան բայերի համար գոր-  
ծածում է միայն մեկ անգամ վասն ազահութեան պարագա լրացում,

սակայն խոսքի ուժն ու տպավորությունը ոչ միայն չի թուլանում,  
այլև ընդհակառակը՝ ամէնն վասն ազահութեան շեշտված բառա-  
կապակցության միջոցով այդ գործողությունները ավելի շեշտվում,  
ուժեղանում ու տպավորիչ են դառնում: Գեղարվեստական խոսք  
կառուցելու այդ միջոցին նա դիմում է նաև իր մյուս ոտանավորների  
մեջ: Օրինակ՝

Անձն իմ, արի աղօթէ դէմ արարողին,

Արտասուօք պաղատէ ի մէջ գիշերին...

և այլ տողերում արարողի դեմ, գիշերի մեջ աշխարհիկ ձևերի փո-  
խարեն բանաստեղծը գործածում է գրաբարյան շարահասությունը,  
որն այս դեպքում ստանում է քերականական ուժեղ շեշտ և ավելի  
որոշակի դարձնում նախադասության իմաստը:

Նաղաշի բանաստեղծությունների մեջ հետաքրքրական է շաղ-  
կապների գործածությունը: Առհասարակ շաղկապների չափից ավե-  
լի գործածությունը տգեղացնում է խոսքը, ձանձրույթ առաջացնում  
և դժվարացնում ընթերցանությունը: Բայց նաղաշի մոտ հաճախ մի  
ամբողջ էջ գրավող նախադասություններ կապող ք է շաղկապը ոչ  
միայն չի խանգարում բանաստեղծությանը, այլ ընդհակառակն՝  
ստեղծում է ուժեղ տակտ, երաժշտականություն ու խոսքը դարձնում  
դյուրընթեռնելի ու տպավորիչ: Այսպես՝

Թէ աղօթիւք զերկինս բանաս,  
պահօք զլերինս փոփոխես,  
Թէ ոխ պահես հետ ընկերիդ,  
ընդ Կայէնի պատիժ կրես.  
Թէ կուսութեամբ քո պարծենաս,  
որպէս հրեշտակ զքեզ գիտես,  
Թէ սիրտդ պիղծ է նախանձով,  
բան զսատանայ ես, թէ գիտես.  
Թէ և զօրենս աստուածային  
լիով դամէնն կատարես,  
Թէ ոխակալ ես, խոզվարար,  
իբր անօրէն անցաւոր ես...

Բանաստեղծության մեջ ուժեղ տակտ է ստեղծում նաև դերա-  
նունների հաճախակի կրկնությունը: Այսպես.

Զինչ թագաւորք և մեծ իշխան,  
որ հեծելով չիրար կռուան,  
Զինչ որ արին յերկիր հեղան  
ամէնն վասն ազահութեան,

Զինչ որ քաղաք տապալեցան,  
և ժողովուրդը, որ գերեցան,  
Զինչ որ աւերք առ և թախտան  
ամէնն վասն ազահուրեան...

Հակառակ միջնադարի կրոնա-եկեղեցական բանաստեղծու-  
թյան միատարր ու միաձև ներբողներին՝ Նաղաշը օգտագործում է  
հայրենների շափը, որը, ինչպես դիտել է Մ. Աբեղյանը, «մեր ուրիշ-  
միկ—երաժշտական ոտանավորներից մեկն է, որի հնագույն գործա-  
ծույթունը գտնում ենք դարձյալ Գր. Նարեկացու բանաստեղծության  
մեջ և որ շատ սիրված է եղել միջին հայերենով գրող երգիչներից:  
Ֆրիկ, Մկրտիչ Նաղաշ, Գրիգոր Աղթամարցի և ուրիշներ, ինչպես և  
հին գուսաններն ու «բանհիւս լալկան կանայք» (որ է՝ մեռելների վրա  
ողբ ասող կանայք), ըստ Գր. Նարեկացու, հորինել են այս ոտանա-  
վորով...»<sup>1</sup>:

Հայրենների շափով են գրված Նաղաշի լավագույն բանաստեղ-  
ծույթուններից շատերը.

Երազ է ու սուտ, եղբայրք, աշխարհիս բաներն ի լման,

Ու՞ր են թագաւորք, իշխանք, պարոնայք և սուլթան ու  
խան.

Կամ՝

Աւաղ զայն աղուոր մանկտիքն, որ դարձան ի հող՝ և ի  
փոշի,

Իրեանց ժամանակն անցաւ, քան զերազ մթան գիշերի...

Այս երկարաշունչ 15 վանկ պարունակող տողերը բաժանվում  
են կանոնավորապես իրար հաջորդող 7/8 վանկերի 3—2—2  
||3—2—3, որտեղ ուժեղ շեշտերն ընկնում են 5, 7, 10 և 15-րդ վան-  
կերի վրա. այդ բանը միաժամանակ հնարավորություն է տալիս  
ոտանավորը տողատել, դարձնել 7||8 վանկանի տողերով ոտանա-  
վոր:

Իր խոհական-խրատական ոտանավորների համար Նաղաշը  
կիրառում է նաև երկարաշունչ 16 վանկանի շափը՝ բաժանելով տողը  
4—4—4—4 վանկերի: Բանաստեղծությունը երաժշտական ու դյուր-  
ընթեռնելի դարձնելու համար բանաստեղծությունը հանգավորված  
է տողամիջում և տողավերջում: Տաղի այդպիսի կառուցումը հնա-  
րավորություն է տալիս, ուզած դեպքում, տողատել այն՝ առանց  
խախտելու ուրիշն ու երաժշտականությունը:

<sup>1</sup> Մ. Աբեղյան, Տաղաչափություն, Երևան, 1933, էջ 267—268:

Կաթողիկոսքն շատացան —գան  
Անօրինացն բռնութեան —թեան  
Եպիսկոպոս օրհնեն անբան —բան  
Ամէնն վասն ազահուրեան —թեան:

Բայց Նաղաշը հմտորեն օգտագործում է նաև 7, 11, 12 և այլ  
շափեր: Հատկապես բնության ու մարդու հոգեբանության աշխույժ  
վիճակ նկարագրելիս բանաստեղծն ընտրում է կարճատող 7 վան-  
կանի 4||3 շափը, որը իր դյուրհնչունությամբ երաժշտական ու աշ-  
խույժ է դարձնում ոտանավորը: Օրինակ՝

Ահա հոտն գայր գարնան,  
Փեսին տեսնէր խիստ խնդման,  
Յորտեղ սիրելիք որ կան,  
Ամէնքն ի հարսնիք թող գան.

11 վանկանի տողերով են գրված «Վասն վարդին և բլբուլին»  
դրամատիկ բանաստեղծությունը և մի քանի խրատական ոտանա-  
վորներ:

Նաղաշը հատկապես խոշոր նշանակություն է տալիս հանգա-  
վորմանը, որպես բանաստեղծության նպատակաւարացության կարե-  
վոր ազդակ:

Այդ հարցի մասին դիպուկ խոսք է ասել դեռևս Ներսես Շնոր-  
հալին: Միանգամայն ճիշտ նկատելով եկեղեցական-կրոնական  
բանաստեղծության մեջ լայն տարածում գտած նույնահանգության  
ձանձրալիությունը: Շնորհալին գրում է.

Ոչ մի տառիւ վերջ յանգական,  
Զի մի՛ ծուլից լուր ծանրանան,  
Այլ խըտրաբար փոփոխական,  
Զի ընթերցողք ոչ ձանձրանան...<sup>1</sup>

Հետևելով Ներսես Շնորհալու այս իրավացի պահանջին՝ Նաղա-  
շը գրեթե իր բոլոր ոտանավորները գրում է տարբեր հանգերով, ըստ  
որում նրա ստեղծած հանգերը բռնազբոսիկ չեն և չեն ստեղծվում  
տանջանքով... Միայն մեկ ոտանավորի մեջ Նաղաշը հաճախ 10—12  
անգամ փոփոխում է հանգերը, առանց երկրորդ անգամ կրկնելու  
այն. այսպես՝ «Վայն վարդին և բլբուլին» ոտանավորն ունի ես, ուրի,  
սի, վի, է, շար, սար, ին, ամ և այլ հանգեր. կամ «Անձն իմ, արի

<sup>1</sup> Ներսես Շնորհալի, Բանք շափաւ, Վենետիկ, 1830, էջ 223:

աղօթէ...» ոտանավորում 10 տողը ունի ին հանգր նրանից հետո 2 տող՝ իւն, 14 տող՝ իս, 10 տող՝ եր, 10 տող՝ լու, 10 տող՝ ոյ (ոյդ) և այսպես շարունակ:

Վերջապես Նաղաշի բանաստեղծությունների մեջ իրենց արտացոլումն են գտել հայ գրականության նախորդ դարերում ստեղծված բանաստեղծական գրեթե բոլոր ձևերը: Նաղաշը գրել է բազմազան աղբյուրներով, որը միջնադարում շատ սիրված ու տարածված ձև է եղել:

Նաղաշը, հետևելով Շնորհալույն, աղբյուրներ է ստեղծում զույգատողերով՝ ԱԱ, ԲԲ, ԳԳ և այլն: Աղբյուրներով ստեղծագործել է Նաղաշը իր գրական գործունեության հենց առաջին շրջանից: Երիտասարդական տարիներին գրված «Տաղ հարսանեաց և ուրախութեան մարդկան» ոտանավորի տների սկզբնատառերը կազմում են՝ «Նաղաշ Սարկաւագի է սայ եձ (?):»:

Սակայն բանաստեղծությունների այս արտաքին փայլը երկար չի դրադեցնում բանաստեղծին. նա ավելի ուշադրությունը դարձնում է բանաստեղծության բովանդակությանը, նրա գաղափարական կողմին, քան արտաքին ձևին:

Այսպիսով, Նաղաշը ինչպես իր ստեղծագործության թեմատիկայով, այնպես էլ բանաստեղծություն կառուցելու տեխնիկայով կանգնում է աշխարհիկ պոեզիայի ստեղծած առաջավոր ավանդների վրա և իր ստեղծագործության թե՛ թեմատիկայով և թե՛ արվեստով մի նոր աստիճանի բարձրացնում միջնադարյան հայ բանաստեղծությունը:

## Մ. ՆԱՂԱՇԻ ԳՐԱԿԱՆ ԿԱՊԵՐՐ

Մկրտիչ Նաղաշը միջնադարյան այն բանաստեղծներից է, որը լայն հնարավորություններ է ունեցել ուսումնասիրելու նախորդ դարերի գրական ու գիտական աշխատությունները. այդ բանին նպաստել է հատկապես այն, որ Նաղաշը իր կյանքի գրեթե բոլոր էտապներում ազատ ժամերին զբաղվել է մատյաններ արտագրելու ու պատկերազարդելու գործով:

Նաղաշի ստեղծագործության ուսումնասիրությունից պարզվում է, որ հատկապես իր կյանքի առաջին շրջանում նրա վրա ուժեղ ազդեցություն են գործել Գրիգոր Նարեկացու, Շնորհալու և Կոստանդին Երզնկացու և մանավանդ Ֆրիկի ստեղծագործությունները: Այսպես, օրինակ՝ իր «Զինչ որ գեղեցիկ ծաղկունք...» ոտանավորը Նաղաշը գրել է Նարեկացու «Գոհար վարդն վառ առեալ» ոտանավորի ազդեցությամբ: Այդ բանաստեղծության մեջ Նաղաշը հետևել է Նարեկացու ոտանավոր կառուցելու տեխնիկային:

Իր «Վարդավառին» ոտանավորում Նարեկացին բոլորովին աշխարհիկ պատկերներով երգելով վարդավառը, ծաղիկների թովչանքըն ու հմայքը, դրանց մեջ այլաբանորեն տեսնում է երկնային ոգիներին: Իսկ Նաղաշը հետևելով Նարեկացուն, գրում է.

Զինչ որ գեղեցիկ ծաղկունք  
կային, ամէնք գնացին.  
Ծաղիկ մին այլ հանց գնաց,  
որ ամէն ծաղկունք զնա լացին,  
Ծաղիկն անուշ խոտ ունէր,  
որ ամէն աշխարհս լսեցին,  
Ու ամէն աշխարհաց ծաղկունք  
յայն ծաղկի սէրըն դիմեցին...

Ոչ միայն բովանդակությամբ, այլև բանաստեղծական հնարաններով Նաղաշն աշխատում է նմանվել Նարեկացուն: Այսպես՝

Նարեկացին վարպետորեն ստեղծում է շ տառի նմանահնչունությունը և երաժշտական դարձնում ոտանավորը.

Շուշանն շաղով լցեալ,

շող-շաղով և շար մարգարտով...

Նաղաշի մոտ այդ երևույթը թեև թույլ, բայց նույնպես նկատելի է.

Մաղկունքն յայն ծաղկի սիրուն

շաղ առին ու շողշողային...

Վերջապես նաղաշի վրա ուժեղ ազդեցություն է թողել նարեկացու ինքնաձաղկումը, մեղքերի մեջ մխրճված լինելը և անընդհատ մաքրման ձգտելը, մի բան, որ ինչպես միջնադարյան շատ գործիչների, այնպես էլ նաղաշի ստեղծագործության մեջ որոշակի տեղ է բռնում: Այսպես՝

Գերի նաղաշ ողորմելի,

ի քեզ նայեաց դու յարածամ,

Զինչ որ այլոց քարոզեցիր,

ամէնն քեզ կայ ի լման:

Մի համարիդ զազգս մարդկան,

քան զքեզ եղաւ ամբարտաւան,

Զինչ որ յաշխարհս կայ մեծութիւն,

զամէնն քեզ կամիս միայն...

Աղուոր զմիտքդ ժողովէ,

որ այդկից այլ չելնես ունայն,

Զնաւդ ի բեռաց թեթևացոյ,

որ հասանիս ի յօթևան...

Իր ստեղծագործության առաջին շրջանի գործերում օգտագործելով նարեկացու ու մյուսների բանաստեղծական հնարանքները, նաղաշը, սակայն, չի հրապուրվում նրանց գաղափարներով, այլ բոլոր դեպքերում նկատի ունենալով հուզող հարցերը, նա իր այդ ոտանավորը մեծ չափով հագեցնում է սոցիալական մոտիվներով՝ դրանք դարձնելով ժամանակը բացահայտող և ժողովրդին դաստիարակող միջոց:

Նաղաշի ստեղծագործության վրա նկատելի է հատկապես Կոստանդին Երզնկացու և Ֆրիկի աշխարհիկ թեմատիկայով գրված ստեղծագործությունների ազդեցությունը:

Իր գործունեության առաջին շրջանում նաղաշի համար առանձնակի սիրելի ու սրտի մոտ է եղել Կոստանդին Երզնկացու պոեզիան՝ իր աշխարհիկ մոտիվներով ու բանաստեղծական արվեստի պար-

գույթով: Կոստանդին Երզնկացու «Տաղ գարնան և ուրախութեան» ոտանավորի տպավորության տակ 20-ամյա Մկրտիչ Նաղաշը գրում է իր «Տաղ հարսանեաց և ուրախութեան մարդկան» ոտանավորը: Ճիշտ է, նաղաշի ոտանավորն իր բովանդակությամբ ու նպատակալացությամբ բոլորովին տարբեր է Երզնկացուց, բայց այդ երկու գործերի մեջ հատկապես նմանության մի քանի եզրեր կան, որ ամենայն հավանականությամբ զալիս են ժողովրդական պոեզիայից: Այսպես՝

Երզնկացի

Ահա հոտն գար գարնան,

Իւր տեսն երևէր խնդման.

Զինչ պարտէզ և այգեստան,

Մաղկունք գոյնզգոյն բացուան...

Երզնկացի

Այսօր է մեզ օր խնդման

Հաւասար սիրելեացդ որ կան,

Զինչ սիրտ որ սիրով բացւան,

Այսօր միատեղ նըստարան՝:

Նաղաշ

Ահա հոտն գայր գարնան,

Փեսին տեսնէր խիստ խնդման.

Յորտեղ սիրելիք որ կան,

Ամէնքն ի հարսնիք թող գան.

Նաղաշ

Այսօր է մեզ օր խնդման

Հաւասար սիրելիք որ կան,

Հարս են առեր ու կերթան,

Թող երկուքն յիրար խընդան...

Այս արտաքին որոշ նմանությունները կասկած չեն թողնում, որ երիտասարդ նաղաշն իր տաղը գրելիս ծանոթ է եղել Երզնկացու ստեղծագործություններին, մանավանդ որ բնակավայրերով նրանք իրարից շատ հեռու չեն, և Երզնկայում գրված կամ ընդօրինակված տաղարանները ազատ կերպով կարող էին մատչելի լինել նաև նաղաշին:

Նաղաշի ստեղծագործության համար որոշակի նշանակություն են ունեցել նաև Ֆրիկի ստեղծագործությունները: Իր հանրահայտ «Ընդդեմ ֆալաբին»-ում Ֆրիկը՝ նկարագրելով հասարակական կյանքում ստեղծված անարդարություններն ու հակասությունները՝ զարմանում ու տարակուսում է, թե ինչպես արդար դատավորը անարդար գործեր է կատարում, կամ բանաստեղծի բառերով ասած՝

էյ չարիս, ըզվատին տունըն կու լցնես ակով դու բոլոր,

Զաղեկն ի հերկիր ի վար վտարես, որ ժողովէ կտոր.

Զայն որ խոզարած չվայելէ, կու զուգես ահեղ ճիւղոր,

Եւ զըզորդ մարդկանց ըզտունքն քակես առանց րահաւոր...<sup>2</sup>

<sup>1</sup> Կոստանդին Երզնկացի, Տաղեր: Աշխատասիրությամբ Արմենուհի Սրապյանի, Երևան, 1962, էջ 153, 157:

<sup>2</sup> Ֆրիկ (ժողովածու), 1937, էջ 157:

Այս անարդարությունները նկատում է նաև Նաղաշը. իր հիշատակարանում այդ մասին Նաղաշը գրում է. «Զի անդ գմեղուր սատակեր և զարդարն ապրեցուցաներ և աստ այսօր զարդարն վասն մեղաւորաց պատժէ»: Այդ անարդար ու հակասություններով լի կյանքում Նաղաշը խրատում, խորհուրդ է տալիս շփավոր լինել և համակրանքով է խոսում այդ շփավորների ու պանդուխտների մասին:

Առհասարակ Ֆրիկի ազդեցությունը շփազանց ուժեղ է Նաղաշի ստեղծագործությունների վրա: Այդ ազդեցությունը ոչ թե առանձին մտքերի ու տողերի նմանությունն է, այլ ամենից առաջ գաղափարական: Նաղաշը իր ստեղծագործության նյութն է դարձնում սոցիալական մոտիվները, որոնք նա երգում է ժողովրդի գաղափարախոսության դիրքերից:

Ընդհանրություններ կան նաև Քլկուրանցու և Նաղաշի հատկապես մահվան պրոբլեմին նվիրված գործերում: Ժամանակագրական տեսակետից Նաղաշն ու Քլկուրանցին շփազանց մոտ են, թերևս ժամանակակիցներ, ուստի դժվար է ասել, թե ով է ումից ազդեցություն կրել, բայց որ նրանք ծանոթ են եղել միմյանց բանաստեղծություններին, այդ անվիճելի է: Այսպես, Քլկուրանցու մոտ կարդում ենք.

է՛ մահ, քանի զքեզ յիշեմ,  
Կու դողամ ու սարսափիմ ես.  
Չրկա քան ըզքեզ լեղի,  
Ի ամենայն լեղոյ լեղի ես.<sup>1</sup>

Նաղաշի մոտ նույն հարցի մասին կարդում ենք.

Եւ քան զմահն լեղի իսկի շկայ վատ,  
Որ կու բաժանէ զփեսան ու զնոր հարսն ի զատ.

Կամ՝

Ինձ չէ ատեն, ոչ ժամանակ մեռանելոյ,  
Ոչ նեղ զնտան ու գերեզման մտանելոյ,  
Կամք շունիմ ես իմ տանէն Ելանելոյ,  
Զի շատ հասրաք ունիմ ու շատ բան հոգալոյ:

Քլկուրանցու մոտ գրեթե նույն միտքը կարդում ենք հետևյալ տողերում.

Թէ մահն չէր ու կամ մեռանիլ,  
Ես ունի շատ բան հոգալու.

<sup>1</sup> Հովհաննես Քլկուրանցի, Տաղեր: Աշխատասիրության մասին, Պիպակյանի Երևան, 1960, էջ 173:

Զիշխեմ դներ զիս պիղծ գործոյ,  
Վախեմ շղագրի աշս ի լալու՛:

Վերջապես աշխարհի ունայնության մասին խոսելիս Քլկուրանցին ասում է.

Ով որ ունէր բերդ ու քաղաք,  
Դարպրսնի ոսկով ծեփած՝  
Յետոյ եթող զամէնն անտէր,  
Ներքև հողուն են պառկած<sup>2</sup>...

Նաղաշն այդ միտքն արտահայտում է հետևյալ կերպ.

Երազ է ու սուտ եղբայրք  
աշխարհիս բաներն ի լման,  
Ո՛ւր են թագաւորք, իշխանք,  
պարոնայք և սուլթան ու խան.  
Շինեցին բերդ ու քաղաք,  
դարպասնի ու շատ դատեցան,  
Յետոյ գէմ անտէր թողին  
ու մտան ի հող՝ ի զնտան:

Ինչպես դժվար չէ նկատել, Նաղաշի և նախորդ ու ժամանակակից որոշ տաղերգուների գործերում ակնբախ են ընդհանրությունները, որոնց մի մասը, ինչպես աշխատեցինք համատեղելի ցույց տալ, ուղղակի ազդեցություն է, որ հավասար փոխանցվել է զիր ու գրականության միջոցով, իսկ մի խոշոր մասն էլ ընդհանուր է բոլորի համար և գալիս է ժողովրդական մտածողությունից:

Պետք է ասել, որ Մկրտիչ Նաղաշի ստեղծագործությունը սերտորեն կապված է նաև բանահյուսության հետ ինչպես թեմատիկայով, այնպես էլ արտաքին արտահայտչական կողմերով:

Այսպես. ժողովրդական երգերից մեկում դարիբի ծանր կյանքն ու անօթեան վիճակը պատկերվում է այսպես.

Մարդ որ մարդու կանիծի,  
Թող ասի՝ կարիբանաս.  
Սառն քե սնար էլի...  
Աւազի մեջ թուլանաս.

Նաղաշը դրան ամենայն հարազատության մեջ ասում է.

Ղարիպն անկեալ և թաւալէր ողորմագին,  
Քանզի հասեալ էր օր մահու բուռն ատենին.

<sup>1</sup> Հովհաննես Քլկուրանցի, Տաղեր, էջ 137:

<sup>2</sup> Անդ, էջ 179:

Ոչ բարձ գլխոյն կայր զարիպին, ոչ անկողին,  
Սալըն սնարֆ էր և աւագն իւր անկողին:

Այս նույն պատկերը հանդիպում ենք նաև հայրեններում.

Մարիկն անիծեց յորդին... իմ որդի, դու զարիպանաս,  
Երթաս ի յօտար երկիր, զզարիպին զատրն իմանաս.  
Զքարն սնարֆ անես. ի վերայ ավզին քաննաս,  
Վաղվնէ քնէ ելնես, քան զայստուած այլ ճար շուեննաս...

Կամ՝ «Ղարիբին հացը լեղի ա, շուրը աղու» ասանցվածքի արտահայտութիւնը նազաշի մոտ կարդում ենք.

Ղարիպին հացն է լեղի, որ ճաշակէ,  
Դառն ու լեղի խառն արտասուօք ջուրն որ բմպէ,  
Թէ զօրն տան նուշ ու շաքար, որ ճաշակէ,  
Երբ հառաչէ, նա ի սրտէն արին կաթէ.

Վերջապես՝ «Ինչ որ ցանես, էն կրննձես», կամ՝ «Ինչ կտաս  
ձեռքով, կտանաս հոգով» և այլ առածների արձագանքն է նազաշի

Յորժամ մահ քեզ տիրէ, 'ւ օրըն հասանէ  
Եւ հոգիդ ի մարմնոյդ ելեալ բաժանէ...  
Ոչ օգնէ մեծութիւն 'ւ ոչ սէր աշխարհիս,  
Զինչ բարի գործեցիր, նա գայն տի տանիս...

Բանահայտութեան ուժեղ ազդեցութեան կնիքն են կրում նաև մահվան դեմ նազաշի գրած երգերը: Ժողովրդական սգի և լալցաց երգերի արձագանքը, հագեցված սոցիալական մոտիվներով, մենք գտնում ենք նազաշի «Արարիչն արարածոց մեզ բարկացաւ» ոտանավորի մեջ: Ժողովրդական բանահայտութեան մեջ բնութեան երեւոյթներն ու կենդանական աշխարհի շնչավորումը և նրանց միջոցով մարդկային ցանկութիւններ, ապրումներ ու հույզեր արտահայտելը սովորական և տարածված երևույթ է: Նման հնարաններին է դիմում նաև նազաշը, երբ բլբուլի ու վարդի միջոցով արտահայտում է աշխարհիկ մարդու սիրո տրամադրութիւններն ու ձգտումները:

Ղարիբի՝ դեպի հայրենիքն ու հարազատներն ունեցած կարոտի զգացումը նազաշը համեմատում է երամից անջատված թռչունի հետ, որի միակ ձգտումը երամին հասնելն է.

Հոգի, մի՛ ասեր զարի՛ պ,  
Թէ չէ իմ սիրտս կարունի,  
Ղարիպն ի յօտար երկիր,  
զէմ խիստ դիժար կու լինի.

Զինչ հաւն երամէն ի գառ,  
մուրաժ ի տեղ չի հանգչի,  
Այնչափ երեւուն կենայ,  
մինչու իւր տեղըն հասանի...

Առհասարակ կոունկի, կաքավի, բլբուլի ու այլ թռչունների միջոցով կարոտի զգացում արտահայտելը գալիս է բանահայտութիւնից, որ մեծ վարպետութեամբ կիրառում է նաև նազաշը:

Մկրտիչ նազաշն ունեցել է նաև իր հետևորդները: Գրիգորիս Աղթամարցին, իր խոհական-խրատական ոտանավորներում արձագանքելով Մկրտիչ նազաշի

Ղեկավար նաւաբեկ ի մէջն ի ծովուն,  
Ալեկոծիս դու մեղօք զինչ նաւն ի քամուն...  
...Ոչ օգնէ մեծութիւն, ոչ սէր աշխարհիս,  
Զինչ բարի գործեցիր, նայ գայն տի տանիս...

մտքերին՝ գրում է.

Մարդ որ յինչը յուրով լինի,  
նայ բնաւ ինքն չի հանգչի.  
Ոչ անուշ ի քուն լինի,  
ոչ գիշեր ինքն դադարի:  
Զերդ զնաւ ի մէջ ծովուն,  
հաւնապագ ինքն տաւանի,  
Մինչ մահու հրաւեր գայ,  
բմբռնէ գայն յանկարծակի...

Հետաքրքրական է նկատել, որ վարդին և բլբուլին նվիրված նազաշի և Գրիգորիս Աղթամարցու բանաստեղծութիւնների բարոյախոսականներում, շնայած բովանդակութեան տարբերութիւններին, կան նմանութեան որոշ տարրեր. այսպես՝ նազաշի

Քանզի սէր աշխարհիս աւուրք մի քաղցր է,  
Յետոյ բաժակ մահու և դժոխոց է.  
Զի մահ կայ և մեռանիլ, յետինն լաց է,  
Եւ սարսափ դժոխոցն զիս խիստ կու մաշէ...

բառատողն է հիշեցնում Աղթամարցու

Յիմար Աղթամարցի, զխելքըդ ժողովէ,  
Զի սէրն այս աշխարհիս հաւտար փոշի է,

Փառք և ուրախութիւնս այս անցաւոր է,  
Կենացըս կայ վճար, քանզի երազ է՝:

Հատկապէս պանդխտութեան թեմայով Նաղաշի ոտանավորները ուժեղ ազդեցութիւն են թողել Ղազարի, Ղարիպ Զաքարի և այլ նշանավոր կամ քիչ հայտնի բանաստեղծների վրա:

Նաղաշի ոտանավորները պանդխտութեան մեջ տառապող բազմաթիւ աշխատավորների ներշնչման աղբյուրն են եղել. նրանք ոգևորվելով Նաղաշի իրական նկարագրութիւններէ, իրենք նույնպէս այդ թեմայով ոտանավորներ են գրել: Նման դեպքերում, սակայն, նրանք մեծ մասամբ վերապատմել կամ շատ շնչին փոփոխութեամբ վերաշարադրել են Նաղաշի տաղերը: Այդ տեսակետից բնորոշ է Ղարիպ Զաքարի «Վասն զարիպի» ոտանավորը, որ հիշեցնում է «Նաղաշի ասացեալ է վասն զարիպացն...» ոտանավորը: Բերենք մի քանի օրինակներ.

Նաղաշի՝

Ղարիպին խելքն է կորեր, միտքն է մոլար,  
Եւ թէ լինի քան զՍողոմոն մտօք ճարտար,  
Որ թէ խօսի բան մի քանի անգին ճոհար,  
Սաստեն նմա, թէ՛ Լուս կացիր, անգէտ, յիմար

քառատողի ազդեցութեամբ Զաքարը գրում է.

Ղարիպն թէ լինի մեծատուն,  
Խելօքն և մտօքն իմաստուն,  
Նա յիմար թուի յաշս ամենուն  
Եւ կենայ նա տրտում զօրն ի բուն...<sup>2</sup>

կամ Նաղաշը գրում է.

Ղարիպին սիրտն է ի սուգ, անմխիթար,  
Երբ հառաչէ, նայ սիրտն ի փորն առնու գալար,  
Յորժամ յիշէ զիւրն սիրելիքն հաւասար.  
Նա յաչերուն արիւն կաթէ երեսն ի վայր...

Զաքարը գրան զուգահեռ ունի.

Այլ թէ զարիպն ասեմ ողբալի,  
Անճանաչ յօտար տեղ հանդիպի.  
Միտ ածէ զիւր երբայրք սիրելի,  
Սիրտն ողբայ և աչերն արտասուի...<sup>3</sup>

<sup>1</sup> Գրիգորիս Աղբամաքցի, Ուսումնասիրութիւն, քննական բնագրեր և ծանոթագրութիւններ Մայիս Ավդալբեկյանի, Երևան, 1963, էջ 237:

<sup>2</sup> «XIII—XVIII դարերի հայ աշխարհիկ գրականութիւն», կազմեց՝ Մ. Մկրտչան, 1938, էջ 210:

<sup>3</sup> Անդ:

Վերջապէս Նաղաշի

Աւաղ զղարիպն ասեմ, որ յօտար երկիր կու լինի,  
Աչերն արտասուօք ի լի, երեսն ի վայր կու թափի.  
Յորժամ ի մէճլիս նստի, անկասկած սրտիկն արունի,  
Զաչերն ի բոլորն ածէ, կարևոր և զոք նա շունի.

քառատողի արձագանքն են Զաքարի հետևյալ տողերը՝

Աւաղ զղարիպն ասեմ եղկելի,  
Որ յօտար երկիր հանդիպի.  
Ամէնքն են քան զղրախտ ծաղկալի,  
Նա կտրած քան ճիւղ մի ծառի՝:

Բերված օրինակները, որ կարելի է կրկնապատկել ու բազմապատկել, ցույց են տալիս, որ զարիքներին նվիրված Նաղաշի ոտանավորներն իրենց անշնչելի կնիքն են դրել այդ թեմայով գրված գրեթե բոլոր ոտանավորների վրա:

Նաղաշի «Վասն բլբուլին և վարդին» դրամատիկական պոեմի ուժեղ ազդեցութեամբ է գրված Խաչատուր Գնունյանցի «Տաղ վարդին և բլբուլին» բանաստեղծութիւնը: Մի կողմ թողնելով երկու տաղերի բովանդակութեան ընդհանրութիւնները, բերենք մի քանի օրինակներ ցույց տալու համար, որ Խաչատուր Գնունյանցը երբեմն բառացի ընդօրինակել է Նաղաշի օգտագործած պատկերներն ու համեմատութիւնները: Այսպէս, օրինակ՝ Նաղաշի

Բլբուլն ի վարդն ասաց. Հոգիս կու քակի  
Ու բաժանիլն ի քէն ինձ մահ կու թուի.  
Քո շատ կարօտուդ սիրտս կու լափի,  
Որ քէ շաքար տան ինձ՝ սապր է ու լեղի.

տողերի արձագանքը տեսնում ենք Գնունյանցի մոտ.

Ես կու այրեմ ի քէն յերբ լինիմ հեռի,  
Եւ զօրն ի բուն շրջիմ ողորմ ու լալի,  
Զան (?) ու ֆիղան կանչեմ թոչնոցս ամէնի,  
Որ քէ շաքար տան ինձ, նա սապր ու լեղի...<sup>2</sup>

կամ Նաղաշի

Բլբուլն ի վարդն ասաց, թէ՛ Աննման ես,  
Զկարէ մարդ հողեղէն լեզուով գովել զքեզ,  
Քան գտապարզի շաքար քաղցր ու շիբին ես,  
Որպէս մուշկ ու ամբար անուշահոտ ես.

<sup>1</sup> «XIII—XVIII դարերի հայ աշխարհիկ գրականութիւն», էջ 210:

<sup>2</sup> Անդ, էջ 181:

քառատողի գրեթե բառացի վերապատումն է Գնունյանցի հետևյալ քառատողը.

Կարմիր է քո շրթունքդ և միշտ ի վառ,  
Եւ ամենայն լեզու ճառել չկարէ.  
Կլափդ մուշկ ու ամբար անուշահոտ է  
Եւ լեզուդ ի բերանդ մըսի շափար է...

Ինչպես տեսնում ենք, Նաղաշի բանաստեղծական ու լեզվական անշնչելի կնիքը ակնհայտ է:

\*

\* \*

Մկրտիչ Նաղաշը աշխարհիկ թեմաներով գրած ժամանակահատվածում քարձրարվեստ ոտանավորներով առանձնահատուկ տեղ է գրավում միջնադարյան հայ գրականության մեջ: Հետևելով Ֆրիկյան սոցիալական պոեզիային՝ Նաղաշն իր ստեղծագործության հիմնական մասով հարում է ժողովրդական մտածողությանը և ռեալ ընդհանրացումներ անելով՝ վերարտադրում է իր ժամանակի հասարակական-քաղաքական կյանքի մի շարք էական կողմերը, որով և նրա ստեղծագործությունն ստանում է ճանաչողական մեծ արժեք:

Մկրտիչ Նաղաշի տաղերի առաջին ժողովածուն հրատարակել է բանասեր Կ. Կոստանյանը՝ «Մկրտիչ Նաղաշ և իւր տաղերը» խորագրով, որտեղ հրատարակված են ընդամենը 12 տաղ. դրանք են.

1. «Երազ է ու սուտ եղբայրք...»
2. «Անցանէ մեծութիւն...»
3. «Արարիչն արարածոց...»
4. «Սողոմոն մայրն իմաստութեան...»
5. «Անձն իմ, վայ քեզ հազար բերան...»
6. «Անձն իմ, արի աղօթէ...»
7. «Վասն վարդին և բլբուլին...»
8. «Զինչ որ գեղեցիկ ծաղկունք կալին...»
9. «Նախ օրհնեմք զաստուածութիւն...» (Թերի)
10. «Հոգի մի ասեր դարիպ...»
11. «Ղարիպի կեանքն է լալի ողբերգական...»
12. «Նստէք ի մէջլիս հարք և եղբայրք...»<sup>1</sup>:

<sup>1</sup> Վերջին՝ «Նստէք ի մէջլիս...» տաղը հաստատապես Նաղաշ Հովնաթանինն է. այդ տաղը 1862 թ. «Ճոռքաղ» ամսագրում վերագրվել է Մկրտիչ Նաղաշին. Կ. Կոստանյանը այն գետեղել է իր հրատարակած ժողովածուի մեջ, թեև ինքն էլ համոզված է եղել, որ այդ տաղը պատկանում է Նաղաշ Հովնաթանին:

Սրանք, սակայն, չեն ամբողջացնում Նաղաշի ոտանավորների ցանկը:

Կ. Կոստանյանի օգտագործած ձեռագրում «Նախ օրհնեմք զաստուածութիւն» տաղը խիստ թերի է, ընդամենը 17 տող: 1900 թ. կարապետ վարդապետը մի ձեռագիր տաղարանից ընդօրինակում է այդ տաղի ամբողջականը և հրատարակում «Արարատ» ամսագրում:

Հետագայում «Բազմավէպի» 1905—1906 թթ. իր ընդարձակ ուսումնասիրության մեջ Հ. Պոտուրյանը հիշատակում է Նաղաշի անունով նաև մի այլ տաղ, որ պահպանվել է Վենետիկի մատենադարանի 1590 թ. ընդօրինակված տաղարանում, անխորագիր և սկսվում է

Աստուած անսկիզբ, անպարագիր և անվախճան.

Հայր և որդի և սուրբն հոգի երրորդութեան միասնական.

և վերջանում

Գերի Նաղաշ ողորմելի, աշխարհս չէ քեզ մնալոյ,

Տի մեռանիս, տի մեռանիս և մտանիս ի գերեզման...

տողերով: Երևանի Մատենադարանի ձեռագրերում դժբախտաբար այդ տաղի ոչ մի ընդօրինակությունը չի պահպանվել, իսկ Մ. Պոտուրյանն էլ նրա ամբողջական բնագիրը չի հրատարակել: Բանասեր Հ. Տաշյանը Վիեննայի Մխիթարյանների մատենադարանի ձեռագրացուցակը կազմելիս աշխատել է տալ նաև Մկրտիչ Նաղաշի բանաստեղծությունների ցանկը: Սակայն բանասերը ծայրահեղության մեջ ընկնելով՝ Նաղաշին է վերագրել 29 գանձեր, որոնց տների սկզբնատառերը կազմում են «Մկրտիչ»: Կ. Կոստանյանը այդ գանձերի և Նաղաշի բանաստեղծությունների լեզվական ու ոճական տարբերությունների հիման վրա կասկած է հայտնել գանձերը Նաղաշին պատկանելու վերաբերյալ:

Հ. Տաշյանը, Կ. Կոստանյանի աշխատության առթիվ գրած գրախոսականում խոստովանում է, որ ինքն այդ գանձերը Նաղաշին է վերագրել ենթադրաբար, հիմք ունենալով միայն տաղի «Մկրտիչ» սկզբնատառերի հոգումը:

Բանասեր Հ. Տաշյանի ենթադրության անհամոզիչ լինելը ներկա դեպքում առավել ակնհայտ է, որովհետև Մաշտոցի անվան Երևանի Մատենադարանի № 3540, 8689 և այլ ձեռագրերում, որոնց գրվելու ժամանակաշրջանը համընկնում է Մկրտիչ Նաղաշի մանկության տարիներին (1408, 1417 թթ.), պահպանվել են Տաշ-

<sup>1</sup> Կ. Կոստանյան, Մկրտիչ Նաղաշ և իւր տաղերը, 1898, էջ ԽԴ—ԽԵ:

յանի հիշած գանձերի մեծ մասը: Բանասեր Հ. Պոտուրյանն էլ վկայում է, որ Մխիթարյանների մատենադարանի 1371 և 1394 թթ. գանձարաններում պահպանվել են Հ. Տաշյանի հիշատակած գանձերը<sup>1</sup>:

Հավանական է բանասիրության մեջ հայտնված այն տեսակետը, թե Մկրտիչ Գանձասացը Նաղաշը չէ, այլ հաշատուր Կեչառեցու որդի Մկրտիչը, որն ապրել է XIV դարում:

Իր կյանքի ընթացքում Նաղաշը պարբերաբար զբաղվել է մատյաններ արտագրելու և նկարազարդելու գործով՝ միշտ էլ այդ մատյաններում թողնելով հետաքրքրական ու իր ժամանակը բնութագրող հիշատակարաններ: Նաղաշից մեզ հասած հիշատակարաններում, որոնք բանասերների մի քանիսի (Ղազիկյան, Փիրղալեմյան և այլք) կողմից հրատարակվել են խիստ կրճատ ու աղավաղված, երևան է գալիս Նաղաշի վերաբերմունքը ժամանակի հասարակական-քաղաքական կյանքի զանազան երևույթների նկատմամբ: Նաղաշի այդ հիշատակարաններն իրենց անմիջականությամբ ու լեզվի պատկերավորությամբ մոտենում են գեղարվեստական ստեղծագործությունների աստիճանին: Այդ բավական խոշոր արժեք ներկայացնող հիշատակարանները շնորհիվ պատմական գիտությունների դոկտոր Լ. հաչիկյանի շնորհակալ աշխատանքի տեղ գտան «ՓՅ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» արժեքավոր աշխատության առաջին հատորում:

Նաղաշի արձակ ստեղծագործության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում հունա-հոմերական եկեղեցիների հրավիրած միարարական ժողովի առթիվ նրա գրած պատասխան նամակը, որը բանասեր Գ. Հովսեփյանի համառոտ ուսումնասիրությամբ տպագրվել է 1916 թ. «Արարատ» ամսագրում:

Ներկա աշխատության առնչությամբ Մկրտիչ Նաղաշի տաղերի գիտա-համեմատական բնագրերը կազմելիս Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր նյութերի տվյալներով Նաղաշի անունով հայտնի տաղերին ավելացրել ենք նաև հետևյալները.

1. «Ինչ շահ է քո զուր դատիլդ...»:
2. «Ես գիտէի զաշխարհս...»:
3. «Ամենայն փառք մարդոյ...»:
4. «Ինձ ումէտ կայր և կուման...»:

<sup>1</sup> «Բաղմավէպ», 1906, էջ 69:

Այս տաղերից առաջինը՝ «Ինչ շահ է քո զուր դատիլդ...», կասկածի տեղիք չի տալիս և ձեռագրային հաստատ տվյալներով պատկանում է Նաղաշի խոհական ոտանավորների շարքին: Այսպես, մեր ձեռքի տակ եղած ավելի քան 10 ձեռագիր մատյաններում «Ինչ շահ է քո զուր դատիլդ...» տաղը հանդես է գալիս կամ առանձին, իբրև մի ամբողջական ոտանավոր, կամ «Երազ է ու սուտ...» տաղից հետո, բայց անշատված մի պայմանական նշանով, որ ձեռագիր մատյաններում նշանակում է, թե այդ տաղը նախորդի շարունակությունը չէ: Այդ տաղը ձեռագրերում մեծ մասամբ անխորագիր է, բայց երկրորդ և հինգերորդ տներում ունի հետևյալ տողերը.

է, ողորմելի Նաղաշ,  
հետևիր աղքատ Ղազարին,  
Աղքատ բարէգործ լավ է,  
Քան հազար շար հարստութիւն...

կամ՝

Ի քեզ թէ նայիս, Նաղաշ,  
Քան զամէնն ես դու խելագար,  
Նման ալեկօծ նաւի  
Երերուն շրջիս դու մոլար...

Այդ տողերը հաստատապես վկայում են, որ հիշված «Ինչ շահ է քո զուր դատիլդ...» տաղը պատկանում է Մկրտիչ Նաղաշին: Այդ տաղի Նաղաշին պատկանելու մասին վկայում են նաև Հ. Տաշյանը «Ցուցակ հայերեն ձեռագրաց...» աշխատության 521, 813, 854 և այլ էջերում, ինչպես նաև Կարապետ վարդապետը, որ «Արարատ» ամսագրի 1900 թ. հավելվածում առաջին անգամ հրատարակել է այն՝ համարելով Նաղաշի «Երազ է ու սուտ...» տաղի շարունակությունը:

«Ես գիտէի զաշխարհս ինձ մուլք են տուած...» տաղը «Բաղմավէպի» 1853 թ. համարում տպագրված մի տարբերակում բացի բուն տաղից ունի ևս շորս տուն<sup>1</sup>: Այդ տաղի հրատարակիչը, սակայն, չի հիշատակում իր օրինակի բնագիր ձեռագրի նկարագրությունը, գրություն տեղն ու ժամանակը: Սակայն մեզ ծանոթ ավելի քան 30 ձեռագիր ու տպագիր աղբյուրներում «Բաղմավէպի» այդ հավելումը չկա: Մեր կարծիքով այդ կատարված է հետագա դարերում: Լեզվական ու բանաստեղծական հնարանքների տեսակետից էլ այդ հավելումը անհարիր է ամբողջ ոտանավորին, որն աչքի է

<sup>1</sup> Տե՛ս «Մանրագրություններ» բաժինը:

ընկնում իր հուզականությունը, կենդանի պատկերներով ու համեմատություններով:

Բանասիրության մեջ այդ տաղը առանց որևէ հիմքի ու ապացույցի մեկ անգամ վերագրվել է տաղասաց Արիստակեսին, որը բացարձակ թյուրիմացության հետևանք է<sup>1</sup>:

Այդ տաղը մենք համարում ենք Մկրտիչ Նաղաշի ստեղծագործությունը հետևյալ հիմքերով: Երևանի Մատենադարանի № 3162 ձեռագիր Մաշտոցում տաղը պահպանվել է ուղղակի Նաղաշի անունով՝ «Ողբ Նաղաշի վասն ննջեցելոց» խորագրով: Մեր ձեռքի տակ եղած ավելի քան 30 ձեռագիր մատյաններում ու հնագույն հրատարակություններում տաղի հեղինակը չի հիշվում, բայց մեծ մասամբ այն երևում է Նաղաշի տաղերից հետո կամ նրանց արանքում:

Նաղաշի առաջնորդության տարիներին երկու անգամ՝ 1449 և 1469 թթ., Միջագետքում (Ամիդում և Մերտինում) բռնկվում է ժանտախտ հիվանդությունը: Նաղաշը իր հիշատակարանում և բանաստեղծություններին մեջ վերարտադրել է ժանտախտի սոսկալի հետեվանքներն ու ժողովրդի անհուն վիշտն ու հուսահատությունը: Այդ համաճարակներից մեկի նկարագրությունը նա տվել է իր հայտնի «Արարիչն արարածոց...» ոտանավորում, որի վերջին տան մեջ հիշատակում է այդ սոսկալի արհավիրքի ճշգրիտ թվականը՝

ի հայոց մեծ թուականին յինն հարիւրին,

եւ համառօտ, այլ աւելի տասնևութին... (1469 թ.):

Դրանից 20 տարի առաջ՝ 1449 թ. Միջագետքի առաջին համաճարակի ուժեղ տպավորության տակ Նաղաշը գրել էր իր հայտնի ընդարձակ հիշատակարանը և հավանաբար նաև «Ես գիտէի զաշխարհս...» սրտառու տաղը: Այդ հիշատակարանի և «Ես գիտէի...» ոտանավորի մեջ կան նկարագրական ու զգացմունքային շատ ընդհանրություններ:

Այնուհետև հատկապես բնության ու սիրո մոտիվներով Նաղաշի ոտանավորների և «Ես գիտէի...» ոտանավորի մեջ կան լեզվական, ոճական բազմաթիվ շոշափելի կետեր: Իր նախորդ մի քանի ոտանավորների նման այստեղ ևս օտար բաների հմուտ գործածությունը ստեղծվում են տպավորիչ ու նպատակասլաց պատկերներ ու նկարագրություններ: Նաղաշի ստեղծագործության լեզվին յուրա-

<sup>1</sup> Տե՛ս «Ցուցակ Տփլիսեցի Աբգար Յովհաննէսեանի հայերեն ձեռագիրների» երկասիրից Ֆրանց-Նիկոլաու Ֆինկ, էջ 133: Այդ աշխատության հեղինակն իր ասածը հիմնավորելու համար վկայակոչում է Հ. Տաշյանի «Ցուցակը...», էջ 407, մինչդեռ Հ. Տաշյանի ցուցակի ոչ այդ և ոչ էլ այլ էջերում հիշատակություն չկա, թե տաղը որևէ ձեռագրում երևացել է Արիստակեսի անունով:

հատուկ քառապիր, հասրաթ, խապար, զաֆիլ, մաքալ և այլ բաներ ու արտահայտություններ վարպետորեն գործածված են նաև «Ես գիտէի զաշխարհս...» ոտանավորի մեջ:

Վերջապես մահվան նկատմամբ Նաղաշի անհուն ատելությունն ու զայրույթը, որ այնքան պատկերավոր ու տպավորիչ ձևով տրված է նրա հիշատակարանում, իր բանաստեղծական արտահայտությունն է գտել հետևյալ տողերում.

Եւ քան զմահն լեղի, իսկի շկայ վատ,

Որ կու բաժանէ զփեսան ու զնոր հարսն ի զատ,

Երբ բաժանողն աստուած է, ու՞մ անեմ գանգատ,

Շատ իմաստուն, խելացի, որ կու մնան մաթ...

Առայժմ այս հիմքերով «Ես գիտէի զաշխարհս...» ոտանավորը համարում ենք Նաղաշի ստեղծագործությունը. վերջնական խոսքը անշուշտ մնում է ինչպես մեր, այնպես էլ արտասահմանյան մատենադարանների ձեռագրերի հետագա ուսումնասիրություններին:

«Ամենայն փառք մարդոյ դատարկ և ունայն...» տաղը Երևանի Մատենադարանի մի քանի ձեռագրերում պահպանվել է ուղղակի Նաղաշի անունով («Այլ տաղ Նաղաշի ասացեալ», «Նաղաշի ասացեալ» և այլն), որոշ ձեռագրերում՝ Առաքելի անունով, իսկ առանձին ձեռագրերում էլ՝ առանց հեղինակի, բայց մեծ մասամբ Նաղաշի տաղերից հետո՝ «Նորին տաղ հոգոյ» խորագրով: Առաքելին վերագրվող օրինակներում մեծ մասամբ տաղը վերջում ունի մի հիշատակարան, որի տողերի սկզբնատառերը կազմում են «Առաքելի՛ է»: Այդ նկատել է նաև Մ. Պոտուրյանը Մխիթարյանների մատենադարանի մի շարք ձեռագրերում:

Այս տաղը Մկրտիչ Նաղաշի գրչին է պատկանում հետևյալ հիմնավորումներով.

Նաղաշը իր գրական գործունեության սկզբնական շրջանում խոհական ոտանավորները գրել է կրկնակի ակրոստիքոսով. ԱՍ, ԲԲ, ԳԳ և այլն: Այսպես է գրված նրա «Անցանէ մեծութիւն...» և «Անձն իմ արի աղօթէ...» ոտանավորները: Այդ նույն ձևը մենք տեսնում ենք նաև «Ամենայն փառք մարդոյ...» ոտանավորում, որը, սակայն, որոշ տողերում խախտվում է. հավանական է, որ այս ոտանավորը Նաղաշի այդ թեմայով ու ձևով գրած առաջին ոտանավորն է, երբ դեռևս բանաստեղծը այդ ձևի ակրոստիքոս ստեղծելու անհրաժեշտ փորձ ու հմտություն չունի. նրա՝ հիշված մյուս երկու

<sup>1</sup> Տե՛ս «Մանթագրություններ» բաժինը:

նտանավորներում կրկնակի ակրոստիքոսի խախտումներ գրեթե չկան:

Այնուհետև նաղաշի գրեթե նույն բովանդակությամբ «Անցանէ մեծութիւն...» նտանավորը վերջում ունի հետևյալ հորդորակը.

Մի՛ դատիր, մի՛ դատիր, նաղաշ, մի՛ դատիր,

Մի՛ խաբիր, մի՛ խաբիր, մեղօք մի՛ խաբիր,

Մի՛ մնար, մի՛ մնար անդարձի մեղաց,

Մի՛ մատներ, մի՛ մատներ զհոգիդ տանջանաց:

Այս նույն հորդորակը, պռանց, սակայն, նաղաշ անվան, բառացիորեն պահպանվել է գրեթե բոլոր, նույնիսկ Առաքելին վերագրվող օրինակներում. ըստ որում բացի նտանավորի վերջում լինելուց բազմաթիվ ընդօրինակությունների մեջ այն ընկել է յուրաքանչյուր 4, 8, 16, և այլ տողերից հետո<sup>1</sup>:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Առաքելին վերագրվող ձեռագրերի ընդօրինակումներն ավելի ուշ շրջանների են պատկանում, մեծ մասամբ 17—18 դարերին: Մինչդեռ ավելի հին և նույնիսկ նաղաշին ժամանակակից 1469 թ. № 3768 ձեռագիր գանձարանում այդ տաղն ունի «Խրատական բաներս ասա» խորագիրը և «Առաքելի է» կազմող ակրոստիքոսը չկա: Գերազանց վիճակում պահպանված № 3768 ձեռագրում, որ գրված է մաքուր ու գրագետ գրչի ձեռքով «Ամենայն փառք մարդոյ...» տաղն ընկած է «Երազ է ու սուտ եղբայրք...» նտանավորից հետո:

Վերջապես մի կողմ թողնելով «Ամենայն փառք մարդոյ...» և նաղաշի «Անցանէ մեծութիւն...» և այլ նտանավորների բովանդակության խիստ նմանությունը՝ պետք է նշել նաղաշի խոհական նտանավորների ու այս նտանավորների լեզվա-ռճակական հարազատությունը, մի բան, որ խոսում է այդ տաղերի նույն հեղինակին պատկանելու օգտին:

Բանասեր Հ. Պոտուրյանն էլ հակված է կարծելու, որ «Ամենայն փառք մարդոյ...» նտանավորը Մկրտիչ նաղաշինն է<sup>2</sup>:

«Առաքելի է» կազմող ակրոստիքոսը հավանաբար ավելացված է հետագայում ոմն Առաքել գրչի կողմից, մանավանդ, որ այդ տողերի և ամբողջ նտանավորի մեջ ոչ ձևի և ոչ էլ բանաստեղծական արվեստի նմանություններ ու ընդհանրություններ չկան: Հավանանական է, որ այդ Առաքելը ոչ թե Բաղիշեցի կամ Սիւնեցի բանաստեղծներն են, այլ տաղի արտագրող կամ երգող ոմն Առաքել, որը

<sup>1</sup> Նկարագրությունը տե՛ս «Բնագրեր» բաժնում այդ տաղի տողատակի տարբերակներում:

<sup>2</sup> «Բազմավէպ», 1906, էջ 68:

բանաստեղծական որոշ շնորհք ունենալով՝ աշխատել է իր անունը թողնել նտանավորի վերջում:

Բավական է բերել մի քանի օրինակ ցույց տալու համար, որ նաղաշի մի շարք նտանավորներ արտագրողները դրանք վերագրել են իրենց: Այսպես՝ 7712 ձեռագիր տաղարանի գրիչ Միգիտը ընդօրինակելով նաղաշի «Վասն բլբուլին և վարդին» պոեմը՝ նրա հետ վարվում է շատ կամայականորեն. բացի այն, որ նա «խմբագրում է» նաղաշի նտանավորը և սխալմամբ նրա մեջ արտագրում այլ հեղինակների նույն բովանդակությամբ նտանավորների հատվածները, վերջում էլ՝ «Նաղաշն ասաց, թէ վարդն խիստ աղեկ է...» տողը փոխում է «Միգիտն ասաց, թէ վարդն խիստ աղեկ է...» տողով:

Այդպես է վարվում նա նույն ձեռագրում նաղաշի «Վասն ագահութեան...» նտանավորի հետ՝ վերագրելով այն «Տաղ վասն ագահութեան Միգիտի ասացեալ...»: Մի այլ № 5985 ձեռագրում նաղաշի «Վասն բլբուլին և վարդին» նտանավորը ուղղակի վերագրվել է Առաքել վարդապետին՝ «Առաքել վարդապետի ասացեալ» խորագրով: № 7717 ձեռագրում «Վասն ագահութեան...» նտանավորն ստացել է «Տաղ պիտանի ի Մանուճ եպիսկոպոսէ ի նաղաշ...» խորագիրը: Վերջապես երբեմն էլ Մկրտիչ նաղաշ և Հովնաթան նաղաշ անունները շփոթվել են և մեկի ստեղծագործությունը վերագրվել է մյուսին<sup>1</sup>:

Պետք է ասել, որ ձեռագիր մատյաններում հակառակ երևույթն էլ է նկատվում: Երբեմն նաղաշին են վերագրվել նաև ուրիշ հեղինակի գործեր: Օրինակ՝ Երևանի Մատենադարանի № 8323 ձեռագրում «Հողվիրոքս ի վեր կուգի...» տաղը համարվում է նաղաշի ստեղծագործությունը և ունի «Նաղաշի ասացեալ» խորագիրը<sup>2</sup>: Մուրատ Խիկարի «Մարտն կուգա ծաղիկներով...» բանաստեղծությունը վերագրել է նաղաշին, իսկ Ղարիբի տաղը՝ Մուրատ Խիկարին<sup>3</sup> և այլն:

«Ինձ ումէտ կայր և կուման...» տաղը օտարության մեջ մահամերձ Ղարիբի անհուն վշտի ու կարոտի վերարտագրությունն է: Այս տաղը Մկրտիչ նաղաշին վերագրելու մեր փաստարկումները զուտ բանասիրական հիմքեր ունեն: Այսպես՝ նկարագրությունների ու արտահայտչական միջոցների տեսակետից այս նտանավորի և նա-

<sup>1</sup> «Արժուի վասպուրական», 1862, էջ 385, 4. Կոստանյան, Մկրտիչ նաղաշ և իր տաղերը, էջ 32:

<sup>2</sup> Մենք հակված ենք կարծելու, որ «Հողվիրոքս ի վեր կուգի» տաղը նաղաշինն է, իսկ տաղի մեջ հիշվող Քերոբենցը՝ տաղի երգիչը, բայց առայժմ լրացուցիչ փաստեր չունենալով՝ չենք պնդում այդ ենթադրությունը:

<sup>3</sup> Ալիշան, Յուշիկը, 1 հատոր, էջ 186:

ղաշի զարիբներին նվիրված ոտանավորների մեջ կան շատ ընդհանուր գծեր: Երկու ոտանավորներում էլ զարիբի վիճակը սոսկալի է, նրա սիրտը լիքն է դառնություններով, օտար աշխարհում նա անօգնական է ու անուշադրության մատնված:

Այնուհանդերձ «Ինձ ումէտ կայր և կուման...» ոտանավորը վերջանում է Մարիամ Աստվածածնին ուղղված հորդորով, որը միանգամայն բնորոշ է Նաղաշի ինչպես մահվան դեմ գրած տաղերին, այնպես էլ հատկապես զարիբներին նվիրված ոտանավորներին: Հետաքրքրական է նկատել, որ այս տաղի հորդորակը թե՛ ձևով ու կառուցվածքով և թե՛ բովանդակությամբ գրեթե նույնն է, ինչ որ Նաղաշի զարիբներին նվիրված ոտանավորներում. «Աստուծոյ մարդասիրին փառք...» ոտանավորը ունի հետևյալ հորդորակը.

Ամենօրհնեալ կոյս Մարիամ Աստուածածին,

Զինահար դու օգնական լեր զարիպին.

Զամէն զարիպ բարով հասու իւր մուրատին

Եւ քեզ ամէնքս երկրպագեմք, Աստուածածին...

Իսկ «Ինձ ումէտ կայր ու կուման...» տաղի հորդորակում կարդում ենք.

Ամենօրհնեալ կոյս Մարիամ, մայր աստուածոյ,

Երկրպագեմք քեզ և որդոյդ և սուրբ հոգոյ,

Յամէն զարիպ բարեալ զիւր տունն հասոյ

Եւ քեզ ամէնքս երկրպագեմք տաճար լուսոյ...

Ինչպես տեսնում ենք նմանությունն այնքան ակնհայտ է, որ բացատրությունների կարիք չի զգացվում:

Վերջապես այս տաղը XV դարի ստեղծագործություն է: Մեր ձեռքի տակ եղած ավելի քան 16 ձեռագիր մատյաններում պահպանված է անհեղինակ և մեծ մասամբ տեղավորված Նաղաշի ոտանավորներից հետո կամ նրա՝ ոտանավորների արանքում:

Այս հիմքերով «Ինձ ումէտ կայր ու կուման...» տաղը համարում ենք Նաղաշի ստեղծագործությունը:

Նաղաշի տաղերի գիտական-համեմատական բնագրերը պատրաստելիս մեր Մատենադարանի ձեռագրերի տվյալներով լրացրել ենք մինչև այժմ հայտնի մի շարք տաղեր՝ ավելացնելով զանազան տներ ու տողեր, որոնք ընդօրինակությունների ժամանակ ինչ-ինչ պատճառներով դուրս են մնացել. բերենք միայն մեկ օրինակ<sup>1</sup>: «Աստուծոյ մարդասիրին փառք...» տաղը մինչև այժմ բոլոր

<sup>1</sup> Մյուս բոլոր ավելացումներն ու շտկումները նշված են «Բնագրեր» բաժնում, համապատասխան տաղերի սողատակի ծանոթություններում ու տարբերություններում:

աղբյուրներում հայտնի է «Ղարիպի կեանքն է լալի, ողբերգական...» սկզբնատողով, որը մի վանկով պակաս է մնացած բոլոր տողերից. մի բան, որ Նաղաշի նման հմուտ բանաստեղծին հատուկ է: Բազմաթիվ ձեռագրեր տալիս են տաղի ամբողջական տեքստը, որ սկսվում է.

Աստուծոյ մարդասիրին փառք յաւիտեան,

Որ ստեղծեր է զարարածս զանազան.

Արեւելք, հիւսիս, հարաւ, արեւմտեան

Մարդն ի վերայ է թագաւոր և աննման...

բառատողով, իսկ երկրորդ բառատողն սկսվում է.

Բայց զարիպի կեանքն է լալի, ողբերգական...

Այս դեպքում բայց բառի հավելումը լրացնում է ոտանավորի վանկերի քանակը 4||4||4 և միաժամանակ ուժեղացնում ոտանավորի բովանդակությունը՝ նշելով հատկապես զարիբի կյանքի դառն ու լեղի լինելը...

Այդպես էլ ձեռագրերի բոլոր տարբերակները նկատի ունենալով՝ աշխատել ենք ամբողջացնել Նաղաշի մեզ հասած թերի կամ խաթարված ոտանավորները:

Ոտանավորների բնագրերը կազմելիս հաշվի են առնված յուրաքանչյուր տաղը պահպանած ձեռագրերի լեզվա-ոճական բոլոր առանձնահատկությունները, նախապատվությունը տալով մեծ մասամբ Ամիրի ու Բաղեշի բարբառներին, որոնք չէին կարող իրենց անջնջելի կնիքը թողած չլինել Նաղաշի լեզվի վրա:

Յուրաքանչյուր ոտանավորի տողատակում նշել ենք այդ տաղի ձեռագրական բոլոր տարբերակները, որոնք, տաղերի բնագիրը կազմելուն օգնելուց զատ, ինքնին ունեն լեզվաբանական, պատմական ու բանասիրական խոշոր արժեք: Իբրև սկզբունք հաշվի չեն առնվել և չեն նշանակվել ակնհայտ տառասխալները և «աւ» կամ «օ» գրությունները:

Յուրաքանչյուր ոտանավորի բնագիրը կազմելիս հիմք ենք ընդունել ավելի ամբողջական բնագիրը և նրա համեմատությամբ տողատակին տվել ձեռագիր ու տպագիր մյուս բոլոր ընդօրինակումների տարբերակները: Հիմնական համարվող օրինակը լրացրել ու ձգարտել ենք մյուս ձեռագրերի տվյալներով՝ տողատակին ցույց տալով հիմնական ձեռագրից մեր խոտորումները:

Նաղաշի տաղերի վերանագրերը նշանակված են ձեռագրերի տվյալներով՝ մեր նախընտրությամբ:

Ձեռագրերում եղած բոլոր համառոտագրութիւններն ու պայ-  
մանական նշանները ամենուրեք բաց են արված, իսկ խազագրու-  
թիւնները հաշվի չեն առնված:

Նաղաշի տաղերի ներկա բոլոր բնագրերը կազմված են 1948 թ.,  
սակայն հրատարակութեան ներկայացնելուց առաջ նորից ստուգվել  
են ու համեմատվել բնագրերի հետ և լրացվել 1948 թ. հետո Մա-  
տենադարանի ձեռք բերած ձեռագրերի տվյալներով:

Բ Ն Ա Գ Ր Ե Ր



### ՏԱԳ ՀԱՐՍԱՆԵԱՅԻՆ ՈՒՐԱՍՈՒԹԵԱՆ ՄԱՐԴԿԱՆ

Նախ օրհնեմք զաստուածութիւն,  
Որ ստեղծ զհրեշտակս ի լուսոյն,  
ԶԱդամ արար ի հողոյ  
Եւ զկինն իւր ի կողոյ:

5 Ահա հոտըն զայր զարնան,  
Փեսին տեսնէր խիստ խնդման.  
Յորտեղ սիրելիք որ կան,  
Ամէնքն ի հարսնիք թող գան:

10 Դամպար է վառեք փեսայն,  
Փեսաղբօր մոմըն վառման,  
Ամենուն բարև կուտան,  
Թող երկուքն ծերանան:

Այսօր է մեզ օր խընդման,  
Հաւասար սիրելիք որ կան.  
15 Հարսն են առեր ու կերթան,  
Թող երկուքն յիրար խընդան:

Նորագրեր. abcd տաղ հարսանեաց և ուրախութեան (d չիք և ուրախութեան) մարդկան (cd չիք մարդկան)  
1—4 d չիք  
5 a ահայ  
6 ab խ(ը)նաման c խընդան  
8 abc ամէնն c ի հարսնիք եկան d 7 և 8-րդ տողերը հակառակ դասավորւոյան են. Ամէնն ի

հարսնիք թող գան, սա չուն արթնաւ որ թող գան  
9 c զամբար c փեսան  
10 d մոմն է  
11 c ամէնուն  
12 a երկու ընծ d երկուքն այլ  
14 b հաւասար ac սիրելիքս d կուգան a կերգան  
16 a ի յիրար ab խ(ը)նտան:

Շարպաթ լից ու տուր կըթղան,  
 Եղբա՛յր, դու խըմէ՛ փեսայն.  
 Փեսաղբայր, հարսն ու փեսայն,  
 20 Թող երեքն յիրար խընդան:

Սարկաւագունք ժողվեցան,  
 Քո սիրուն եղեն գուսան,  
 Շատ ապրի հարսն ու փեսայն,  
 Թող երկուքն յիրար խընդան:

25 Աւրէնք հրամայէ զայս բան,  
 Թէ՛ նոր հարսն և իւր փեսայն  
 Զփեսաղբօրն լաւ պատուեն  
 Եւ լինեն ճորտ ու ծառայն:

Բարունին Երկնից արքայն  
 30 Եւ սուրբըն պառույն տղայն  
 Երկուքն իջան Յորդանան,  
 Մըկրտեաց զնա Յովան:

Կանչեաց ահեղ բարձրաձայն  
 Այն տէրն Յիսուս արքայն՝  
 35 Կանայք շատ տղայք ծընան,  
 Զէ իմ կնքահօր նման:

Առաւօտ ի լոյս նըման  
 Լուսափայլ կենա փեսան,  
 Փեսաղբայրըն պատուական  
 40 Եւ երկուքն յիրար նման:

17 a լիցու c կըթխան  
 19 a փեսաղբար d փեսաղբարն ու նոր փեսան  
 20 d երկուքն a խընտան b Ընդհատ-վում է ձեռագրի թերթերը բափած լինելու պատճառով. 20 և 21 տողերի միջև c կրկնել է 25 տողը:  
 21 a ժողովեցան  
 22 d սիրուտ եղան  
 23 cd փեսան  
 24 a խընտան  
 26 c փեսան d եթէ հարսն և իւր փեսայն  
 27 c զփեսաղբայրն ad զփեսաղբարըն

28 a լինին c ծառայ d եւ լինան իւրենն ծառայ  
 29 ad բարունից  
 30 c վառվոյն d պառվու d տղան  
 31 a իջեալ  
 32 d մկրտեաց զՅովաննէն այն  
 33 ac կանչեաց a քաղցրաձայն  
 34 d տէր մեր Յիսուս  
 35 d տղայքըն  
 36 ab կնկայ հօր  
 37 d առաւօտըն  
 38 ac կենայ acd փեսայն  
 39 d փեսաղբարըն c պատվական  
 40 a յերկուսն c երկուսն d չիք եւ

Իհւսիս ի հարսին նման,  
 Փեսայն հարաւոյն կողման,  
 Երկուքն ի յիրար եկան,  
 Ահա ժամ եղև քաղնան:

45 Ամպն ի յերկինք թուխ դարձան,  
 Զանձրև քաղցրահամ ցօղան,  
 Որ երկիրըս ծընանի,  
 Մաղկունք զարդարեալ ցընծան:

Գովեմք զհարսն ու զփեսայն,  
 50 Սոքայ Յակոբայ նըման.  
 Շայլայ ի միջաց խնդան,  
 Մնօղ լինին շատ մանկան:

Իւր եղբարքն առ ինք եկան,  
 Զփեսաղբայրն առին զփեսայն,  
 55 Վաղվինիքն ի յոլոս ելան,  
 Հաւասար ի ճամբայ մըտան:

Ես պատմեմ մէկ զարմացք բան,  
 Որ ամէնն աչօք տեսան,  
 Հանց որ յորսագահն ելան,  
 60 Մէկ մի համբուրեաց զփեսայն:

Սատաղայ էս քեզ երթամ,  
 Ո՛ւր կայիր դու այսչափ ժամ,  
 Քեզ եմ պահեր արմաղան՝  
 Հազար որսու չես տար զայն:

41 ac 42-րդ տողը բնկել է 41-ից առաջ:  
 42 c հարօվոյ d հարաֆոյ  
 43 ac երկուսն d երկուքն յիրար  
 44 ac ահայ  
 45 ad յերկինքն  
 46 d անձրև  
 47 d որ յերկիրս պըտողօք լըցան  
 48 d ծաղկօք... ծնծան  
 49 d փեսայն  
 50 d սոքայ են ի յայս նման  
 51 ac շայլայ a խնտան d չիք շայ-

լայ d իւրեանք միջացուն խընդան  
 53 d եղբայրքն առ ինքն  
 54 d զփեսաղբարն... փեսան  
 55 c վաղվինէքն a վաղվնէքն d վաղվնօքն  
 56 ac ի ճանփա d ի ճանփան  
 57 d զարմաց  
 59 c հայ փխ. հանց a հայ յորս յորսագահն ելան d յերսակգահն ելան  
 62 a ուր կայր c յուր կայիր  
 64 d հազար որսոյ չես իտար դայն

65 Աստ մայր իմ սիրական,  
Շուտով ջանա, բեր դու դայն,  
Տես զհանգամայս որ կան,  
Ի հոս շեն կենար, կերթան:

Յայնժամ ելաւ քահանան,  
70 Եբեր զանգին արմաղան,  
Աֆարին իւր ծընօղին,  
Որ է աղջիկ և կուսան:

Եւ երկուքն առեալ տարան,  
Ի յեկեղեցին մտան,  
75 Խաչիւրն պսակեցան,  
Զուզակից հալալ եղան:

Զայնեցէք զկուլանտան,  
Լաթեն զտապրակն ու զչաստան  
Եվ հետ կանչեն զթարլալան,  
80 Որ հարսնիքս ուրախանան:

65 cd առատ փխ աստ a իմ դու  
66 a չիք շուտով d ջանա շուտով  
ad դու բեր  
67 c ըզհանգամաս d զհանկամաս  
68 d ի հոս a կերզան  
69 a քահան cd քահանայն  
70 d արմաղան  
71 d երանի փխ աֆարին  
72 a աղջիկ d աղջիկն որ կուսան

73 d զերկուքն  
76 d տես դուզակ c հայան a հա-  
լալս  
77 ab զկուլաղան  
78 c չալեն c զչեշտան d դայ լարէ  
զտապրակն ու շաստան  
79 d նա հետն կանչեն թառլալան  
c զթառլալան  
80 d հարսանիքն

ՏԱՂ Ի ԳԷՄՍ ՄԱՐԳԱՐԷԻՅՆ ԵՎ ՔՐԻՍՏՈՍԻ ԻՎ  
ԼՈՒՍԱՎՈՐՉԻՆ

Զինչ որ գեղեցիկ ծաղկունք  
կային՝ ամէնք գնացին.  
Մաղիկ մին այլ հանց գնաց,  
որ ամէն ծաղկունք զնա լացին:

5 Մաղիկն անուշ խոտ ունէր,  
որ ամէն աշխարհս լսեցին.  
Ու ամէն աշխարհաց ծաղկունք  
յայն ծաղկի սէրըն դիմեցին:

Ոմանք յայն ծաղկի սիրուն  
10 չորցան ու դարձան դեղին,  
Բագումք այն ծաղկի սիրուն  
ծաղկեցան քան զնշդարինին:

Զայն ծաղիկն աստուած երեստ,  
նա ոմանք զղատրըն շիմացին.

15 Մաղիկն ով երեստ, էառ,  
զուրն շատոք ի վայր մնացին:

Մաղիկն յանց տեղ գնաց,  
որ ամէն ծաղկունք խընդացին,

Հագար գոյնզգոյն ծաղկունք  
20 յայն ծաղկի սէրըն ժողովին:

Մաղկունքն յայն ծաղկի սիրուն  
շաղ առին ու շողշողային,  
Ամէն ծաղիկն իւր գունովն,  
այն ծաղկին զլուխ դնէին:

25 Մաղիկ մի նորս բացուաւ,  
այն գունովն, այն ծաղկի տեղին.  
Մաղիկն Քրիստոս պահէ,  
զայն ծաղիկն ի յոտս խաչին:

Մաղիկունք մարգարէքն էին,  
30 նահապետք և սուրբք առաջին.  
Մաղիկն որ յետ նոցին,  
այն Յիսուան էր հօր միածին:

Մաղիկն մի նորս բացուաւ  
նոյն գունովն, յայն ծաղկի տեղին.  
35 Մաղիկն էր մեր Լուսաւորիչն,  
շառաւիղ սուրբ Քաղէնսին:

Նաղա՛շ, թէ դու խելք ունես,  
միտ արա դու գարնան ծաղկին,  
Ու գունովք մի պայծառ լինին,  
40 շորանան ու դառնան դեղին:

Հանցեղ ծաղիկ մի լինիր,  
որ տանէ զքեզ հողմն ու քամին.  
Մաղիկ լեր քարի գործով,  
որ պտուղ տաս դու հոգւով:

### ՎԱՄՆ ԲԼԲՈՒԻՆՆ ԵՎ ՎԱՐՊԻՆ

Բլբուլն ի վարդն ասաց. խիստ անողորմ ես,  
Որ զիմ արինս քեզ հալալ կու դնես.  
Թէ հանց որ բէկուման դու Գաբրիէլն ես,  
Նայ մէկ հետ առ զհոգիս, քանի՞ տի տանջես:

5 Վարդն ի բլբուլն ասաց. Ձիս յէ՞ր կու խոցես,  
Դու զիմ հոգիս առիր, հետ քեզ կու գերես.  
Հասրաթ կայ իմ սրտիս, որ լինիմ առ քեզ,  
Աչերս է խիստ կարօտ, որ տեսանէ զքեզ:

Բլբուլն ի վարդն ասաց. թէ՛ Սիրով կայրես,  
10 Նայ իմ հոգոյս հոգին, ումէտն դու ես.

կորագրեր. abc Անխորագիր d Ասա-  
քել վարդապետի ասացեալ e Վա-  
սըն պլպուլին և վարդին նաղաշ  
վարդապետի ասացեալ f Ի Նա-  
խաշէ ասացեալ պլպուլի և վար-  
դի g Տաղ պիւլպիւլի վերա  
m Գաբրիէլ և Մաբիամ  
1 d բլբուլն ef պիւլպուլն g ամե-  
նութեք պիւլպիւլն ab Բոլոր  
տներում չիք ասաց ef թէ ինչ փիս  
խիստ  
2 d յարինս e արինն m արուն  
ի ի քեզ g քեզ f խալալ e կոնես  
3 g թէ հանց մօրէ ef որպէս թէ  
b բեկուման d պէրուման m պէ-  
կուման efg պէկումէն abcfe Գաբ-  
րիէլ ես g Գաբրիէլն դու ես  
4 ef նա մեկ հեզ m նա արէկ d զիմ

հոգիս ef հոգիս g հօքիս e քանի  
մէկ տանջես g կու տանջես  
5 b ի բլբուլ d բլբուլն ef ի պլբ-  
ուլն m բլբուլին b յեր def էր  
6 e ու զիմ fg որ զիմ g հօքիս  
defm կու զրես g կուքէրէս  
7 fg հասրէթ e հարսաթ e ի սրտիս  
efg որ լինամ g չիք որ e անշէջ  
կու վառի փիս որ լինիմ առ քեզ  
a առ քեզ երկու անգամ:  
8 d տեսանեմ m որ զքեզ արժան  
գտայ ու թէզ կորուսի  
9 d բլբուլն ef պլպուլն b ի վարդ  
edefg կասես a կասեմ b կայրեմ  
cm չիք 9—12-րդ տողերը  
10 d հոգուս g հօքուս հօքին ef հո-  
գոյս հոգի abe ումէկն d ումէտ

Ապա քարամ արա, ահլի նադար ես,  
Քանի սիասաթով հնձի խընջեր էնես:

Վարդն ի բլբուլն ասաց. Սիրտս կու այրի,  
Ունիմ շունչ ու հոգի ու շեմ կենդանի.

15 Կրակ կայ իմ սրտիս, անշէջ կու վառի,  
Որ զքեզ խիստ ուշ գտայ ու թէզ կորուսի:

Բլբուլն ի վարդն ասաց. Հոգիս կու քակի -  
Ու քաթանիւն ի քէն հնձ մահ կու թուի.

Քո շատ կարօտուդ սիրտս կու լափի,  
20 Որ թէ շաքար տան հնձ, զահր է ու լեզի:

Վարդն ի բլբուլն ասաց. Այս ինչ գունահ է,  
Զինչ դու հետ ինձ արիբ՝ կատարեալ մահ է.  
Հանցեղ հուրմ ու հրաման քեզ ո՞վ տվեալ է,  
Որ վարդն ի քո սիրոյդ զարի ու զար է:

11 ef չիք ապա ig քէրէմ արա քե-  
րէմ g արէ էհլի եծմ նատար  
e նիկար ես i մահ լինեմ գերիս  
փխ ահլի նադար ես  
12 e սիասաթով g սիասեղով ab  
ինձ d խընձեր այնես e խընձեր  
կտանես ig ինձ խեղճ էր կտանես  
13 em չիք 13—16-րդ տողերը: b բլբու-  
րուլ d բլբուլն ef պլպուլն e իմ  
սիրտն i իմ սրտս ef կայրի  
14 g հոքի  
15 a իմ e ի սրտիս e կու այրի  
16 abcd չիք խիստ ab յեթան (e ա-  
ծան g արծան) փխ ուշ d յուշ  
g քտա a և թէզ b և թէ ef ու  
շուտ  
17 ef չիք 17—20-րդ տողերը. դրանց  
փխ 69-78-րդ պիւլպիւլն g վար-  
դին g հոքիս c կու քակի S կու  
քաղուի (Այս աղբյուրում 17—  
20-րդ տողերը ընկած են 8-րդ տո-  
ղից հետո):

18 e քաթանիւն ab կու. թուի de կու  
թուի g կերեի փխ կու թուի  
19 acdg ի քո c կարօտուն dg կարօ-  
տուտ g կու լաբի  
20 eg շէքէր g կու տան c դառն է  
ու լեզի ab սապր ու g զէհր  
21 c ի պլպուլն (g չիք ի) ef պուլ-  
պուլն ի վարդն b ի բլբուլ abc թ  
այս ինչ d թ'այտ ինչ ef չիք այս  
g սա ինչ cg կիւնահ է m կունահ  
է i սիասեթ (e սիասաթ) փխ գու-  
նահ  
22 e չիք ինձ f որ-ինչ (չիք դու)  
m խես g ինձ արէր  
23 ab հնչեղ d հընչեղ c հնչեղուն  
g հանց հօքմ f հուրմն և ef տը-  
վեր է d տըվել է m տուել է  
24 c որ ի վարդն cd սիրտս g սե-  
րուն ef որ պիւլպուլն քո տե-  
տուտ m ձեռացդ փխ սիրոյդ  
ag զայրի եղեալ է b զարբեր եղ-  
եալ է

25 Բլբուլն ի վարդն ասաց. Դու զիս արիբ շար,  
Զար ու ֆիդան կանչեմ յալամս հաւասար.  
Իմ սիրտս հասրաթով հետ քեզ կու դողար,  
Դու ոչ մտրվաթ ունիս և ոչ զինահար:

Վարդն ի բլբուլն ասաց. Հաղար զինահար.  
30 Դու մի լինիր շուտով ի յիսնէ բէզար.  
Ահա ես քեզ ֆիդա, իմ թաճի սարվար,  
Քարամ արա, քարամ, է ահլի նադար:

Բլբուլն ի վարդն ասաց, թէ՛ Աննման ես,  
Զկարէ մարդ հողեղէն լեզուով գովել զքեզ.  
35 Քան զտապարդի շաքար քաղցր ու շիրին ես,  
Որպէս մուշկ ու ամբար անուշահոտ ես:

Վարդն ի բլբուլն ասաց. Իմ արեն դու ես,  
Որ ի բուրբ աշխարհս լուսով կու ծագես.

25 ef վարդն ի պլպուլն ab դու ա-  
րիբ դիս e չիք դու m դու արիբ  
ինձ շար dgi զիս էր արիբ զար  
26 abce զարի abc ֆիդան mg զար  
ու ֆրդան d ֆրդան e ալամս  
egf ալէմս  
27 g հասրեղով ab կու մտար cde կու  
դողար ի կու դողա  
28 e ուշ ab մըրաթ g մուրֆագ  
m մըրաթ ունես e գենէհար ig գե-  
նահար  
29 b ի բլբուլ c չիք 29—32-րդ տո-  
ղերը m բլբուլին ef պլպուլն ի  
վարդն efg զէնէհար  
30 defg մի լինիր դու իսնէ (g հի-  
նէն) e ի շուտով g շուտով մի  
defg պէզար  
31 abdeg զիս քեզ ab ֆդէ d ֆտէ  
ig ֆիտա e ֆէտէ m ֆրդն de սալ-  
վար g չիք իմ m թաճ ու զար  
ig դահ ու սէլվեր

32 fg քէրեմ արա (g արէ) քէրեմ  
d արայ ig այ էհլի m ահլէն ա-  
դար dg նատար ef նիկեար  
33 i պլպուլն b ի վարդ ce չիք  
33—36-րդ տողերը: g դու փխ թէ  
m անըման ես  
34 a չկայր b չկա g չիկարէմ փխ  
չկարէ dg հողածին dg լեզվով  
abg գովէ ab քեզ  
35 ig զարպազի g շէքէր abf շաքարն  
քաղցր և շիրին ես g քախցր  
36 d մուշք ու ամպար g ամպէր  
f 33—36-րդ տողերը ընկած են  
61—64-րդ տողերի տեղում և հա-  
կառակը:  
37 b ի բլբուլ c չիք 37—40-րդ տո-  
ղերը m բլբուլին ef ի պլպուլն  
abde չիք իմ g չիք իմ արես m թէ  
արեն dm դուն ես  
38 abg որ բուրբ em ալամս (g ա-  
լէմ) փխ աշխարհս f արե փխ լու-  
սով a քո ծագես dg ծագեալ ես

Ում որ քաղցր նայես և նադար առնես,  
40 Այլ հասրաթ չի մնա, Երբ տեսանէ դքեզ:

Բլբուլն ի վարդն ասաց. է՛ բոլոր լուսին,  
Չկա քեզ օրինակ շուհար մեծագին,  
Քո մէկ հայելիդ արժէ դքադաքն Մաշին,  
Չէ Չինումաշին մէկ հայելուդ գին:

45 Վարդն ի բլբուլն ասաց. Հանրաթով սրտին,  
Ինձ ալամս բոլոր չէ քո տեսուդ գին.  
Յայնժամ հասանէ վարդն իւր մուրադին,  
Երբ տեսանէ զբլբուլն ի մէջ տերևին:

Բլբուլն ի վարդն ասաց. Հոգիս քեզ ֆըդէ.  
50 Սիրով մէկ ծիծաղէ, որ արև ծագէ.  
Լատիֆ շրթանց շարժիլդ հանցեղ շիրին է,  
Որ թէ գհգիս ուզես, նայ սիրտս յօժար է:

Վարդն ի բլբուլն ասաց. Դու չես հողածին,  
Դու բահր ես ու նիգար, լատիֆ ու նարին.

39 abgm յով որ def ով փխ ում m  
քաղցրիկ ֆ հայիս eg նայիս d ու  
նատար այնես e ու նասար առ-  
նես (g սիրուտ էր անէս ֆ ունե-  
րովտ առնեն) փխ և նադար առնես  
40 g հասրէդ df չի մնալ m չի մնար  
em ով տեսնէ g տեսանեմ քեզ  
41 c պիւլպիւլն ef պլպուլն b ի վարդ  
g չիք ի ab բըզըի (d պայժատ  
m պըարի) փխ բոլոր լուսին  
42 c չկայ g նման փխ օրինակ a ջո-  
հար b ջօւար df ճոհար ce ճու-  
հար g ճօհէր  
43 b քո մեկ հայելիդ d հայելու e չիք  
մէկ ֆ հայելու cdef աժէ g կաժէ  
քաղաքն  
44 e ու փխ չէ ce ու չէ d նայ չէ  
ֆ գին չէ e Չինումաշին c քո նա-  
յելուտ d քո տեսուտ ef հայելուտ  
45 c չիք 45—48-րդ տողերը ef ի  
պիւլպիւլն g հասրադով. ձեռա-  
գիրն բնդնատվում է:

46 df ինձ աշխարհս փխ ալամս  
a տեսուդ def տեսուտ  
47 ef յայնժամըն d վարդն հասանէ  
def մուրատին  
48 ab բլբուլն ef պիւլպիւլն  
49 c պիւլպիւլն def պուլպուլն d ֆը-  
տէ c ֆիտէ e իմ հոգիս ֆետէ  
ֆ իմ հոգուս հոգին փխ հոգիս քեզ  
ֆըդէ  
50 bef մեկ սիրով ab ծիծաղեց m ծի-  
ծաղիր ab չիք որ  
51 ab լատիւ d շրթանցտ m շար-  
ժիլն cd շարժելն e շարժել d հըն-  
ցեղ ab ժիրին է  
52 cdef հոգիս dm չիք նա ef օժար է  
53 df 53—56-ի փխ 65—68 (m 69-  
72) c ի պիւլպուլն ֆ պլպուլն ի  
վարդն  
54 c պէհր ես ու նիկեար d դու ես  
բահրի նիկար e դու ես բահր  
և նիկար m բահրի նիտար ֆ դու  
ես պահր ու նիկեար ab լատիւ-  
c ու շիրին

55 է շահ սարւի ըռաւան, նազուք ու շիրին,  
Երակ կանաչ կենաս քան զնշդարենին:

Բլբուլն ի վարդն ասաց. Թ՛ Ի՞նչ ադաթ կա քեզ,  
Որ յանկարծ հայիս, զսիրտս կու խոցես,  
Հազար հետ ամանաթ ու երդում տամ քեզ,  
60 Ձոր ինչ հետ ինձ արիր, այլ մարդոյ շանես:

Վարդն ի բլբուլն ասաց. է լութֆ ու քարամ,  
Որ առանց քո տեսուդ իմ կեանքն է հարամ.  
Ձաղուտր ձայնդ լսեմ և ուրախանամ,  
Դառնայ ելած հոգիս և կենդանանամ:

65 Բլբուլն ի վարդն ասաց. Ես խիստ ուրախ եմ,  
Դու մանշուր յալամիս, ես քեզ խնայեմ.  
Յորժամ հեռանաս, նա զօրն ի մահ եմ,  
Որ թէ զիս մոռնաս, անկից կու վախեմ:

55 c է շարիւ սիաթ e սելվի բովանն  
d ըռօան ֆ է՛յ շահ սելվի բեվան  
gm սալվի աւան c նազու ու  
շիրին ֆ նազիք ու շիրին  
56 em թող դու երակ (m անփորձ)  
մնաս cdf կանանչ ֆ նշտարենին  
e ըզնշթարին  
57 ֆ վարդն ի պիւլպուլն c չիք 57-  
60 տողերը: dem ինչ de ատաթ  
ֆ ատաթ է քեզ  
58 e անկարծ m որ յանկարծակի.  
չիք հայիս ab ազահի (d նակա-  
հին) փխ հայիս ֆ քեզ հանկարծ  
հայեաց սիրտս bem սիրտս  
59 ֆ հազար հեղ ab երդումն ու ա-  
մանաթ սիրով կուտամ d դուտամ  
(ֆ կուտամ) փխ տամ d ամա-  
նաթ երդումն ֆ երթում  
60 ab որ գինչ def որ ab էրիր  
def մարդու a չէնես  
61 m 61—64-ի փխ 65—68 և հա-

կառակը ֆ պիւլպուլն ի վարդն  
b ի բլբուլ ֆ չիք ասաց. է լութ  
ու քէրէմ abde է լութ ու քա-  
րամ c չիք 61—64 տողերը  
62 d տեսուտ d կեանքս  
63 a աւաղ զծայնդ d աւախ զծայնդ  
երբ լսեմ e ավաղ ծայնդ երբ լսեմ,  
նա ուրախանամ ֆ այնժամ, երբ  
լսեմ ձայնդ, ուրախանամ b ամ-  
բողջ տողն բնկած է:  
64 m էլած ab Ձեռագիրն բնդնատ-  
վում է:  
65 d 65—68 տողերն բնկած են 72-ից  
հետո: ֆ վարդն ի պիւլպիւլն  
e պլպուլն ի վարդն d մաշուր ի  
յալամս ֆ խօսեցդ ուրախ եմ  
66 ֆ դուն մէնշուր ալէմես ես քեզ-  
նէ վախեմ e ալամե de ես քեզ  
ի նախեմ  
67 ef որժամ որ e ան զօրն  
68 ef որև փխ որ թէ cd ու թէ  
dm յանկից

Վարդն ի բլբուլն ասաց, Ի՞նչ սիսաթ է,  
 70 Որ ալամս բոլոր դէմ քեզ հասրաթ է,  
 Աշխարհս ամէն ի քո կրակն անկեալ է,  
 Շատոց սիրտ ես վառել, որ անցնելու չէ:

Նաղաշն ասաց, թէ՛ Վարդն խիստ աղեկ է,  
 Ապա կորստական և անցատր է,  
 75 Թէ՛ հանց որ միտք ունիս, և խելթդ ի-բաց է,  
 Դու զայն վարդն սիրէ, որ դեզ կենաց է:

Քանզի տէր աշխարհիս առուրք մի քաղցր է,  
 3 հետոյ բաժակ մահու և դժոխոց է,  
 2 ի մահ կայ և մեռանիլ, յետինն լաց է,  
 80 Եւ սարսափ դժոխոցն զիս խիստ կու մաշէ:

69 d 69—72 տողերն բնկած են 52-ից  
 հետո: f չիք 69—72-րդ տողերը:  
 e պլպուլն ի վարդն c ի պիւլ-  
 պիւլն c թ'ինչ սիսաթ է e սիս-  
 սաթ է  
 70 c որ ալամս d աշխարհս փխ ա-  
 լամս m քո դէմ  
 71 cm երկիրս ամէն d կրակո c քն-  
 կէր է  
 72 c սիրտ ես մլարեր m լափեր, որ  
 ասելոյ չէ c որ անցելու չէ  
 73 ab չիք 73—76 տողերը: c Նա-  
 խաշն m Նըղաշն f Նախաշն ի  
 վարդն ասաց f չիք վարդն d աղ-  
 վոր է g Միբերդն ասաց  
 74 m օրս կորստական d անցօր

2նդ աղաշեմ, ով որ բանիս հանդիպիք,  
 Եղանակէք սիրով ձայնիւ բերկրալի,  
 Յիշեք զիս և ասէք Աստուած ողորմի,  
 Եւ դուք արժան լինիք տեսոյն Քրիստոսի:

ԽՐԱՏԱԿԱՆ ԲԱՆԵՐՍ ԱԳԱՀՈՒԹԵԱՆ ԵՎ  
 ԱՆԸՆՉՈՒԹԵԱՆ Ի ՆԱԳԱՇ ՎԱՐԳԱՊԵՏԷ ԱՍՍՅԵԱԼ

Սողոմոն մայրն իմաստութեան առ մեզ խօսի բան խրատական,  
 Թ' որ յաւելու ի մեծութեան, նայ ցաւք անձինն բազմանան.  
 Լաւ է մի բուռն հանգստեան, քան յերկու բուռն աշխատութեան,  
 2 Ձոր առաքեալն վկայէ, թէ շափաւորն է բաւական:  
 5 Աշխարհս տուն է լի զանձով, փարթամութեամբ և ճոխութեամբ,  
 Այլ և սեղան է բարելի, որ ամենայն ոք ցանկանան:  
 Որք իմաստուն են հաւատով, զշափաւորն առնուն զնան,  
 Վայելեն ի հանգստեան և հասանեն ի յօթեան:

խորագրեր. abceiklpx Խրատական  
 բաներս ազանութեան և անընչու-  
 թեան ի Նախաշ (abp չիք ի x ի  
 Նաղաշ) վարդապետէ ասացեալ  
 (abip չիք ասացեալ) d Անխո-  
 րագիք grt Տաղ վասն ազանու-  
 թեան Նաղաշի (t Միկիտի) ասա-  
 ցեալ է (g չիք ասացեալ է  
 t չիք է) h Տաղ ասացեալ վերայ  
 ազանութեան mn Տաղ վասն  
 ազանութեան Նաղաշի ասացեալ  
 է (n չիք է) o Ի տէր Նաղաշէ  
 յազապս ազանութեան ասացեալ  
 վասն անձին իւրոյ և ամենայն  
 հասակի s Տաղ պիտանի ի Մա-  
 նուճ եպիսկոպոսէ ի Նաղաշ y Տաղ  
 ազանութեան Նախաշ վարդապե-  
 տէ fU Տէր Մկրտիչ Նաղաշի  
 ասացեալ վասն ազանութեան  
 (f հպարտութեան փխ ազանու-  
 թեան)

2 dfoU թէ որ d ավելի է foU յա-  
 վելէ n աւելու fU մեծութիւն  
 ak անցինն fU յաւելանան  
 3 g լաւ թէ h լաւ ի բուռն fU հան-  
 գստեամբ hm ի հանգստեան  
 dfU զերկու h բուռն fU աշխա-  
 տութեամբ m յաշխատութեան  
 4 h առաքեալ n առաքեալք fU հը-  
 բամայէ h թէ կարեոր բաւական  
 abdfgmnoprU կարեորն է փխ  
 շափաւորն է  
 5 p փարթամութեան n ճոխութեան  
 ipU և մեծութեան (defrU մեծու-  
 թեամբ) փխ ճոխութեամբ  
 6 fU բարելից h և փխ որ i յամե-  
 նայն  
 7 cilx իմաստունն են fhU իմաս-  
 տունք են f նայ զկարեորն (U  
 նա զհարկաւորն) փխ զշափա-  
 ւորն do առնեն  
 8 abkp որ վայելեն d վայելեին  
 h վայելեն, հանդիստ մնան և հա-  
 սանեն արքայութեան n հանդըս-  
 տականի

1 s չիք 1—10 տողերը: y Սողոմ-  
 մոն. noU մայր h այր dfipr  
 խօսի c բանց

- Եւ որք անմիտ են, շարափառ ազահութեամբն կուրանան,  
 10 Գիրկ ածեն անցաւորիս և ի յալեաց մէջն ծփան:  
 Ի սկզբանէ մինչ ի վախճան ամէն շարիք որ գործեցան,  
 Ազահութիւն եղև պատճառ, որ ի բարեացն զրկեցան.  
 Հայեաց և տես զնախնին Ադամ, որ ի դրախտին յադինական,  
 Աստուածային կեպարանօք պայծառանայր յարև նման,  
 15 Ազահութիւն եղև պատճառ, որ ցանկացաւ աստուածութեան,  
 Վասն այն վանց զպատուիրան և մերկացաւ զպատմուճան:  
 Տես զԿայէն եղբայրասպան, թէ զինչ գործեաց, որ չէր արժան,  
 Նախանձեցաւ ազահութեամբ և սիրասնունդ եղբայրն եսպան,  
 Վասն այն զանէժքն ժառանգեաց, զոր և Ղամէք հարեալ եսպան  
 20 Զեւթն պատիժն որ նա կրեաց, ամէնն վասն ազահութեան:

- 9 bcddegiklmnprtxy եւ որ անմիտն է հ որք անմիտն են itԱ շարափառ և շարափար ը շարափարն ր ազահութեանըն fԱ կուրացան  
 10 abp ի գիրկ ածեն և անցաւորին c ի ալեաց n այլեաց  
 11 s Ակսվում է 11 տողից, ձեռագրի առաջին էջը պակաս է: և ի վաղջան cdfgmnorst վաղճան fսu զինչ փխ ամէն abdeghnopry վնաս փխ շարիք  
 12 fmԱ ազահութիւնն fԱ ի փառացըն s հեռացան փխ զրկեցան  
 13 fԱ նաեաց hno նայեաց և նախնին n յԱդամ և որ դրախտին էր nps ի դրախտէն abcdgkorp ադինական fԱ ադենական hr յադենական s եղեմական c Ձեռագիրն րնդհատվում է էջերը քափված լինելու պատճառով:  
 14 և պայծառանար s պայծառացեալ dhifsxԱ արևմտան  
 15 fԱ Տողերն ազավաղված են հետեյալ կերպ.  
 կուրացաւ ազահութեամբ և ցանկացաւ աստուածութեանն, որ թագաւոր էր և իշխան, նայ անասնոց եղև նման.

- ի դրախտէն ի դուրս անկալ և սատանի եղև կոխան:  
 g ազահութիւնն s ազահութիւնն եղև պատճառ, աստուածութեանըն ցանկացան, և ի դրախտէն արտաքսեցան, ամէնն վասն ազահութեան  
 16 ab ըզպատուիրան e վասն այն է մարդ ըզպատուիրան... (րերի է) dgmor ըզպատուիրանն dhkmrx ըզպատմուճանն  
 17 bdegilmorst յեղբայրասպանն fkԱ զեղբայրասպան և եղբայրըսպանն Ա գործեց d որ չէ և ազահութեան փխ որ չէր արժան  
 18 abdefgilmprxy զսիրասնունդ k զսիրասնունդն dh չիք և սիրոյ սնունդ s սիրասնունդ զեղբայրն եսպան, ամէնն վասն ազահութեան afnoԱ էսպան hiklx ըսպան  
 19 g զանեծան y զանեծն fhԱ ժառանկեց anr ժառանգեցաւ fԱ մինչ որ Ղամէք և յետոյ փխ գորև hn Ղամէք արքայն foԱ էսպան hekx ըսպան s չիք 19—20 տողերը:  
 20 d է պատիժ e գեալթն foԱ եւթըն gk զեթն h եաւթն gimr չիք նա hm որ նայ dkԱ կրեց

- Որպէս յաւուրս ջրհեղեղին ազահութեամբ պոռնկեցան,  
 Զրհեղեղաւ կործանեցան, ամէնն վասն ազահութեան:  
 Հայեաց և տես զԿորիս և զԴադան, որ Մովսիսի ներհակ եղան  
 Անդնդասոյզ կործանեցան, ամէնն վասն ազահութեան:  
 25 Նայեաց և տես զԱքար Զարահան, որ ի յաւուրս Յեսու նաւեան,  
 Որ էր իշխան, երևելի և շէր կարօտ նա մեծութեան.  
 Գողացաւ նա ի յանիծիցն Երիբովի, որ չէր արժան,  
 Նայ տուն որդովք քարկոծեցան, ամէնն վասն ազահութեան.  
 Հայեաց և տես զՍաւուղ Կիսեայն, որ յաստուծոյ էառ հրաման՝  
 30 Խնդրել զվրէժ ժողովրդեան և սպանանել զԱզակ արքայն:  
 Ազահութեամբ նա կուրացաւ և մոռացաւ զտեսան հրաման,  
 Վասն այն կորոյս զմեծութիւն և շար դիւացն եղև դարան:  
 Գէեզի էր աշակերտն, Եղիսէի խիստ սիրական,  
 Կուրացաւ ազահութեամբ և անիծից եղև արժան:

- 21 միայն s ունի 21—24 տողերը  
 23 s Մովսէսի  
 25 e նաեաց fgmnrpsԱ հայեաց f զԱքայ Զարմէան e Զարեան, gh Աքա Զարմեան n զԱքաք Զարմեան ր զԱքար Զամեայն e ի յաւուր fԱ որ ի յաւուրսն էր յեսուեան mn որ ի յաւուրս o Յեսու s Յեսուայ  
 26 ebkp որ էր. մյուս ձեռագրերում՝ չիք որ n էր նայ abkp և երևելի d կորուս նորա մեծութեան s 26—28 տողերի փխ ունի՝ Հայեաց և տես զՍաւուղ կիսեան, որ և չեսպան զԱզակ արքայն, զոր Սամուէլ զպատուհասեաց ամէնն վասն ազահութեան  
 27 d նորա անիծիցն eiknx նայ անիծիցն fԱ նա անիծից gmry չիք նա և Գողացաւ ինչք Երիբովին ի յանիծից եղև արժան ր և զողացաւ fԱ Յերիբովէ, որ չէր հրաման ko չիք ի սաղավաղված. կուրացաւ ազահութեամբ և մոռացաւ զտեսան հրաման, և տամբ որդովք կործանեցան ամէնն վասն ազահութեան

- 28 abgimop նա տուն d նորա տունս do տան որդովքն fԱ չիք նայ fԱ բորոտեցաւ lo քարկոծեցաւ  
 29 dho նայեաց aghkmors զՍաւուղ Կիսեան dh Սաւուղ Կիսեան m զՍաւուղ Կիսեայն. մյուս աղբյուրներում՝ զՍաւուղ Կիսայն hn որ աստուծոյ foԱ չիք 29—32 տողերը  
 30 և վրէժ do և սպան r սպաննել hn և ըսպանել e Զուգայկ. d զԱքար g Ազակ kimp զԱզակ r զՍաւուղ  
 31 d ազայութեամբ նորա կուրացաւ hn նայ կուրացաւ cdhx տեսան  
 32 s չիք 31—33 տողերը: d կորուս և կորուց d զմեծութեան gn զմեծութիւնն և զիւրաց  
 33 d Գէեզի էր ix Գեեզի և շեզի էր l Գէեզի fn Գէիզի dfighikimnoxԱ աշակերտ և Եղիսէի խիստ իմաստուն և սիրական  
 34 aep որ կուրացաւ և նայ կուրացաւ n կուրացաւ hn ազահութեան bdeik անիծիցն և անիցիցն x և անէժքին եղայ k եղև դարան fԱ չիք տողը:

- 35 *հաբեաց, պատրեաց զնէեման, զարծաթն առեալ ի թագստեան, նա անիծիւք բորոտեցաւ, ամէնն վասն ազահութեան: Այլև Յուդայ Սկարիովտացին որդի եղև նա կորստեան, Զիւր վարդապետն ի մահ մատնեաց, յորմէ երկինք 'ւ երկիր զողան:*
- Ազահութեան ախտն է դաժան, որ զաշակերտն արար գտգան,
- 40 *Զիւր վարդապետն ի խաչ եհան, ամէնն վասն ազահութեան: Նայեաց և տես այժմ ի նորոյս զԱնանիան և զՍափիրայն, Ոչ թէ յայլոցն գողացան, այլ ի իւրեանց ազահեցան, նայ աստուծոյ պատիժ կրեցին և երկոքին իսկոյն մեռան, Եղեն առակ նշաւակի, ամէնն վասն ազահութեան:*
- 45 *Ազահն չէ աստուածապաշտ, ըստ Պօղոսի վկայութեան, Ազահն զնոյն աստուած պաշտէ, որոյ ծառայ է յարաժամ: Ազահն դայլ է, պատառող և ծարաւի արեան մարդկան, հլէ, զրկէ, յափշտակէ, ոչ յազենայ արեամբ մարդկան. Թէպէտ հարուստ է և փարթամ և տէր ընչից և մեծութեան,*

- 35 do խարեայ defn պարտեաց հ զնայիման kln ըջնէեման fՍ զնէէման d չիք ի զթագստեան
- 36 d անեծօք hdn նայ անեծաւք օ նայ անիծիքք pr բորոտեցան n բորոտեցաւ փխ բորոտեցաւ
- 37 fՍ տես Յուդայի hx Ուդայ s Յուդա d Սկարիովտացի bdr Սկարովտացի efhiklmoxyl Սկարովտացին s Իսկարովտացին n Իսկարովտացի dgisԱ եղև որդի d նորա կորստեան fhնԱ նայ կորստեան
- 38 s Զիւր վարդապետն նա մատնեաց, ամէնն վասն ազահութեան հ մատնեց n որմէ dehiklpr և երկիր e զողաց
- 40 s չիք 39—40 տողերը n զիւրն fhԱ զվարդապետն հ աշակերտն fhԱ էհան
- 41 dghno հայեաց d չիք ի hs Անանիայ p գանուեն ի այն b և ի Սափիրան eik և զՍափիրան gm և զՍափիրան s Ջափիրա r զՍոփիրան x Սափիրայն fՍ չիք 41—44 տողերը:

- 42 s տողի փխ ունի՝ էեւ երկոքին իսկոյն մեռան, ամէնն վասն ազահութեան d այլոց ինչ հ զայլոցն n այլոցն օ յայլոցն ինչ e գողանան օ այլև aeimnpy իւրեանցըն bklr յիւրեանցն x յիւրեանց begpry էրկոքինն հ այլ ծածկելով պատուհասեցան փխ այլ ի իւրեանց ազահեցան
- 43 g յաստուծոյ x կրեաց s չիք 43—58 տողերը x երկողին
- 44 n եղան օ չիք եղեն
- 45 ae ըստ Պաւղոսի ազահութեան ehiknp Պողոսի
- 46 fՍ Ազահն զփորն աստուած պաշտէ հ նոյն ehr որ hn նայ յարժամ abelp արժամ d gikmr նա յարժամ
- 47 mn ազահն է զայլ dgrԱ պատառող dfoԱ արեան դազան փխ արեամբ մարդկան
- 48 eknr և փաշտակէ hm և յափշտակէ fՍ և ոչ յազենալ fikxԱ արեան
- 49 fՍ թէ խիստ փխ թէպէտ n փարթան հ և տէր ընչից է օ չիք և ի մեծութեան

- 50 *Բնութեամբն ազահն է և անյագ, ջանայ զրկել զամենեսեան: Զի ոչ գիտէ, ում ժողովէ, զերդ զանասուն կայ ի դատման, Մոռացեալ է զօր մահուան և ոչ յիշէ նա զդատաստան: Որք կովին և վշտանան, որք նախանձին և գողանան, Եւ որք խորհին շարիս մարդկան, ամէնն վասն ազահութեան.*
- 55 *Որք հարկանեն և գողանան, սուտ երդնուն և ուրանան, Բազումբ ի հաւատոցն ելան, ամէնն վասն ազահութեան: Տեսայ զոմանս ի նեղ զնտան, այլև բազումս ի կախաղան, Զոմանս, որ զլխովին կորեան, ամէնն վասն ազահութեան: Զինչ թագաւորք և մեծ իշխան, որ հեծելով յիրար կռուան,*
- 60 *Զինչ որ արին յերկիր հեղան, ամէնն վասն ազահութեան. Զինչ որ քաղաք տապալեցան և ժողովուրդք որ գերեցան, Զինչ որ աւերք առ և թախտան, ամէնն վասն ազահութեան. Հարք ի յորդոց բաժանեցան, բուն սիրելիքն քակտեցան, Բազումբ եղեն եղբայրասպան, ամէնն վասն ազահութեան:*

- 50 dgho բնութեամբ fՍ մտօքն սին է և ծակաչք փխ բնութեամբն ազահն է և անյագ n անյայգ d յանյայգ հ և անակ հ ջանալ g ջանայ x ջանան հ զրկէ
- 51 defghiklmnoprxyԱ չիք զի hn թ' ում d գերթ eiklx գէտ ilx ի դարման
- 52 bkp զի մոռացեալ է n նայ դաւր dehkixpy մահուեն fՍ և ոչ գիտէ նայ d և ոչ ak գնա հ զիւր փխ նա afԱ դատաստան
- 53 h եւ որք որ abpk եւ որք r կովին kl կուտին do և շարանան հ նախանձին dr նախանձեն fՍ 53—66 տողերի փախարեն՝ Ոմանք զաղաւթս ոչ կամենան, քարոզ լսեն և մեման, Պատարագէն փախչին գնան, ամէնն վասն ազահութեան:
- 54 kr խոհեն e խորին
- 55 h որք հարկանեն-սպանանեն և հարդանեն
- 56 do հաւատոց
- 57 bdehiklmnorxy և այլ ei բազում

- d ի կաղախան օ ի կախախան r ի խաղաղական
- 58 h ոմանք որ զլորեալ կորեան ln կորան d գոման զլխովին
- 59 h ինչ s թագաւորք կայր և s չիք մեծ իշխանք k որք dos զիւրար ikx անկան (p կտտան, s կուտան) փխ յիրար կուտան
- 60 d արին abeknopry յարին x արինն dhns երկիր
- 61 s չիք 61—62 տողերը d զինչ քաղաք որ հ ինչ որ քաղաք աւեր զարձան և ժողովուրդն eklx ժողովուրդք իւր di ժողովուրդ d չիք որ
- 62 do չիք որ. թաղթան g ախտան հ մայրք ի յորդոց բաժանեցան փխ զինչ որ աւերք p առ և թախան
- 63 h մայրք hikmnrxy հայրք dl հայր օ և յորդոց s շատոք ի յորդոց en ի որդոց
- 64 h եղան s եղէն ho եղբայրըսպան

- 65 Կաթողիկոսքն շատացան անօրինացն բռնութեան,  
Եպիսկոպոս օրհնեն անբան, ամէնն վասն ազահութեան.  
Վարդապետքն որ նոր ելան, բանին եղեն վաճառական  
Եւ քարոզեն զհաճոյս մարդկան, ամէնն վասն ազահութեան:  
Եպիսկոպոսք զկանոնն անցան, որ պոռնկաց տան հրաման,  
70 Կաշառ առնուն կարմիր դեկան, ամէնն վասն ազահութեան:  
Հաբեղանին զվանքն ուրացան, բնաւ զսաղմոսն մոռացան,  
Դունէ ի դուռ ի շուրջ կուզան, ամէնն վասն ազահութեան:  
Երիցանին յիրար կուտան, բիր վերուցին և զաւազան,  
Փետեն մորուք, կտորեն բերան, ամէնն վասն ազահութեան:  
75 Գերի նազա՛շ ողորմելի, ի քեզ նայեաց դու յարածամ,

65 միայն s ունի 65—66 տողերը:

67 d 67—68 տողերի փխ 73—74 և  
հակառակը: abkp վարդապետերս  
g այս վարդապետքս dhilmnorst  
վարդապետք Բ շատ վարդապետք  
I նոր որ ելան do եղան s 67—68  
տողերը 69—70 փխ և հակառակը:  
68 defghiklmnorxyՍ չիք եւ. d քա-  
րոզին և տողի փխ ունի՝ Քարո-  
զեն հաճոյս մարդկան, երես տես-  
նեն այն մեծ ատամացն զվասն  
արծաթւոյ կորըստական փխ ա-  
մէնն վասն ազահութեան

69 d կանոնն hs կանոնք ikx զկա-  
նոնքն k և պոռնկաց

70 o կաշառք s առնեն և կաշառք  
կանոնն կարմիր դեկան և պոռ-  
նիկաց տաստուր կուտան: Հայրա-  
պետացն մոռացան, ամէնն վա-  
սըն ազահութեան d զանեկան  
d տան մէկ մէկի ազչիկ աղա  
փխ ամէնն վասն ազահութեան  
d Շարունակուրյաց փոխարեն ու-  
նի հետևյալ տողերը:

Կաթն և արին խառնին յիրար.  
յորժամ առնուն և քննին.

Եւ մէկ մէկի ազգ դուս գան, մէկ  
պարտին ժ դուռչիկն առնոյ, տայ  
հրաման. և Բ պորտն քսանական,  
թէ Գ լինի Գ. ժ ահան. այսպէս  
կորուս եպիսկոպոսն Եւրոկիայն  
տէր Մարգարէ անուն կոչի նսը-

տեալ կա ի սուրբ Աննանաի  
թօխաթցոց աթոռակալ. ունի  
տնտես, որպէս թուրքի քէհպին  
կտրեաց զայտուն դրանն:

71 dfgpr հաբեղանիքս kix սաղմոսն  
s 71—72 տողերի փխ ունի՝

Արեղանիք զվանքն ուրացան՝ և ի  
գեղորայքն ի շուրջ կուզան,  
Սաղմոս ասելն մոռացան,

ամէնն վասն ազահութեան

72 h չիք 72—73 տողերը: deiknrx  
դունէ դուռ dekrտ չիք ի. շուրջ  
կուզան

73 bekopx երիցաներն և իրիցանին  
i երիցաներն ako իրար d գիրարի m  
որՍ կովին s չիք 73—74 տողերը:

74 gmo փետտեն և փետտեն [մոր]ուք  
r փեթտեն abkp մորուս d տողի  
փխ ունի՝ Փետին մորուքն իր-  
կայն երկայն, կտորեն բերան, թա-  
փեն զակուան և ծիւրուրուն ինչ ճու-  
հապ աի տան (Այս նախադասու-  
րյունը տողի մեջ ավելացրել է  
գրիչը):

75 h դուն յարածամ ի քեզ նայե  
և նայեայ g հայեց m նայեց  
oՍ հայեաց յարածամ Բ տողից  
անմիջապես հետո ունի՝  
Անիծանին և քրթմնջան, և  
բարկանան և ուրանան,  
կոծ ու ազազակն վերանայ,  
ամէնն վասն ազահութեան:

Ձինչ որ այլոց քարոզեցիր, ամէնն քեզ կայ ի լման:  
Մի համարիք զազգս մարդկան քան զքեզ եղաւ ամբարտաւան,  
Ձինչ որ յաշխարհս կայ մեծութիւն, զամէնն քեզ կամիս  
միայն:

Վարդապետ կերպարանիս, եպիսկոպոս գերաստիճան,  
80 Ունիս շնորհս զանազան, նա դեռ դու չես այդոր հաւան:  
Աղուոր զմիտքդ ժողովէ, որ այդկից այլ չելնես ունայն,  
նաւդ ի բեռաց թեթևացոյ, որ հասանիս ի յօթեան:

76 r յայլոց aegr ի քեզ hilrs ամէն  
քեզ (s ի քեզ) կայ ի լման ekx կայ  
քեզ ի նման փխ քեզ կայ ի լման

77 h մի համարի ազգիս մարդկան,  
քան զիս չկայ անբարտաւան  
im ազգս n քան զքեզ եղուկ  
s եղեալ npr անբարտաւան

78 h զինչ աշխարհս giklnpr աշխար-  
հքս sՍ չիք կայ sՍ մնան k կա-  
միս քեզի

79 g դու վարդապետ ԲՍ ու եպիս-  
կոպոս և ատիճան ունիս փխ  
դերաստիճան oy և եպիսկոպոս  
p Տողն աղավաղված է. Վարդա-  
պետ կերպարանիս զշնորհս զա-  
նազան, նա դեռ դու չես այտոր  
յաւան s Տողն աղավաղված է.  
Եպիսկոպոս դերաստիճան ունիս  
զշնորհս զանազան:

Դես այտով չես կենար հաւան,  
ամէնն վասն ազահութեան:

80 p զշնորհքս և շնորհս զանազան  
դու ունես, դեռ չես կենար դու  
այտոր հաւան յայ գեռ չես դուն  
abeklmnx այտոր g այտոր r յա-  
ւան ԲՍ չիք 80-րդ տողը:

81 s Տողի փխ ունի՝ Ազէկ ժողովէ  
զմիտքդ ի վերայ, որ այտի չել-  
նես ունայն և զմիտքս g զմիտ-  
քս ae այտիկից ԲՍ ի յայտիկից  
չելնուս ունայն n չիք որ moxx  
յայտից gլ յայտիկից hik այտից  
h չելնես դու յունան n դու չելնես  
ikn յունայն

82 p զնավդ mno զնաւդ s նաւ ի  
բեռինդ թեթևացոյ և նաւքն hikm  
չիք ի belp ի բեռանց n բեռանց  
giklmnopx հասանես ԲՍ հասնիս  
hx ի յաթեանս

ԽՐԱՏ ԽՌՈՎ ԶԿԵՆԱԼՈՒ ԵՒ ՈՒՅ ԶՊԱՀԵԼՈՒ

H լուծֆ ու pE քէրամ gs քէրէմ

80 aelapsԿ զղարիպութիւնն c զխա-  
րիպութիւն ց զինչ զուռ H զերդ  
զուռ s զետ գուռ ik 81-84-րդ տո-  
ղերը չիք: brAS ձեռագրերն քնդ-  
ատուում են:

81 aev Նախաշն c զարիպի ik 81-84  
տողերը չիք. 81-84 ունեն միայն  
acegmVHFԿ

82 v տողի փխ ունի՝ Քաղցրըն լեղի  
թուի նմայ զինչ վարդի փուշ  
F քաղցրը cev թուի H թվի e զինչ  
վարդի փուշ m նորան vFHԿ  
զինչ FHԿ վարդն

83 a զինհար H զինհար ց զենէ-  
հար ev զենհար FԿ զինհար eH  
զրուցէ անոյշ

84 ց չիք տողը: mԿ տա cm և քակէ  
փխ քակէ ev ու քակէ e զմեղա-  
ցտ v զմեղացը Կ զմեղաց H մե-  
ղացն

85 Ամենօրհնեալ կոյս Մարիամ Աստուածածին  
 Զինահար դու օգնական լեր դարիպին.  
 Զամէն դարիպ բարով հաստ իւր մուրատին,  
 Եւ քեզ ամէնքս երկրպագեմք, Աստուածածին:

85 s մայր աստուծոյ 85-88 ունեն  
 միայն aceghiklmnqstuHLTR  
 86 akpu գինեհար evxT գենեհար  
 gquL գէնեհար il զինեհար H գէ-  
 նեհար mR տողի փխ ունի՝ Զինա-  
 հարմեր ննջեցեալսն ի քեզ յանձին  
 t դուն s տողի փխ ունի՝ Երկրպա-  
 գեմք քեզ և որդոյ և սուրբ հոգոյ  
 87 ku ամէն acghIT հասու x հա-  
 սուր H հասնու u հասնի s իւր  
 տունն դու kmR մուրաղին 1 մու-  
 րատին  
 88 T չիք քեզ H երկիրպագէն kt տա-

հար բանին (s տաճար լուսոյ)  
 փխ Աստուածածին m Աստուա-  
 ծածնին g վերջում ձեռագիրն  
 ունի հավանաբար գրչի հետևյալ  
 քառատող հիշատակարանը.  
 Զնաղաշն յիշեմք ողորմութեան  
 մինչ զի բարին,  
 Քաղցր ձայնիւ եղանակենք մենք  
 զողորմին.  
 Քրիստոս յիշէ զտէր Մկրտիչն  
 յայնմ ատենին,  
 Եւ բարեխօս լինի նմայ  
 Աստուածածին:

ՏԱԳ ՎԱՍՆ ՂԱՐԻՐԻ ԿԵՆԱՅ ԵՎ ՄԱՀՈՒ ԱՍՍՅԵԱԼ  
 ՏԵՍՈՒՆ ՆԵՐՍԵՍ\* ՎԱՐԴԱՊԵՏԻ

Ղարիբն յորժամ արար խորհուրդ գնալոյ,  
 Տրամեցաւ դառնագին վասն ելանելոյ,  
 5 Տանէն ելաւ լալով հառաչմամբ ողբոյ,  
 Բաժանեցաւ յազգաց և ի սիրելոյ:

Ասաց. «Բարով կացէք, ծնօ՛ղք, հա՛յր և մա՛յր  
 Եւ պատուական եղբարք անցաւոր վըթար,  
 Իմ ցանկալի որդիք և փոքրեր ի շար,  
 10 Սիրելիք, բարեկամք ամէնքդ հաւասար»:

Ելաւ, գնաց հասաւ յերկիր հեռաստան,  
 Ոչ ճանաչէր զնայ, ոչ գայր ազգական,  
 Շրջէր տխուր դիմօք ի դրունս և ՚ի տան,  
 Խնդրէր, ոչ գտնէր տեղի հանդստեան:

15 Յորեկն ՚ի բուն մարմնով տանջէր վշտակին,  
 Գիշերն, երբ հասանէր, շունէր յանկողին,  
 Հրեշտակն էր պահապան օտար զարիբին,  
 Շնորհօք հոգոյն սրբոյ հօվանի նորին:

20 Զինչ որ յօտար երկիր բարի տեսանէ,  
 Թէ փառք և թէ պատիւ, գիտէ, երազէ,  
 Եթէ ուտէ, ըմբէ, լեղի և դառն է,  
 Որ տիւրն միշտ ողբայ և հոգոց հանէ:

\* Տե՛ս տաղի ծանոթագրութիւնը, էջ 232:

Եթէ յանկարծ լինի ի մէնջ հանդիսի  
Եւ կամ ի հարսանիս և ի մեծ հարկի,  
25 Ամէն մարդ ընկեր են իւր յուժ մեծարի,  
Ղարիբն ի ումեքէ ոչ մհիթարի:

Եւ թէ սոքայ ամէն, որ մարդկան լաւ է,  
Ղարիբն զամենայն վատթար համարէ,  
Ապայ այն որ ամէն մարդկան դիժար է,  
30 Որքան խիստ ավելի ղարիբըն տանջէ:

Ղարիբըն նախատի ի մէնջ մարդկանէ,  
Հարեալ զետ զթռչուն օտար երամէ,  
Այլ և քաղցըն և ծարան զմարմինըն մաշէ,  
Չունի յարև, հանգիստ, եղուկ ու վայ է:

35 Ղարիբն զհայրենին յորժամ միտ ածէ,  
Զսէրն ազգականացն և զգոյթն յիշէ,  
Այլև բարեկամաց զաղեկն պատմէ,  
Աղիքն զալարի և աչքն արտաստէ:

Եւ կամ յորժամ ղարիբն, որ հիւանդ լինի,  
40 Չունի դեղ և մահիջ, որ հեշտակ պառկի,  
Այլև ոչ անկողին և ոչ բարձ գլխի,  
Անկանելով երկիր զերեսն ՚ի հողի:

Այլև քան զամենայն խիստ դառն և լեղի,  
Յորժամ որ ղարիբին մահըն հասանի,  
45 Խնդրէ, ոչ գտանէ եղբայր կամ որդի,  
Դառնայ յուսայ ի տէր աստուածն ամենի:

Ղարիբ, թէպէտ այսչափ քոյ կեանքըդ  
դառն է,  
Բայց դու խիստ մի հոգար, աստուած զթած է,  
Նայ վասն քոյ հոգոյդ յուժ ողորմած է,  
50 Այլև ի մահ զքեզ նախախնամող է:

Յուսայ մեղաւոր ես, քեզ մեղաց քավէ  
Եւ թէ արդարև սուրբ փառօք զարդարէ,  
Բարով ի հայրենիքըդ հասուցանէ,  
Որպէս մեծն Յակոբ, զոր Մօվսէս պատմէ:

55 Երգօղբ տաղիս յայմիկ, եղբայրք  
քաղցրածայն,  
Այլև աստուածատէրք լսօղբ միաբան,  
Յուսով ի ձէնջ հայցեմ վասն զիս յիշման,  
Պանդըբրամաշ Մկրտիչս ձերում ծառայն:

Ի թրականիս հայոց, որ հազար ամի,  
60 Երկու հարիւր իսուն և եօթն ևս յարաբարթի.  
՚Ի սերտեմբեր ամսոյն կսան և հնգի,  
Սակաւ բանըս զրեցաւ ի Մկրտըչի:

Ի ժամ պանդխտութեան Բայեաղեդ երկրի  
Տէրն առաջնորդէ նաւահանգստի:

Ամէն վերջ.

[ Ի յայգոյն անմահութեան իդեմայ  
Ճաշակեցին դասք առաքելոց բաժակ  
կենաց քոց, տէ՛ր, և մեզ արբուցին... » ]

Զեռ. № 1990, էջ 52 ր  
(Տաղարան)

ՈՂՐ Ի ՎԵՐԱՅ ՆՆՋԵՑԵԼՈՑ, ՈՐ Ի ԱԻՏԱՐՈՒԹԻՒՆ ՄԵՌԱՆԻ

Ինձ ումէտ կայր ու կուման վանց քո գալուդ,  
Ակն ունէր սիրտս ու մնար քո սուրբ տեսուդ,  
Նա բերին թուղթ մի գրած յանկարծ մահու,  
Թէ՛ առ, կարդա՛յ, եղբա՛ր, ու տես, որ չեմ  
գալու:

5 Այս յետին գիրս ու խապարս, որ չեմ գալու,  
Ոչ ունիմ ձեռք և մատունք գիր գրելու,  
Թէ ունիս, դու ճար արա՛, հասի՛ր հոգոյս,  
Մահն եկեր, զիս կու տանի յաշխարհ հեռու:

կորագրեր. an Անխորագիր b Ողբ  
ի վերայ ննջեցելոց զարիպի, սր  
աւտարութիւն մեռանի c Ողբ  
աւտար երկիր մեռածի ասայ d  
Ողբ մեռելի ասացեալ e Ողբ որ  
օտար աշխարհ մեռանի f Այլ ողբ  
վասն մեռելի g Ողբ և տաղ վասն  
կարօտով ննջեցելոց և զարիպի  
h Ողբս Բ եղբարցն է. մինն գնաց  
աւտար երկիր Կիւանդացու և ոչ  
տեսին զմիմեանս և ասաց ողբս և  
հանգեաւ ի տէր i Տաղ և ողբ  
վասն զերեզմանի k Ողբ զարիպ  
և օտար քաղաք մեռանողի հայ [բ]  
և եղբայրէ զայս ասէն l Տաղ  
վասն զարիպ ունեցօղի հայր կամ  
մայր կամ եղբայր m Ողբ Բ բերա-  
նոյ զարիպ և կարօտ մեռելի o Ողբ  
աւտար երկիր մեռանողի p Տաղ  
ննջեցելոց

1 a կուման dn գուման g և կումէն  
h և կումէն i և գումանք m կիւ-

ման o և կուման g ի քո ողբ  
գալուտ  
2 bcdfghlmnop մնայր adfhin խըն-  
դալուտ b իւր խնդալուտն m խըն-  
դալու ekl տեսողդ go տեսուտ  
3 adfhin՝ լուկ բերին<sup>2</sup> b յանկարծ  
բերին գիր մի ano թուխտ ilp  
թուխտ մին benp սեած (i սե-  
ւաւք) փխ գրած o չիք յանկարծ  
aegh մի ալին e ինձ իւր մահուն  
p մահուդ  
4 ai և լաց փխ ու տես bc և տես  
5 bgim ետին b զիրն ու խապարն  
o թուխթս i և խաբարս i գալոյ  
6 bfp գրելոյ  
7 mn թէ կարես bfh ճար դու. i ճար  
դուն o հոգոյ ekl հոգու. h հո-  
գուս p հոգւոյս  
8 bhn 8-րդ տողից հետո 17-20 տո-  
ղբեր: i մահ cglo եկեալ g տանի  
bgh երկիր փխ յաշխարհ m ի  
յաշխարհ

Այ հոգի, պահ մի յամէ, մարդ կա դալու,  
10 Զինահար տամ քեզ հրեշտակ վասն աստուծոյ,  
Ինձ համբեր տուր և դադար մէկ գիրչերոյ,  
Ինձ եղբայր կա, միթէ գայ, խիստ է հեռու:

Այ հոգի՛, քէ՛ր ես խոռվեր կամ վասն որո՞յ,  
Մի՛թէ հասաւ յականջս քո ձայնն իմ լալոյ,  
15 Որ ընում դաշս ու թափեմ նման գետոյ,  
Շատ զանգատ կա իմ սրտիս քեզ ասելոյ:

Սար ու ձոր, ծով ու ցամաք, դարձ ի լալոյ,  
Ողբային մարդ՝ ւ անասուն՝ ւ ամէն լեզու,  
Խիստ կարօտ եմ, ինձ հասիր վասն աստուծոյ,  
20 Հոգևար կամ և մնամ եղբոր տեսոյ:

9 b պահ մի կացիր g յամեաց (df  
m լուէ n յամէ los յամէց c յամեց)  
փխ յամէ in 9-12-ր՝ 20-ից հետո  
են: fm մի լուէ h գալոյ  
10 aceghlno զենեհար b զինեհար  
տամ քեզ երգում df զինեհար mp  
զէնեհար dhmn գրօղ (a գրօղ)  
փխ հրեշտակ m մի վասն  
11 b ու մուքլաթ h և մաւհլէթ in  
և մօճլաթ ab մեկ c մէջ զիշերոյ  
m ինչ մէկ i մի  
12 a ելրայր adgk մի կա. թէ գա  
lթ՝ որ գայ i չիք գայ c կայ  
m գայցէ kp խիստ ի հեռու bn 12  
տողից հետո՝ 25-23 տողերը:  
13 bn 13-16 տողերը՝ 28-ից հետո:  
bhm n այ եղբայր b դու էր a  
յեր ես c gklmnop ինձ յէր ես  
i ինձ էր in խոռվել e էր ես խոռվ  
ինձ e չիք կամ ahm վասն որու  
14 b չէ հասէր միթէ ի քեզ ceif!  
հասնէր do հասնէր k հասնէր  
h հասիր m թէ հասէր է p հասեր  
ականջս n հասանէր միթէ քեզ h  
ձայնիդ i միթէ ընկեալ փխ հա-  
սաւ i դձայնս gp ձայն abdgimo  
լալու  
15 b Տողի փխ ունի՛ խիստ անտէր եմ  
ւ անճարակ վասն աստուծոյ

ոտողի փխ ունի՛ խիստ ատենէ ինձ  
հասիր վանց աստուծոյ cp որ լը-  
նեմ d ընու ի լուք լընու գաջդ  
m տողի փխ ունի՛ Շատ կարօտ  
ու շատ բան ունեմ ես հոգալու  
i տողի փխ ունի՛ կամ բերեալ  
խաբարս ի քեզ վասն իմ մահուս  
i և թափիմ k յիմ h գետու  
16 b 16 տողից հետո՝ 21-24 տողերը:  
b շատ բաներ կայ i 16 տողի փխ՝  
15-ր: icegipm զի շատ cdem դան-  
կատ f իմ ասելոյ ae յիմ m ի  
սրտես իմ քեզ ասելու h տողի փխ  
ունի՛ կարօտած կամ և մնամ եղ-  
բաւր տեսու adklm քեզ ասելու  
17 im չիք 17-20 տողերը: b դարձեք  
h դարձան bh ի լաց adgip լալու  
18 ben ողբացէք e յամէն b լե-  
զուաց cdghlkop չիք e  
19 i խիստ կարօտ իմ p ինձի hn  
տողի փխ ունեմ՝ Ես անկայ խիստ  
անճարակ (h յանկարծ) դուն ի  
մահու b տողի փխ ունի՛ խիստ  
անճարակ դուն ի մահուն ես  
կամ անկած  
20 hn տողի փխ ունեմ՝ Լուք լընում  
գաշս ու (h կու ընուն) թափեմ  
նրման գետու b տողի փխ ունի՛  
Նա ընում գաշս ու թափիմ ճամ-  
բու հայեաց f եղբորս p եղբայր  
dI տեսու

Առաջին մարդն էր Ադամ մինչև ի նոյ,  
ի նոյէ մինչ ի ծնունդն Աբրահամու,  
Զէր եղեր քան զիս ողորմ, ոչ լինելոյ,  
Կարօտած կամ և մնամ եղբօր տեսու:

25 Թափեցաւ խելքս ի գլխոյս, շունիմ լեզու,  
Քաղեցաւ գոյնն փրեսէս, աչքս ի լուսոյ:  
Թուլացաւ բոլոր մարմինս, զինչ մեռելոյ,  
Կու մեռնիմ և ճար շունիմ ողջանալոյ:

Լըջացիր անձն իմ ու թափէ զքեզ ի գինոյ,  
30 Թէ հարբած ես, թէ ի քուն, զքեզ զարթո.  
Երբ երթայ մարդն ու հասնի դունն ի մահու,  
Ոչ եղբայր օգնէ եղբօր, ոչ հայր որդւոյ:

Ամենօրհնեալ կոյս Մարիամ, մայր աստուծոյ,  
Երկրպագեմք քեզ և որդոյդ և սուրբ հոգոյ.  
35 Զամէն դարիպ բարեաւ զիւր տունն հասո,  
Եւ քեզ ամենքս երկրպագեմք տաճար լուսոյ:

21 a մարդէն f մարդն է b չիք էր

22 i ի նոյեայ i մինչդի dfnop մինչ-  
չև o չիք ի d ծնունդ h մինչ ի  
յԱդամ Աբրահամու փխ մինչ ի  
ծնունդն Աբրահամու

23 b տողի փխ ունի՝ Քան զիս խեղճ  
ոչ էր եղեալ և ոչ լինելոյ a չէ եղեր  
i այլ չէ եղեալ n չէ եղել co զերդ  
(acel զետ ghm զէտ) փխ քան  
ceno լինելու i ձեռագիրն բնդհատ-  
վում է:

24 b տողի փխ ունի. Որ կիսամահ  
կամ ու մնամ վանց քո տեսող  
i տողի փխ ունի. Շատ հասրաթ  
կայ իմ սրտիս քեզ ասելոյ hm  
արդ հոգեար կամ n կարօտած  
կու մեռնիմ եղբայր տեսու c տե-  
սոյ h հոգեար փխ կարօտած

25 h 25-28-ր՝ 16-ից հետո: gh գրուե-  
ցաւ խելքս ahkmn ի գլուխս bcd  
չիք ի 1 ոչ ունիմ

26 i եւ քաղեցաւ adegm գոյն ckop  
գունն i և գոյնս lin գունս bgo  
գոյնս bdi երեսաց kn յերեսէս  
i ևաչս ag լայու

27 m այս բոլոր p ամէն մարմինս  
b զերթ (hp զետ m զէտ) փխ զինչ  
n մեռելու

28 bghn տողի փխ ունեն՝ կիսամահ  
կամ և մնամ եղբօր (n եղբայր)  
զալու (gh տեսու) i տողի փխ ու-  
նի՝ կիսամահ եւ և կարաւս եղբօր  
տեսուոյն abdegkhl ողջանալու

29 b չիք 29-32 տողերը: g լըջացիր cn  
անձ acdehl չիք իմ o լերջացիր  
յանձ kp անձ դու g անձ ու m դու  
անձ իմ i թափեայ a ի գինոյ mn  
ի գինու e ի գինույ dghl չիք ի  
30 n և ի քուն ceginp դու զքեզ  
c զարդոյ am զարթու n զարթոյ

31 i յորժամ երթայ hl յերբ մարդ  
adlmp յօրն c չիք ի մահու k օրն  
ի մահու

32 ek Ձեռագրերն բնդհատվում են:  
c եղբայր օգնէ i ոչ այլ աւգնէ եղ-  
բայր ghi եղբօրն a ոչ հայրն ad  
որդու lm որդոյ

33 Առյ՛ն քառատողը խիստ մեծ տար-  
բերություններով ունեն միայն abg  
hmp, որոնք ամբողջութեամբ տր-  
ված են ծանօթագրություններում:  
g Ձեռագիր վերջում ունի ևս մի  
տուն, որ նույնպես տրված է ծա-  
նօթագրություններում:

## ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ



... Ըստ որում և սրբազան և մաքրամիտ կրօնաւորն Մարտիրոսն՝ խնդիր եղեալ եռափափագ սրտիւ և ստացաւ զկարմրերանդ և զլուսաբորբոք կտակս, զպայծառութիւն սուրբ եկեղեցւոյ... ի վայելումն անձին իւրոյ... յիշատակ բարի ծնողաց իւրոց՝ Աբրահամոն և Քամալին և եղբարց իւրոց Կիրակոսին և Մկրտչին...: Եւ ես... մեղսամած և տարտամ ոգի Մկրտիչ գրիչս, որ կոչիմ սարկաւագ, բայց բացասութեամբ և ոչ ստորասութեամբ, զի գործով և խորհրդով եւ վատթարագոյն գտանիմ քան զամենայն ոք ի ուսմկաց, և զարտուղի մարմնական գրնացիւքս, քանզի շնչմունք զանազան տապախառն փորձութեանց շուրջ զմեօք մածեալ կայ, և ախտք անհնարինք և հեշտութիւն ձգիչ, կարիք ի ձեռին, և անմտութիւն մերձ, ծուլութիւն խաւարեցուցիչ և անարիութիւն պատեալ զինս: Արդ, թէ սխալանաց հանդիպիք՝ վասն այսր ամենայնի անմեղադիր լերուք...:

Ի մեծ տարակուսանս կայի, վասն դառնութեան ժամանակիս և աւերման աշխարհիս: Այլ զազգիս մերոյ զտառապանս ո՞վ կարէ ընդ գրով արկանել, քանզի ի բազմանալ մեղաց մերոց, փակեցաւ դուռն ողորմութեան աստուծոյ, և պատուհանք բարկութեան բացան. և ի մերում ժամանակիս.....:

Գրեցաւ սա ի գաւառն Բաղիշոյ, ի գեաւղս, որ կոչի Պոռ, ընդ հովանեաւ մեծաշնորհ և տինգերահամբաւ սուրբ և գերապատիւ առաքելոյն Անանիայի և Սուրբ Գէորգայ, ի կաթուղիկոսութեան մեր աթոռոյն Տէր Պօղոսի. յամի ՊԿԷ (1418) հայոց թուականիս, բայց՝ եղև կատարումն գրոյս Արաց ամսոյ ԻԱ. (21) յաւուրն հինգշաբթի\*:

(Յայտմաւորք. Վան, ս. նշան եկեղեցի. ՊԿԷ (1418) թ.):

\* Ընդօրինակված է Ղ. Վ. Փիրզախեմյանի «Նօտարք հայոց»-ից, էջ 55—56. տե՛ս նաև Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն առաջին, Երևան, 1955, էջ 215:

\*\*\*

Ձաստուածարեալ և զտիեզերալոյս վարդապետն՝ զստացող աստուածաշունչ տառիս զՅովանէս սրբակրօն զրաբունին աղաչեմ յիշել ի տէր: Ընդ նմին և զմեղապարտ նկարիչս՝ զտրուպ ծառայ համօրէն ծառայից Աստուծոյ, զՄկրտիչ մեղաւք զառածեալս, զի խոնջաքիրտն աշխատանաւք վաստակեցայ ի նկարել տառիս. աղաչեմ, աղաչեմ, յիշման արժանի առնել զմերս անարժանութիւն, և Աստուած յիշողաց ողորմեսցի, ամէն\*:

\*\*\*

Յորժամ ստացաւ տէր Յովսէփն, էր թվ. ի ՊՂԸ (1449) ամին... Սոյն երջանիկ և աստուածաբան սուրբ վարդապետս Յովհաննէս ետ գրել զաստուածաշունչ սուրբ տառս յիշատակ հոգւոյ իւրոյ և ամենայն մերձաւորաց:

Եւ վասն առաւել բարեսէր կամացն արար զանարժան ծառայս իւրն յորդեգիր, և յառաջ քան զվախճանն իւր երեք ամով՝ պարգևեաց մեզ զսուրբ գիրքս յիշատակ սուրբ հոգւոյն իւրոյ: Եւ եկաց մնաց առ իս սուրբ գիրքս՝ յետ վախճանի սուրբ վարդապետին՝ վեց տարի ի մայրաքաղաքն յԱմիթ, ի նորակերտ սուրբ Կաթողիկէն: Ապա յետոյ եկն հէաս և հանդիպեցաւ առ մեզ ի յԱմիթ մայրաքաղաք ճգնազգեաց սուրբ կրանաւորն Յովսէփ, ձեռնասուն աշակերտն սուրբ և աստուածաբան վարդապետին Առաքելի: Որ և տեսեալ սուրբ աստուածարեալ աստուածազարդ գիրքս, և փափագանաւք խնդիր արար ի մէնջ: Եւ իմ տեսեալ զչեքմեռանդ սէր և տենչումն նորա... պարգևեցաք զսուրբ աստուածազարդ գիրքս Յովսէփ կրանաւորին անդարձ յիշատակ. և ի պատճառ գրոցս առաք ԳՃ (300) թանկայ ի Յովսէփ կրանաւորէն և խարճեցաք ի սուրբ Կաթողիկէն՝ վարդապետի հոգւոյն, և գրեցաք զվարդապետի անունն ի սուրբ Կաթողիկէի յիշատակարանն...

Յիշեցէք ի Քրիստոս Յիսուս նախ և առաջին զարժանին յիշման՝ զաստուածաբան վարդապետն զՅովհաննէս րաբունապետն, և զեղ-

բայրն իւր զԹուղթամուր միայնակեացն...: Դարձեալ, յիշեցէք ի Քրիստոս և զիս՝ զեղկելիս զմեղաւոր Մկրտիչ՝ միայն անուամբ եպիսկոպոս, մականունն նաղաշ կոչեցեալ, զշինող սուրբ Կաթողիկէին, որ յԱմիթ մայրաքաղաք և բարձր Աստուածածնին՝ ի յամուրն Արղնու, և զծնողսն իմ զԱռաքել քահանայն, և զՀոհիս խաթուն...\*:

\*\*\*

Ձմեղապարտ Մկրտիչ նկարագիր և արքեպիսկոպոս ամենայն Միջագետաց, և երեսփոխան կաթողիկոսի ամենայն Հայաստանեայց, որ զվերջի յիշատակարանս գրեցի, աղաչեմ յիշել...\*\*:

\*\*\*

Փառք... Ասի յաստուածարեալ արանց և յաստուածայնոց՝ եթէ կտակ յետ մահու կենդանի է. և ամենայն կտակագիր յուսով ապագայիցն և հանդերձելոց ակնկալութեան արասցէ կտակ, զի թերևս հասանէ յուսոյն կենաց աւժընդակութեամբ աղաւթից ապա եկելոցն մաղթանաւք:

Վասն որոյ և ես մեռեալս հոգւով... մեղասսէրս մանաւանդ քան աստուածասէր՝ մեղաւոր Մկրտիչ՝ բացասութեամբ եպիսկոպոս և ստորասութեամբ ծոյլ և մորոս՝ կամ եպիկորոս, յոր ձեւանամ վարդապետ, և մեղաց եմ դասապետ. կերպարանիմ մարդ բանական, և վատթարագոյն ևս քան զգազան... Վասն որոյ արարի կտակ հաստատուն՝ իմովս մեղսամակարթ մատամբ. զի կացցէ մնասցէ անվրէպ յետ իմոյս ելանելոյ ի մարմնոյս կտակ կենդանի. վասն աստուածաշունչ սուրբ կտակարանիս:

... Յիշեցէք ի Քրիստոս և զիս զեղկելիս զմեղաւոր Մկրտիչ՝ միայն անուամբ եպիսկոպոս, մականունն նաղաշ կոչեցեալ և զշինող սուրբ կաթողիկէին որ յԱմիթ մայրաքաղաք և Բարձր Աստուածածնին, ի յամուրն Արղնու. և զծնողսն իմ զԱռաքել քահանայն, և զՀոհիս

\* Ընդօրինակված է Լ. Խաչիկյանի «Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ»-ից, մասն Ա, էջ 632:

Տե՛ս նաև Բ. Սարգիսեան, Մայր ցուցակ հայերեն ձեռ., մասն Ա, էջ 115—116:

\*\* Տե՛ս Լ. Խաչիկյան, Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, էջ 633:

\* Ընդօրինակված է «Բազմավէպ»-ի 1899 թ., էջ 287-ից: Հորվածագիր Հ. Ա. Ղազիկյանը նկարագրում է բնագիր ձեռագիրը, որ պահպանվում է Վենետիկում 280 Ժ. համարի տակ (ձեռ. № 280 Ժ: Գեղեցկանկար աստուածաշունչ, գրված է Խլաթում, ՊԿԷ (1418 թ.):

խաթուն և զեղբայրն իմ զՅով [ հանէ ] և զպարոն Արգարն, զհանգուցեալսն ի Քրիստոս և զամենայն ազգայինսն մեր և զերախտաւորսն:

Արդ եղև սկիզբն գրութեան սուրբ տառիս ՊԿԷ (=1418) թվ. և կատարուած ՊԶԱ (=1428) և յորժամ ստացաւ տեր Յովսէփն՝ էր թվ. ի ՊՂԸ (=1449) ամին: Յորում ամի բացան պատուհանք հինից բարկութեան ի տանէն Աստուծոյ. և մերկացաւ սուրն վաղաւոր յազդերէ իւրմէ, և տարածեցաւ հուր ծախիչ ընդ ոլորտս տիեզերաց. ոչ եթէ խրատ կամ հարուած՝ որպէս երբեմն յԻսրայելի, այլ պատիժ և վրէժ աշխարհի կորստեան: Զի հարուածն և խրատն՝ մին զաւանդի լինի, զի միւսն խրատեսցի, իսկ պատիժն համօրէն և ընթանրական, որպէս ջրհեղեղան: Սոյնպէս և այսմ յամի յընթանոր արարածս տարածեցաւ տարածամ մահ յելանելոյն արևու մինչև ի մուտս արևու, ի հիւսիսոյ մինչ ի հարաւ. յամենայն ուրեք մահ սաստիկ, և մահտարածամ անըմբռնելի: Զի ոչ ոք ետես կամ լուա ի հնոց կամ ի նորոց այսպիսի դառնալուր պատիժ, և հիւսիսի տեսողաց և լսողաց զարմանալի, մինն այս է դառնութիւն սորա, զի բոլոր ամ մի է և Գ ամիս որ ի Մերտինս է և ոչ վերանայ, և երկրորդ եղեռնագոյն դառնութիւն, որ մի անգամ և երկու հանէ խոց և ողջանա նա զաւուրս բազում, և դարձեալ կրկին հանէ և մեռանի: Եւ երրորդ դժնեայ դառնութիւն ամին, զի յոր տունն մտանէ՝ բնաջինջ առնէ ամենայնիւ: Զորրորդ սաստկութիւն սորա զի ոչ տայ իմանալ զցան, երևի թէ անվնաս է, և իսկոյն մեռանի:

Որ և եղև մեզ գնալ և հանդիպել ի Մերտին քաղաք ի սոյն ամի և դառն ժամանակի: Զոր ոչ կարեմ պատմել կամ ընդ գրով արկանել զանցս աղետից և զմրուր դառնութեան. զկսկիծս բորբոքման և զբաժակն բարկութեան. զողբս արտասուաց և զբեկումն հառաչանաց. զվիշտս վառեալ և զհուրն բորբոքեալ. զաղիողորմ դառնութիւնն և զանպատմելի տարակուսանս. զմեծակական հառաչանս և զաղիողորմ արտասու: Զի Աստուած էր խոռովեալ և արարիչն դառնացեալ. զի անբարկանալին Աստուած վեր բարկացեալ և կենարարն մահու մատնեալ. զի ողորմածն Աստուած՝ անողորմ դատեցաւ, և քաղցր բնութիւնն՝ վրէժխնդիր յայտնեցաւ: Զի տուօղն կենաց հրաման ետ մահու, և պահապան հրեշտակն հրեղէն սրովն խոցէ. քաղցր տեսութիւնն ընդ յակամբ հայեցաւ և սուրն վաղակաւոր՝ իսկոյն ընդ մեզ կտրէ զանմեղ մանկունսն: Զի սաստիկ էր պատգամ և ահեղ պատգամաբերն, զարաւոր էր զինաւորն, և սուրն և զարագլուխ ահեղին: Զի կարծեմ թէ որ յանապատին զ ԻԴՌ=24.000. կո-

տորեաց՝ այսօր ի միջի մերում երևի, կամ որ երբեմն յաւուրս Դաւթեայ զ ՀԵՌ=75.000 ընդ մէջ կտրեաց ի միում ժամու, այսօր շողշողացնէ զսուրն բարկութեան ի միջի մերումն. կամ այն որ զաւրս Ըռափսակայ զՃԶԴՌ=184.000 սատակեաց, ցուցանէ այսօր և զմրուր դառնութեան պատժոյն, և առաւել դառնագոյն քան զնոյն: Զի անդ միայն ի գիշերի սպանանէր, և աստ ի տվէ և ի գիշերի, զի անդ ի միում գիշերի, և աստ մի ամ և Գ ամիս. զի անդ միայն զանհաւատսն սատակէր, և աստ զհաւատացեալսն ևս: Զի անդ զմեղաւորն սատակէր և զարդարն ապրեցուցանէր. և աստ այսօր զարդարն վասն մեղաւորաց պատժէ. յամենայն առաւօտու փոխանակ լուսոյն՝ աղիողորմն կսկիծ ծագէ. և յամենայն աւուր փոխանակ արևուն արեան արտասուք: Յերեկօրեայ երգ տրտմութեան, և ի մէջ գիշերի խաւար մահաբեր և հաւախաւսին կանայք լալականք, և ընդ արշալուան ողբերգականք պարաւորք:

Անդ էր տեսանել զողբս արտասուաց, և անդանօր զկսկիծըն մաղկատանաց: Զալիս ծերոց արեան արտասուք թաթաւեալ, և զմարքն որդէմեռ կիսամահ նուաղեալ. ոմանք ծամակտուր և այլք ոմանք հերարձակ, ոմանք սեւազգեստ, և կէսք հրապարակ, ոմանք յարեան ճապաղեալ, և շատք ի խելաց անցեալ. ոմանք ապշեալք, և ոմանք կատաղեալք ի դառն կսկիծանաց: Զի անմեղ գառինքն ի հուր ծնողացն եփեցան. մատաղ մանկունքն ի ծնողացն պատուհասեցան. որպէս ասէ Աստուած մարգարէին, եթէ հանեմ զմեղս հարց յորդիս և յորդիս որոցս նոցա, և զմեղս մարց ի դատերս և ի դուսար դատերաց նոցա, և մարգարէութիւնս այս այսօր յառ մեզ կատարեցաւ. զի վասն մեր մեղացն անմեղ մանկունքն կոտորեցան:

Ո՛հ, դառն դատաստանիս և սաստիկ վրէժխնդրութեանս, ո՛հ, անկասկած կատարածի և արժանահաս պատուհասի, վայ է ինձ ի բիրս հազարաց և եղուկ է զիս, թէ զոր կսկիծ տեսի կամ զոր դառնութեան բաժակ ըմբեալ ճաշակեցի: Զի տեսի զնորաբողոքոյ մանկունքն՝ յաստուածային ահեղ սրոյն սասանեալ, զի թաւալէին մանկունքն առաջի ծնողացն որպէս զգառն սրով զենեալ, կամ զձագս աղանոյ նետիւ խոցոտեալ, ի վերայ գրկաց մարցն նուաղեալ, և ողորմ ընդ երեսս ծնողին նայեցեալ զձեռքն մեկնեալ և զոտքն տարածեալ, և առ մայրն աղաղակեալ՝ և ի հօրէն աւզնութիւն խնդրեալ: Ոչ մայրն ողորմէր մանկան, և ոչ հայրն աւզնական լինէր և հրեշտակն ահեղ կերպարանօք զհօգին քակտէր և ընդ քակտիլ հոգոյն անմեղաց և ծնողաց հոգին խոցոտէր: Անդ էր տեսանել և զմանկունս մուրագալի աղիողորմն թաւալեալ. զնոր փեսայն և զնորահարսն,

զի փոխանակ վայելուչ անկողնոյն ի գէջ գետին և ի ներքոյ հողին տարածեալ և փոխանակ հարսանեաց սուգ սաւառնացեալ, և փոխանակ ուրախարար երգոցն՝ կանայք լալականք և ողբերգականք: Արդ զորս լացից կամ զոր ոք ողբացից, զորս ապաշաւեցից և զորոց պատմեցից. զանմե՞ղս մանկունք, եթէ զկատարեալսն հասակաւ, զվայելուչ նորափեսայքն, եթէ զգեղեցկագեղ նորահարսունքն. զնորաբողբոջ կուսանքն, եթէ զսուրբ սարկաւագունքն, որ ամենեքեան ի միասին կոտորեցան, որպէս զծաղիկ նոնենեաց հարեալ ի կարկտէ յաւուրս գարնանային: Զի ամենեցուն էր պատիժն և առ հասարակ պատուհասն: Անդանօր տեսանելի էր զի ամենայն աչք յարտասուք, և ամենայն բերան լալական, ամենայն անձին սուգ, և ամենայն սրտի տրտմութիւն: Եւ այս ամենայն եկն ի վերայ մեր վասն բազում մեղաց մերոց ի ՊՂԸ (=1449) թվ. հայոց, յորում ամի այսպիսի սաստիկ պատուհաս ընդ ամենայն գաւառս տարածեցաւ և բազումս լալագին արար և զբազում ավանս անմարդաբնակ, շատ մայր առանց որդոյ արար, և բազում ծնօղ առանց զաւակաց. բազում տուն առանց տանուտէր, և բազում հարսն առանց փեսայի: Որ և ի սոյն ամի ասպատակեաց Իլւանդ որդի Սքանդարին զերկիրն Քաջբերունի, և ի առ զամուրն Արճիշու և աւերեաց. և զաւագերէցն Արճիշու աչր շնորհալի գրագիր և փիլիսոփա՝ ի վառման թոնիրն խորովեցին և զպզտիկ ըռայիսն ամենայն ընդանեալք գերի բերին յԱմիթ, և մեր տեսեալ զդառնութիւնն զայն զի հարսունքն և դստերքն մատնեալ էին ի ձեռս անօրինաց, աւժընդակութեամբն Աստուծոյ զիս ի մահ ետու. և ԺԴԻ (=14.000) թանկս տվաք Իլւանդին, և ազատեցաւ Աստուծով ըռայիսն և հարսունք և աղչկունքն անարատ մնալով յանարինացն՝ կարողութեամբն Աստուծոյ՝ Յիսուսի Քրիստոսի: Վասն որոյ կրկին անկամ աղաչեմք ըզձեզ հարք և եղբարք, յիշեցէք ի Քրիստոս զամենայն ննջեցեալսն ի Քրիստոս, զծնունդս սուրբ աւագանին, ևս առաւել որ ի սոյն ամի տարածամ մահուամբ առ Քրիստոս գնացին, և խնդրեցէք ի Քրիստոսէ յուսոյն մերոյ, զի զամենայն հաւատացեալ ննջեցեալսն արժանի արասցէ Քրիստոս հանգրատեան, անճառ լուսոյն, անտրտում ուրախութեան, անթառամ պսակացն, աստուծային պարգևացն երանաւետ ձայնին, անձեռագործ տաճարին, լուսազարդ խորանին աջակողման դասուն, անմահական սեղանոյն, երկնից արքայութեանն և աստուածային տեսոյն արժանի առնէ, մանաւանդ զսուրբ վարդապետն Յովհաննէս և զմեղաւորս Մկրտիչ սոսկ անուամբ եպիսկոպոս Ամիթ քաղաքի և Մերտնայ, Ուռհայու և Թիլիւրանա՝ Հինու և Արղնու:

Վայն է պատել զիս՝ յորժամ առնուն զհամար տնտեսութեան:

Ողորմելի գերի նաղաշ,  
Քանի ուտես զաւրըն պըլաշ,  
Զաչքդ բաց ու հատր պաշ,  
Որ չլինիս որդանցն ճաշ:

Յիշեցէք ի Քրիստոս զԹանդրէրմիշ աղայն որ հանդիպեցաւ այսօր աստ: Յիշեցէք ի Քրիստոս զմղտսի Մահուան, որ յամէն օր ինձ Ժ (10) լաւ կուբերէ՞:

\* Ընդօրինակված է «Բագմավէպ», 1899, էջ 287—289-ից, հողվածագիր՝ Հ. Ա. Ղազիկյան: «Բագմավէպի» օրինակը լիակատար չէ. Հ. Ղազիկյանը խոստովանում է, որ հիշատակարանը հրատարակում է կրճատումներով: Ամբողջական բնագիրը գտնվում է Մխիթարյանների մատենադարանի № 1020 «Վարք Հանաց» ձեռագրում:

## ՊԱՏԱՄԱՆԻ ԼԱՏԻՆԱՅՈՑ ԹԻՍՏՈՅՆ

Ի Մկրտիչ նկարագրէ, գոր գրեաց հրամանա կարողիկոսին  
Հայոց և մեծ բարունապետին Քումայի

Յասէտ ծայրացելոյ բնականագոյն նախուստն մերոց սրբազանից և վսեմական երիցս երանեալ և ամենայն ծայրութեանց ծայրագունի համեմատեալ, աստուածապետականին Յիսուսի փոխանորդի և առաքելական շնորհի և փշման արժանացեալ աթոռոյ: Եւ միեղինաբար կացորդութեամբ յարամանեալ ընկալաք զտառ տարրական իմն նըլիրաձիր, մաքրափայլ և աստուածաներկ որակացեալ բարեփառ աշոյ մակագրեալ, զոր վերծանեալ տեսուչք և վերծանողք արամեանս եկեղեցոյ: Յորում գտաք զովացուցանող\* և փարատիչ մխիթարական, զներածական ձեր մտած... տրամակայումն զիտաւորութեան, տիրապէս տրամադատական խոկմամբ երկակի եզրակացութեամբ պատճառաւ, որ վասն ուղղափառութեան հաւատոյ: Եւ երկրորդ. վասն միաբանական սիրոյ, որ է սկիզբն և աւարտ յաւտակաց և յաւտենից, զոր փողն Տարսոնացի զմինն ամենայն բարե[աց] պատճառ մակագրէ, և զմիւս[ն] կենարարն լրումն արինաց աւանդէ և աշակերտ նմին զԱստուած սէր քարոզէ: Եւ ձեր վսեմական և մաքուր մակացութիւն ներքնական ուշեղութեամբ բաղխոհական մակամտածական տենչման ըղձանաց միախորհ և միակրան յարամանել փութա[յ] հաւտին տիրական: Վասն որոյ յուսալի է մեզ ձերոց գերիմաստ հանձարոց զիտաւորութիւն և մեզ բաղձումն անծկութեան տենչանաց, որ խանդազակաթ յաւժ տոչորիմք պասքեալ կարատեալ ամենայն քրիստոսածան ազանց. նախուստն մերոց հետեւ հայրենատուր աւանդութեանց և ծայրագոյն տրամախոհական մտածութիւն թևակոխել յուզումն հաստատութեան հաւատոյ:

Չոր յառաջագոյն սկիզբն արարեալ լուսաւորութեան մերոյն Պարթևի, զոր ընկալեալ մերս եկեղեցի, պահեաց անաչլալելի-

\* Ձեռ. զովագուցանով:

ամրակուռ կնքեալ և պարփակեալ անշարժ վիմարդեան, զնոյն զոր աւանդեաց եկեղեցին Լատինացոց, զերից սուրբ ժողովոյն զմիութիւն հաւատոյն զմիասնական աստուածութեան, զոր նոցա առաքելոցն աւանդեցաւ առաքելոցն ի հոգւոյն աստուծոյ: Արդ կա և մնա Հայաստան ի վերա նոյն հիման հաստատուն զոր ի հոգոյն սրբոյ շինեցաւ: Հաւատալ մի աստուած, արարիչ և նախախնամող, հայր անըսկիզբն և անկատարած: Հաւատալ զորդին աստուած անսկզբնաբար սկսեալ ի հաւրէ, ոչ ունելով կարծիս ժամանակաց ըստ Արիոսի: Հաւատալ զհոգին սուրբ Աստուած ճշմարիտ, բղխումն ի հաւրէ և հաւասար նմին և ոչ կրսեք կամ պաշտանատար ըստ Մակեդոնի: Հաւատալ անձնաւորութիւն սուրբ երրորդութեանն, մի աստուածութիւն, մի բնութիւն, մի կամք, մի ներգործութիւն և ոչ ի բաց բառնալ զանձնաւորութիւն ըստ Եւնոմեա և Սաբելի: Հաւատալ զանժամանակ ծնունդն հաւր, ծնեալ ի կուէ, աստուածութեամբն միաւորեալ ի մարմնի և ոչ բնութեամբ ըստ Լեոնի:

Խոստովանիմք զՄարիամն աստուածածին և ոչ մարդածին, ըստ նեստորի: Խոստովանիմք զաւծեալն Քրիստոս մի բնութիւն, մի կամք, մի ներգործութիւն նոր խառնումն սքանչելի և անըշփոթ միաւորութիւն և ոչ երկու բնութիւն կամ ըշփոթմամբ ըստ Եւտիքոսի: Եւ զամենայն զոր ինչ կրեաց աստուածացեալ մարմնովն, Աստուծոյ խոստովանիմք և ոչ սոսկ մարդոյ ըստ Մարկիանոսի: Զխաչն Աստուծոյ խաչ և զչարչարանքն Աստուծոյ շարչարանք և զմահն Աստուծոյ մահ ըստ Աստուածաբանին. եթէ Աստուած խաչեալ և արեզակն խաւարեալ: Ոչ ասեմք զոմն մեռեալ և զոմն անմահ մնացեալ, զի այս. Բ. բաժանի: Այլ որ անմահն, նոյն և մեռեալ, և որ մեռեալ նոյն անմահ մնացեալ: Եւ եթէ ոք անհնարին այսմ լինել կարծէ, նա և կուսական ծնունդն և անխախտ մնալ կուսութիւնն կարի առաել իմն է անհնարին: Այլ որպէս ծնունդն է սքանչելի, սոյնպէս և մահն սոսկալի և սխրալի. զի ամենայն անհնարինք Աստուծոյ հնարաւորք են: Եւ ի բաժանել բանական հոգոյն, զաստուածութիւնն ասեմք անբաժանելի. բոլոր աստուածութիւնն ի բոլոր մարմինն և բոլորն ի բոլոր բանական հոգին: Զի աստուածութիւնն ի նոյն բոպէն, որ էառ յարենէ կուսին և խառնեալ միացոյց յանեղ աստուածութիւնն: Եղև մարդն Աստուած ճշմարիտ և Աստուածն մարդ կատարեալ, ոչ երկու, այլ մի խառնումն, անբաժանելի և ամենայնի ոչ բաժանել խոստովանիմք, այլ անբաժանելի ի ծնունդն, ի քիրտն, ի վաստակն, ի խաչն, ի շարչարանքն, ի մահն, ի թաղումն, յարութիւնն և ի համբարձումն, ի

նստելն ընդ աջմէ ծնողին. այսինքն ի փառս հայրենի եզական աստուածութեանն: Զսոյն դաւանութիւն և ի հաւատոյ շինեալ ի վերայ անաքելական վիճին, ընկալաւ Հայաստանեացս եկեղեցի ի յեկեղեցոյն Լատինացոց, յերից սուրբ ժողովոյն:

Ա. Յառաջին ժողովն որ ի Նիկիա եղև յետ ԳՃ և ԺԵ ամի ծնընդեանն Քրիստոսի և մեծին Կոստանդիանոսի է ամի թագաւորութեան նորա, որ էին անդ ԳՃ և ԺԸ հայրապետք և պատրիարքունք Զ մեծն Սեղբեստրոս Լոռմա, Մակար յԵրուսաղէմի, Արիստակէս հայոց մեծաց, Թադէոս Անտիոքու, Մետրոփանոս Կոստանդինուպոլսի, Աղէքսանդրոս Աղէքսանդրացի, որք զԱրիոս հերքեցին:

Բ. Եւ երկրորդ ժողովն, որ եղև յետ ԼԴ ամի. առաջին ժողովոյն, ի թագաւորութեանն Թէոդոսին մեծի, որ էին ՃԾ հարք: Եւ պատրիարքունք Զ Ներսէս Հայոց, Կիրեղ յԵրուսաղէմի, Դամասոս\* Լոռմա, Նեքտառինոս Կոստանդինուպոլսի, Տիմոթէոս Աղէքսանդրի, Մելիտոս Անտիոքու, ընդդէմ Մակեդոնի, որ զհոգին սուրբ հայհոյեաց:

Գ. Երրորդ ժողովն, որ եղև յետ ԾԲ\*\* ամի երկրորդ ժողովոյն, ի թագաւորութեանն փոքուն Թէոդոսի, հարք երկերիւր և պատրիարքունք Ե. Մեծն Սահակ հայոց, Յոբնաղ յԵրուսաղէմի, Կելէստիանոս Լոռմա, Կիրեղ Աղէքսանդրու, Յոհաննէս Անտիոքու, ընդդէմ մարդաւան նեստորի, որև քսորեցին ի Խուժաստան:

Յետոյ յայտնեցան շարափառ ոմանք ի նոյն թագաւորական քաղաքին. Փլաբիանոս պաղատան եպիսկոպոսն նեստորի աղանդովն, և այլ բազումք աղանդոյն այնմ հետեալ: Հայսց հակառակութեանց աղմուկ շփոթեալ և խռովութիւն ոչ սակաւ լինէր ի մէջ քաղաքին: Վասն որոյ զայրացեալ թագաւորին Թէոդոսին փոքու հրամայեաց կրկին ժողով լինել ի նոյն քաղաքին Եփեսոս ՃԼԸ հարք ազդեցութեամբ հոգոյն սրբոյ: Եւ էին գլխաւորք Դէոսկորոս Աղէքսանդրու, Տիմոթէոս ջահն հաւատոյ, որ Գուզն կոչեցաւ, Յոբնաղ յԵրուսաղէմի, Դոմնաս Անտիոքու և Ստաթէոս Բիրիտոյ, Թէոդուլտս Կեսարու, Յուլիոս Լոռմա, Ը ամի յետոյ առաջին ժողովոյն Թէոդոսի փոքուն: Որք մեծաւ քննութեամբ հատին զխտացեալ անդամն եկեղեցոյ, և ի վերա առաջնոյն հիման հաստատեցին զեկեղեցիս ուղղափառաց ի գլուխն Քրիստոս: Եւ սահմանեցին անդրրդելի հաստատութեամբ զսուրբ և զանբիժ հաւատս ուղղափառաց զհաստատեալն երից սուրբ ժողովոյն:

\* Ձեռ. Դամասկոս:

\*\* Ձեռ. ԺԲ:

Յետ որոյ սակաւ ինչ կացեալ վաղճանեալ բարեպաշտ Թէոդոս փոքրն: Ապա զվնի նորա առնու զթագաւորութիւնն Մարկիանոս ընդրութեամբ մարաքրեւն իւրոյ Պաղքերա և սորա համախոհք էին նեստորի և Փլաբիանոսի, որ և վրէժխնդիր եղեն և յիշեն զուխտն, զոր եղին ընդ Լեոնի, զոր լուեալ նմայ մեծապէս խրախացաւ և յուղարկեաց և էառ զտումարն ի ձեռն կարտինարացն իւրոց, Տրոմիկոսի, Լիբիբա և Դոնկիանոսի: Ընդ որ հաճեալ Մարկիանոս և Պաղքեր եւ սկսան թագաւորական հրամանաւ և արքունական զօրականաւք ածել [ յ ] յամենայն կողմանց զպատրիարգունսն և զեպիսկոպոսս աշխարհաց ի Քաղկեդոն քաղաք Բիւթանացոց, որ է մերձ ի Կոստանդինուպոլս: Որ և ժողովեաց եպիսկոպոսք ԶՃ և ԼԶ, որք և գլխաւորք էին այսոքիկ. ի Լոռմա փոխանորդքն Լեոնի, զոր վերադոյն ասացաք, Անդիոքու Մաքսիմոս, Կոստանդինու Անատոլիս, Երուսաղէմի Յոբնաղ, Աղէքսանդրու Դէոսկորոս, և սուրբն Պետրոս Գազա եպիսկոպոսն, և լուծեալն Թէոդորիտոս Կիրոս քաղաքի, զոր այժմ եղին գլուխ ժողովոյն: Եւ առաքեն պատգամաւորս ածել զՆեստոր յաքսորանացն և նա զառհաւատչեայն ի վերուստ ընկալաւ վասն հայհոյութեանն ի հրեշտակէ հարեալ: Եւ դարձան պատգամաւորքն ունայն և վասն մեծի ամաթոյն ծածկեցին զբանն, զի մի իմացեալ ժողովն խաբանեսցի գործն:

Ապա այնուհետև Մարկիանոս և Պաղքեր խոշտանգելով ի հաւան ածէր զեպիսկոպոսունսն: Զեռնարկեցին զտումարն Լեոնի և հաստատեցին զհաւատն նեստորի. դաւանել զՔրիստոս սոսկ մարդ ծնեալ ի Մարիամա և ասել Քրիստոսի երկու բնութիւն և երկու կամք, երկու ներգործութիւն: Իսկ մեծ և անյաղթ խոյնեանն հաւատոյ սուրբն Դէոսկորոս երկու հարիւր եպիսկոպոսաւք ոչ հաւանեալ երկաբնակ ժողովոյն և մարդադաւան տումարի Լեոնին, այլ պնդեալ զմէջս իւրեանց ճշմարտութեամբ և ետուն զանձինս ի մահ և ի շարձարանս վասն անուանն Քրիստոսի:

Իսկ ի ժամանակս Զէնոնի բարեպաշտ արքայի և ուղղափառ կայսերն վերստին հաստատեցաւ ուղղափառութիւնն և ամենայն կալանաւորքն արձակեցան և գնացին մեծաշուք պատուով իւրաքանչիւր վիճակս և հալածական եղեն երկաբնակքն յամենայն կողմանց, զի Աստուած զփառաւորիչս իւր փառաւորէ: Եւ հայաստանեացս եկեղեցի անշարժ մնաց յամենայնիւ ի վերա նիկիական եղեալ հիմանն, յառաջինն և յերկրորդն և յերրորդն: Ոչ եղեն համախոհ նեստորի և ոչ ընդունին զքաղկեդոնիկն: Այս է պատասխանի տանն Աբեղայ և ոչ ընդունին զքաղկեդոնիկն: Զի եթէ ի եկեղեցին Լատինացոց կամիք

զգալըս մեր առ ձեզ վասն սիրոյ և հաստատութեան և միաբանութիւն առ ի հաստատել զնիկիականն դաւանութիւն, և մեք ի նոյն յաւժարիմք և զնոյն խնդրեմք և զնոյն անխախտ ունի մերս եկեղեցի և հաստատուն, ոչ լինի միոյ առաւելեալ կամ նըրազեալ. այլ զնոյն զոր երկու ինքնակալ կայսերք, մեծն Կոստանդիանոս և մերն Տրդատէս և քաջ ախոյեանքն եկեղեցոյ սուրբն Սեղբեստրոս և պարթեականն Գրիգորիոս Քրիստոսի արեամբն գրեցին դաշինս և սահմանեցին տառս կանոնական լինել մի հաւտ և մի հովիւ համանգամայն ազանց:

Ապա եւ ով ոք որ սմին միաբանութեան սիրոյ և խաղաղութեան լիցի պատճառ, եղեցի նա որդի լուսոյ եւ որդի տըրնջեան: Ապա թէ և զմեզ կամիք երկաբնակք լինել, կամ զՔրիստոս սոսկ մարդ դաւանիլ կամ զՄարիամն մարդածին կամ երկու բնութիւն, երկու կամք և երկու ներգործութիւն ասել Քրիստոսի կամ անգոսնելի կիրս, կամ զաստուածութիւնն բնակութեամբ ասել ի մարմնի կամ զչարշարանսն և զխաչն սոսկ մարդոյ կամ ապականացու զմարմինն Քրիստոսի, և յետ յարութեանն ապա եղեալ անապական, կամ զՈրդին Աստուած արարած ասել կամ զՀոգին Աստուած կրսեր և պաշտանատուր, կամ ի Հաւրէ և Որդոյ բղխեալ կամ զՈրդին աստուած աննման Հաւր, կամ զանձնատրութիւն Երրորդութեանն ի բաց բառնալ ըստ Սաբէլի, զսոյն և որ սոցին նման, զոր քաղկեդոնիկն աւանդեաց, ոչ ընդունի Հայաստանեացս եկեղեցի և ոչ կարաւտանայ աշխարհի սինհոդոսի: Զի անխախտելի է մնացեալ ի վերա հիմանն հաստատութեան և եթէ մի անձն մընա յազգէ Արամեան, անհնարին է հետեւել քաղկեդոնի:

Գոհանամք զԱստուծոյ, զի դեռ ևս Հայաստանեացս եկեղեցի ունի ժառանգս բազում, դասատունս և առաքելական աթոռս, պատրիարքք և մետրապոլիտք և եպիսկոպոսունք ըստ գաւառաց գաւառաց: Եւ զմարմնատը իշխանութիւնն նախախնամութիւնն Աստուծոյ երբձ ի մէնջ. զի եթէ բարի էր երկրաւոր թագաւորութիւնս, ինքն Քրիստոս հաղորդէր մարմնատը թագաւորութեան, այլ արհամարհեաց և հետևողացն իւրոց խաչ և շարշարանս քարոզեաց: Եւ գրեալ է ձեր ի շափաբերական և ի հրաշառասական տաղիք մակարդակեալ տառին վասն միաբանութեան առաքելական եկեղեցոյ: Արդ զմիաբանութիւնն քաղկեդոնիկն այն բաժանեաց, եթէ զքաղկեդոնին բառնայք ի միջոյ և զերից սուրբ ժողովոյն ընդունիք, զոր ի վերոյ գրեցաք, լինի միաբանութիւն եկեղեցոյս Հայաստանեացս ընդ եկեղեցոյն Լատինացոց և Յունաց և այլ ամենայն քրիստոսադաւան

ազանց, և մոխրամած դիմաւք հլու և հնազանդ լինիմք հրամանաց ձերոց գերադրական իշխանութեանդ: Ապա եթէ զեկամուտն հաստատել կամիք, և զանշարժն ընդ թիրեւոյն յարամանել, այդ անհնարին է լինել: Զի մերս եկեղեցի ոչ միաբանի այդմ գործառութեան:

Վերջինս ի մանկունս սիոնի անյիշելի հողիկս, անարժան, Մկրտիչ կարծեցեալ իմաստակ, բացասութեամբ եպիսկոպոս Համիթ քաղաքի, մականունն Նաղաշ մակագրեալ, հրամանաւ տեառն իմոյ Կոստանդին պատրիարքի և քաջ ախոյանին և անյաղթ փիլիսոփային Թումա բաբունապետի՝ Արևելյան հոռոտրի, սուղ ինչ և զսուր տրամադատեալ պատասխանի եկեղեցոյն լատինացոց: Զոր վերագրեալ եղև յԱղամա մինչ ի ծնունդն մարդացելոյն Աստուծոյ ԲՃՂԸ (5198) ամի և ի մարդեղութենէն Քրիստոսի մինչ ի հայ թըվականն ՇՄԳ (553) ամի, [ի] ծնընդենէն Քրիստոսի մինչ առ մեզ ՌնԼԸ (1438) ամի և ի Լուսաւորէն մերոյ մինչ առ մեզ ՌՃԼԸ (1138) ամի. Եւ ի Նիկիական ժողովոյն մինչ առ մեզ ՌՃԺԲ (1112) ամի, ի Կոստանդինուպոլսի սուրբն ժողովոյն մինչ առ մեզ ՌԽԲ (1042) ամի. յԵփեսոսի ժողովոյն մինչ առ մեզ ԶՂԳ (994) ամի. ի Քաղկեդոնի ժողովոյն մինչ առ մեզ ԶՄԹ (959) ամի: Ի թվականութեան յարաբարդեալ արմէնագրի համարաւղական արհեստի ՊՁԵ (1436) թվին, յամսեանն մայիս վեշտասան արուր շորեքշաբթի և նվիրեցաք ի ձեռն Աբղմսեհի սարկաւագի, որ է նվիրակ տեառն Եսայեա արքեպիսկոպոսի, որ եղև առ մեզ արգելական ամիսս Ժ (10) վասն պղտորութեան ժամանակիս, որ շատ աշխատանք կրեաց որոյ տացէ տէր Աստուած մասն բարի:

[Դրանից հետո Հովհաննես Կաֆացին զնում է նաև իր հիշատակարանը, որ ձեռագրի հնամաշտոթյան պատճառով տեղ-տեղ անընթեռնելի է... ]:

«Եւ ես Յոհանէս Կաֆացի, բացասութեամբ արեղայի և սպասաւոր ուղիղ բանի առ ոտս Թումա վարդապետի, ձեռա[մբ] Գրիգորի մեր մալագի: Ով կարդացողք ձեր աղաւթիք Քրիստոս Աստուած, կատա[ր] ըհ յիշման. արէք զմեզ արժանի, Քրիստոս առնէ զձեզ արժանի արթայութեանն իւր ցանկալի ամէն»\*:

\* Ընդօրինակված է Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի № 5657 ձեռագրից, էջ 143ա: Տե՛ս նաև «Արարատ», 1916, էջ 418. հոդվածագիր՝ Գ. Հովսեփյան: Վերջին հիշատակարան-հատվածը հրատարակված է «Ժն դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա, էջ 464:

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

ՄԿՐՏԻՉ ՆԱԳԱՇԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Յիշատակարան\* գրոցս պատմագրաբար, զոր շինեալ է  
քաջ քարտուղարն, առաջելական եպիսկոպոսն և աստուածա-  
բան վարդապետն տէր Աստուածատուր՝ Բուրորդի Բարունա-  
պետին Յակոբայ Ովսանանց\*\*:

5 Փառք ամենասուրբ երրորդութեանն հար և որդոյ և սուրբ  
հոգոյն:

Ամենեցուն ճարտարապետն աստուած յառաջ քան զլի-  
նեւն ժամանակաց ընդրեաց ի մարդկանէ զորս ինքն կամե-  
ցաւ, և յիւրաքանչիւր ժամանակի նոյն և մի հոգի աստուծոյ  
10 յայտնէ ներգործութեամբ զնիւթս պատշաճաւոր և տնօրինէ  
նախագիտութեամբ նահապետս և մարգարէս, հովիւս և հովա-  
պետս, տեսուչս և վերակացուս, իշխան և դատաւոր. և յարաձ-  
գականս յաւիտենիւ ոչ դադարէ ի ներգործելոյ, որպէս ասաց  
ճշմարտութիւնն, թէ՛ Ես ընդ ձեզ եմ մինչ ի կատարած աշ-  
15 իարհի: Ըստ այսմ սարասի ի վախճան ժամանակի և ի կէտ  
սուզական, որ ամենայն ծաղիկ թառամեալ էր և ամենայն  
տերև ցամաքեալ, յայտնեաց մեզ աստուած ծաղիկ անթա-  
ռամ, որոյ անուշահոտութիւնն ելից զտիեզերս ամենայն՝  
զտէրն տիեզերալուր՝ զտէր Մկրտիչն մականունն Նաղաշ կոչե-

\* Մույն հիշատակարանը իր բոլոր տարբերակներով ու ծանոթագրու-  
թյուններով ընդօրինակված է «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարան-  
ներ»-ից. կազմեց՝ Լ. Ս. Խաչիկյան, 1955, Երևան, էջ 622—631: Մեր դրբի  
միօրինակութեան համար ձեռագրերի հայերեն այբուբենով պայմանական նշան-  
ները փոխված են լատիներենի:

\*\* Այս հիշատակարանը, որի մեջ շարադրված է ԺԵ դարի նշանավոր բա-  
նաստեղծ Մկրտիչ Նաղաշի ընդարձակ կենսագրութեանը՝ բնագրով մեզ չի հա-  
սել, այլ պահպանվել է հետագա ընդօրինակութեանը: Մատենադարանի  
ձեռագրերից այդ հիշատակարան-կենսագրականն ունեն հետևյալ ժողովածու-  
ները՝

a=№ 2379, էջ 244 ա—262 բ (ԺԵ դար)

b=№ 2748, էջ 354 բ—357 բ (1624 թ.)

c=№ 9004, էջ 1 ա—5 բ (1678 թ.)

Բնագիրը կազմելիս օգտագործել ենք այդ ձեռագրերը՝ առաջնութեան տա-  
լով № 2379 (a) ձեռագրի բնագրին, որն ամենալրիվն է:

Կենսագրականը, միայն մի ձեռագրի (№ 9004) հիման վրա, հրատարակել  
է Կ. Կոստանյանցը՝ «Արարատ» ամսագրի 1898 թ. հունվարյան համարում (էջ  
23, 44, 48):

1 b պատմագրական 4 a Ովսանանց b Ովսանց 8 b և ի 14—15 ազ յաշխարհիս

20 ցեալ, որ և եղև երկրորդ լուսաւորիչ ամենայն Միջագետաց և պարծանք պարծանաց ամենայն քրիստոնէից:

Եւ էր սա բնական ի նահանգէն Բաղիշու, ի Պոռ կոչեցեալ գեղջէն, որդի մեծատան և աստուածարեալ քահանայի Առաքելոյ և մար բարէպաշտի: Էին և սմա եղբարք երկու՝ Յովանէս քահանայ, որ տղա հասակաւ փոխեցաւ առ Քրիստոս և միւսն՝ Արգար անուն, որ եղև երեւելի, մեծ և փառաւոր և պատուեալ յամենեցունց, որ և զտուն հար իւրոյ առաւել քան զառաջինն բարեկարգեաց՝ երկրորդ հայր Աբրահամ լեալ՝ կերակրելով զբազումս: Եւ բազմերջանիկս տէր Մկրտիչս ի տղայութենէ սիրէր զվարս կրօնաւորական՝ սիրէր զկրանաւորս և զվանականս, և սիրող լեալ արուեստից և ուսման և հանապազմին հետեւէր: Եւ էր տուեալ նմա շնորհք ի վերուստ, մինչ զի զամենայն դիւրաւ ուսանէր և զամենայն դժուարին արուեստ միանգամ տեսանելով նա գերագոյն քան զօրինակն ներգործէր: Եւ զուսումն աստուածաշունչ գրոց, զոր ինչ սա ի միում ժամու, այլ ոք զաւուրս Ժ. (10), բազում աշխատութեամբ ոչ կարէին ի միտ առնուլ, և ամենեցուն հիանալի էր ի վեր քան զտեսութիւն մտաց, մինչ գրեթէ ոչ ոք երևեցաւ յայսմ ժամանակի յայսպիսի տիրական շնորհիւ զարդարեալ՝ առաքելաշնորհ և աստուածուտոյց: Մինչ հնգետասան գոլով ամաց եղև կատարեալ ուսմամբ և արուեստիւ, իմաստութեամբ և վարդապետութեամբ, քաջ քարտուղար, անհամեմատ նկարիչ և ամենայն արհեստից ճարտարապետ, մինչ զի զամենայն արուեստ, զոր ինչ և կամէր, կարողութեամբն աստուծոյ անսղալ առնէր, մինչ զի հռչակեցաւ համբաւ շնորհաց նորայ և իմաստութեան ընդ ամենայն երկիր:

Եւ զի ոչ ունէր սէր աշխարհի, բռնադատեալ եղև ի ծնողացն, եմուտ ի կարգ աշխարհի, ոչ փոխելով զբարս իւր, այլ հանապազ ընդ կրանաւորս լինէր: Եւ զի նախագիտութիւնն աստուծոյ տնաւորինեալ էր զսա լինել փեսայ երկնաւոր հարսին՝ եկեղեցոյն Միջագետաց, զի սովաւ ուրախանալոց էր հարսն Քրիստոսի, և ցնծալով մանկանց Միոնի, և բարձրանալ խաչին Քրիստոսի, և ուրախանալ սովաւ տարտամ և տխուր ազգս հայկազեան, որ եղև իսկ: Զի մին որդի ծնանելով եղև

55 մեռանել ամուսնոյն իւրոյ, զոր և ինքն զնոյն խնդրէր յաստուծոյ՝ ազատ լինել: Եւ առաջնորդութեամբ աստուած սուրբ հոգոյն ելեալ ի բնական նահանգէն, եկեալ բնակի յերևելի և յականաւոր ապաստանի ի քաղաքն յԱմիք շահաստան: Եւ ողորմութիւն տեսան էր ընդ նմայ, և յաջողեալ էր ի գործս սորա, զի յամենայնի հոգին աստուած էր թելադիր և գործակից սմա: Զի յօրէ յօրմէ հետէ եմուտ սա ի Միջագետս՝ շարժեաց հոգին աստուած զսիրտ ամենայն մարդոյ ի սիրել զսա և զամենեցուն լեզու՝ զովել և բարեբանել և բարեհամբաւել:

Եւ եբաց սմա աստուած զգուռն ողորմութեան, զի ամենայն ոք, որ տեսանէր զսա՝ կամէր և զհոգին ևս տալ յաւժարութեամբ և զուարթութեամբ և առատ սրտիւ. և ոչ եթէ միայն յազգս քրիստոնէից, այլ և Թուրք, և Թաթ, և Թաթար, և Քուրթ, և Երապ, և Զհուտ, և ամենայն ազինք, ընդ տեսանելն զսա տիւ և զպարգևս պատրաստէին՝ ձիս և ջորիս և խաչս մեծագինս՝ անասելի և անպատմելի: Եւ ոչ եթէ միայն իւր դէմն և յիւր վիճակն, այլ և յամենայն աշխարհաց գային՝ յԱրևելից և յԱրևմտից, և պարգևատու լինէին և պարգևս բերէին ոսկի, արծաթ, ականս պատուականս, կտաւս մեծագինս, մինչ զի բազում ոմանք Ռ. (1000) և ՌՌ. (2000) թանկայ պարգևս բերէին: Զի տարածեցաւ համբաւ սորայ ընդ ամենայն աշխարհս, մինչև եհաս առ թագաւորն Պարսից և առ տէրն Եգիպտոսի, և էանց զՄեծ ծովն՝ մինչև ի պապն Հռոմայ և ի Կոստանդնուպոլիս, մինչ զի վարշամակս ոսկեթելս և մեծագին պարգևս առաքէին:

80 Եւ ևս առաւել սիրեցեալ եղև ի յաչս պարոնաց պարոնին շահ Արման-Բէկին, որ տիրէր ի Խառանայ մինչև ի ծովն Պոնտոսի, որ է Տրապիզոն: Զի այնպէս քաղցրացոյց աստուած զսիրտ բռնաւորին ընդդէմ սմայ, զի զամենայն քրիստոնեայք, որ ընդ իւրոյ իշխանութեանն էր՝ ետ ի ձեռն սորայ և մեծապէս պարգևաւք և տրօք մեծարեաց և փառաւորեաց թագաւորական սգեստիւք և արքունական երիվարուք, մինչ զի զոր զգեցեալն էր արքայն՝ զայն զգեցուցանէր. և զսէրն զոր սիրէր

21 Ե չիք պարծանաց 23 Ե գեղջէ 25 a հասակօ 30 Ե սիրէր զկրանաւորս չիք 42 Ե նկարող 43 Ե չիք և 45 Ե սորա 46 Ե և իմաստութեան չիք 47 Ե զսէր 50 Ե զիտէր փիս տնաւորինեալ էր 54 Ե ծնաւ. ի կնոջն

56 Ե չիք աստուած 57 Ե երկրէն 58 a և յապաստանի Ե ի մայրաքաղաքն յԱմիթ շահաստանի 59—60 Ե ի գործս սորայ, զի յօրէն... 67 Ե ազգս Ե բուրդ 68—69 a զպատիւ չիք 69 Ե խաչս 70 Ե յիւր Ե թէմն 78 a ոսկեթել 79 a և առաքէին բաւից հետո ոսկե յարհնեալ է աստուած 80 Ե Ե չիք 81 a Հասանայ 84 Ե էր չիք 86 Ե գեցեստիւք 87 Ե գնոյն

և զպարգևան ոչ ոք կարէ ընդ գրով արկանել, մինչ գրեթէ և  
90 ոչ ոք ի մարդկանէ՝ ի թագաւորացն քրիստոնէիցն այսպիսի  
պարգևաւք ճոխացոյց զոք ի հայրապետաց սրբոց: Եւ զչափ  
սիրոյն ի պարգևացն գիտացիր, զի յարածամ հագար և ԲՌ  
(2000) թանկայ ի պարգև տայր: Եւ ի գնալն առ նա՝ ընդ  
առաջ ելանէր, և համբուրէր և ի վերայ իւրոյ թագաւորական  
95 խալիչային նստուցանէր, և զբան սորայ ընդունէր իբրև զծա-  
ռայի աստուծոյ, զի սիրող էր բանին: Զի հրաման տայր բերել  
յիւրոց առաջնորդացն և զգիշերն ի բուն տայր խաւսել յաս-  
տուածաշունչ գրոց: Եւ սա աստուածատուր շնորհաւքն և աս-  
տուածուսոյց վարդապետութեամբն զամենեսեան յամալթ առ-  
100 նէր, և զթագաւորն հաւանացուցանէր և առնէր պարգևս ի թա-  
գաւորէն և արևստօրէ աստուած զսա ի բանս իւր զարացու-  
ցանէր և հոգի աստուծոյ էր ի վերայ սորա:

Եւ յետ յԱրամն-Բէկին, սուլթան Համգա, զոր ինչ ակա-  
նատես եղև հօրէն իւրմէ, այլ առաւել պատուով ընդունեցաւ  
զսա՝ հայր ինքեան աւանդելով փոխանակ հօր իւրոյ: Եւ մե-  
105 ծաւ պատուով փառաւորէր զսա քան զամենայն մեծամեծս  
իւր, մինչ բազմաց ասել թէ և ինքն քրիստոնեայ է, զի այսչափ  
սիրէր և պատուէր զեպիսկոպոսն:

Եւ ձեռնդրեցաւ սա յաստիճան եպիսկոպոսութեան ի  
տէր Կոստանդեայ կաթողիկոսէ Վանկեցոյ, որ էր ի մեծ թուա-  
110 կանիս Հայոց ՊՂԹ (1430): Մեծարեաց զսա և կաթողիկոսն  
զանազան պատուով և պարգևաւք, և հաստատեաց արքեպիս-  
կոպոս ի վերայ ԻԳ. (24) զաւազանի: Եւ ամենեքեան սիրով  
հնազանդեցան և ընկալան զսա իբրև զառաքեալ աստուծոյ, և  
եղև բանս սորա արդիւնաւոր ընդ ամենայն երկիր: Եւ եղև յա-  
115 տուրս սորայ ցնծային եկեղեցիք Հայաստանեաց, և բարձրա-  
նայր եղջիր քահանայից, և պայծառանայր հաւատս քրիստո-  
սական, և ուրախանային ամենայն հաւատացեալք: Զի յայտ-  
նեցաւ հովիւ քաջ և արժանաժառանգ վիճակին պայազատ, որ  
գիտէ հովուել զբանաւոր գառինքն յարօտ անմահարար և ի  
120 ջուր կենդանի՝ բազմադիմի և յորդառատ վտակաւք, որ տուեալ  
է ամայ առատապէս ի շնորհացն հոգոյն:

93 a յառաջ 95 c քանզի 97 b շնորհին 99—100 b ի նմանէ փխ ի թագա-  
ւորէն 100—101 a զաւրացուցանէ bc զօրացուցաներ զսա ի բանս իւր  
102 bc Օթման-պէկին փառաւոր սուլթանն որդի նմին սուլթան Հակոբայ  
(c Համգայն) 104 c չիք զսա 107 bc սիրէ և պատուէ b զհայրապետն:  
108 b արքեպիսկոպոսութեան 114 bc բան 114—115 c Եւ յաւուրս սորա  
ցնծային եկեղեցիք ab ցնծայր 121 bc շնորհաց

Զի արկնէ [ է ] պատմագրաց յաւելեալ ի ճառս զովեստից,  
այլ մեք զնոյն շարագրեցաք, զոր ականատես եղաք և յայտնի  
է ամենայն երկիր տեսողաց, այլ մի ըստ միոջէ գրել ձանձ-  
125 րովիւն է լսողաց, այլ համարեա՝ թէ զամենայն տեսակ աս-  
տուածային շնորհաց, զոր յամենայն մարդիկ՝ ի սա միայն  
տեսանիր լի և անթերի՝ ընկերասէր, ատարասէր, աղքատա-  
սէր, խաղաղարար, խոնարհ և համբերող, ողորմած, առատա-  
սիրտ, մեծապարգև, զի յայսմ ժամանակի ոչ ոք էառ իբրև  
130 զսա և ոչ երես իբրև զսա, որպէս ասաց տէրն՝ Զրի առէք և  
ձրի տուք:

Զի սա միայն գտաւ արկանել զբանքարն ի սեղանաւորս և  
բազում բարեաց պատճառ եղև կարողութեամբն աստուծոյ:  
Նախ, զի եկեղեցիս խախտեալ ոչ ոք իշխէր քար մի ամրացու-  
135 ցանել, և սա զամենայն եկեղեցիս խախտեալ և զհնացեալ և  
զհողաշէնս՝ նոր նորոգեաց կամարակապ և զմբեթածև, և բա-  
զում նորաշէնս, որպէս զբարձր Աստուածածինն՝ ի գլուխ  
բարձր բերդին Արղնոյ:

Եւ երկրորդ, զի յաւելեաց յեկեղեցիս բազում շուրջառ մե-  
140 ծագին, գիրք, աւետարան, և սկիհ պատուական և զարմանա-  
լի, և հանապազ զնոյն բանս հոգայր:

Երրորդ, զի ոչ իշխէին համարձակ պաշտել յեկեղեցիս. և  
յաւուրս սորա համարձակ պաշտէին. առաւել պաշտէին քան  
յանապատս և ի վանորայս:

Զորրորդ, զի հալածէին զբահանայս և հարկապահանջու-  
145 թեամբ տանջէին առաւել քան զաշխարհականս. և սա, կարող-  
ութեամբն աստուծոյ, զամենեսեան ազատ արար ի թագաւոր-  
ական հարկէն:

Հինգերորդ, զի եկեղեցիք Միջագետաց ի ներքոյ դիմոսա-  
150 կան հարկի կային, և եպիսկոպոսք՝ մաքսապետք, զի զամե-  
նայն, զոր ինչ առնուին ի քրիստոնէից՝ ի մաքս տային և ոչ  
կարէին մէկ հաց տալ աստուծոյ կամ աղքատի, և սա, զարու-  
թեամբն Քրիստոսի, երարձ զմաքսն յեկեղեցեաց և ինքն ևս  
առնոյր ի պարոնացն Ժ. (10) և Ի. (20) հազարով և բաշխէր  
155 եկեղեցեաց, աղքատաց և կարաւտելոց:

Վեցերորդ, զի վասն սորա ազգ կարգաւորաց առաւել սի-

124 b երկրի փխ երկրի տեսողաց 126 c մարդիկք b մարդիկն 128 a խաղաղե-  
րար b չիք խաղաղարար 128—129 c և առատասիրտ 129 b առ 134 b յե-  
կեղեցիս 139—140 c շուրջառս մեծագինս c սկիհն 143 bc քան զոր 147 bc  
Քրիստոսի փխ աստուծոյ 150 a հարկէ b հարկին: 152 bc աստուծոյ տալ  
153 bc աստուծոյ փխ Քրիստոսի

րեցեալ եղեն ի պարոնաց քան զառաջնորդս իւրեանց:

Եւթներորդ, զի ոչ ոք իշխէր փիլոնով կամ վեղարով շրջել. և յաւուրս սորա յամենայն ուրեք համարձակ զգենուին և քահանայական կարգաւ շրջէին՝ երեկի փառաւ:

160

Ութերորդ, զի անուամբ սորա բազմաց ազատութիւն լինէր ի դատաստանաց և ի տուգանաց և ի բռնաւորաց, մինչ զի ի ճանապարհի ըմբռնէին զբազումս, և յորժամ ասէին, թէ մենք տէր նաղաշի մարդն էնք՝ ազատ առնէին:

165

Իններորդ, զի բազում գերիս ազատեաց յանօրինաց, զորս գնելով, զորս խնդրեաց ի պարոնաց, և զորս յափշտակելով ի ճանապարհին: Առաքէր ի ծառայից իւրոց արս զօրեղս և սրտապինդս, և խէին զգերիս յանաւրինաց և բերէին ի նորաշէն վանս իւր ապաստանի՝ ի բարձր Աստուածածինն, պահելով ժամանակս ինչ, մինչև գային տեարք ծառայիցն, և տայր նոցա հանդերձս և նաֆաղայս, և ուղևորէր ի տեղիս իւրեանց:

170

Տասներորդ, զի զամենեցուն պակասութիւնն և զնեղութիւնն և զվիշտն՝ ինքեան համարէր. և ամենեցուն ազնական լինէր՝ կերակրով, պարգես տալով, և կարեկից լինելով, և մխիթարելով բանիւք և արդեամբք:

175

Մետասաներորդ, զի զրունք եկեղեցոյ հանապազ փակեալ կային և ոչ գոչր յեպիսկոպոսարանն սեղանատեղ, և սա, կարողութեամբն Քրիստոսի, այսպիսի սեղանատեղ սահմանեաց, մինչ զի յամենայն ազգաց գային՝ ուտէին, ըմբէին և առեալ տանէին անխնայ և անարգել՝ առատապէս, մինչ զի պարոնայք զարմանային, թէ ուտի՞ կարէ պատրաստել ինչ, որ բաւական լիցի այսչափ ուտելոյ, տանելոյ և պարգեւելոյ, ոմն ասելով թէ քէմիայ ունի\*, բազումք ասէին թէ գանձ է գտեալ, և փող մի շունէր, այլ շնորհիւն աստուծոյ գայր նմա գանձ անպարապելի, որ յամէն ար ճ (100) թանկայ և ԲՃ (200) մուսխ էր նորա, սական Մ (50) և Կ (60) [թանկայ] լինէր ամէնն ի շինումն սուրբ կաթուղիկէին սրբոյն Թորոսի, քեզ օրինակ, որ բանակն Մովսէսի յերիկունն դատարկ լինէր ի մանանայէն և ի լուսանալ առաւօտուն լի էր ամենայն բարու-

180

185

158 a վիղարով 162 a ի գանաւորաց փխ ի դատաստանաց 163 a ճանապարհի 164 a նգաշի Ե մարդիկ եմք 165 a անօրինաց 167—168 ab գօրեղ և սրտապինդ 170 b տային 171 a ուղևորէր 172 b պակասութիւն և գնեղութիւն 173 c ինքեան 175 ab բանիւ 176 c եկեղեցեաց 177 b սեղան 179 bc ըմպէին 186 a մուսխ, իմա ծախս Ե մուսան 187 a ամէն Ե և տայր փխ ամէնն 187 c Թէ ողորոսի 188 գարտակ 188—189 a ի մանայէն ac չիք և \* Այսինքն՝ ձեռք է ձգել քիմիա քարը, որի օգնութեամբ, հալատում էին, թէ և հարավոր է անաղնիվ մետաղներից ոսկի և արծաթ ստանալ:

190 թեամբ, նոյնպէս և աստուած լցուցանէր զտէրս մեր հոգևոր ամենայն բարութեամբ, զի քան զմեծամեծ թագաւորս առաւելի բաշխէր ձիս, ջորիս, հանդերձս, ոսկի, արծաթ, ցորեան՝ մեծատուր պարգեւաւք: Եւ որքան առաւել բաշխէր՝ առաւել տայր նմա Քրիստոս՝ նա, որ ասաց՝ Տուք և տացի ձեզ, և սա ճշմարիտ հաւատայր, զի անսուտ է խոստումն, վասն որոյ առնոյր ըստ հաւատոյն:

195

Երկրտասաներորդ, զի յայսմ ժամանակի սա միայն կատարեաց զհրաման տեառն իւրոյ, որ ասաց՝ Բարի արարէք ատելեաց ձերոց, և սա զամենայն ժամանակս կենաց իւրոց սիրեաց զթշնամիսն և բարի արար ատելեաց, և ամենայն շաբաթի փոխարէն՝ բարի հատուցանէր, վասն որոյ արդարադատն աստուած զամենայն թշնամի սորին անդնդասոց զորոյս:

200

Երեքտասաներորդ, զի յաւուրս սորա եղև ազտութիւն մեզ, զի զմեռեալս քրիստոնէից ի քարշ տանէին Հայք, և Ասորիք, և Նեստորականք, և Ջհուտք, և թէ ճԹ. (100.000) դեկան տային՝ ճարակ չկայր. և ի գալն նորա, ընթացեալ մօտ ի սուրթանն, և ընդ բազում պարգեւացն, զոր ընկալաւ՝ խնդրեաց և զայն, և առեալ հրաման բարձրացուցանել զմեռեալս քրիստոնէից և այս սովորութիւն եղև:

205

Դարձեալ, ի ՊՁ (1431) թուին նստի յաթոռ հայրապետական ի յԱմիթ շահաստանի, և ի [Պ]ՁԲ. (1433) թուին շինէ զբարձր Աստուածածինն ի յԱրղնու բերդն, ի ՊՁԸ (1439) թուին սկսանի վերանորոգել զամենագով և զամենահրաշն զամենեցուն զարմանալին՝ զհրաշափառ Կաթուղիկէն, որ յԱմիթ շահաստանի, յանուն սրբոյն Թէոդորոսի զինաւորին: Եւ թէ որչափ աշխատանք կրեաց ի նմա անասելի, մինչ գրեթէ հողանիւթ մարմին ոչ կարէր տեւել այնպիսի երկարախոնջ, ցայգացանկ և գիշերատանջ շարշարանաց, որ իբրև զկենդանի նահատակ զԴ (4) ամ մարտիրոսական արիւն եհեղ ի շինումն սուրբ եկեղեցոյն և աւարտեալ կատարեաց զմբեթայարկ յօրինուածով անասելի և անպատմելի զեղեկութեամբ, զի զլուս գմբեթին բարձր էր քան զմնարայիցն և Ը. ու Ժ. (18) անկիւնիւ ճոխացեալ, և Ը. ու Ժ. (18) լուսամուտս ի գմբեթին, և բարձ-

210

215

220

191—192 աւելի 194 a սա չիք 198 a իւրոյ չիք 200 b ատելաց իւրոց 201 a մտացուցանէր 202 b արար փխ կորոյս 203 b զիւրութիւն 204 b քարշէին 205 c Ջահուկք փխ Ջքուտք Ե ճար 212 c յԱրղնույ 216 b յորչափ Ե աշխատանս ի նմանէ 219 b շինուածով 221 ab անասանիլ 222 b զմնարայիցն c անկիւնով c ութ ու Ժ (18) 223 a լուսամուտս

225 րութիւն լուսամուտին՝ ի շափ մարդոյ, և ով ոք կարէ ընդ գրով արկանել զգանազան յարիննուածս գմբեթին վայելչութեան:

230 Զոր տեսեալ քրիստոսատեաց ազգն մահմետականք, և ի խոր խոցեցան, և ձայն ետուն միմեանց որդիքն հագարայ, և հոչակ հարեալ համբուեցին և ամբաստան եղեն առ սուլտանն Եգիպտոսի, և առ թագաւորն Պարսից, և առ սուլթանն Հոռոմաց տանն, եթէ այսպիսի գեղեցիկ յօրինուածով բարձրացաւ 230 եկեղեցին քրիստոնէից: Զոր լուեանց նոցա վառեցան շար նախանձու և իսկոյն իսկ դեսպան և հրովարտակա առաքեցին առ սուլթան Համզէն՝ քակել զամենագով սուրբ Կաթուղիկէն: Եւ անտանելի սուգ հասաւ Հայոց ազգին, և ամենեքեան ի խոր 235 խոցեցան, և յամենայն աշաց աղիողորմ արտասուս հեղոյր: Եւ ետուն կաշառս գանձս բազումս, և ոչ կարացին ազատել, զի զամենահրաշ և զամենագով զհրաշալի գմբէթն քակեցին հաւասար տններացն, և ամենայն քրիստոնեայք ի սուգ մտին: 240 Ո՛հ, ո՛հ, ո՛հ, ո՛վ կարէ պատմել զանտանելի սուգն և զաղիողորմ կսկիծն, զձայնս հառաչանաց և զողբս տարակուսանացն, և զկականաւոր աղաղակն, և զաղետալի մորմոքումն, զի ամենայն սիրտ ի տրտմութեան էր և ամենայն աչք յարտասուս, ամենայն բերան յաղաղակ և ամենայն լեզու յաւաղումն: Եւ առաւել ևս արի այցելուն և քաջ հովուապետն տէր Մկրտիչ՝ 245 շինող սուրբ Կաթուղիկէին: Եւ ի սաստիկ խոցոյն և ի դառն կսկծանացն տարաշխարհիկ եղև, և գնացեալ էանց ի ծովն Պոնտոսի և Եհաս ի Կաֆայ և յՍտամպուլ, և զցայգ և զցերեկ խոցեալ սրտի առ աստուած աղաղակէր՝ այցելու լինել սուրբ Կաթուղիկէին յառաջ քան զելանելն ի մարմնոյն, զի մի մտցէ 250 խոցով ի գերեզմանն:

Այլ ողորմածն աստուած՝ այն, որ կատարին է խնդրուածոց և լսող աղօթից, տեսեալ զչերմեռանդ սէր նորա, որ առ աստուած և առ սուրբ Կաթուղիկէն, և լուսա աստուած աղաշանաց նմին և կատարեաց աստուած զխնդրուածս նորա: Սատակեաց աստուած զայնոսիկ, որք քակեցին զգմբեթն և յարոց 255 այլ թագաւոր Միջագետաց՝ զՋանգիր իմիրզայն: Եւ տեսչութեամբն աստուծոյ նա խնդիր արա, և գիր և դեսպան

226—227 e Զոր տեսեալ և ի խոր խոցեցան 234 e հասեալ ազգին Հայոց b ազգիս Հայոց 235 a յաշաց c հեղուին 237 b կմբէթ 238 c ամենեքեան 240 ac զձայն a հառաչաց 246 a կսկծանաց 247 կաֆայն 250 b զերեզման 255 b որ \*Սուրբ էջի 244-րդ տողի Մկրտիչ բառից սկսած մինչ 265-րդ տողի յօրմէ բառը բացակայում է ձեռագրից մի թերթի կորստի պատճառով:

առաքեաց Ջանգիրն, և ամենայն մեծամեծքն, և զատէստանն, և տանուտերարքն քրիստոնէից, և ամենայն քահանայքն՝ ժողովրդովք միաբան գիր գրեցին հետ պարոնաց թղթին՝ 260 Բ. (2) և Գ. (3) անգամ, և մեծաւ ջանիւ առաքեցին ի Կաֆայն, և բերին զամենեցուն զտենչալին զարհիական գլուխն զտէր Մկրտիչն՝ մեծաւ պատուով: Եւ միաբան ընդ առաջ ելին Բ. աւուր ճանապարհ, և ընկալան մեծաւ պատուով՝ ուրախութեամբ և ցնծութեամբ, զի յօրէն, յօրմէ հետէ ելեալ էր սա ի Միջագետաց՝ ամենայն եկեղեցիք ի տրտմութեան կային, որպէս զմայր որդեմեռ ի տարակուսանս կային, և ամենայն քրիստոնեայք ի տրտմութեան: Վասն որոյ ի գալն սորա ցնծացան ամենայն քրիստոնեայք, և բերկրեցան ամենայն եկեղեցիք, և զուարճացան մանկունք Սիրնի: Եւ սա՛ արիացեալ ի հոգոյն սրբոյ և առեալ հրաման ի պարոնէն և ԳՌ (3000) թանկայ պարոնացն ետ և մեծամեծացն, և վերստին նորոգեաց, 270 շնորհօքն Քրիստոսի և ողորմութեամբ նմին:

Եւ բնակիչք քաղաքին՝ քահանայք և ժողովուրդք, միաբան 275 աւգնական եղեն՝ աշխատելով, դրամ տալով, կերակուր բերելով, մշակ տալով, աղքատք և մեծատունք միամիտ քաջութեամբ և բոլոր հաւատով ջանացին, և ի Ժ. (10) աւրն կատարեցին զուսպայն ի շինելոյ:

Եւ առաջիկայք ժողովրդեանն և երեւելի տանուտէրք էին՝ 280 Շահրմանն Թիլիուրանցի, և ոսկերիչ Սատաղէն, որ էր երեսփոխան և հրամանատար, և Ալեքսիանոս ոսկերիչ, և Յերկեն Դանիէն, Աբրահամն, և Սիմէոն դարբինն, որ ինքեանք տային ինչս բազումս և կերակուրս, և զամենեսեան յորդորէին ի գործառութիւն սուրբ Կաթուղիկէին: Եւ կատարեցաւ սուրբ Կաթուղիկէն ի ՊՂԶ (1447) թուին, յաւգոստոս ամսոյ ի Զ. (6) յաւուր երկուշաբթի, ձեռամբ վարպետ Նեֆամաթին:

Եւ յորժամ ետես արհիական գլուխն եկեղեցոյ և աստուածաբան վարդապետն տէր Մկրտիչ զսուրբ Կաթուղիկէն կատարեալ՝ մեծաւ ուրախութեամբ գոհացաւ զաստուծոյ և մոխրաթաւալ երեսաւ արհնէր զամենազարն աստուած, և ցնծայր 290 և պարէր ի գաւիթս եկեղեցոյ, որպէս երկնաւոր փեսայի ի մաքուր առաքաստին, և զարգարեաց զեկեղեցին ամենայն

258—259 b գատուորքն փխ զատէստանն 260 bc գիր չիք 268 ab քրիստոնեայքն 272 ab մեծամեծացն ետեւս չիք 273 b նորին 277 b սրբիւ փխ հաւատով 278 ab զուսպայն ի շինելոյն 280 bc Թուլիուրանցի 281 c Երկայն b երկեան 283—284 a ի գործութիւն a այստեղ և այլ ուրեք՝ Կաթուղիկէին 285—286 c օրն 286 b ուսթայ c ներածատին b Քամատին 291 bc զերկնաւոր

կահիւք և զարդիւք: Եւ բերեալ ի Տրապիզոնու զմեծ սկիհն՝  
զանազան յարիւնուածով, ոսկեզօծ և յոյժ պատուական, որ ոչ  
295 ուրեք գտանի այնպիսի փառաւոր սկիհ՝ փարթամ և գերաշ-  
խարհիկ՝ Ճ. և Զ. (180) մտղալ քուլիճայ արծաթ՝ ոսկեզաւօծ և  
մինաքարի: Եւ ի Կաֆայն գնացեալ և ինքն շինեալ նորաձև  
նաշխ խաշաձև, ետ գործել շուրջառս մեծագինս բազմախա-  
շկան: Եւ զհրաշալի և զըքնաղաղարդ զպատուական սուրբ  
300 Նշանն Քրիստոսի բերեալ ի Կաֆայէն, որ ունի մասն ի խաշա-  
փայտէն Քրիստոսի և բուն սուրբ Նշանին՝ ի լուսափայլ ականց,  
և ի սիրտս խաշին՝ զՔրիստոս բեկեռեալ յոսկոյ ձուլածոյ:  
Եւ թէ ուստի՝ իցէ հրաշալիս այս՝ պատուական սուրբ  
Նշանս. զսա պապն Հոռմայ պարգևեաց մեծ վարդապետին  
305 Սարգսի Կաֆայեցոյն, յորժամ գնաց ի Հոռմ: Եւ ի գնալն տէր  
Մկրտչին ի Կաֆայն, մեծ վարդապետն Սարգսի ընկալաւ մե-  
ծաւ պատուով, և ընդ բազում մեծարանացն և պատուոյն՝  
պարգևեաց տէր Մկրտչին զսուրբ և զհրաշալի զպատուական  
սուրբ Նշանն: Զոր ընկալեալ մեծաւ ուրախութեամբ, և բերեալ  
310 մեծ պարգևք տանս Հայոց՝ ի սեփհական յաթոռն իւր՝ և յԱմիրք  
մայրաքաղաքն, ի սուրբ Կաթողիկէն, զոր ինքն շինեալ էր:  
Եւ եհաս յաւուր տանի սուրբ Նշանին Վարազայ, և զօրն զայն  
տօն մեծ կարգեաց յանուն սուրբ Նշանին, և սահմանեաց ամ  
յամէ յամենայն տարի, զնոյն օր մեծ տօնախմբութեամբ ու-  
րախութիւն առնել բազմութեամբ հաւատացելոց, ուխտ մեծ  
կատարել զաւր գալստեան սուրբ Նշանին ի փառս Քրիստոսի  
աստուծոյ մերոյ\*: Եւ զսուրբ և զհրաշալի սուրբ Նշանն և  
զպատուական սկիհն և զհանդիսաւոր շուրջառն ամենավայելուչ,  
և զայլ գեղեցիկ շուրջառն, և զայս հրաշալի Յայսմաւուրքս, որ  
320 ետ յիշատակ բարի ի սուրբ Կաթողիկէն, և զՏարեգիրքն՝ յի-

294 c Թրինուածով a յոժ 296 c մղղալ 297 b միաքարի 299 c պատուական  
300—301 b խաշէն 301 c Նշանն a լուսափայլ փխ ի լուսատայլ 305 a Կա-  
ֆեցոյն: 309 Եւ ընկալաւ 310 c աթոռն 314—315 Եւ խրախութիւն 317\* b  
ձեւագրում Հիշատակարան—վարքն ավարտվում է այստեղ: 318—319 c  
Երեւ փխ ար ետ 320 c զՏարեգիրքն ևս:

\* c Չնագիրք սրանից հետո ունի միայն մի պարբերութիւնն՝ որով և ա-  
վարտվում է հիշատակարանը: Ահա այդ պարբերութիւնը. «Որք ի Քրիստոս  
են հանգուցեալ, որոց յիշատակն օրհնութեամբ եղիցի, վասնորոյ սրտահա-  
նաչ տենչմամբ արայիմ գհանդիպօղբդ, որք հանդիպիք ի սուրբ Կաթողիկէն  
և սուրբ գրոյս նշանին և հրաշալի սկոյն և վայելչատես շուրջառին յիշեցէք ի  
մաքրափայլ աղօթն ձեր զարժանին յիշման զտէր Մկրտիչ աքբեպիսկոպոսն և  
զաստուծարան վարդապետն, և զծնօղս նորին, և զփձուէն ծրօզս ևս ընդ նմին:  
Ի թուականութեանն Հայոց կրկին քառիւք հարիւրօք և երկ յոթիւն ընդ նմին  
երկերիւրօք հանդերձ և երիւք ըննեօք աւարտելօք (1678 թ.)...»:  
Ուրեքն՝ № 900՝ ձեւագիրն ընդօրինակված է 1678 թվականին:

շատակ հոգոյ իւրոյ, և ծնաւդացն իւրոց՝ Առաքել քահանային  
և Հոխիւ-Խաթունին, և եղբարցն իւրոց Յովաննէս քահանային  
և պարոն Արգարին\*, Ներսեսին և Ստեփաննոսին, որք ի Քրիս-  
տոս են հանգուցեալ, ի յիշատակութիւն հոգոց նոցա և ի վա-  
325 յելումն աստուածապարգև զաւակին իւրոյ տէր Մեսրօպին,  
որոյ տէր աստուած վայելել տացէ երկար կենաւք և պարա-  
գայց ամաւք, ամէն և եղիցի:

Վասն որոյ արհնեմք զձեզ ի հոգի և ի մարմին, որք հան-  
դիպիք ի սուրբ Կաթողիկէն, և սուրբ գրոցս, և սուրբ նշանին,  
330 և հրաշալի սկոյն, և վայելչագեղ շուրջառին, յիշեցէք ի մաք-  
րափայլ յաղաթս ձեր զարժանին յիշման զտէր Մկրտիչ արքե-  
պիսկոպոս և աստուածաբան վարդապետն՝ զընկալ սուրբ  
Կաթողիկէին, և զծնաւդսն նորին՝ զԱռաքել քահանայն և  
զՀոխիւ-Խաթունն, և զեղբարսն իւր զՅովաննէս քահանայ, և  
զպարոն Արգար, և զՆերսէս, և Ստեփաննոս, և զծաղկեալ  
335 զաւակն իւր և զաւագ որդին՝ զտէր Մեսրօպ, և զամենայն  
երաշխտաւորսն իւր, և առաւել զտէր Յոհաննէս եպիսկոպոս  
բարձր Աստուածածնին, և զմղտսի Յոհաննէսն և զծնօղսն իւր, որ  
Ի. (20) տարի ծառայութիւն արար տէր Մկրտչին, և շատ աշ-  
340 խատեցաւ ի սուրբ Կաթողիկէն և ի բարձր Աստուածածնին, և  
զեկեղեցպանն, որ կայ հանապազ ի սպասաւորութիւն ի սուրբ  
Կաթողիկէն և ի շինելն աւանական եղև: Եւ առաւել յիշեցէք ի  
Քրիստոս զՂարա-Սաղաղէն և զմղտսի Զմրուրն, որ աւանա-  
կան եղեն ի գիր և ի թուղա Յասմաւուրացս:

Այլ և զբաղաքի քահանայքս, որ եղեն յաւուրս սորա՝  
զհանգուցեալքն ի Քրիստոս զԴաւիթ երէց, զՄարգարէ, զԱս-  
տուածատուր, զԹումայ երէց, զՅիսէ երէց, զՄիքայել, զԱռա-  
345 քել երէց, որոյ տէր աստուած ողորմեսցի նոցա և իւր սուրբ  
տեսոյն և սուրբ արքայութեան արժան առնէ, ամէն: Նաև զՂա-  
գար քահանայ՝ աւագերէց սուրբ Կաթողիկէի սուրբ Թորոսու,  
որ բազում աշխատութեամբ շարչարեցաւ ի շինումն սուրբ  
եկեղեցոյս, նաև բազում աշխատութեամբ գնաց ի Կաֆէն՝  
թղթով պարոնաց և տանուտրաց, եբեր զպարժանաց պար-  
ժանքն մեր՝ զլուսաւորիչն մեր զտէր Մկրտիչ. այլ և զընկերք  
350 նորին՝ զքահանայքն՝ զԿիրակոս, զԽաչատուր, զԳրիգոր, զՅո-  
վաննէս, զԱստուածատուր, և զմիւս Խաչատուր եղևկացի: Դար-  
ձեալ յիշեցէք ի Քրիստոս զհոգեւոր մայրն մեր զմղտսի Ասա-  
նեքն և զծնողսն իւր, որ շատ աշխատեցաւ հետ մեզ, ևս առաւել  
յիշեցէք ի Քրիստոս զըռայիս Գառնն, և զիւր արհնեալ որդին

360 զհալան, և զԽուրլուն, և զԹանխուսն, որ շատ աշխատեցան  
հետ մեզ, և զմեր միաբանքն զամէն ծառայեցին ի շինումն  
սուրբ և փառաւորեալ բարձր Աստուածածին, զմեզ զամենսեան  
կերակրելով, ծառայելով, լուանալով և խնամ տանելով, որոց  
տացէ տէր աստուած միոյն հազարալ պա յտիկ փոխարէն զար-  
365 քայութիւնն երկնից՝ պարոն Գտոնին, և աւրհնեալ Խալալին,  
և մօրն իւրոյ Խուրլուին, և կենակցին իւրոյ Թանսուխին, և եղ-  
բօրն իւրոյ Անթառամին, ամէն:

Դարձեալ, յիշեցէք ի Քրիստոս զՇահմելիֆն՝ զկենակիցն  
տէր Մեսրօպայ, որ տղայ հասակաւ փոխեցաւ ի Քրիստոս, զի  
370 զեռ Բ (2) ամսի էր, որ տէր Մեսրօպն երէց էր արհնած և  
Շահմելիֆն նոր տիրուհի, և նման արեգական փոխեցաւ ի  
Քրիստոս ի ՊՂԸ (1449) թվ [ ալանին ]\*:

Յիշեցէք ի Քրիստոս և զարժանին յիշման զՏընէ-Մելիֆն  
զխաթուն մայրն Շահմելիֆին, որ յետ ժն. (15) աւուր և ինքն  
375 փոխեցաւ ի Քրիստոս, որոյ ողորմեսցի Քրիստոս աստուածն,  
ամէն:

Յիշեցէք ի Քրիստոս զՅովանէս և զԱրուսն և զԻրեանց  
անմեղ գառներն՝ զԱղուպն և զՔարամն, որ տարածամ մա-  
հումբ փոխեցան ի Քրիստոս և զբողչէն տվին Յայսմաւու-  
րացս՝ յիշատակ հոգոյ իւրեանց, որոց ողորմեսցի Քրիստոս  
380 աստուած զժողին այս զրիս Սարգիս սարկաւազին, ամէն,  
հայր մեր:

## Ծ Ա Ն Ո Ր Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

368 a զկենակցին

\* Հիշատակարան-վարքի մեջ եղած վերջին թվականն է այս: Ըստ այդմ էլ  
հիշատակարանը գրված սկեաք է լինի կամ 1449 թվականին, կամ նրանից  
միայն մեկ-երկու տարի հետ:

1. Տաղ հարսանեաց և ուրախութեան մարդկան  
(«Նախ օրհնեմք զաստուածութիւն...»)

1898 թ. տաղն առաջին անգամ հրատարակել է Կ. Կոստանյանը «Մկրտիչ Նաղաշ և իւր տաղերը» աշխատութեան մեջ: Կոստանյանի սկզբնաղբուրը Մաշտոցի անվան Մատենադարանի № 3081 ձեռագիր տաղարանն է, որը, թերթերը թափված լինելու պատճառով, խիստ թերի է: Այդ ձեռագրում տաղից մնացել է ընդամենը 17 տող, որի քառատողերի սկզբնատառերը կազմում են «Նաղաշ»:

Կ. Վ. (Կարապետ վարդապետը) մի այլ աղբյուրից, որ մեր Մատենադարանի № 3498 ձեռագիրն է, ընդօրինակել է այդ տաղի ավելի ամբողջական բնագիրը և տպագրել «Արարատ» ամսագրի 1900 թ. հունվար ամսվա հավելվածում: Այդ ընդօրինակութունը 80 տող է, և տնիքի սկզբնատառերը կազմում են «Նաղաշ սարկապի է սայ եձ»:

Տաղը պահպանվել է Մաշտոցի անվան Երևանի Մատենադարանի հետևյալ ձեռագրերում.

a—3411,	ժամանակը՝	ԺԵ դար
b—3081	»	1607 թ.
c—7707	»	1611 թ.
d—9600	»	1691 թ. Այս ձեռագրում տաղն սկսվում է երկրորդ քառատողով:

Հ ր ա տ ա ր ա կ ու թ յ ու ն ն ե ր \*

Կ. Կոստանյան, Մկրտիչ Նաղաշ և իւր տաղերը (Յաւելուած միջնադարեան տաղեր զարիպութեան վերայ), 1898, էջ 31:

Կ. Վ., Տաղ հարսանեաց և ուրախութեան մարդկան, «Արարատ», 1900, էջ 45—47:

2. Տաղ ի դէմս մարգարէիցն և Քրիստոսի և Լուսաւորչին  
(«Զինչ որ գեղեցիկ ծաղկունք կային, ամէնք գնացին...»)

Տաղն առաջին անգամ հրատարակել է Արիստակես վարդապետ Տեղանցը «Հայերգ (մեղեդիք, տաղք և երգ)» ժողովածուի մեջ 1882 թ.: Տեղանցը տաղի սկզբնաղբուրը ձեռագրի գրութեան տեղն ու տարեթիվը չի հաղորդում:

Կ. Կոստանյանի «Մկրտիչ Նաղաշ և իւր տաղերը» ուսումնասիրութեան մեջ (էջ 29) տաղը արտատպւած է «Հայերգից»:

\* Այս բաժնում հիշատակվում են աղբյուրագիտական արժեք ներկայացնող հրատարակութիւնները:

Մաշտոցի անվան երևանի Մատենադարանի ձեռագիր մատյաններում տաղը չի հայտնաբերված:

### 3. Վասն բլրույին և վարդին («Բլրույն ի վարդն ասաց. իհստ անողորմ ես...»):

Առաջին անգամ հրատարակել է Տեղանցը «Հայերգում» 1882 թ. «Գարբիել և Մարիամ» խորագրով: Տեղանցը տեղեկություն չի հաղորդում սկզբնաղբյուրի մասին:

Այս տաղը պահպանվել է Մատենադարանի հետևյալ ձեռագրերում.

- a—3498, ժամանակը՝ 1625 թ.
- b—5823 » 1557 թ.
- c—7193 » Ժէ դար. ձեռագրում տաղի սկզբի վերջն ընկած են. սկսվում է 15-րդ տողից. ընդամենը 36 տող է, կան միայն 15—25, 41—45, 49—56, 69—80 տողերը:
- d—5985 » Ժէ դար
- e—7709 » 1620 թ.
- f—1636 » 1758 թ.: Այս ձեռագրում տողերի հաջորդականությունը խախտված է. 1—6, 25—32, 37—52, 65—68, 53—64, 33—36 (չիֆ 17—20 և 69—72):
- g—7712, » ԺԹ դար: Ընդամենը 45 տող է: 45-րդ տողից հետո իբրև շարունակություն բերվում է Գրիգորիս Աղթամարցու «Յետ զնալոյ վարդին...» տաղը կրճատվածներով ու սխալներով:

Հ ր ա տ ա ր ա կ ու թ յ ու ն ն Ե ր

- m—Ա. Տեղանց, Հայերգ, 1882, էջ 127: Տողերի հաջորդականությունը խախտված է՝ այսպես 1—8, 17—52, 69—72, 53—60, 65—68, 61—64 (չիֆ 9—16):
- 4. Կ ո ս տ ա ն յ ա ն, Մ. Նաղաշ և իւր տաղերը, 1889, էջ 26: Արտատպված է «Հայերգից»:
- Մ. Մ կ ր յ ա ն, 13—18 դդ. հայ աշխարհիկ գրականություն, 1938, էջ 74: Արտատպված է Կոստանյանի հրատարակությունից՝ վերնագրերը փոխված է՝ «Տաղ վասն վարդի և բլրույի»:

### 4. Խրատական բաներս ազահուրեան և անընչութեան ի նաղաշ վարդապետէ ասացեալ («Աողմոն մայրն իմաստութեան առ մեզ խօսի բան խրատական...»)

Առաջին անգամ տպագրվել է «Արծուի վասպուրական» ամսագրում 1862 թ. «Տէր Մկրտիչ Նաղաշի ասացեալ վասն ազահութեան» խորագրով. հրատարակիչը տեղեկություններ չի հաղորդում սկզբնաղբյուրի, գրություն տեղի և ժամանակի մասին: 1898 թ. Երկրորդ անգամ այն հրատարակել է Կ. Կոստանյանը «Մկրտիչ Նաղաշ և իւր տաղերը» ուսումնասիրության հավելվածում: Կոստանյանը ընդօրինակել է 1659 թ. Կաֆայում պրված ձեռագիր տաղարանից և համեմատել 1695 թ. գրված

մի այլ ձեռագրի հետ, որը մեր Մատենադարանի № 7717 տաղարանն է: 1659 թ. Կաֆայում ընդօրինակված ձեռագիրը համեմատաբար լրիվ է և ունի «Խրատական բաներս վասն ազահութեան և անընչութեան ի նաղաշ վարդապետէ» խորագիրը. Կ. Կոստանյանն իր ընդօրինակությունը վերնագրել է «Վասն ազահութեան»: Այս տարբերակը 1916 թ. Վ. Բրյուսովը թարգմանել է ռուսերեն և զետեղել «Поэзия Армении» ժողովածուի մեջ:

Տաղը պահպանված է Մատենադարանի հետևյալ աղբյուրներում.

- a—424, ժամանակը՝ Ժէ դար
- b—2736 » 1621 թ.
- c—2127 » Ժէ դար. ընդամենը 13 տող, գրչագրի էջերը թափված են:
- d—1779 » 1729 թ.
- e—3411 » Ժէ դար
- f—3595 » ԺԵ—ԺԶ դար
- g—523 » ԺԸ դար
- h—33 » 1550 թ.
- i—7508 » 1670 թ.
- k—2236 » Ժէ դար
- l—7732 » 1623 թ.
- m—8968 » 1568 թ.
- n—8605 » 1667 թ.
- o—3488 » ԺԸ դար
- p—7714 » 1714 թ.
- r—9271 » ԺԷ—ԺԸ դար
- s—7717 » 1693 թ.
- t—7712 » ԺԹ դար
- x—3768 » Ժէ դար
- y—2672 » 1607 թ.

Հ ր ա տ ա ր ա կ ու թ յ ու ն ն Ե ր

- Ա.—«Արծուի վասպուրական», 1862, էջ 385:
- Կ. Կ ո ս տ ա ն յ ա ն, Մկրտիչ Նաղաշ և իւր տաղերը, 1898, էջ 13:
- «Поэзия Армении» с древнейших времен до наших дней, под редакцией В. Брюсова, Москва, 1916, էջ 202, «О жадности» խորագրով:
- Մ. Մ կ ր յ ա ն, 13—18-րդ դդ. հայ աշխարհիկ գրականություն, 1938, էջ 71: Արտատպված է Կ. Կոստանյանի հրատարակությունից:

«Антология армянской поэзии, с древнейших времен до наших дней» Под редакцией С. С. Арутюняна и В. Я. Кирпотина. Москва, 1940, էջ 263

«Ընտիր էջեր», Պետհրատ, Երևան, 1946, էջ 267:

5. Խրատ խոռով շկենալու և ռխ չպանելու  
(«Անձն ի՛մ, վայ քեզ հագար բերան...»)

Այս տաղը առաջին անգամ (1898 թ.) տպագրել է Կ. Կոստանյանն իր «Մկրտիչ Նաղաշ և իւր տաղերը» ուսումնասիրության հավելվածում՝ ընդօրինակելով 1659 թ. գրված մի ձեռագիր տաղարանից:

Տաղը պահպանված է Մատենադարանի հետևյալ աղբյուրներում.

a—3411,	ժամանակը՝	Ժէ դար
b—7508	»	1670 թ.
c—8873	»	1623 թ.
d—1720	»	1720 թ.
e—424	»	Ժէ դար
f—2394	»	Ժէ դար
g—5989	»	Ժէ դար
h—2672	»	1607 թ.
j—2736	»	1621 թ.
k—2127,	»	Ժէ դար
l—2236	»	Ժէ—ԺԶ դար
m—4287	»	1640 թ.
n—7726	»	Ժէ դար
o—7707	»	1611 թ.
p—3768	»	Ժէ դար
r—7714	»	1714 թ.

Հրատարակություններ

- Կ—Կ. Կոստանյան, Մկրտիչ Նաղաշ և իւր տաղերը, 1898, էջ 20:  
Մ. Մկրյան, 13—18-րդ դդ. հայ աշխարհիկ գրականություն, 1938, էջ 65:  
Արտատպված է Կ. Կոստանյանի հրատարակությունից:

6. Ի Նաղաշէ ասացեալ վասն ունայնութեան աշխարհիս  
(«Յրագ է ու սուտ եղբա՛յրք, աշխարհիս բաներն ի լման...»)

Առաջին անգամ տպագրվել է 1513 թ. տպագիր տաղարանում «Նաղաշի է ասացեալ» խորագրով: Գրանից 372 տարի հետո, 1885 թ. «Մասիս» ամսագրում հրատարակել է Հ. Յ. Էկինյանը՝ վերագրելով Նաղաշ Հովնաթանին: Էկինյանն իր այդ ընդօրինակությունը վերնագրել է «Տաղ Նաղաշ Յովնաթանի ասացեալ»: Երրորդ անգամ տաղը առանց վերնագրի Ղևոնդ Հովնանյանի համառոտ ուսումնասիրությանը հրատարակվել է «Հանդէս ամսօրեայի» 1896 թ. փետրվարի համարում, որտեղ ցույց չեն արված ձեռագրի գրության տեղն ու ժամանակը:

1898 թ. այս տաղը չորրորդ անգամ հրատարակել է Կ. Կոստանյանը իր «Մկրտիչ Նաղաշ և իւր տաղերը» ուսումնասիրության հավելվածում՝ ընդօրինակելով 1695 թ. ձեռագիր տաղարանից:

Տաղը պահպանված է Մատենադարանի հետևյալ աղբյուրներում.

a—9271,	ժամանակը՝	Ժէ—ԺԶ դար
b—679	»	1660 թ.
c—7708	»	ԺԶ դար
d—697	»	ԺԶ դար
e—8448	»	1697 թ.
f—2394	»	Ժէ դար
g—5992	»	1645 թ.
h—3050	»	1592 թ.
i—3228	»	ԺԹ դար
k—5668	»	1683 թ.
l—1990	»	ԺԹ դար
m—5623	»	1602 թ.
n—8323	»	1624 թ.: Ընկած է «Ինչ շահ է քո զուր դատիլը» տաղից հետո իբրև նրա շարունակություն:
o—3411	»	Ժէ դար: Այս տաղին իբրև անմիջական շարունակություն ավելացված է «Ինչ շահ է քո զուր դատիլը» տաղը:
p—2127	»	Ժէ դար
r—7707	»	1611 թ.
s—4426	»	1765 թ.
t—7508	»	1670 թ.
u—2236	»	Ժէ—ԺԶ դար
v—7732	»	1623 թ.
w—9597	էջ 94ա	ԺԶ դար
x—9597	էջ 217ա	ԺԶ դար
y—7712	ժամանակը՝	ԺԹ դար
z—3768	»	Ժէ դար: Տաղին որպես շարունակություն հաջորդում է «Ինչ շահ է քո զուր դատիլը»:
E—1989,	»	1647 թ.:
F—7714,	»	1714 թ.: Միայն սկզբի 4 տողը, որին անմիջապես հաջորդում է Խաչատուր Կեչառեցու «Եղբայրք ձեզ խրատ մի տամ» տաղը:

Հրատարակություններ

- S—Տաղարան, 1513, էջ՝ 21բ:  
M—«Մասիս», 1885, էջ՝ 374:  
Հ—«Հանդէս ամսօրեայ», 1896, էջ 54—55 (նույնը նաև Հ. Ղ. Հ., Հետազոտութիւնք, 3-րդ գիրք, էջ 25):  
Կ—Կ. Կոստանյան, Մկրտիչ Նաղաշ և իւր տաղերը, 1898, էջ 3:  
Ա—«Արարատ», 1900, № 1:  
Ա—«Անահիտ», 1900, էջ 164:  
A. Tchobanian, Les trouvères Arméniens, Paris, 1906, էջ 155:  
«Поэзия Армении с древнейших времен до наших дней», под редакцией, со вступительным очерком и примечаниями В. Брюсова, Москва, 1916, էջ 201—«Суета мира» խորագրով:

Մ. Մ կ ր յ ա ն, 13—18-րդ դարերի հայ աշխարհիկ գրականություն, 1938, էջ 67: Արտատպված է Կոստանյանի հրատարակությունից:

„Антология Армянской поэзии“ под ред. С. С. Арутюняна и В. Я. Кирпо-тина, Москва, 1940, էջ 262, „Света мира“.

«Ղևաիր էջեր», Պետհրատ, Երևան, 1946, էջ 266:

### 7. Նորին Նաղաշ վարդապետի ասացեալ («Ինչ շահ է քո գուր դատիլդ...»)

Առաջին անգամ 1900 թ. տպագրվել է «Արարատ» ամսագրում, որպես «Երազ է սուտ եղբայր» տաղի շարունակություն:

Տաղը պահպանվել է Մատենադարանի հետևյալ աղբյուրներում.

ա—3411, ժամանակը՝ ժէ դար

բ—2127 » ժէ դար

գ— 771, ժամանակը՝ ժԲ դար: Այս ձեռագրում տաղն ընդամենը երեք տուն է, որի երրորդ՝ հետևյալ տունը գրիչն է ավելացրել: «Ասացեալ Սողոմոնի, թէ ամէնայն տնկեալք խլիսցին Ամէն շինեալք քակի, որ իւրոյ հետըն շերևի, Ամէն ծնեալք մեռանին, որ յնլանեն ի յաշխարհի Նոյնպէս փմացիր դու, գրեզ որ օրն այն քեզ այլ հանդիպի»:

դ—7508, ժամանակը՝ 1670 թ.

ե—2236 » ժէ դար

ֆ—7732 » 1623 թ.

հ—5623 » 1602 թ.

ի—8323, » 1624 թ. ընկած է Կեչառեցու «Ծս եմ կորուսեալ ոչխար» տաղից հետո որպես նրա շարունակություն:

կ—3768 » ժէ դար

Հ ր ա տ ա ր ա կ ու թ յ ու ն ն ե ր

Ա—«Արարատ», 1900, № 1:

### 8. Խրատական բաներս ի Նաղաշ վարդապետի ասացեալ («Անցանէ մեծութիւն և փառք աշխարհիս...»)

Առաջին անգամ 1886 թ. այս տաղը տպագրել է Հովհ. Մկրտչանը «Երկրագունդ» ամսագրում: 1895 թ. «Արարատ» ամսագրում հարտարակել է Ն. Քարամյանը «Հին հայ երգիչներ» ընդհանուր խորագրի տակ: 1898 թ. Կ. Կոստանյանը 1617, 1627, 1695 թվականներին գրված ձեռագրերի համեմատությամբ հրատարակել է «Մկրտիչ Նաղաշ և իւր տաղերը» ուսումնասիրության հավելվածում՝ «Վասն մահուան» խորագրով:

Տաղը պահպանված է Մատենադարանի հետևյալ աղբյուրներում.

ա—2672, ժամանակը՝ 1607 թ.

բ—3411 » ժէ դար

գ—3498, ժամանակը՝ 1624 թ.

դ—7708 » ժԲ դար

ե— 424 » ժէ դար

ֆ—2127 » ժէ դար

գ—8968 » 1568 թ.

հ—8323 » 1624 թ.

ի—2736 » 1621 թ.

կ—2482 » ժԶ—ժէ դար

լ—7717 » 1693 թ.

մ—5120 » ժէ դար

ն—3162 » ժԶ—ժէ դար

օ—3884 » 1478 թ.

բ—7709 » 1620 թ.

ր—5668 » 1683 թ.

ս—3189 » 1631 թ.

տ—1990 » ժԹ դար

ւ—7508 » 1670 թ.

վ—1637 » ժէ դար

ա—3411 էջ 136 ժէ դար

ա—3081 » ժէ—ժԶ դար

բ—7726 » ժէ դար

զ—5623 » 1602 թ.

Ա—2236 » ժէ—ժԶ դար

Բ—7732 » 1623 թ.

Դ—3768 » ժէ դար

Ե—9425 » ժէ դար

Բ—7720 » 1639 թ.

Լ—1989 » 1647 թ.

Հ ր ա տ ա ր ա կ ու թ յ ու ն ն ե ր

«Երկրագունդ», 1886 թ.:

Կ—Ստ. Կանայան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Թիֆլիսի ներսիսյան դպրոցի, 1893, էջ 62 (յուրաքանչյուր 4 տողից հետո «Մի դատիր...»):

Ա—«Արարատ» 1895, էջ 128:

Կ. Կոստանյան, Մկրտիչ Նաղաշ և իւր տաղերը, 1898, էջ 5:

### 9. Նորին ի Նաղաշէ ասացեալ («Ամենայն փառք մարդոյ դատարկ և ունայն...»)

Այս տաղը ձեռագիր աղբյուրներում հանդիպում է և՛ Նաղաշի, և՛ Առաքելի անուններով: Սակայն ինչպես Երևանի Մատենադարանի, այնպես էլ Մխիթարյանների Մատենադարանի բազմաթիվ ձեռագրերում բանասեր Զ. Պոստոլյանի վկայությամբ Առաքելի անունով պահպանված այս տաղի օրինակները մի մասը վերջում ունի մի ակրոստիքոս: Այդ տողերն են՝

«Անիմաստ Առաքել քեզ ճարակ արայ  
 Ռան կենաց ի յերկինս քեզ առաջնորդեայ.  
 Աստուծոյ խնամողին քեզ յանձին արայ,  
 Քանզի նա հայրաբար վասն քո հոգայ.  
 Երկնչիւ մեղաց դարձիւր և զղջա,  
 Լալագին հառաչմամբ զաստուած աղաչեա,  
 Ի շրթանց օրհնութեանն պտուղն ծայայ,  
 Էղիլոց ստեղծողին որ կայ և մնա»:

abdgghik ձեռագրերը յուրաքանչյուր 4 կամ 8 տողից հետո ունեն նաղաշի հայտնի  
 կրկնատողերը.

Մի՛ խարիր, մի՛ խարիր, մեղօք մի՛ խարիր,  
 Մի՛ մնար, մի՛ մնար անդարձ ի մեղաց,  
 Մի՛ մատներ, մի՛ մատներ զհոգիդ տանջանաց:

Այս տաղը պահպանված է Մատենադարանի հետևյալ աղբյուրներում.

- |         |           |  |
|---------|-----------|--|
| a—5668, | ժամանակը՝ | 1683 թ.  |
| b—3411  | էջ 81բ    | Ժէ դար   |
| c—3411  | էջ 114բ   | Ժէ դար   |
| d—2100, | ժամանակը՝ | 1631 թ.  |
| e—1637. | »         | Ժէ դար: Այս ձեռագրում էլ վերջում կցված է «Առաքելի է»<br>ակրոստիքոսը: |
| f—2736  | »         | 1621 թ.  |
| g—2672  | »         | 1607 թ.  |
| h—3081  | »         | 1617 թ.  |
| k—9597  | »         | ԺԸ դար   |
| l—3768  | »         | Ժէ դար   |
| m—1889  | »         | 1647 թ.  |

Հ ր ա տ ա ր ա կ ու թ յ ու ն

Ա—«Արարատ», 1895, էջ 127, «Տաղ յԱռաքել վարդապետի Բաղնշեցոյ»:

### 10. Խրատք և կշտամբանք անձին նաղաշ վարդապետի ասացեալ («Անձն իմ, արի ազօթէ դէմ արարողին...»)

Այս տաղի տողերի սկզբնաբառերը սկսվում են այբուբենի տառերով Ա—Ք: Ծնորհայու հայտնի «Առաւօտ լուսոյ» տաղի յուրաքանչյուր երեք տողն սկսվում է այբուբենի մեկ տառով. նաղաշի այս տաղը կազմված է այնպես, որ յուրաքանչյուր երկու տողն էլ սկսվում այբուբենի մեկ տառով. ԱԱ, ԲԲ, ԳԳ և այլն:

Առաջին անգամ տպագրվել է 1513 թ. տպագիր տաղարանում, «Տաղ հոգոյ» խորագրով:

1898 թ. հրատարակել է Կ. Կոստանյանը «Մկրտիչ նաղաշ և իւր տաղերը» ուսումնասիրության հավելվածում: Կ. Կոստանյանին սկզբնաղբյուր է ծառայել 1659 թ. ձեռագիր տաղարանը, որի մեջ տաղն ունի «Խրատ և կշտամբանք անձին նաղաշ վարդապետի ասացեալ» խորագիրը:

Այս տաղը պահպանված է Մատենադարանի հետևյալ աղբյուրներում.

- |         |           |   |
|---------|-----------|---|
| a—424,  | ժամանակը՝ | Ժէ դար  |
| b—2736  | »         | 1621 թ.   |
| c—2127. | »         | Ժէ դար. այս ձեռագրում տաղի առաջին էջերը թափ-<br>ված են: |
| d—7709  | »         | 1620 թ.   |
| e—3228  | »         | ԺԹ դար  |
| f—7726  | »         | Ժէ դար  |
| g—1637  | »         | Ժէ դար  |
| h—2672  | »         | 1607 թ.   |
| i—2323  | »         | 1624 թ.   |
| k—7993  | »         | 1672 թ.   |
| l—2236  | »         | Ժէ—ԺԶ դար   |
| m—7732  | »         | 1623 թ.   |
| n—7714  | »         | 1714 թ.   |
| o—3411  | »         | Ժէ դար  |
| p—7707  | »         | 1611 թ.   |
| r—3595  | »         | Ժե—ԺԶ դար   |
| s—7508  | »         | 1670 թ.   |
| t—3768  | »         | Ժէ դար  |
| E—1989  | »         | 1647 թ.   |

Հ ր ա տ ա ր ա կ ու թ յ ու ն ե ր

Տ—«Տաղարան», 1513, էջ 8բ:

Կ—Կ. Կոստանյան, Մկրտիչ նաղաշ և իւր տաղերը, 1898, էջ 23:

Ե ձեռագրի տարբերակը մեծ գանազանություններ ունենալու պատճառով տալիս  
 ենք ամբողջովին:

### ԴԱՐՁԵԱԼ Ի ՆԱԳԱՇԷ

Անձն ի՛մ, արի ողօթէ ի մէջ գիշերիս,  
 Արտասուօք պաղատէ դէմ արարողին,  
 Բարբառեալ բողբէ սուրբ աստուածածնին,  
 Բարեխօս լինելով որդւոյն միածնին.  
 Գովելով գովէ զտէրն, որ եկն ի խաչին,  
 Գունդք ամեն հրեշտակաց ըզնա գովէին:  
 Դատաստան դու լիշէ և զօրն ահագին,  
 Դողալով սասանեա յաւուրն ահեղին,

Եկ պատմե՛, զինչ գործեալ ես դու, քահանային,  
Եղկելի՛, որ շքնկնիս ի հուրն ահագին:  
Զըղջացիր ի մեղաց և առ թողութիւն,  
Զինչ մարմնովդ ես գործեր և առ քեւութիւն:  
է թէ մեղք է տիրել քեզ յայսմ աշխարհիս,  
է ճարակն է ի հօս, թէ խոստովանիս:  
Ընդ մարմնովդ յաշխարհիս քանի ըզբաղիս,  
Ընդ հոգովդ միացիր, մինչ որ մեռանիս:  
Թագաւոր ես մարմնովդ ի յայսմ աշխարհիս,  
Թշնամոյն չէ լինի թէ յաղթահարիս:  
Ժողովէ զխելքդ ու զմիտքդ, յորժամ պարապիս,  
Ժամանակ մաստ թէ լաս և անդ ծիծաղիս:  
Ի յերկրիս նաւ շինէ ի յայս ծովակիս,  
Ի յերկրիս ողորկէ զինչ զանձ որ ունիս:  
Լաւ աստէն աշխատիս ՚ւ անտէն հանգչիս,  
Լաւ աստէն մեռանիս ՚ւ անտէն ապրբիս:  
Խաւարէ աչք հոգւոյդ ի վեր շի նայիս,  
Խափանէր զեղջ սրտիդ որ շարտասուիս:  
Ծով մեղաց զքեզ կապեր է և ըզբաղեր,  
Ծուլութեամբ ըզքո կեանքդ յաշխարհս անցուցեր,  
Կամաւոր ես գործեր զինչ մեղք կայ կուտեր,  
Կրակին ես քաղում խրոխով ժողովեր,  
Հայրենիք ի հօն շես բնաւ դու շիներ,  
Հոգւոյդ ել կայ, դու ո՛ւր կամիս դադարել:  
Զին եկել քո հոգւոյդ դու խիտտ ես սառեր,  
Զայն մահու է մօտել և շես սասանել:  
Ղետական օրինաց շես խսկի լսել,  
Ղերէոս առաքեալն եկեալ քարոզել:  
Ճար շունիս յաշխարհիս յերկար կենալու,  
Ճանապարհ շես հորդեր անտեն զնալու:  
Մա՛րդ դու չէ՛ր ես պարապ զողջ օրն ի լալու,  
Միթէ շես աստէնէս անտէն զնալու:  
Յաստուծոյ քեզ խնդիր ունիս գալու,  
Յաստէնէս ի յանտէն ըզքեզ տանելու:  
Ննդ է դուռն և անձով քեզ մտանելու,  
Նշանաւ սուրբ խաչին ես անցընելու:  
Շատ շալակ յաշխարհէս ունիս տանելու,  
Շալակիդ ճար երա քեզ աղօթելու:  
Ով ըզքեզ յօրինեաց ի յափ մի հոգոյ,  
Ողորմի՛ր ՚ի քի սրտէդ հանէ քեզ առու:  
Զունիս զանձ և զումաշ, որ տաս քո հոգւոյ,  
Զես ելներ արտասուեր ի մէջ գիշերոյ:  
Պաղատեա՛ւ արտասուեա դու ամէն ժամու,  
Պահապան քեզ խնդրեա հրեշտակս աստուծոյ,  
Քերմեռանդ արտասուք դու բեր քո հոգոյ,  
Ջանք արա, որ շանկնիս ի մէջն ի հրոյ:

Ռահ լուսոյ ճանապարհ հորդէ քո հոգոյ,  
Ռամիկ աշխարհքս ամէնն ի ստոյ:  
Սաղմոսիք ՚ւ օրհնութեամբ երգէ զքո լեզուդ,  
Սատանայի շար հրեարն ի քեզ շնէ մուտ:  
Վերնական օրինաց թէ լինիս հմուտ,  
Վաղի յօրն ատենին գտնուս քեզ ի մուտ:  
Տունկ եղեր աստուծոյ, քան դուր կանաչես,  
Տերևով զարգարեա, որ պտղաբերես:  
Րարունոյն հրամանան յաշխարհս եկեալ ես,  
Րարունոյն փառք առնես, թէ զայդ կատարես:  
Յողալով արտասուք թէ լապտեր վառես,  
Յնծութեամբ ըզքրիտտոս մտեալ տեսանես:  
Իխրասէր Արրահամ և աստուածատես,  
Հիւանդաց ՚ւ օտարաց տեղ ոչ խնայես:  
Փառք առնուս յարարչէն, թէ զայդ կատարես,  
Փոխանակ բարուս զկեանքն ժառանգես:  
Քեզ երգեմք օրհնութեամբ զի դու միայն ես,  
Քերովբէք, Սերովբէք երգեն փառքք քեզ:  
Այ նաղաշ դու լսէ, զինչ որ քարոզես,  
Ինչ շահ է քեզ ասելո՞ւ երբ ոչ կատարես:  
Որչափ շատ մեծութիւն և մալ ժողովես,  
Նա թողուս օտարաց ՚ւ ի հող մըրտանես:

### 11. Ողբ ի նաղաշ Մկրտիչ եպիսկոպոսէ վասն աղայոց մահուան («Աւարիչն արարածոց մեզ բարկացաւ...»)

Առաջին անգամ տպագրվել է 1513 թ. տպագիր տաղարանում՝ «Ողբ վասն մեռելի նաղաշի» խորագրով: 1885 թ. Հ. Էկինյանը, այդ տաղը ընդօրինակելով մի գրչագիր տաղարանից, տպագրել է «Մասիս» ամսագրում՝ տալով համառոտ տեղեկություններ նաղաշի կյանքի ու գործունեության մասին: 1893 թ. «Յուզակ հայերէն ձեռագրաց ներսիսեան դպրոցի» աշխատության մեջ Ստ. Կանայանը հրատարակել է այս տաղը՝ տալով մանրամասն տեղեկություններ գրչագիր օրինակի, գրության տեղի ու ժամանակի մասին: Այնուհետև 1896 թ. Ղեկոյ Հովնանյանը այս տաղի մի այլ տարբերակը հրատարակում է «Հանդէս ամսօրեայի» մեջ՝ համառոտ տեղեկություններ տալով նաև Մկրտիչ նաղաշի ու նրա ստեղծագործության մասին: Իր այդ ուսումնասիրությունը հետագայում հեղինակը հրատարակել է «Հետազոտությունք» խորագիրը կրող 3-րդ գրքուկում: Հովնանյանի հրատարակած օրինակը անխորագիր է և 5 տուն պակաս (4, 13, 14, 18, 20):

1898 թ. Կ. Կոստանյանը անկախ վերահիշյալ հրատարակություններից, ընդօրինակել է այդ տաղը 1645 թ. ձեռագիր Մաշտոցից և, համեմատելով 1601 և 1617 թթ. գրված տաղարաններում պահպանված օրինակների հետ, հրատարակել է «Մկրտիչ նաղաշ և իւր տաղերը» ուսումնասիրության հավելվածում՝ «Ողբ վասն մեռելի» խորագրով:

Այս տաղը պահպանվել է Մատենադարանի հետևյալ աղբյուրներում.  
ա—3162, ժամանակը՝ ժԶ—Ժէ դար: Այս ձեռագրում նախավերջին հիշատակարան-տունը կեղծված է. Մահատարածամի 1469 թվականը համարում է 1329-ը.

«Ի յար հարիւր երաւասուն բրականին,  
Եւ համարով ամբ որ անցեն ուր անլին...

Սա միակ կեղծումն է, որ թերևս թյուրիմացության արդյունք է:  
Մյուս բոլոր ձեռագրերում նաղաշի

«Ի հայոց մեծ բուականին յինն հարիւրին  
Եւ համառօտ, այլ անլի տասնևութին...» տողերը մնացել են անա-  
ղարտ:

3162 ձեռագիրը 32-րդ տողից հետո ունի հետևյալ շորս տողը:

Այստեղ եհաս անեղ հրաման աստուածադիր,  
Հրեշտակն եկեալ ի յարարչէն հագոյս խնդիր:  
Զհոգին անեալ սուրբ հրեշտակին ետ ձեռագիր,  
Եւ գեղեցիկ մարմին ի հոգ դարձաւ յերկիր:

ճ—5823,	ժամանակը՝	1557 թ.
Շ—424	»	ժէ դար
Ճ—825	»	1658 թ.
Շ—8448	»	1697 թ.
Ի—3594	»	1636 թ.
Գ—9023	»	ժէ դար
Ի—9033	»	1674 թ.
Ի—4348	»	1645 թ.
Ի—8982	»	1717 թ.
Լ—3081	»	1617 թ.
Մ—5841	»	ժէ դար
Ո—5672	»	1683 թ.
Օ—3438	»	ժէ դար
Ք—5623	»	1602 թ.
Ր—2736	»	1621 թ.
Տ—2482	»	ժԶ—ժէ
Ւ—7726	»	ժէ դար
Վ—5284	»	ժէ դար
Վ—3768	»	ժէ դար
Մ—3112	»	1750 թ.
Կ—5835	»	1671 թ.
Զ—616	»	1625 թ.
Ա—8210	»	1656 թ.
Բ—7720	»	1639 թ.
Ե—1989	»	1674 թ.*
Բ—9575	»	1620 թ.
Դ—965	»	1432 թ.

Հ ր ա տ ա ր ա կ ու թ յ ու ն ն ե ր

Տ—«Տաղարան», 1513, էջ 27ր:

\* № 1989 ձեռագրի էջ 32-ում պահպանված է տաղի մի այլ ընդօրինակու-  
թյան միայն վերջին երկու տունը:

Գ—«Գիրք մեծ Մաշտոց կոչեցեալ», 1807, էջ 124:

Մ—«Մասիս», 1885, էջ 374—376:

Կ'—Ս տ. Կ ա ն ա յ ա ն, Յուցակ հայերէն ձեռագրաց ներսիսեան դպրոցի,  
1893, էջ 60:

Հ—«Հանդէս ամսօրեայ», 1896, էջ 54: Տե՛ս նաև Հ. Ղ. Յովնանեան, Հետա-  
դոտութիւնք, էջ 24—25:

Կ—Կ. Կ ո ս տ ա ն յ ա ն, Մկրտիչ Նաղաշ և իւր տաղերը, 1898, էջ 9:

Մ. Մ կ ր յ ա ն, 13—18-րդ դարերի հայ աշխարհիկ գրականութիւն, 1938,  
էջ 68: Արտատպւած է Կ. Կոստանյանի հրատարակութիւնից:

## 12. Ողբ Նաղաշի վասն ննջեցելոցն

(«Ես գիտէի, զաշխարհս ինձ մուլք էր տուած...»)

Առաջին անգամ տպագրվել է 1807 թ. «Գիրք մեծ Մաշտոց կոչեցեալում»՝  
առանց հեղինակի անվան և առանց խորագրի:

1853 թ. «Ազգային ուսմական երգ մը» խորագրով տպագրվել է «Բազմա-  
վէպ»-ում, էջ 212—213:

Այս տաղի «Բազմավէպ»-ի օրինակը վերջում ունի հետևյալ 16 տողը.

Մահն հանդիպելոց է ամենեցուն,  
Զայն ընդ մտաւ անմեծ. շունիմ դաղարումն,  
Ողբամ հառաչելով ես գօրն ի բուն,  
Թէ ի՛նչ նուհապ տամ ես իմ Աստուծոյն:

Մեղօք եմ ըմբռնեալ տոռամբ թշնամույն,  
Որսայ և ընկրկէ զիս ի գուր տղմայն,  
Զի միշտ և հանապազ ընթանամ ի նոյն,  
Գրեամ որպէս զվարագն ի ժահահոտոյն:

Մեղայ գոշեմ առ քեզ, Աստուած ամենի,  
Զի ոչ բողցես իմ անձ որպէս գնայի.  
Զըզեա յողորմութիւն ուսկանաւ շնորհի  
Եւ հան զիս անդընդոց ի խորոց մեծի:

Գրեմ առ քեզ Հերամ իւրաւ հոգեւոր,  
Թէ ես մանուկ ուշիմ մաքուր մտաւոր,  
Ընկալ առ քեզ զիւրաւս իմ որպէս խրճան,  
Իմաստութեամբ և ուսմամբ լեր դու գօրաւոր:

Այս տաղը պահպանված է Մատենադարանի հետևյալ աղբյուրներում.

ա—2482,	ժամանակը՝	ժԶ—ժէ դար
բ—9271	»	ժէ—ժԸ դար
Շ—8710	»	ժէ դար
Ճ—424	»	ժէ դար
Ե—616	»	1625 թ.
Ի—697	»	1660 թ.
Գ—5623	»	1602 թ.
Ի—2736	»	1621 թ.

i—3112,	ժամանակը՝	1750 թ.
k—7717	»	1693 թ.
l—5823	»	1557 թ.
m—3081	»	1617 թ.
n—9075	»	ժէ դար
o—2236	»	ժէ—ժԸ դար
p—7709	»	1620 թ.
r—5841	»	ժէ դար: Ունի ընդամենը 1—28 տողերը:
s—5830	»	1694 թ. 28-րդ տողից հետո նոր վերնագիր՝ «Տաղ նոր փեսայի» և շարունակվում է նույն տաղը:
t—5672	»	1683 թ.
u—3162	»	ժԶ—ժէ դար
v—2394	»	ժէ դար
w—5948	»	1718 թ. 28-րդ տողից հետո կարմիր թանաքով ավելացված է «Փոխն դձայն»:
x—5835	»	1671 թ. 28-րդ տողից հետո կարմիր թանաքով ավելացված է՝ «Եղբայր փոխն դձայն»:
y—8448	»	1697 թ.
z—3594	»	1636 թ.
A—3768	»	ժէ դար
B—8210	»	1656 թ.
E—1989	»	1647 թ.
R—9600	»	1691 թ.
H—9575	»	1620 թ.

Հ ր ա տ ար ա կ ու թ յ ու ն ն ե ր

- Գ—«Գիրք մեծ Մաշտոց կոչեցեալ», 1807, էջ 122:  
 Բ—«Բաղմավէպ», 1853, էջ 212—213:  
 Բ—Միք. Միսնասրեան, Քնար հայկական, 1868, էջ 508: Արտատպված է 1853 թ. «Բաղմավէպ»-ից:

13. Տաղ վասն դարիպի ասացեալ  
 («Հնգի՛, մի ասե՛ր դարիպ, թէ չէ՛ իմ սիրտս կարունի...»)

Առաջին անգամ տպագրվել է «Բաղմավէպ»-ում, 1861 թ. «Ազգային երգ» խորագրով: 1893 թ. տաղը հրատարակել է Ստ. Կանայանը «Ցուցակ հայերէն ձեռագրաց ներսխեան դպրոցի» աշխատության մեջ՝ «Տաղ դարիպի» խորագրով, որտեղ համառոտ տեղեկություններ է տրված նաև գրչագրի մասին՝ ցույց տալով գրություն ժամանակն ու տեղը: 1898 թ. տաղը հրատարակել է Կ. Կոստանյանը «Մկրտիչ Նաղաշ և իւր տաղերը» ուսումնասիրության մեջ, ընդօրինակելով 1695 թ. ձեռագիր տաղարանից և համեմատելով 1617 թ. մի այլ ձեռագիր տաղարանի հետ, որտեղ տաղն ունի «Տաղ վասն դարիպի վերայ խիստ ողորմելի» խորագիրը: Կ. Կոստանյանի հրատարակած օրինակն ունի «Վասն դարիպի» խորագիրը:

Այս տաղը պահպանված է Մատենադարանի հետևյալ աղբյուրներում.

- ա—1661, ժամանակը՝ 1594 թ.  
 Բ—7717 » 1693 թ.  
 Ը—4426 » 1765 թ. ձեռագիրը 24-րդ տողից հետո ունի՝ հետևյալ

6 տողը.

Էղբար՛ դարիպս ասե՛ք, թէ՛ քաղկես ելի ու գնայ,  
 Գիղիմ՛ շատ դարիք տեսէ՛ր, որ երկիրս իսկի շահ չի կայ:  
 Ով դարիպին վաղ ասէ, թող ին՛քն ալ դարիպ լինե՛նայ,  
 Ղարիբուրթինն ին՛ք հառչէ, զորն ի բուն ին՛քն երե՛այ:  
 Ով դարիպին զինչ կասէ, զին՛քնար դարիք չէ լինայ.  
 Ղարիբուրթինն շատ կեցայ, ես գիղիմ ինչպես կու լինայ:

՞—7714, ժամանակը՝ 1714 թ.—16-րդ տողից հետո ունի.

Գնայ դու գործէ՛ բարի, և արայ քապտի՛ր դու քեզի.  
 Քրիստոս քեզ եղբայր շինէ՛ և հեշտակն արայ սիրելի.  
 Որ անդէն հոգիս չի տանջի (23—24 տողերը աղավաղված )

24-րդ տողից հետո ունի՝

Գնա դարիպին ասէ, թող ելնու քաղկէն ու երթայ,  
 Ես շատ դարիպ եմ տեսեր, դարիպին իսկի շահ չկայ:  
 Ով դարիպին վատ ասէ, թող ին՛քն ալ դարիպ լինե՛նայ,  
 Երթայ ի դարիպուրթին, զորն ի բուն զին՛քն երե՛այ:  
 Ղարիպն ի յատար երկիր, ախ թէ՛ ինչ դժար կու լինի,  
 Թէ՛ զորն շէ՛քէր ուտէ, քան զլեղի դառն կու քվի:

1—9468, ժամանակը՝ 1682 թ. 24-րդ տողից հետո ունի.

Գրեայ դարիպին ասէ, թէ՛ ելնում քախսես ու գնամ,  
 Ես շատ դարիպ եմ տեսեր, դարիպին շահ իսկի չիկայ:  
 Ով դարիպին բան ասէ, թող ին՛քն ալ դարիպ լինայա [?],  
 Երթա ի դարիպուրթին, զորն ի բուն ըզին՛քն երե՛այ:  
 Ով դարիպին բան շասէ, զին՛քնար դարիպ չի լինա  
 Ես դարիբուրթին կեցայ, զիդեցայ, թէ՛ ինչպես կու լինա:

Այս վեցական տողերը, որ ամենայն հավանականությամբ գալիս են մի աղբյուրից, անտարակույս հետագա գրիչների ձեռքով են ավելացված: Նաղաշը, որ իր ամբողջ կյանքում ապրում էր ժողովրդի, հատկապես աշխատավորական լայն զանգվածների կյանքով և ինչպես իր հասարակական գործունեության, այնպես էլ ստեղծագործության մեջ քարոզում էր ներողամտություն, բարեգործություն և այլն, հազիվ թե այսպիսի խոսքեր ասեր որևէ մեկի հասցեին:

Արվեստի տեսակետից էլ այս տողերը բնավ համահնչուն չեն ամբողջ տաղի թե՛ լեզվին, թե՛ բովանդակությանը: Նաղաշն իր այս ոտանավորով մի հիմնական նպատակ է ունեցել, մխիթարել ու հուսադրել օտարության մեջ տառապող դարիպին, մինչդեռ այս տողերը բոլորովին ալ բովանդակություն ունեն: Ամբողջ տաղի և սրանց հանգավորման մեջ ևս կա հակասություն. Նաղաշը իր ոտանավորը գրել

է լի և նի հանգերով, որոնք դյուրահնչուն ու երածշտական են դարձնում ոտանավորը. մինչդեռ այս վեց տողերը բոլորն էլ վերջանում են այ հանգով:

d—6588,	ժամանակը՝ 1850 թ.
f—7193	» ժէ դար
g—3594	» 1636 թ.
h— 33	» 1550 թ.
i—4287	» 1640 թ.
k—1990	» ժԹ դար
m—7720	» 1639 թ.
n—9075	» ժէ դար
o—3081	» 1617 թ.
p—7709	» 1620 թ.
r—5623	» 1602 թ.
s—5668	» 1682 թ.
t—1989	» 1647 թ.

Հ ր ա տ ա ր ա կ ու թ յ ու ն ն ք

Բ—«Բազմավէպ», 1861, էջ 268:

Բ'—«Բազմավէպ», 1875, էջ 217: Արտատպված է 1861 թ. «Բազմավէպից»:

Ս—Ս տ. Կ ա ն ա յ ա ն, Յուցակ հայերեն ձեռագրաց ներսիսեան դպրոցի, 1893, էջ 63—64:

Կ—Կ. Կ ո ս տ ա ն յ ա ն, Մկրտիչ Նաղաշ և իւր տաղերը, 1898, էջ 35:

Մ. Մկրյան, 13—18-րդ դարերի հայ աշխարհիկ գրականութուն, 1938, էջ 77:

14. Նաղաշի ասացեալ է վասն դարիպացն

(«Աստուծոյ մարդասիրին փառք յաւիտեան...»)

Առաջին անգամ տպագրվել է 1513 թ. տպագիր տաղարանում՝ «Տաղ դարիպի նաղաշի է ասացեալ» խորագրով: 1862—63 թթ. այս տաղը տպագրվել է «Առձուի Վասպուրական» հանդեսում, որտեղ հոգևածագիրը տաղը համարում է Մուրատ Խիկարի ստեղծագործություն՝ գրված 1699 թ.: Հետաքրքրական է, որ 1896 թ. «Հանդէս ամսօրեայ»-ում բազմավաստակ հայագետ Ալիշանն էլ պաշտպանում է այդ կարծիքը: Այս հեղինակներից ոչ մեկը, սակայն, չի հիշատակում, թե ինչ հիմքով է տաղը համարվել Մուրատ Խիկարի գործը:

1898 թ. Կ. Կոստանյանը այս տաղը ընդօրինակել է 1695 թ. տաղարանից և համեմատելով 1617 թ. մի այլ տաղարանում եղած օրինակի հետ («Տաղ դարիպուսեան ի նաղաշէ ասացեալ») հրատարակել է «Մկրտիչ Նաղաշ և իւր տաղերը», ուսումնասիրության հավելվածում: Կոստանյանի օրինակն ունի «Վասն դարիպի» խորագիրը:

Այս տաղը պահպանված է Մատենադարանի հետևյալ աղբյուրներում.

a—7726,	ժամանակը՝ ժէ դար
---------	------------------

b—8710,	ժամանակը՝ ժէ դար
c— 610	» ժԴ դար
d—8674	» ժԼ դար
e— 616	» 1625 թ.
f—2398	» 1613 թ.
g—3594	» ժէ—ժԶ դար
h—8702	» ժէ դար
i—5835	» 1671 թ.
k—5948	» 1718 թ.
l—2482	» ժԶ—ժէ դար
m—3162	» ժԶ—ժէ դար
n—3540	» 1406 թ.
o—5069	» 1615 թ.
p—3424	» 1606 թ.
q—8210	» 1656 թ.
r—5306	» ժէ դար
s—5672	» 1683 թ.
t—5830	» 1694 թ.
u—9597	» ժԼ դար
v—3081	» 1617 թ.
w—8219	» ժԼ դար
x—9075	» ժէ դար
y—5841	» ժէ դար
z—5284	» ժէ դար
A—3050	» 1592 թ.
B—3112	» 1750 թ.
E—2236	» ժէ—ժԼ դար
F—7717	» 1693 թ.
H—3438	» ժէ դար
R—5823	» 1557 թ.
T—9536	» ժԹ դար
L—1989	» 1647 թ.

Հ ր ա տ ա ր ա կ ու թ յ ու ն ն ք

S—«Տաղարան», 1513, էջ 11բ:

Գ—«Գիրք մեծ Մաշտոց կոչեցեալ», 1807, էջ 130:

Ա—«Արձուի Վասպուրական», 1862—63, էջ 146:

Կ—Կ. Կ ո ս տ ա ն յ ա ն, Մկրտիչ Նաղաշ և իւր տաղերը, 1898, էջ 37:

A. Tchobanian, Les trouvées Arméniens, 1906, էջ 157:

Մ. Մկրյան, 13—18-րդ դարերի հայ աշխարհիկ գրականութուն, 1938, էջ 78:

«Ընտիր էջեր», Պետհրատ, Երևան, 1946, էջ 269:

14-ա. Տաղ վասն դարիբի կենաց և մահու ասացեալ տեսան ներսես վարդապետի

(«Ղարիբն յորժամ արար խորհուրդ գնալոյ»)»

Տաղը պահպանված է Մատենադարանի միայն մեկ (№ 1990, ժամանակ՝ ժի դար) ձեռագրում:

Այս տաղը «Աստուծոյ մարդասիրին փառք...» ոտանավորի տարբերակը կարելի է համարել: Այստեղ նորն այն է, որ նկարագրվում է պանդխտություն մեկնող շինականի հարազատներին հրածելու տալու սրտակեղեք պահճը: Տաղը վերջում ունի հիշատակարան, որտեղ երգողն իրեն անվանում է Պանդերեամաշ Մկրտիչ:

Երգողք տաղիս յայմիկ եղբայրք, քաղցրաձայն,

Այլև աստուածասէրք լսողք միաբան,

Յուսով ի ձէնջ հայցեմ վասն զիս յիշման,

Պանդերեամաշ Մկրտիչս ձերում ծառայն...:

Մինչդեռ վերնագրում տաղը համարվում է ներսես վարդապետի ստեղծագործությունը՝ «Տաղ վասն դարիբի կենաց և մահու ասացեալ տեսան ներսես վարդապետի»: Գլուխին է նկատել, որ այստեղ կա ակնհայտ շփոթություն:

Նաղաշի «Աստուծոյ մարդասիրին փառք...» ոտանավորում կարդում ենք.

Ղարիպն անկեալ և թաւալէր ողորմագին,

Քանզի հասեալ էր օր մահու բուռն ատենին,

Ոչ բարձր գլխոյն կայր զարիպին, ոչ անկողին,

Սալըն սնարք էր և աւազն իւր անկողին:

«Ղարիպն յորժամ արար խորհուրդ...» ոտանավորում այդ տանը գուգահեռ է.

Եւ կամ յորժամ զարիբն. որ հիւանդ լինի,

Չունի դեղ և մահիչ, որ հեշտակ պանկի,

Այլև ոչ անկողին և ոչ բարձ գլխի,

Անկանելով երկիր զերեսն ՚ի հողի...:

Կամ

Ղարիբն զհայրենին յորժամ միտ ածէ

Ձեռնն աղգականացն և զգոյթն յիշէ.

Այլև բարեկամաց զաղեկն պատմէ,

Աղիքն զալարի և աչքն արտասէ:

տողերը արձագանքն են նաղաշի ոտանավորի հետևյալ տողերի.

Ղարիպին սիրտն ֆ ի սուզ, անմխիթար,

Երբ հառաչէ, նայ սիրտն ի փորն առնու զալար.

Յորժամ յիշէ զիւրն սիրելիքն հաւասար,

Նա յաչերուն արին կաթէ երեսն ի վայր...:

Առհասարակ այս երկու ոտանավորների բովանդակությունը բառացիորեն նույնն է. նույնիսկ նման են դեպքերի հաջորդականությունն ու նկարագրությունը:

Այս հիմքերով «Ղարիբն յորժամ արար խորհուրդ...» ոտանավորը համարում ենք նաղաշի «Աստուծոյ մարդասիրին փառք...» տաղի մի տարբերակը:

15. Ողբ ի վերայ ննջեցելոց, որ ի ատարութիւն մեռանի («Ինձ ումէտ կայր ու կուման վանց քո գալուդ...»)

Առաջին անգամ տպագրվել է «Գիրք մեծ Մաշտոց կոչեցեալում» 1807 թ. «Ողբ ի բերանոյ զարիպ՝ և կարոտ մեռելի» խորագրով:

Մեր ձեռքի տակ եղած ավելի քան 16 ձեռագրերից և ոչ մեկում հեղինակը չի հիշվում, սակայն մեծ մասամբ այս տաղն ընկած է նաղաշի զարիպություն տաղերից հետո: Նկատի ունենալով բովանդակության ու բանաստեղծական կառուցվածքի հարադասությունը նաղաշի տաղերին՝ տաղը ենթադրաբար համարում ենք նաղաշինը:

Այս տաղը պահպանված է Մատենադարանի հետևյալ աղբյուրներում.

a—5284, ժամանակը՝ ժէ դար: Տաղի վերջին տունը ար ձեռագրերում հետևյալ պատկերն ունի.

Կոյս Մարիամ Աստուածածին ամենօրեհեալ,

Մեր ննջեցեալս ի քեզ անձին և զինեհար,

Դու բարեխօսես ու միջևորդ լեր անդադար,

Որ ազատի սա ի մեղաց ուր գործեցեալ:

b—2482, ժամանակը՝ ժԶ—ժէ դար

c—424 » ժէ դար: Այս ձեռագրում վերջին տունը պակաս է:

d—3594 » 1636 թ.

e—616 » 1625 թ.

f—8710 » ժէ դար: Այս ձեռագրում 23-րդ տողից ընդհատվում է:

g—3112 » 1750 թ.: Այս ձեռագրում վերջին տունը հետևյալ պատկերն ունի.

Աստուածածին կոյս Մարիամ տանար լուսոյ,

Բարեխօսես քո միածնին, մայր աստուծո՛յ,

Զմեզ իւր տեսեանն ի յարութեան արժանացոյ,

Ամեն դարիպ իւր մուրատին բարով հառոյ:

Դրանից հետո այս ձեռագիրն ունի ևս մի տուն, որ ամենայն հավանականությամբ գրչի հավելումն է.

Երկրպագեմք ով քառաքե խաչ լուսատու,

Զի անբարբառ բարեխօսես սուրբ կենսատու,

Զմեր ննջեցեալքն ի քո լուսով պայծառացոյ,

Զամեն դարիպ եղբոր տեսու արժանացոյ:

h—5672, ժամանակը՝ 1683 թ.

i—3884 » 1478 թ.

k—8982 » 1717 թ.

l—3081 » 1617 թ.

m—9425 » ժէ դար

o—3768 » ժէ դար

p—8210 » 1656 թ.

Հրատարակություն

m—«Գիրք մեծ Մաշտոց կոչեցեալ», 1807, Կ. Պոլիս, էջ 131:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՅ ՄԵՋ ՊԱՀՊԱՆՎԱԾ  
ՆԱՂԱՇԻ ՏԱՂԵՐԻ ՑԱՆԿԸ

1. Ձեռագիր 33, 1550 թ., Տաղարան (Աղամգիրք), գրիչ՝ Հովհաննես, գրության տեղը՝ անհայտ:
  1. էջ 166ա—«Սողոմոն մայրն իմաստութեանն»
  2. էջ 167բ—«Հոգի՛, մի ասեր դարիպ»
2. Ձեռ. 424, Ժէ դար, Գանձարան, գրիչ՝ Նիկողայոս, գրության տեղը՝ Ղրիմ:
  1. էջ 360բ—«Սողոմոն մայրն իմաստութեանն»
  2. էջ 359բ—«Անձն իմ, վայ քեզ հաղար բերան»
  3. էջ 373բ—«Անցանէ մեծութիւն»
  4. էջ 342ա—«Արարիչն արարածոց»
  5. էջ 338ա—«Ես գիտէի զաշխարհս ինձ մուր էր թըւած»
  6. էջ 363ա—«Անձն իմ, արի աղօթէ»
  7. էջ 340ա—«Ինձ ումէտ կայր»:
3. Ձեռ. 523, ԺԸ դար, Քաղուածոյք (կան զանազան դարերի՝ ԺԶ, ԺԷ, ԺԸ, ԺԹ, զրվածքներ) գրիչը և գրության տեղը՝ անհայտ:
  1. էջ 128բ—«Սողոմոն մայրն իմաստութեանն»
4. Ձեռ. 610, ԺԴ դար, Ժողովածու, գրիչն ու գրության տեղը՝ անհայտ:
  1. էջ 250ա—«Աստուծոյ մարդասիրին փառք»
5. Ձեռ. 616, 1625 թ., Ժողովածու, գրիչ՝ Մարտիրոս Երևանցի, գրության տեղը՝ անհայտ:
  1. էջ 2բ—«Արարիչն արարածոց»
  2. էջ 5ա—«Ես գիտէի զաշխարհս»
  3. էջ 6բ—«Աստուծոյ մարդասիրին փառք»
  4. էջ 4ա—«Ինձ ումէտ կայր»
6. Ձեռ. 679, 1660 թ., Հայելի վարուց, գրիչ՝ Գրիգոր Երևանցի, գրության տեղը՝ անհայտ:
  1. էջ 171բ—«Երազ է ու սուտ եղբայրք»
7. Ձեռ. 697, ԺԸ դար, Ժողովածու, գրիչ՝ Վարդան արեղա և Ակորդայ, գրության տեղը՝ անհայտ:
  1. էջ 59ա—«Երազ է ու սուտ եղբայրք»
  2. էջ 167ա—«Ես գիտէի զաշխարհս»
8. Ձեռ. 771, ԺԸ դար, Ժողովածու, գրիչն ու գրության տեղը՝ անհայտ:
  1. էջ 107ա—«Ինչ շահ է քո զուր դատիլդ»
9. Ձեռ. 825, 1658 թ., Մաշտոց, գրիչ՝ Մարկոս Կեչեաի, գրության տեղը՝ անհայտ:
  1. էջ 56ա—«Արարիչն արարածոց»

10. Ձեռ. 965, 1432 թ., Մաշտոց, գրիչ՝ Դաիթ, գրության տեղը՝ Երևան:
  1. էջ 382ա—«Արարիչն արարածոց»
11. Ձեռ. 1636, 1758 թ., Տաղարան, գրիչը և գրության տեղը՝ անհայտ:
  1. էջ 32բ—«Բլրուն ի վարդն ասաց»
12. Ձեռ. 1637, Ժէ դար, Տաղարան (Աղամգիրք), գրիչ՝ Ավետիս, գրության տեղը՝ անհայտ:
  1. էջ 217բ—«Անցանէ մեծութիւն»
  2. էջ 220բ—«Անձն իմ, արի աղօթէ»
  3. էջ 223բ—«Ամենայն փառք մարդոյ»
13. Ձեռ. 1661, 1594 թ., Տաղարան, գրիչ՝ Պետրոս արեղա, գրության տեղը՝ Թալար:
  1. էջ 204 (103բ)—«Հոգի, մի ասեր դարիպ»
14. Ձեռ. 1720, 1720 թ., Վարդան վարդապետի պատմութիւն վասն դժոխաց, գրիչ՝ Հովհաննես Երևանցի, գրության տեղը՝ անհայտ:
  1. էջ 465ա—«Անձն իմ, վայ քեզ հաղար բերան»
15. Ձեռ. 1779, 1729 թ., Խրատգիրք, գրիչ՝ Գրիգոր, գրության տեղը՝ անհայտ:
  1. էջ 8բ—«Սողոմոն մայրն իմաստութեանն...»
16. Ձեռ. 1989, 1647 թ., Տաղարան, գրիչ՝ Մարգարէ դպիր, գրության տեղը՝ Ջուղա:
  1. էջ 32ա—«Արարիչն արարածոց»
  2. էջ 51ա և 56ա—«Արարիչն արարածոց»
  3. էջ 164բ—«Հոգի, մի ասեր դարիպ»
  4. էջ 166ա—«Աստուծոյ մարդասիրին փառք»
  5. էջ 217բ—«Անցանէ մեծութիւն»
  6. էջ 221ա—«Անձն իմ, արի աղօթէ»
  7. էջ 224բ—«Ամենայն փառք մարդոյ»
  8. էջ 228ա—«Ես գիտէի զաշխարհս»
  9. էջ 310ա—«Երազ է ու սուտ եղբայրք»
17. Ձեռ. 1990, ԺԹ դար, Տաղարան, գրիչը և գրության տեղը՝ անհայտ:
  1. էջ 29ա—«Երազ է ու սուտ եղբայրք»
  2. էջ 23բ—«Անցանէ մեծութիւն»
  3. էջ 33բ—«Հոգի, մի ասեր դարիպ»
  4. էջ 52բ—«Ղարիբն յորժամ արար խորհուրդ գնալոյ»
18. Ձեռ. 2127, Ժէ դար, Քաղուածք ի քաղոց զրոց, գրիչ՝ Հովասափ, գրության տեղը՝ անհայտ:
  1. էջ 118ա—«Ինչ շահ է քո զուր դատիլդ»
  2. էջ 115բ—«Անցանէ մեծութիւն»
  3. էջ 117բ—«Երազ է ու սուտ եղբայրք»
  4. էջ 144ա—«Անձն իմ, վայ քեզ հաղար բերան»
  5. էջ 137բ—«Սողոմոն մայրն իմաստութեանն»
  6. էջ 115ա—«Անձն իմ, արի աղօթէ»
19. Ձեռ. 2236, Ժէ—ԺԸ դար, Ժողովածու, գրիչ՝ Աբրահամ, գրության տեղը՝ անհայտ:
  1. էջ 432ա—«Սողոմոն մայրն իմաստութեանն»
  2. էջ 430բ—«Անձն իմ, վայ քեզ հաղար բերան»
  3. էջ 436բ—«Երազ է ու սուտ եղբայրք»
  4. էջ 435բ—«Անցանէ մեծութիւն»

5. էջ 434ա—«Անձն իմ, արի աղօթէ»
6. էջ 437բ—«Ինչ շահ է քո զուր դատիրը»
7. էջ 452բ—«Ես գիտէի զաշխարհս ինձ»
8. էջ 455բ—«Աստուծոյ մարդասիրին փառք»
